ՀԱՅՑ ՅՈՒՇԱՐՁԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԻՑԱՑԻՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ

ԵՐԳԵՐ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

Р. А. ГРИГОРЯН

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ КОЛЫБЕЛЬНЫЕ И ДЕТСКИЕ ПЕСНИ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա 49963

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

ԱՐՓ
Հ 24

Ժողովածուն ամփոփում է հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգերի համահավաք բնագրերը։ Հեղինակը ի մի է հավաքել, դասակարգել և ծանոթագրել տպագիր ու անտիպ աղբյուրներից քաղված հայ բնաբական բանահյուսության հիշյալ ժանրի շուրջ 1000 ստեղծագործություններ իրենց բազմաթիվ տարբերակներով։ Բնագիրը բաղկացած է Օրորոցային երգեր, Մանկական խաղերգեր և Ծիսական ու խաոն երգեր բաժիններից։ Ժողովածուն ունի նաև աղբյուրների ցուցակ, բարբառային և մանկական խոսվածքի բառարաններ, առարկայական և երգերի այբբենական ցանկեր։

1—6—2

Մ ո ր ս՝
ՄԱՐԳԱՐԻՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
հիշատակին

Ա. Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր» խորագիրը կրող սույն հատորը ամփոփում է տարբեր բնույթի տպագիր ու անտիպ աղբյուրներում գրված շուրջ հազարի հասնող օրորոցային, մանկական և խաղերգերի ողջ ժառանգությունը, համալրված վերջին տարիներում մեր գրառած երգերով: Ժողովածուի մեջ ներառված են բուն ժողովրդական երգերը, աննեղինակ, սակայն գրական մշակման կնիքը կրող, ինչպես նաև օրորոցային նպատակով կենցաղավարած, սակայն ըստ էության մանկան հետ չառնչվող երգեր. մանկան ողբերգերը և պարերգերը տրված են հավելվածում:

Ժողովածուում ընդգրկված երգերի մեծ մասը անվերնագիր է, նաև վերնագրերն էլ պայմանական են, ուստի և ընտրված է երգերի անվերնագիր ձևը: «Մանոթագրություններ» բաժնում հիշվում են վերնագիր ունեցող երգերի վերնագրերը:

Ժողովածուի երգերից մի հանիսը տարբեր երգերի (խաղիկներ, օրորներ, մանկախաղաց երգեր) միակցումից առաջացած, երբեմն արհեստական, երբեմն էլ ներհին կապի ու միասնական հիմքի վրա հյուսված երգեր են, երբ կցորդումը կրում է արհեստական բնույթ, երգը մասնատվում է և յուրաքանչյուր մասը դրվում է համապատասխան տեղում, որի մասին և «Մանոթագրություններ» բաժնում տրվում է մանրամասն տեղեկանք:

Ժողովածուի նյութերի բազմաբնույթ լինելու հանգամանքը (օրորներ, մանկախաղաց երգեր, խաղերգեր, մանկական երգեր և այլն) թույլ չի տվել ժողովածուն դասակարգելու մեկ միասնական սկզբունքով, ուստի և նյութերի դասակարգումը կատարվել է ըստ ձևի և տեսակի: Այսպես, ժողովածուի առաջին բաժնի նյութերը խմբավորված են ըստ տվյալ ժանրին յուրահատուկ երանգ տվող կրկներգերի, ինչպես նաև ըստ կրկնվող մոտիվների (երբ երգում բացակայում է կրկներգը և այլն):

Երկրորդ բաժնի նյութերը՝ խաղերգերը, նպատակահարմար

գտանք դասակարգել ըստ խաղի տեսակի: Երրորդ բաժինը ընդգրկում է մանկական ծիսական և խառն երգերը. այստեղ դասակարգումը կատարված է ըստ երգի բնույթի, ժանրային առանձնահատկությունների:

Այսպիսով, ժողովածուն ստացել է հետևյալ պատկերը.

I. Օրորոցային երգեր

ա) Օրորոցայիններ, բ) Մանկախաղաց երգեր, գ) Մանկան խայտի և լոգանքի երգեր:

II. Մանկական խաղերգեր

ա) Հաշվերգեր և ձեռնախաղի երգեր, բ) «Հարսանիքի, խնամոցիկ» խաղի երգեր, գ) Ձանազան խաղերգեր, դ) Խաղի ավարտի երգեր:

III. Մանկական ծիսական և խառն երգեր

ա) Հանգավոր ասույթներ, բ) Հեքիաթի նախերգեր և հարսանացուներ, գ) Ծաղրերգեր, դ) Բնույթաբ, երկնային լուսատուներին և կենդանական աշխարհին նվիրված երգեր, ե) Միասական երգեր.

Հավելված

ա) Խառը երգեր, բ) Մանկան ողբի և պարի երգեր:

Ժողովածուի ծանոթագրություններում բերվում են տրվելիք երգի հետ կապված բոլոր տեղեկությունները, բանահավաքի կամ կազմողի ծանոթություններն ու բանագիտական դիտողությունները:

Պահպանված են երգերի բարբառային յուրօրինակությունները, ուղղագրությունն ու տառադարձությունը: Որոշ օտարալեզու երգերի թարգմանությունը հնարավոր չեղավ տալ, տեքստի խիստ աղավաղված լինելու հետևանքով: Նույն երգում միևնույն բառի տարբեր գրության ձևերը միօրինակության համար դարձվել են միատեսակ՝ թողնելով բարբառին հարազատ ձևը: Երգերի կետադրությունը փոխված է ըստ ժամանակակից էրեականական կանոնների:

Ժողովածուի երգերը համարակալված են հետևյալ ձևով. վերևում արաբական թվերով, առանձին համարակալմամբ տրվում է երգի մայր օրինակը (եղած նմանակների ու տարբերակների մեջ առավել ամբողջականն ու հինը, եթե այն հնարավոր է լինում պարզել), տարբերակը դրված է երգի տակ և համարակալված ըստ այբուբենի տառերի՝ ա, բ, գ և այլն:

Երգերի տակ համառոտագրված կամ երկաթագիր տառերով

նշված են աղբյուրները, իսկ թվանշաններով՝ էջերը: Երգի գրառման և տարածման վայրը, եթե այն նշված է սկզբնաղբյուրում, բերվում է երգի տակ:

Բնագրերում առկա թվանշանային համարակալումը ծանոթագրության, իսկ աստղանիշը՝ էջատակի պարզաբանումների համար է:

Ժողովածուն ունի նաև բառարաններ, աղբյուրների համառոտագրված ցուցակ, ցանկեր և համառոտագրությունների բացատրագիր:

* * *

Հայ օտորոցայինների, խաղերգերի ու մանկական երգերի գրառումը սկզբնավորվում է անցյալ դարի 60-ական թվականներից: 1868 թ. Պետերբուրգում Միք. Միանսարյանցը հրատարակում է «Քնար հայկական» ժողովածուն, ուր, ի թիվս հոգևոր երգերի, շարականների, տաղերի, «հասարակաց», «ռամկական» երգերի, հատուկ բաժին է հատկացվում օտորոցայիններին, որոնք, սակայն, կա՛մ հնդիկակային և կա՛մ մշակված ստեղծագործություններ են:

1875 թ. Արիստակես Տեր-Սարգսենցը տպագրում է «Պանդուխտ վանցին» ճամակների, ժողովրդական երգերի, առածների ժողովածուն:

Այս ժողովածուն իր նախորդից որոշակիորեն տարբերվում էր ընդգրկած նյութերի բնույթով: Առաջին բաժինը ճամակներն են՝ նժդեհ հայի ճամակները, որոնք աչքի են ընկնում անաղարտ ժողովրդայնությամբ: Նամակներից մեկում («Իմ արմատան որդին») հանդիպում ենք վանի մի հուզաթաթավ օտորի: Պանդուխտի մայրը հիշում է. «Ես կնստի էյո պառկած ուռուռցի մոտ ասովորիս սերն մոռցած էն մեղրեն անուշ կաթ կուտի, որ դու ուտիր՝ բաղցր էյուն էյաշիր, զորանիր և իմ լաց սրբիր: Ես էն կյոս սկնա ուռուր, տարտար, օտորներ կասի, իմ անմահական որդին»[1]:

Նամակում հիշվող երգը հայկական օտորոցային երգերի բագն ու պսակն է: Այստեղ և հայ բնաճանիի անցյալ տառապանքների ծառը վերհուշ կա և «պիրինտար» մոր խորը հավատով փայփայած մեծ հույսը, թե մի օր իր որդին պետք է «խասնի» իրենց, կտրին դառնա ու «էնոնցից պիտ բյոլը առնի», ովքեր հարստահարել ու տանջել են իրենց: Երգում առկա է նաև այն դարը ծուսախաբությունը, որ օտար երկրներում երբեմն պանդուխտներն

[1] Ա. Տեր-Սարգսենց, *Պանդուխտ վանցին, Կ. Պոլիս, 1875, էջ 16:*

օտարաճում, խորթաճում էին հարազատ ժողովրդին և մոռանում իրենց լեզուն, հայրենիքը, սուրբ պարտականությունները[2]:

Իրենց ազգային ձևով ու էությամբ ուշագրավ են նաև 1885 թ. Գ. Շերենցի կազմած «Վանա սազ» ժողովածուի նյութերը, որոնց շարքում պատկառելի մասն ունեն վասպուրականի մանկական երգերը՝ օրորներ և խաղերգեր: 1899 թ. «Վանա սազ» ժողովածուի առաջին մասին հաջորդում է երկրորդը՝ հայկական օրորների, դանդաղների, խաղերգերի մեծ ժառանգությամբ: Անցյալ դարի 80-ական թվականներին այս բնույթի երգերի հավաքումը, դասդասումը և հրատարակումը բանագետ-բանահավաքի նուրբ նաշակի, ժողովրդական ինարական ստեղծագործությունների սկրպբուտներին հիշտ րնկալմամբ և մեծ նմտությամբ արգասիք էր:

Անցյալ դարի 90-ական թվականներին նոր թափ է ստանում օրորոցային, մանկական երգերի և խաղերգերի հավաքումն ու հրատարակումը: Այդ շրջանում լույս են տեսնում մի շարք բանահյուսական, ազգագրական, ինախոսական և տեղագրական ժողովածուներ, որոնց էջերում դարձյալ վերոհիշյալ երգերը իրենց մեծ բաժինն ունեն՝ Ալ. Մխիթարյանց, Տաղեր ու խաղեր, Ալեքսանդրապոլ, 1900, Գար. Հովսեփյան, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, Վ. Տեր-Միհասյան, Անգիր դպրութիւմ և առակ, Կ. Պոլիս, 1893, Հ. Ճանիկեան, Հնութիւմ Ակնայ, Թիֆլիս, 1895, որը երևան հանեց Ակնա հիասքանչ օրորների շարքը, Տ. Վարդանյանց, Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, Թիֆլիս, 1900:

Այս գործին նկատելիորեն նպաստում է նաև պարբերական մամուլը: «Մեղու Հայաստանին», «Բյուրակնը», «Արարատ», «Արաքսը», «Նոր-դարը» իրենց էջերում ժողովրդի ինարական երգերի կողմին տեղ են տալիս նաև հայկական օրորոցային և մանկան խաղի երգերին:

Խոշոր աշխատանք են ծավալում հետագայում «Ազգագրական հանդեսն ու «Էմինյան ազգագրական ժողովածուն», որոնք հետամուտ էին տալու «ժողովրդի վսեմ ու առաքինի հատկություններ.

---

2 *Ի դեպ, այս ժողովածուի հիշյալ օրորոցայինը այնքան գրավիչ է իր էությամբ, որ 1880 թ. Ս. Մանդինյանը իր կազմած «Քնարական այբբենարանում» հատուկ տեղ է հատկացնում այս նամակին և երդից էլ քաղվածաբար մեջ է բերում մի հատված:*

ինամենի կենցաղն ու սովորույթները»[3]: Այդ ժողովածուի Զ գիրքը (1906 թ.) ամփոփում է հայ բանահյուսության անխոնջ մշակ Ս. Հայկունու նյութերը, ուր և, ի շարս բանահյուսական այլ նյութերի, առանձին բաժնով ներկայացվում է մանկական երգերի խումբը, երգեր, որոնց ծնունդը կապվում էր Հայաստանի տարբեր տեղավայրերի հետ և որոնք հագեցված էին ժողովրդական մտածողությանը հատուկ բոլոր երբեմնիներով:

Այս համընդհանուր հետաքրքրությունը իր լավագույն ավանդույթներով հասավ մինչև նոր դարասկիզբը, երբ սկսեցին Երևան գալ ազգագրական, բանահյուսական, տեղագրական և զանազան այլ բնույթի ժողովածուներ՝ Ա. Երեմյան, Ջանարմանալի հայ ժողովրդական բանահյուսությունը (1923, Վիեննա). Ա. Տ. Խաչատրյանց, Տարոն (1950, Բեյրութ). Կ. Գաբիկյան, Բառագիրք սեբաստահայ գավառակզվի (1962, Ս. Երուսաղեմ), Վ. Բդոյան, Ժողովրդական խաղեր (1964, Երևան), Խ. Ա. Փորչեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը (1965, Երևան) և այլն: Այս ժողովածուները կոբսաից փրկել են ժողովրդական բազում հիասքանչ օրորներ, «ղանղաններ», «լուրիներ», Հայաստանի տարբեր տեղավայրերի բնակչության կենցաղն ու սովորույթները արտացոլող անթիվ երգեր, խաղերգեր և այլ բնույթի երգեր:

Ներկա ժողովածուն ընդգրկում է շուրջ մեկ հարյուրամյակում կուտակված աննյութ բանահավաքների, բանահյուսական խմբարշավների արխիվային նյութերը: Ժողովածուում տեղ են գտել նաև մեր գրառած նյութերը, որոնք որոշ պատկերացում են տալիս մանկական երգերի ներկա վիճակի մասին:

---

3 *«Էմինյան ազգագրական ժողովածու», Մոսկվա—Ալեքսանդրապոլ, 1901:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱԽԱՂԱՑ ԵՐԳԵՐ

Հայ ժողովրդական մանկական երգերը մեր բանահյուսության քնարական ժանրի հնագույն և ամենակենսունակ տեսակներից են։ Հնագույն են, որովհետև նրանց ծագումը առնչվում է վաղնջական ժամանակներին, մարդկության մանկության շրջանին. կենսունակ են, որովհետև նրանց սնուցող հողը հարատև է եղել, կա ու կլինի։ Ի տարբերություն քնարական այլ երգատեսակների, որոնց ստեղծումն ու կենցաղավարումը պահանջում է որոշակի միջավայր, այն է՝ գյուղաշխարհ (աշխատանքի, մասամբ նաև լալիքի երգերը), մանկական երգերը և մասնավորապես օրորոցայինները ստեղծվում և երգվում են ամենուրեք, այնտեղ, ուր կա ծնունդ և մանկություն։

Ցավոք պետք է նշել, որ մեր հին մատենագրական աղբյուրներում նրանց մասին ոչինչ չի հիշվում։ Հնագույնները հայօրորների շարքում. միջնադարյան երգերն են, որոնք որոշ պատկերացում և տեղեկություն են տալիս միջնադարյան հայ կյանքի ու կենցաղի մասին։

Հարուստ ու բազմազան բովանդակություն ունեն օրորոցային երգերը. նրանք ընդգրկում են հայ կյանքը թե՛ իր կենցաղային մանրուքներով և թե՛ սոցիալ-պատմական խնդիրներով։ Երգերում առկա է մանկան շրջապատը, մոր՝ կնոջ հասարակական-տնտեսական, իրավական կաշկանդված վիճակը, ինչպես նաև մեր ժողովրդի քաղաքական-սոցիալական կյանքն ու նրա հոգեկան նկարագրի որոշ կողմերը։

Հայ օրորոցային երգերի ստեղծողը մայրն է, հայ կինը, որը օրորոցին կքած կարող է հանպատրաստից հորինել ու երգել։

Օրորոցային երգերում առկա հիմնական մոտիվը գովքն է։ Դժվար է գտնել օրորոցային հուզաթաթավ երգի մի նմուշ, ուր գովերգված չլիներն մանուկն ու իր շրջապատը։

Սովորաբար երգն սկսվում է մանկան գովքով, գովերգվում է մանկիկը մեծ արվեստով, անկեղծորեն ու ջերմությամբ։ Ըստ մոր

խորին համոզման, իր որդին «հողածին» չէ, «անդալատ է» ու «աղվոր» և քանի որ երկրային չէ, ուստի և նրան խաղընկեր երկնային լուսատուներն են վայել։ «Կարմիր վարդ է» և կամ «հայվայի կեռաս», նրա «սուրաթը», ծոցիկը՝ լուսեղեն է, գլուխը՝ հրեղեն, «կռնակը»՝ հանց հինավուրց վանքի «գռնակ» ամուր է ու կանգուն, «աչուկը»՝ ինչպես «ժամուն ադամանդակուռ խաչուկը» լույս է ճառագում, «բերնակը»՝ ժամի «խնկարկված խորանի» նման անուշաբույր է ու հոտավետ, քանզի.

Ոչ մարն է բերեր նման,
Ոչ արևն ու ոչ լուսունկան,
Քեզ եղն ի սարին բերել
Ու շահան բազան անուցեր[1]։

Ինչպես տեսնում ենք, մոր երևակայությունը սավառնում է մինչև դարերով սրբասուրբ համարված, նույնիսկ բարձրաճաչ չհիշված այնպիսի սրբությունների ոլորտում, ինչպիսին եկեղեցին է և նրա պարագաները. նա աներկյուղ, համարձակորեն համեմատում է իր մանկիկի բարեմասնությունները դրանց հետ, չդնելով նրա մեջ ոչ մի կրոնական ըմբռնում և, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Աբեղյանը, «Այս ամենն անմեղ նմանություններ են, լոկ պարզամիտ պատկերավորություններ և ոչ մի գայթակղելի բան չկա հին կրոնական տեսակետով»[2]։ Իրավամբ այդ բնույթի երգերը տեղիք են տալիս միայն մեկ խորհրդածության. գորովագութ մայրը զավակին համեմատելով, իր համոզմամբ, ամենասուրբ և բարձր ըմբռնումների ու երևույթների հետ, միջոց է փընտրում արտահայտելու իր բուռն ու անկաշառ սերը։ Մեծ սիրով ու գորովանքով գովերգվում է նաև մանկան օրոցքն ու անկողինը՝ որը մանկան նման արտակարգ է, «ոսկեղեն ու սատափե», վերմակը՝ «մարգրտե» է, իսկ բարձը՝ ոչ թե սովորական, այլ «ճեֆֆահիր».

Օրո՜ր, օրո՜ր քուն ունիս,
Պեշիկին մեջը տուն ունիս,
Օսկիե օրրան ունիս,
Մարգրտե յորղան ունիս,
Ճեֆֆահիրեն բարձեր ունիս,
Շար ու շարմաթ շոր ունիս[3]։

---

1 Հ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 412։
2 Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1944, էջ 214։
3 Հ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 412։

Այս ոգևորությամբ հյուսելով երգը, մայրը իր երևակայությամբ պատկերացնում է զավակների ապագան, նրանց արդեն հարսնացու և փեսացու է տեսնում, նրանց ամուսնությունն է մտովի պատկերացնում, գովերգում է հարսնացու աղջկան և փեսացու տղային։ Հարսնացու աղջկա բարեբախտությունը մայրն անկարող է պատկերացնել առանց նրա առաջին և կարևոր նախապայմանի՝ օժիտի («բաժինքի»), ուստի և նա գովերգմանը զուգահեռ ի լուր աշխարհի թվարկում է այն բարիքները, որը տալու է իր աղջկան ամուսնանալիս։ Թիֆլիսահայ կյանքի ու կենցաղի կարևոր կողմերից է եղել վերոհիշյալ հանգամանքը, այդ է պատճառը, որ այդքան մեծ նշանակություն են տրվել երգերում ևս։ Թիֆլիսահայ կինը թվարկելով օժիտի պարունակությունը, երգն ավարտում է այս տողերով.

Լդրանոց չնչիլ կու տամ,
Ջարեքեն չափրաստ կու տամ,
Մե չարեք քամար կու տամ,
Օրթաճալա բաղ կուտամ[1]։

Իսկ տղա՞ն, չէ՞ որ նա էլ փեսացու է «երկար բաժով, կանանչ-մանանչ».

Բեղերդ էլնի կալամ թրաշ,
Ատլաս կաբա կվելի քեզ,
Կարմիր ջզմեք ոտիդ լայիղ,
Կարմիր խնձոր գոտիդ դնես,
Յարիկդ էլնի խորոտ մորոտ,
Վղիդ կապենք կարմիր նարոտ[2]։

Գովերգմանը զուգահեռ մայրը սկսում է օրհնել իր զավակին, քանզի նա է լինելու իր ապավենը, մութ տան ճրագը, նա է իրենց փակ դռները բացելու.

Ափին ակալ ա՝ բեռնը տու,
Գիտըն ակալ ա՝ փուխրոը տու,
Ըսկը ջրվեժ՝ շանտանը տու,

1 Գ. Տեր-Աղեքսանդրյան, *Թիֆլիսեցոց մտավոր կյանքը*, Թիֆլիս, 1885, էջ 39։
2 Գ. Շերենց, *Վանա սազ*, II, Թիֆլիս, 1899, էջ 11։

Տոնը քշեր՝ ճրոդը տու,
Օյղին մանակ՝ հինգիրը տու,
վարդարը բահված՝ բուլբուլը տու,
Արդարը կանանչ՝ սումբուլը տու,
Դուրքը բնտեծ՝ բլանիքը տու,
Օջախը վառված՝ սունտունը տու[1]:

Ի տարբերություն աղջկան նվիրված երգերի, ուր գովքն ընթանում է նկատելի զսպվածությամբ, որը, ինչպես հետո կտեսնենք, ունի իր հասարակական-սոցիալական պատճառները, տղայի գովերգումը կրում է ավելի ջերմ բնույթ, նրա վրա դրվում են լուրջ պարտականություններ.

Մեծանաս ու մեծ մի լինիս,
Բոլորիս ու գեղ մի լինիս,
Ան գեղն ուր մեծ չի կենա,
Ան գեղին մեծն դու լինիս...[2]:

Նա պետք է «արև տա իր խորն ու մոր», ամրակուռ լինի, ֆիզիկապես պատրաստ և կարող ծանր աշխատանքի. արևը որ ծագում է, թող ամբողջապես որդուն ջերմացնի, իսկ ինքը նրա հովանու տակ կապրի, այսպես է մտածում մայրը.

Օրո՜ր, օրո՜ր, իմ հարիկ, մարիկ,
Հարիկ, մարիկ ու բարկ արևիկ,
Արևը քու տնակը ցաթե,
Շառվեղը քու մարիկն առնե[3]:

Որդու քաջառողջությունը նա ցանկանում է հանուն իր ընտանիքի, իր ազգի և բարեկամների: Կգա ժամանակը և նա պարտավոր է հասկանալ կյանքի լավն ու վատը, չարն ու բարին ու իր «ազգ էրամին խաբար» տա:

Հայ մայրը սնում ու զորացնում է իր որդուն ոչ թե անձնական երջանկության համար միայն, այլև ընդհանուրի, իր ազգի ու ժողովրդի բարօրության համար:

Ահա այստեղ է, որ հայօրորները դադարում են սոսկ թմրեցնող, քնեցնող դեր կատարելուց և ընդունում են ավելի բարձր նպա-

---

1 Ս. Սարգսյանց, *Ագուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883, էջ 210:*
2 Հ. Ճաճիկեան, *Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 410:*
3 «*Բյուրակն*», *շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1894, էջ 38:*

տակագրում։ Այդ երգերում մայրը նախապատրաստում է մանկան դալիքը։ Բնականորեն, մայրը սոցիալ-տնտեսական անապահովությունից դուրս գալու միակ հույսը կապում է որդու հետ և դրանով էլ պետք է պատճառաբանել սոցիալական մոտիվի առկայությունը մանկական երգաշարում։ Անհուն գոռունթյամբ է լցված մոր սիրտը արտաքին և ներքին հարստահարիչների դեմ, որոնք անխնա կեղեքում են ժողովրդին, սպանում, չխնայելով անգամ օրորոցի մանկանը և ահա մայրը աղեկտուր ու գոռոզորեն երգում է.

Ամմա՜ն, ամմա՜ն խալըթ աղա,
Օրորոցին խաթր արա...

Ժողովուրդը ոչ միայն օտարների տնտեսական ու քաղաքական ճնշման լուծն է կրել իր ուսերին, այլև մշտապես կանգնած է եղել ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ։

Մայրը պարտավորեցնում է որդուն՝ կյանքի թոհուբոհի մեջ լինել արդարամիտ, շրջահայաց, հասկանալ մարդկային բարդ փոխհարաբերությունները։ Մոր կենսաիմիլիտությունը լավատեսական է, չնայած որ նրա ներկան շատ է մռայլ ու անգույն. նա անկոտրում հավատ ունի դեպի լուսավոր գալիքը և նույնը նա ներարկում է մանկանը.

Լուրի՜, լուրի՜, իմ մեկ գյառ ջան,
Լուրի՜, լուրի՜, մալուր յար ջան,
Լուրի կանչեմ իմ մե գյառին,
Շուտ ջոջնա, խասի յարին,
Խայն ա շվար քյանց չոլու լոր,
Խայու արցունքն ա սար ու ձոր[1]։

Սոցիալ-տնտեսական անապահով կյանքը, ընտանիքի թշվառ վիճակը, սեփական ուսերի վրա այդ ծանր բեռը կրելով է, որ հաց գեղջկուհին մթնեցնում է իր օրերը։ Թևածում է նրա միտքը անցած-գնացած օրերի շրջանակներում, նա հիշում է, թե ինչպես անգթորեն սպանեցին իր ամուսնուն, իր օջախի կրակը հանգցրին, թե ինչպես անդարձ կորավ երջանկությունը և ինքը մնաց «վիրք ծուռ ու ձևրքը ծոցում».

---

1 Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի «Բասաբգեչարի ժողովրդական բանահյուսությունից», ձեռագիր ժողովածու (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)։

Սիրտս բլե, կուլամ էրուն,
Անխեր թողին իմ ձագերուն,
Ամմա՜ն, ամմա՜ն, Սաֆար աղա,
Ասուված քո տան դուռը շարա՝[1]։

Երգում է նաև այն մասին, թե ինչպես բնավեր ու տնավեր Դեր-Զորի ճամփան բռնած գնում էին օր ու գիշեր ու հույսի ոչ մի նշույլ անգամ չէր փայլում իրենց ճանապարհին.

Դեր-Զոր կէրթանք լալագին,
Ցավերուն մեջ կրակին...[2]։

և այս ամենի համար մայրը որդուն է կոչում վրեժի։

Ա՛խ, ե՞րբ կլնի կարճնաս,
Միլ ծալեծալ փառք ծփաս,
Եվ ինոնցից թյուղ առնես,
Որ մեր իգին ալիրնց,
Որ նորատունկն մեր խլեց,
. . . . . .
Որ սև սոնին կոտրտեց,
Որ մեր գյութան լեխռտեց,
Որ մեր երկիրն էլ ճռփեց,
Որ խորոխպկերդ սպանեց...[3]։

Ինչպես երևում է երգից՝ սոսկ լալիքի, գլխակորույս երգ չի սա. դրված հարցերի մեկնակետը հանգում է վրիժառուության գաղափարին ու խոսում է այն մասին, որ այս երգերը շուշափելով սոցիալ-պատմական մի քանի խնդիրներ, դադարում են սոսկ օրորոցային երգեր լինելուց և ստանում են նոր երանգ ու արժեք, նոր իմաստ։

* * *

Օրորոցային երգերը արտացոլում են նաև դարերի ընթացքում մշակված ու պահպանված ժողովրդի կենցաղային մի շարք սովորույթներ ու գծեր, գաղափար տալիս նահապետական հայ ընտանիքի անդամների փոխհարաբերության՝ կնոջ, ամուսնու, հարսի,

1 *Անդ։*
2 Ն. Մկրտչյան, *Անձնական արխիվ։*
3 Ա. Տեր-Սարգսենց, *Պանդուխտ վանեցին, Կ. Պոլիս, 1875, էջ 10։*

ԱԿ 9963

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

226—2

ակնարկ, տալով միջև եղած դժդոհությունների և կենցաղային այլ հարցերի մասին։

Հայօրորները պահել են նաև աղջիկ երեխայի նկատմամբ նահապետական հայ ընտանիքի ժխտողական վերաբերմունքը և աղայի մեծարումը, որպես տան՝ օջախի այուն։ Սա արդեն հայրական գծի պահպանման հնամենի սովորության արտացոլումն է բանահյուսության մեջ։ Տղան, ըստ ժողովրդի պատկերացման, «տան ներսի պատն է, աղջիկը՝ դրսի»[1]։ «Աղջիկը քարե չղջիկ է, մկան պոչիկ, կատվու տոտիկ», մինչդեռ տղան «խան է, խանղատա, օսկե ջղա է, սուփրի մատա, շորը թաղա»։

Հայ գեղջկուհու կյանքում ծանր հոգս է եղել աղջիկ երեխա ունենալը, ընտանիքն ու հարազատները ժխտաղաբար են վերաբերվել աղջիկ երեխա ունեցող մորը. անեծք է համարվել աղջիկ ունենալը հայ և ո՛չ միայն հայ ընտանիքներում. «Աղջկա տերը դունչը հուսի կտա», դարեր շարունակ այսպես է մտածել ժողովուրդը։

Այդ է ահա պատճառը, որ մայրը որոշ երգերում խոր դառնությամբ է օրոր ասում աղջիկ զավակին.

Նա՛-նա՛-նա՛, նաներ լաճիկ,
Գըրողը գեյր տաներ աղջիկ,
Տերտերը գեյր տաներ աղջիկ,
Ժամհարը գեր հողեր աղջիկ,
Աղջիկ հող, հողն ի վերեն,
Մեկ տափակիկ սալն էլ վերեն,
Ոչ մեկ մարդ կուլեր վերեն[2]։

Եթե նորածինը տղա է, ուրախանում ու «աչքալիսեք են տալիս», որովհետև «Առջնեկն շուտ կխասնի խոր քոմակին», իսկ եթե աղջիկ՝ համբերություն մաղթում ծնողներին։

Ժողովրդի նմանատիպ մտածողությունը արտացոլված է նաև հայ առածների ու ասացվածքների մեջ։ Այսպես, ըստ սասունցիների՝ «Տղան չարակամին փուշ է, աղջիկը դրսի պտուղ»։ Պոլսահայերի առածն ասում է. «Աղջիկը օտարի ճրագ է», սպահանցիք այս խնդրին վերաբերում են այսպես՝ «Աղջիկ ծնվելիս տան պա-

1 Ս. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960, էջ 66։
2 Գ. Շերենց, Վանա ապ, II, Թիֆլիս, 1899, էջ 4։

տը ծակվում է»[1]: Նման վերաբերմունքը բնորոշ է հայ նահապետական ընտանիքի նախատուկացին:

Աղջիկ երեխան ոչ մի ուրախություն չի բերում ընտանիքին. ահա թե ինչ է դրում այդ մասին «Արձագանք» թերթը. «Ծանր է գյուղացի կնոջ և ընտանիքի համար աղջիկ երեխա ունենալը, երբ ծնվում է աղջիկ, ասում են ծնողներին՝ «Դու ողջ ըլես»: Անցնում են օրեր ու հարևաններից շատերը մինչև անգամ չեն էլ իմանում նոր արարածի աշխարհ գալը: Իսկ իմացող և այցելության եկողներից շատերն էլ կարծես հուղարկավորության եկած լինեն: Աստվա՛ծ, պահողին ջանսաղություն տուր,— ասում են ու հեռանում:

Ամենաանմեղ հասակի մեջ, օրորոցում կապած ժամանակ նորա ամեն մի ճիչը, ամեն մի բարձր աղաղակը, հոր, մոր և ընտանիքի մյուս անդամների կողմից պատասխանվում է անհծքով. «Ջո՛ռ, կոլորակ գերեզման դնեմ քեզ, իսկի չճոջանաս» և այլն[2]:

Այս մտայնությունը սոսկ հայկական երևույթ չէ, այն առկա է հարևան և նույնիսկ տերիտորիալ առումով հեռու շատ ժողովուրդների մոտ ևս. այդպես՝ կովկասյան ժողովուրդներից օսեթները, չեչեններըը տղա երեխա ծնվելիս օրորոցը ճոճում և երգում են.

Քնիր, մանկիկ իմ, քնիր.
Ո՛վ սուրբ Մարիամ՝
Տղաների դու մայր՝
Ինձ աղջիկ մի տուր[3]:

Իսկ եթե աղջիկ է ծնվում, աղոթում են այսպես. «Թող Մարիամը կուրանա, որ տղա չտվեց ինձ, դոնե դու (աղջկան են դիմում) եղիր մեղրամատիկ, որ քեզանից հետո տղա լինի»[4]:

Ռուսական, ուկրաինական բանահյուսության օրորոցային երգերի շարքում աղջկա օրորը կրում է սառն ու օտարոտի բնույթ, այսպես.

Նանի՛կ, նանի՛կ, դու քնիր,
Կուզես այսօր էլ մեռիր,
Վաղը կլինի սաստիկ ցուրտ.

---

1 Ա. Ղանալանյան, *Առածանի*, Երևան, *1960*, էջ *65—67*:

2 «Արձագանք», Թիֆլիս, *1888*, էջ *31*:

3 *В. С. Миллер.* Осетинские этюды. Москва. 1882, стр. 280.

4 *Անդ*:

Կտանեն դերեզմանատուն,
Կողբանք, լաց կլինենք,
Գերեզմանում կթաղենք[1]։

Այս մտայնությունը անհրաժեշտ է մեկնել երկկերպ. նախ՝ նահապետական հայ ընտանիքը, հայ մարդու պատկերացման համաձայն, կանգուն, օջախը վառ կարող է պահել միայն որդին, ամուսինը, եղբայրը, ուստի և տղա երեխայի ծնունդը իբրև օջախի այրուն, «տան ներսի պատ», երջանկաբեր հանգամանք է եղել։

Այս հարցը ունի նաև մի երկրորդ կողմ, դա նրա սոցիալ-տնտեսական կողմն է. հայտնի է, որ գյուղացու համար երկրագործությունը ամենակենսական խնդիրն է. հողի հետ կապված աշխատանքն է, որ պահում է գյուղացու գոյությունը։ Այս իմաստով էլ տղան անհրաժեշտություն էր նրա համար նախ և առաջ իբրև աշխատող ձեռք, «քոմակ» անող ու նեցուկ ընտանիքի համար։

Ուշագրավ են նաև այն երգերը, ուր արտացոլված է ջերմ վերաբերմունք հայ կյանքում և ընտանեկան փոխհարաբերություններում նշանակալից դեր կատարող քավորի նկատմամբ։

Քավորը սերտ կապով կապվում է տվյալ ընտանիքի հետ ամուսնությունից սկսած. նա է կազմակերպում երեխայի կնունքը, և ապա նա և ոչ թե հայրն է նկեղեցուց բերում մանկանը տուն ու հանձնում մորը. վերջինս համբուրում է նրա ձեռքերն ու ոտքերը։ Քավորը էական դեր է կատարում ընտանիքի հետագա ամրության հարցում էս։

Այս տեսակետից հետաքրքրական է երգերի այն շարքը, ուր հատուկ սիրով ու երախտագիտությամբ է հիշվում քավորը իբրև «արարող», որ նա «ճյուղ է արել, ճեղ չի արել, եթիմ բալին խեղճ չի արել».

Քե մեռնեմ, քյո քյավորոչ,
Որ քե գըրկե բերեր ի տուն,
Որ չթողեր կերեր ի շուն,
Քե մեռնեմ, քյո քյավորոչ,
Մումպարաք ձեր տիրոչ,
Տերն ի տվե, մամեն բերե,
Էն քյավորոչ մուննաթն էվիլցե[2]։

---

1 *Шейн.* Русская народная песня, Петербург, 1870, стр 9.

2 Գ. Շերենց, *Վանա սազ, II, Թիֆլիս, 1899, էջ 10։*

* * *

Կենցաղային այս և բազմաթիվ հարցերից բացի, երգերում ուրույն ձևով արտացոլված են ժողովրդի հնագույն հավատալիքներն ու ծեսերը, ժողովրդի հնամենի կենցաղն ու ըմբռնումները։ Բնության և շրջապատի նկատմամբ դիցաբանական պատկերացումը երկար ժամանակ հարատևել է՝ ունենալով իր պատմա-հասարակական հիմքը։

Հայ ժողովրդական օրորոցային երգերում տեղ է գտել նաև բնության չար ուժերը մարմնավորող ոգիների հավատքը։ Դարեր շարունակ մարդը այն համոզմանն է եղել, որ շրջապատի բոլոր երևույթները ղեկավարվում են վերուստ, գերբնական ուժերի միջնորդությամբ, այդ գիտակցությունն ու աշխարհըմբռնումն են պատճառը, որ մայրը մեծ վախով և երկյուղածությամբ է մեծացնում իր մանկանը, անընդմեջ հայցելով «ամենակարող տիրոջ» գթասրտությունը, այդ նույն պատճառով է, որ նա չարհալած, չարխաւիան աղոթքներ է շշնջում մանկան օրորոցին փարված։

Ըստ ժողովրդի հնամենի հավատքի, եղել են այնպիսի ոգիներ, որոնք հալածել են ծննդկանին, այդ մասին, ինչպես նշում է Ղ. Ալիշանը, հնագույն հիշատակություն է պահպանված Գրիգոր Տաթեվացու մոտ. «Սբ. Սիսիանոս գայր ի լեռնէ ի վայր, և տեսաւ պեղծ մի չար, և ունէր աչք հրեղէն և ի ձեռին երկաթի կտրոց, և հանդիպեցաւ ի տեղի աւազոյ, ասէ. Սբ. Սիսիանոս, ո՞ւր երթաս. նզոված պեղծ պատասխանի ետ նմա և ասէ. Երթամ զմանկունս կանանցն թառամեցուցանեմ, զաչսն խաւարեցուցանեմ, զլղեղն ծծեմ և համր առնեմ, և առնեմ զաղայն անժամանակ յորովայնին։ Աւելի եւս պատմէ ուրիշ մի. Սուրբք ոմանք որսի կերթային. առին զձայն երեխային գնացին և տեսին զԱլն ի չարութեան բռնեցին կալան և կապեցին զԱլն»[1]։

Հեթանոսաշունչ սնահավատքի մասին է վկայում նաև Խորենացու մոտ պահպանված առասպելը Արտավազդի մասին. «...ոմանք ասեն և ի ծննդելն զսա դիպեալ պատահարաց իմն, զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմիցն Աժդահակայ, վասն որոյ զնոսա բազում չարչարեաց Արտաշէս։ Եւ զայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս. եթէ վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և դեւ փոխանակ եդին»[2]։

1 Ղ. Ալիշան, *Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց*, Վենետիկ, 1895, էջ 222։

2 Մովսես Խորենացի, *Պատմութիւն հայոց*, գլ. Բ. ԿԱ։

Մտավախ հայ մայրը դարեր շարունակ այն կարծիքին է եղել, որ նրա անհոգ զանվի մանկան նկատմամբ, չարքերը կհափշտակեն նրան, ալքերը կփոխեն և կամ խեղդամահ կանեն։ Այս մտայնությունը արտացոլվել է նաև հայոց առածներում։ Մեկի արտակարգ չարությունը ընդգծելու համար ասում են՝ «Ալբու փոխած կնմանի»։ Այս է ահա պատճառը, որ մայրը մտահոգվում է մանկան անվտանգության համար և միջոցներ է ձեռնարկում «չարը կանխելու»։ Երեխան ծնվել է և ահա առաջին քայլը՝ սև հավ պետք է մորթել, մատաղ անել և երեխայի անկյակի շեմում թաղել, որպես չարխափան ուժ.

Թռի՛, թռի՛, թռցնեմ,
Սև հավը մատաղ անեմ,
Սև հավու միս կերցնեմ...[1]

Բուրչալվեցի մայրը երեխայի օրորոցից խողի չորացած դունչ է կախում, որովհետև ալքը և չարքերը վախենում են խոզերից։ Երեխային և ծննդկանին գութանի շղթայի միջ են առնում, որպեսզի չար ոգիներին արգելեն վնասելու նրանց։ Երեխային չար աչքից հեռու պահելու համար յոթ հատ աչքաուլունք, յոթ հոգի աղոթում և մանկան թիկունքին են կապում[2]։

Ջավախքում ևս կարծում են, թե ամեն երեխա իր պահապան հրեշտակն ունի, որ թևերը պարզած կանգնում է մանկան անարին, պահպանելով նրան չարքերից։ Սասունում մայրերը իրենց փոքրահասակ տղաների թիկունքին հաճախ զրամներով, կոճակներով, ուլունքներով ու խայտաբղետ ծոպերով զարդարված «լերդնոց» էին կախ տալիս, ուսներին նույն զարդարանքներով պճնված եռանկյունի հմայիլներ կարում, որպեսզի նայողները շլանային դրանց փայլով և երեխան չար աչքից չզարնվեր[3]։

Իսկ Բուլանըխում սովորություն է եղել երեխայի բարձի տակ հմայիլ դնել, որպեսզի չարքերը չվնասեն մորն ու մանկանը։ Դուռն առաջ երկաթ էին դնում։ Ծնունդից 7—8 օր հետո երեխային տանում էին եկեղեցի և մեռոնում, որից հետո այլևս չարքերից վնասվելու երկյուղն անցած էր համարվում[4]։

---

1 «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 38։
2 «Ազգագրական հանդես», գիրք IX, 1902, էջ 56։
3 Ե. Կարապետյան, Սասուն, Երևան, 1962, էջ 98։
4 Բենսե, Բուլանըխ կամ Հարք գավառ, Թիֆլիս, 1901։

Ահա այսպիսին էր մտավախ մոր սահման չճանաչող հոգատարությունը երեխայի հանդեպ. նա այս բոլորի հետ մեկտեղ երգում է այդ մասին, երգում բարձրաձայն՝ ի լուր բնության չար ուժերի.

Օրո՜ր, օրո՜ր օրևրուդ,
Թևս դնմ բերիմ չարևրուդ,
Չարխափան չարևրդ խափանն,
Աստվածամարն արևդ պահի[1]։

Եվ որովհետև, ըստ նրանց, ավելի մեծ է հավանականությունը, որ չարքերը երեխային քնած ժամանակ կարող են խփել կամ տանել, ուստի և մայրը օրորոցը զարդարում է «օրոճիկով», «մոտվի ուլունքներով», խաչերով և հմայիլներով և դեռ ավելին. նա եկեղեցի է գնում աղոթելու իր զավակի փրկության ու պահապան լինելու համար.

Մարիամ մարը, մար կանինք,
Իր մեկիկ որդին յարտըմճի,
Երթամ եղկեցի մտնեմ,
Ուր բանիմ սուրբը տվաճի,
Սուբ խաչն ալ աղբար անիմ՝
Թևը վրայնիս պահի[2]։

Հայօրորևներում արտահայտված են նաև ծառի, ինչպես նաև երկնային լուսատուների, ջրի պաշտամունքի հետքերը, այսպես՝ մայրը մանկանը ջրի բերած է համարում, ջրով սնված ու մեծացած։ Ջուրն իբրև կենսատու և կենարար երևույթ է դիտվում, այն հզորացնող և ամեցնող ուժով է օժտված.

Վարդի ջրով լողանաս.
Շատ պզտիկ ես, մեծանաս[3]։

Մի այլ երգում ընտանիքի անդամներին համեմատում է երկնային լուսատուների հետ, այսպես.

Արև տու, արև քյո խեր,
Արևու ճոթ էր քյո մեր,
Ուռի, ուռի քյո խորոխպեր։

Հայ ժողովրդի հավատալիքներում իր ուրույն տեղն ունի բու-

---

1 Տ. Միհաթյան, *Անգիր դպրությունք և առակք*, Կ. Պոլիս, 1893, էջ 49։

2 Հ. Ճանիկեան, *Հնութիւնք Ակնայ*, Թիֆլիս, 1895, էջ 410։

3 «*Էմինյան ազգագրական ժողովածու*», հատ. Ջ., Մոսկվա—Վաղարշապատ, 1906, էջ 65։

սական աշխարհը և մասնավորապես ծառը, որի կանաչելու հետ է կապվում մանկան ծնունդը, արմատներ գցելու, տարածվելու հետ՝ նրա միծանալը, հզորանալը։

Աղվոր աղվորաց որդի,
Քու ծառդ ու ճեղդ ոսկի[1]։

Կամ՝

Դու լինես անտառն մորուն,
Ու ղարնես քոքիկդ խորուն[2]։

Ջանաղան ծաղիկների հետ է կապվում մանկան անուշաբույր լինելը, երկարակեցությունը և անմահությունը։ Օրորոցային երգերում բազմաթիվ ծաղիկների, ծառերի, բույսերի անուններ են հիշատակվում (վարդ, ռեհան, սուսամբար, մանուշակ, արմավենի, ուռենի, բարդի, խնձորենի, խավրծիլ, դափ և այլն) թե՛ որպես կերակուր ու սպեղանի և թե՛ սիրո խորհրդանիշ։

«Միայն Վարանդայում կարելի է համրել տասնյակ խնձորածառի խաչ, ոսկե խաչ, կանանչ խաչ, ղանաղան անուններ կրող կաղնի, չինարի և ուրիշ վիթխարի ծառեր, որոնք իրենց պարունակած զորության շնորհիվ պաշտվում են տեղացիներից և ուխտատեղիներ են»[3],— գրում է «Ազգագրական հանդեսը»։

Պետք է ենթադրել, որ այս բոլորը ժողովրդի բուսապաշտական հավատալիքների թույլ վերապրուկներն են։

Երգերում արտացոլված են նաև բախտի, ճակատագրի հավատալիքի հետքեր։ Հայ մայրը ղավակի բախտը հաճախ կապում է երկնային լուսատուների հետ. «Բարի աստղի տակ է ծնված», հաճախ են ասում հաջողակ մարդուն, սա ևս ժողովրդի հեթանոսական մտածողության արգասիք է։ Մայրը որդու անձնական հատկությունները, արժանիքները վերագրում է այն բանին, որ նրան արեգակն է պահապան եղել, շուշան ծաղկի մեջ և վայրի այծի կաթով է հզորացել.

Վերի մաքիչն քե ծիծ տեր,
Լուսնակ քե տարտար ասեր,
Արեգակ քե տատրկան ասեր,
Ուրո՜ւր, բալամ, ուրո՜ւր[4]։

---

1 Հ. Ճաճիկյան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 440։
2 Անդ, էջ 410։
3 «Ազգագրական հանդես», գիրք II, Թիֆլիս, 1897, էջ 198։
4 Գ. Շերենց, Վանա սաղ, I, Թիֆլիս, 1885, էջ 83։

Հայ ժողովրդական օրորոցային երգերում տեղ են գտել նաև Եկեղեցին, սրբեր, խաչ, ավետարան ու մանկան կնունքի հետ կապված ծեսը։ Եկեղեցին այստեղ միանգամայն աշխարհիկ նպատակներով է հիշվում և ծառայում է մանկան արտաքին բարեմասնությունների նկարագրման «սրբասուրբ» մի միջոց, որով մայրը գովերգում է իր մանկիկին.

Իմ աղջկան աչերը
Կըլմանի ժամուն խաչերը,
Իմ աղջկան բերնակը
Կըլմանի ժամուն խորնակը[1]։

Երգերում տեղ են գտել նաև երկնային ուժերի մարմնացում հանդիսացող սրբեր, այսպես. Սուրբ Մայր Աստվածածին, Սուրբ Սարգիս, Մշու Սուրբ Կարապետ, Սուրբ Խաչ և այլն. սրանք միջնորդ կապ են հանդիսացել ժողովրդի և աստծու միջև և սրանց միջոցով է մարդը դարեր շարունակ հագուրդ տվել աստծու և երկնքի հետ կապված իր անսպառ ու սին հույսերին ու ձգտումներին։

Հայկական օրորոցային երգերում ժողովրդի հնավանդ հավատալիքներից բացի, արտացոլված է նաև ժողովրդի կյանքում թիչ թե շատ դեր խաղացած թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական նշանակություն ունեցած որոշ քաղաքների, գյուղերի, գավառների անուններ, որոնք մի կողմից վկայում են տվյալ երգերի բուն հայկական լինելու մասին, մյուս կողմից՝ պատմական տեղեկություններ են հաղորդում ժողովրդի կյանքում երգերի ունեցած դերի մասին։ Երգերում հիշվում են նաև առանձին քաղաքներ ու երկրներ (Հնդկաստանն ու Պարսկաստանը), ուր, հավանաբար, հայ վաճառականները առևտրական գործերով եղած պիտի լինեն.

Էրևանը մեյդան արա,
Թավրիզը առուտուր արա[2]։

Կամ՝

Պաբիդ գա Հնդստանա,
Բեռները բերե քաթանա[3]։

---

1 «Բյուրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1898, № 7։

2 Գ. Տ. Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 29։

3 Ա. Երեմյան, Ջահարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923, էջ 6։

Բացի օտար երկրներից ու քաղաքներից, ինչպես նշվեց, հայկական օրորներում շատ են հիշատակվում բուն հայկական քաղաքներն ու գավառները, այսպես. հիշվում է Կարս քաղաքի Քյուրիքյոյ գյուղի «Մենձ կամուրջը», որը գտնվում էր առևտրական ճանապարհների հանգուցակետում և զգալի դեր է խաղացել հայ կյանքում: Հաճախ հիշվում է նաև Վան քաղաքն իր Այգեստան (էգեսթար) և Արտամեդ թաղերով, ինչպես նաև Կ. Պոլիսն իր Հայաբնակ Պեշիկթաշ թաղով:

Հայկական օրորոցայիններում հաճախ հիշատակվում են նաև այն ապրանքների և իրերի անունները, որոնք ներմուծվել կամ արտահանվել են հայ վաճառականների կողմից. այսպես՝ «Ֆռանկի աուլաս», «Հինդու յաղութ»[1], «Թավրիզու թաֆթա, ծալած փարդա», «Գիլանու կոճկներ», «քաղքի քաթան» և այլն:

Հայ ժողովրդական օրորոցային երգերում հանդիպում ենք նաև ժողովրդի նյութական կուլտուրային և կենցաղին վերաբերող որոշ տվյալների: Այս իսկ տեսակետից որոշակի արժեք է ներկայացնում երգերից մեկում հիշված ժողովրդի հնագույն շինարարական մշակույթի մի նմուշ՝ «սողոմաքաշ տունը.

Իմ ըրևխեն քուն ունի,
Սողոմաքաշ տուն ունի[2]:

Հայկական օրորոցայիններում այվանի, ամարաթի, չարդախի մասին հիշողություններ ևս պահպանված են, որոնց միջոցով կարելի է մոտավոր կերպով որոշել երգի ծագման ժամանակը, ինչպես նաև պատկերացում կազմել հայկական հնագույն բնակարանների և շինությունների մասին:

Ուշագրավ են նաև կենցաղին ու ապրելակերպին առնչվող որոշ տվյալներ պարունակող երգեր ևս: Այսպես, տեղեկություններ կան մեղվապահության հին եղանակների մասին. ըստ երգերից մեկում պահպանված տեղեկության, մեղուները պահվել են քթոցներում, կամ հաճախ է երևիան համեմատվում «մեղրով լիքը քթոցի հետ»[3]:

Երգերում հարուստ տվյալներ են պահպանված մանկան օրորոցի և նրան պատկանելիք պարագաների՝ լյուլիկ, խութիկուռ, լուծ

---

1 Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

2 «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 37:

3 Անդ:

ու կամար և այլնի մասին։ Այս բոլորը հանգամանորեն, ազգագրական մանրամասնությամբ նկարագրվում և պատկերվում են երգերում։

Հայօրորևներում ուղղակի հիշատակություն կա նաև գյուղաշխարհի կենցաղում կանանց հարդարանքի պարագաների մասին՝ ծամկալ, դեղդիր և նույնիսկ սուրմա ու հինա, այսպես.

Մամի ջիբի խուրմեն էս,
Դեղի աչքի սուրմեն էս[1]։

կամ՝

Հոյ նա՜ր, հոյ նա՜ր, իմ բալա,
Ծամկալը գլխիդ լալա։
Հոյ նա՜ր, հոյ նա՜ր, իմ աղջիկ,
Ալ-ղնավուղով աղջիկ[2]։

Հայկական օրորոցայիններն ճանաչողական առանձնակի արժեք ունեն ժողովրդի սոցիալ-տնտեսական ու կյանքի, կենցաղի ղբաղմունքների մասին։ Երգերում լայն տեղեկություններ կան անասնապահական աշխատանքների մասին, որը մեր ժողովրդի հիմնական և մշտական ղբաղմունքներից մեկն է եղել. այնտեղ կան հիշատակություններ «ոչխարի սուրուի», «կարմիր նախիրի», «գոմշու գյուլլահի», «ձիու իլխիի» և դրանց հետ կապված անասնապահական մթերքների մասին։ Ահա այդ միջոցները օգտագործելով՝ հայ գեղջկուհին գովերգում է մանկանը.

Խատ քարի ցան,
Օշխրի թացան, իմ բալա...[3]։

Հայ ժողովրդի այգեգործական ղբաղմունքի մասին անմիջական հիշատակություններ չկան հայկական օրորոցային երգերում։ Սակայն դրանցում հիշատակված մրգերից ու պտուղներից (փշատ, նուռ, թուզ, ծիրան, խնձոր և այլն) ակնհայտ է դառնում, որ Հայաստանում, որպես բարենպաստ կլիմա ունեցող երկիր, ոչ միայն ղբաղվել են այգեգործությամբ ու պտղաբուծությամբ, այլև դրանց արձագանքները այս կամ այն չափով տեղ են գտել երգերում, այսպես.

---

1 «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 39։

2 Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)։

3 Անդ, Ձեռագիր ժողովածու։

Ալ խնձորի էս տղեն,
Շեկ շլորի էս տղեն,
Կանանչ թզնի էս տղեն,
Կարմիր նռնի էս տղեն[1]։

Ժողովրդի առաջին կենցաղի պատկերման հետևանքով ժողովըրդական այս երգաշարում հիշատակվում են տնային կահ-կարասին ու սպասեղենը՝ կուժ-կուլա, խարճկաթ (խաչերկաթ), աղեղ, ճրագ, մոմ, մազ, հագուստներից՝ թաթաշոր, կաբաշոր, ատլաս կաբա, կարմիր չուխա, շալե-շապիկ, կարմիր գոտի, լահուռ շալ, սաղրե սոլ և այլն։

Հայ ժողովրդական օրորոցային երգերում արտացոլվել են նաև հայկական կենդանական աշխարհից որոշ նմուշներ՝ կենդանիններ, թռչուններ։ Երբեմն հիշվում և ընդգծված դրական նկարագրով են հանդես գալիս վայրի այծը («վերու էծը»), մաքին, կատուն, հավը, արագիլը, ծիծեռնակը։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հայկական օրորոցային երգերը իրենց ընդհանուր բանահյուսական արժեքին զուգահեռ, ունեն նաև ճանաչողական մեծ նշանակություն, քանի որ դրանք արտացոլում են հայ գյուղաշխարհի առօրյան, նիստուկացը, վարքն ու բարքը։

* * *

Հայ ժողովրդական օրորոցային երգերը բանահյուսության քնարական ստեղծագործությունների նման աղերսվում են ժողովրդական երգարվեստի այլ տեսակներին։

Ժողովրդական քնարական երգատեսակների հետ հայօրորների ունեցած առնչությունը խոսում է այն մասին, որ դրանք իբրև քնարական ստեղծագործություններ ունեցել են ժանրային նեբքին ընդհանրություններ։

Այսպես՝ օրորոցային երգերն աղերսվում են քնարական մի քանի երգատեսակների հետ, ինչպես, օրինակ, սիրո, խաղիկների (մանիների), երբեմն նաև պանդխտության և ողբի երգերի հետ։

Այս մոտիվների անդրադարձման աղբյուրը կինն է, հայ գնչուհի մայրը, որն իր բուռն սերն ու աղնիվ զգացումները արտահայտել է ժողովրդական սիրերգերի ու ջան-գյուլումների միջոցով,

---

1 «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 37։

օրորոցային կրկներգի հավելմամբ։ Այնպես որ, օրորոցային երգերին հատուկ հիմնական մոտիվներից բացի, այս ճանապարհով այնտեղ տեղ են գտել այլ, հայօրորների բուն նպատակի համար, երկրորդական մոտիվներ։

Մոր երգերի նյութը հիմնականում սերն է դեպի մանկիկն ու աշխարհը, մարդն ու բնությունը։

Հասկանալի է, որ օրորոցային երգի նախնական նպատակը երեխային քնեցնելն է եղել, բայց միալար երգի մեղեդին ու մենակությունը, հուշերի անթիվ, անհամար խմբավորումներ են ստեղծում և մայրն ինքնամոռացության մեջ սկսում է երգել ու հաղորդակից դարձնել մանկանը այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝ ընտանիքի անդամների փոխհարաբերությունը, իր՝ մոր, կնոջ իրավազուրկ ու ճնշված վիճակը, անհավասար ու անսեր ամուսնության ողբը և այլն։

Հայ բանահյուսական զանազան ժողովածուներում հաճախ հանդիպում ենք սիրային կամ այլ քնարական երգը ներկայացվում է, որպես օրորոցային երգ, այսպես. «Էրթամ Քոլի գեղ», «Բլբուլն ասաց ղումրիկ հավքուն» երգերը, որոնք երբեմն օրորոցային երգերին հատուկ կրկներգերի հավելմամբ ստանում են օրորոցի երգի երանգ։

Նահապետական ընտանիքի դարավոր սովորույթները իրավազուրկ և կաշկանդված վիճակում են պահել կնոջը, հայ գեղջկուհուն։ Ամուսնու գերիշխող դիրքը, ընտանիքի անդամների՝ սկեսրոջ, տալերի ամենօրյա վիրավորանքները հասցնում են այն բանին, որ գեղջկուհի հարսը ատելությամբ է լցվում նրանց հանդեպ և իր այդ տրամադրությամբ էլ հյուսում է երգերը։ Նա դիմում է մանկիկին և չի ցանկանում, որ իր զավակը նման լինի «խորքըրներին», քանզի նրանք «ճըլի ճլտուզ են», «տոտոխ քերող» ու «սևալաչիկ ու սև սալիկ են»։

Խանում խաթուն մարդ ըլլենաս,
Խաս տանտիկին մորքուրդ ըլլենաս,
Տոտոխ քերող հորքուրդ չըլլենաս[1]։

Ընտանեկան այդ փոխհարաբերությունը իր արտացոլումն է գտել նաև հայկական առածներում, այսպես. «Տալի շուշտակն երեուկն ընկավ, հարսի սիրտը պատռեց»։

---

1 «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. 2, Մոսկվա, 1906, էջ 79։

Օրորոցը հնարավորություն է ընձեռում գեղջկուհուն երգելով պատմել ույն ամենի մասին, ինչ որ այլ պայմաններում ասել չէր կարող, և բացվում է նրա համար լեզուն, նա երգում է իր դառը վիճակը, անհավասար և անսեր ամուսնությունը.

Օրո՜ր, օրո՜ր, օրո՜ր,
Սև հըլևր էն օր,
Ջառնի ես քյո խոր,
Ջառնի ես քյո խոր,
Ջըլնի սգվոր.
Առա ես քյո խոր,
Ընկա էն խոր ձոր,
Ջունեցա լավ օր,
Սև հըլևր էն օր,
Ջառնի ես քյո խոր[1]:

Բացի անսեր ամուսնության մոտիվից, հայօրորևներում ներթափանցված ենք գտնում օտարության գնացած «մալուլ ու հեռավոր յարի» բաժանման մոտիվը.

Ա՜խ էնիմ, արուն գուքա,
Սրտիցս սև արուն գուքա,
Վիզս զարկին, թողին շվար,
Առան յարս հեռու տարան,
Նանի՜կ, նանա՜, ի՜մ բալա,
Դարդս ծուլ ա, ի՜մ լալա[2]:

Անօգնական ու «անճար է», «հուսահատ ու պիրինտար» է. պոկել ու տարել են նրա սրտի կեսը.

Արև կու ծագի ալվա կու մարի,
Սրտիս կեսն է տարած, կեսը կու ցավի,
Օրո՜ր, օրո՜ր,
Ճիկերս ի փորուս քաշած,
Քեպապի տեղ ոլրած,
Տիգեկ, տիգեկ փայ ըրած[3]:

---

1 Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

2 Անդ:

3 «Բյուրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1899, էջ 48:

Խոր ու անբուժելի ցավը տանջում է նրան, ամուսնու բացակայությունը ծանրագույն վիշտ է և սպեղանի միայն մանկիկն է, միայն նա կարող է թեթևացնել իր հոգսը, «դեղդիր» ու «մահլամ» լինել իր վերքերին: Որդու ապագա բախտավորության նպատակով ասված երգերի մեծագույն մասում անդրադարձել են բանահյուսական երգմնա-հմայական տեսակները՝ աղոթքը, օրհնանքը և անեծքը: Օրորոցային երգերից մի քանիսը նույնիսկ դյութանք-աղոթքի բնույթ ունեն, ինչպես, օրինակ՝

Օրո՜ր, օրո՜ր, տեր տա քնիկ,
Մարիամ մար խաղաղութունիկ,
. . . . . .
Երթամ եկեղեցի մտնիմ,
Ուր բռնիմ սուրբ տվաճի,
Սուրբ խաչն ալ աղբար անիմ,
Թևը վրայնիս պահե[1]:

Օրհնանքն ու անեծքը ոչ միայն տեղ են գտել հայօրորներում, այլև ստեղծում են գերիշխող տրամադրություն: Ահա օրհնանքի մի նմուշ.

Դուն ապրիս հորով մորով,
Հաց նստիս ջուխտ աղբրով,
Ապրիս դուն հորով մորով,
Ու լցվի սրտիկդ արևով,
Սրտիկդ արևով լցվի
Մեր դուռին կարմիր խնձորով[2]:

Մայրը ոչ միայն օրհնում է իր զավակին, այլև նույն ուժգնությամբ ու մոլեգնությամբ է հնչում նրա անեծքը թշնամու «դուշմանի» հանդեպ.

Քանի ջուրը ալին տա,
Քու դուշմանին քարին տա,
Քանի ջուրը փրփրի,
Քու դուշմանին քրքրի[3]:

---

1 Հ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 404:
2 Անդ, էջ 408:
3 «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 37:

Աղոթքների, օրհնանքների և անեծքների առակայությունը հայօրորներում խոսում է նրանց վաղնջական ծագման և փոխադրեցության մասին։ Հնարավոր է, որ նախնական, հնագույն օրորները չարխափան, չարհալած, անեծք, աղոթք բանաձևեր եղած լինեն, որոնք ժամանակի ընթացքում պարզվել և ավելի նպատակասլաց են դարձել, իսկ նրանց տարրերը վերապրուկի տեսքով պահպանվել են առայսօր։

Հայ ժողովրդական բանահյուսության ամենաերկարակյաց և տարածված ստեղծագործություն լինելով հանդերձ, օրորոցային երգերը պահպանել են իրենց նախասկզբնական ձևը, տարերքը և պատմական զարգացման հետագա շրջանի որոշ երևույթներ ընդգրկելով իրենց մեջ, համալրվել ու նոր երանգ են ստացել։

* * *

Հայ ժողովրդական օրորոցային երգերում մի յուրահատուկ և ուշագրավ բաժին է կազմում երգերի այն փոքր խումբը, որը նվիրված է մանկան լոգանքին ու քայլքին։ Դրանք երկու, երեք և ավելի տողանի փոքրիկ ստեղծագործություններ են, իրենց էությամբ օրհնանքատիպ բանաձևեր՝ մանկան բարեմաղթանքի համար ասված։ Դրանք զուգակցվում են մարմնամարզական նպատակներով երեխայի ֆիզիկական կոփվածությունը ապահովող խիստ պրակտիկ շարժումներին։ Այսպես, լոզանալուց հետո մանկանը «երկնավզիկ» են անում և ասում.

Թոթվև ջրիկ,
Ժողվև մսիկ,
Կամար ընքուի լընիս,
Երկան թարթինչ լընիս,
Շահեն աչվի լընիս,
Պղտիկ քինե լընիս,
Պղտիկ բերան լընիս[1]։

Մի այլ երգում արդեն այդ ընդհանուր բարեմաղթությունների հետ արտահայտված է նաև օրհնանք՝ մանկան ապագա կյանքի և բարեբախտության համար, որ նա «կարմիր օրեր տեսնի» միայն, «հորով մորով» մեծանա, «կովերը կթվան ըլլան», «հավերը ածան»։

---

1 «Ակնայ գաւառաբարբառը և արդի հայերէն լեզուն», աշխատասիրեաց դպ. Մ. Ս. Գաբրիէլեան, Վիեննա, 1912, էջ 121։

Մայրը նախապատրաստում է նաև մանկան քայլքը, նա հորդորում է քայլել և ցանկանում է, որ նրա «ոտ կոխած» տեղը կանաչ լինի.

Տոտին փոխիր,
Կանաչ կոխիր[1]:

Այս երկտողում փոխաբերաբար արտահայտված է մոր օրհնանքը մանկան կյանքի սեմին. նա ցանկանում է, որ մանկիկը քայլելիս «սարերուն տոտիկ» անի, այսինքն՝ միշտ վեր ու բարձր գնա, և «ծառերուն մտիկ անի», այսինքն՝ կանաչ գարուն բացվի նրա առջև:

* * *

Օրորոցայինները, որպես ժողովրդական ստեղծագործության բնաբական երգատեսակներ, օժտված են արտահայտչական բոլոր այն միջոցներով, որոնք հատուկ են ժողովրդական մտածողությանը: Այս իմաստով էլ երգերից շատերը իրենց ընդգրկման լայն շրջանակներով ու արտահայտչական բազմապիսի միջոցներով ամբողջական, ավարտված և առինքնող ստեղծագործություններ են: Դրանց գեղարվեստա-արտահայտչական միջոցների, ձևի և արտաքին նկարագրի բացահայտման և ուսումնասիրման հարցերը կարևոր խնդիրներից են: Այն հանգամանքը, որ օրորոցայինները պարունակում են այժեստային տարրեր, նրանց դարձնում է կառուցվածքով կուռ և պատկերավորությամբ՝ կոնկրետ: Երգերի արտահայտչական միջոցները արժեքավորվում են իրենց անմիջականությամբ, սեղմությամբ ու պարզությամբ, որն առհասարակ հատուկ է ժողովրդական մտածողությանը: Հաճախ երգերում մարդկային կյանքից ու բնությունից վերցրած պատկերները հանդես են գալիս համատեղ, որը ոչ միայն չի արժեզրկում և կամ թուլացնում պատկերը, այլև նոր՝ սաստկական երանգ է տալիս նրան: Եվ եթե համակարգելու լինենք պատկերները օրորոցային երգերում ըստ իրենց որակական հատկանիշների, ապա պետք է նշել պատկերների հետևյալ բնույթը:

Համեմատություններ, որոնք ընդգրկում են իրական կյանքը, բնությունն ու կենդանական աշխարհը, և այս լայն ընդգրկման

---

1 *Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):*

226—3

մեջ էլ նրանք զուգորդվելով չափազանցության, փոխաբերության հետ, պատկերը դարձնում են ավելի ցցուն և արտահայտիչ, այսպես. մանուկը համեմատվում է ծառի հետ՝ «Քանց չինարի ծառ կանաչի»։ Այս ընդհանուր համեմատությունը գնալով ստանում է մասնակի և ավելի կոնկրետ բնույթ.

Քանց բարունակ էլնես ճղով,
Քանց բարդի ծառ էրկեն բաժով.
Բաժդ կանանչ, կանանչ-մանանչ[1]։

Այնուհետև պատկերի ընդգրկումը հասնում է չափազանցության՝ արտահայտելով նոր միտք՝ «անտառ մորուս» լինես կամ «կարաս դինու», «բոլոր լուանակ», «երկիր կլոր», մանկան աչքը՝ «բարկ արև», վերմակը՝ «ծովից»։

Գեղարվեստական համեմատությունը հաճախ ընթանում է մի քանի ուղղությամբ, ըստ որում, սկզբում համեմատության համար հիմք է ծառայում մի երևույթ, կամ որևէ երևույթի, իրի միայն մեկ կողմը և այնուհետև գնալով՝ համեմատությունը ծավալվում է՝ ընդգրկելով ավյալ երևույթի կամ իրի համեմատության արժանի բոլոր կողմերը. այսպես՝ մանկան հասակը համեմատվելով ծառի հետ, նրա հետագա կյանքը համեմատվում է ծառի կանաչելու, պտղաբերելու և կանգուն լինելու հետ, պատկերը ոչ միայն ընդարձակվում է ծավալով, այլև խորությամբ։

Համեմատությունը, չափազանցման երանգից բացի, ունի նաև մի այլ կողմ, դա դիպուկությունն է. պատկերի համեմատությունը հիմնականում այնքան դիպուկ է, որ համեմատվող առարկան ստանում է վառ արտահայտչականություն ու գունեղ երանգ, այսպես՝ մանկան և մանկության անկրկնելի լինելն ու քաղցրությունը համեմատվում է «մեղրով լիքը քթոցի» հետ, նրա անհոգությունը և կենսախնդությունը՝ «կկկլան կուլա»-ի և վարար գետի փրփուրի հետ, իսկ նրա անմեղությունը՝ դաոի, ոչխարի կամ մաքիի հետ։ Համեմատությունները այստեղ ընդունում են փոխաբերական բնույթ, որով արտահայտվում են երգողի ցանկություններն ու մտորումները, այսպես.

Մեղրով լիքը քթոցնըս,
Սև ոչխարի դմակնըս,
Մթեն տեղեն ճրագնըս...[2]։

---

1 Գ. Շերենց, Վանա սազ, II, Թիֆլիս, 1899, էջ 16։

2 Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ, № 1 (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)։

Արտահայտչական այս միջոցներից բացի, օրորոցային երգերին յուրահատուկ փայլ ու նրբերանգություն են հաղորդում բանաստեղծական արվեստի բարձրության հասած մակդիրները, որոնք դրվում են այս կամ այն պատկերի, բառի, երևույթի վրա և նպաստում երգերի լեզվաարտահայտչականությանն ու հնչեղությանը։

Դժվար թե գտնվի մի երգ-օրոր, որը չունենա մակդիրներ. վերջիններս հարստացնելով երգերի լեզուն, միաժամանակ հուզականություն են հաղորդում նրան. նրանք խոր բովանդակությամբ օժտված ժողովրդական երգարվեստի արտահայտչական ձևեր են։ Երգի ժողովրդական լինելու նախապայմաններից մեկն են մակդիրները. դրանց միջոցով արտահայտվում են զանազան գաղափարներ ու զգացմունքներ, այսպես՝ «բարկ արև», «վարդ սուրաթ», «օսկին օրրան», «ծով աչեր», «դուխի բերան», «կարմիր կաբավոր», «որբնոց-գրկնոց», «խորնակ բերնակ», «ֆնտիկ քթիկ» մակդիրներից շատերը սոցիալական ընդգծված բովանդակություն ունեն։ Օրինակ «գրկնոց-որբնոց»-ը որոշակի կերպով ընտանիքի երեխաների ծանր կացությունն ու անհայր լինելն է ակնարկում կամ՝ որդու համադրումը «աշնան ցանքին», հասկացնում է, որ որդին իր ընտանիքի հույսն ու ապավենն է, ինչքն ու կարողությունը։

Ի հակադրություն քնարական ժանրի մյուս երգատեսակների, ուր կրկներգերը որպես ժանրային բնորոշ հատկանիշներ կա՛մ լիովին բացակայում են և կա՛մ էլ ձևական բնույթ են կրում, օրորոցային երգերում դժվար է գտնել մի օրինակ, ուր չլինի կրկներգը։ Աշխատանքի երգերը նույնպես կրկներգեր ունեն, սակայն դրանք մեծ մասամբ ձևական բնույթ են կրում և զուրկ են որոշակի բովանդակությունից։ Մինչդեռ օրորոցային երգերում կրկներգը էական դեր է կատարում, առանց որոնց երգը կդադարի օրորոցային լինելուց։

Օրորոցային երգերում կրկներգերը, կառուցվածքային առանձնահատկություններից բացի, հաճախ միջոց են ծառայում մտքերի ամփոփման համար, իսկ երբեմն նաև նոր մտքի արտահայտման, այսպես՝

Օրորոցի բնգերը խառ,
Միջի քնողը անուշ գյառ,

Լուրի՛, լուրի՛, իմ մեկ գյառ ջան,
Լուրի՛, լուրի՛, սալգաթ յար ջան[1]։

Այստեղից պարզ է դառնում, որ երեխայի հայրը «սալգաթ» է։

«Դանդան» կրկներգը բազմապիսի երանգներով ու իմաստավորմամբ է հանդես գալիս երգերում[2]։ *Երգի մեջ տվյալ բառի կրկնությունը ավելի է ուժեղացնում երգի նպատակը։ «Դան-դան» կրկներգը նաև գովքի նպատակով ասված երգերին է զուգորդվում. այս դեպքում նա ստանում է ավելի ռիթմիկ, կենսուրախ երանգավորում։ «Դան-դան» կրկներգով արտահայտվում են բազմազան մտքեր, այսպես.*

Դա՛ն, դա՛ն, դա՛ն, դանի,
Կաբեդ կարեմ ժանգաոի,

Դա՛ն, դա՛ն տիարն էս,
Կանանչ բազի խիարն էս.

Դա՛ն, դա՛ն, դանեցի,
Բերանդ է եկեղեցի։

Դա՛ն, դա՛ն, դնկոցիք,
Մեղրով լիքը քթոցիկ[3]։

Այսպես կրկնվում են նաև «օրոր», «նանի», «լուրի» և այլ կրկներգերը։

Կրկներգերը, այս հիմնական նպատակներից բացի, թարմություն են մտցնում երգում և վերջինիս հաղորդում ռիթմ ու երաժշտականություն. դրանք շեղվում են երգի հիմնական բանաստեղծական չափից և բազմազանություն հաղորդում նրան։

Երգերում զգալի քանակություն է կազմում նաև առանձին բառերի կրկնությունը, որոնք ուժգնացնելով երգի իմաստը, ստեղծում են ամբողջական, ավարտուն պատկեր, այսպես՝

---

1 *Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)։*

2 *Սկզբից ևեթ պետք է նկատել, որ դան-դան («դանքել») քնել բառի համառոտված ձևն է. այդ են վկայում բազմաթիվ ազգագրական, բանահյուսական ժողովածուներին կից բառացանկերն ու բարբառային մի շարք բառարանները։*

3 *«Ազգագրական հանդես», IX, 1902, XI, 1904 և այլն։*

Նանը ղուրբա՛ն,
Ջանը ղուրբան,
Սարդամշու սարը ղուրբա՛ն,
Ահմաններու շահը ղուրբա՛ն,
Թուրքերու սուլթանը ղուրբա՛ն,
Ռոստովի դուբերնատորը ղուրբա՛ն,
Ազիզ նանիդ ջանը ղուրբա՛ն,
Սաղ աշխարհի լավը ղուրբա՛ն,
Իմ ձձմի թանը ղուրբա՛ն,
Մեր օջախի ցանը ղուրբա՛ն,
Ֆրանկի ատլասը ղուրբա՛ն,
Հինդու յաղութ քարը ղուրբա՛ն[1]:

«Ղուրբան» բառը երգի հիմնական իմաստն է և նրա կրկնությամբ արտահայտվում են երգողի անսահման սերն ու զգացմունքները: Երգերի լեզվին յուրահատուկ են նաև սիմվոլները, սիմվոլիկ պատկերները և այլաբանությունները: Սիմվոլիկ պատկերների համար որպես հիմք օգտագործված են երկնային լուսատուները՝ լուսին, արևգակ, աստղեր, բուսական աշխարհը՝ խնձոր, նուռ, նուշ, թուզ, մարդկային կյանքից ու կենցաղից վերցրած շատ իրեր՝ կուլա, կուժ, սափոր և այլն, որոնք ունեցել են առանձնակի իմաստավորում:

Խնձորը հնուց անտի սիրո և անմահության խորհրդանիշ է նղել. երգի «Կարմիր խնձոր գոգիդ դնեմ» արտահայտությունը խորհրդանշել է որդու փեսայության զաղափարը: Նուռը, նուշը, թուզը նույնպես պտղաբերություն են խորհրդանշել, և երգերում դրանք այդ իմաստով են արտահայտված: Որդու յուրահատուկ քաղցրությունը ընդգծելու համար օգտագործված է «մազա», «սուփրի մազա» այլաբանությունը, «կլկլան կուլա, կուժ»՝ խորհրդանշել է մանկան անհոգությունն ու կենսախնդությունը:

Այլաբանությամբ են հաճախ արտահայտվում մոր ցանկությունները մանկան ապագայի և երջանկության վերաբերյալ, որի կարևոր նախապայմանը համարվում է երախտագիտության զգացումը: Այս մոտիվը շատ տարածված է օրորոցային երգերում: Ահավասիկ մի օրինակ.

---

1 Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

Կըճատ իմ արուխ, մարուխ,
Կըճատ թիվքերդ վեր վերու,
Սարե-սար կա էրթալու,
Սասուն ծաղիկ կա քաղելու,
Քու քավորոջ օրոխկելու,
Թառըմ տու, թառն ըռ քավոր,
Թառոջ խաթուն էր քավորկին[1]:

Այստեղ այլաբանությունը ընդգրկում է ողջ երգը. երգի ներքին իմաստից կարելի է կռահել, որ խոսքը վերաբերում է քավորի ծառայությանը՝ մանկանը կնքելիս և մանկանը երախտահատույց լինելու պարագային:

Օրորոցային երգերը ուշագրավ են իրենց կառուցվածքով ևս: Դրանք երկտող, եռատող, քառյակ և մեծածավալ երգեր են. յուրաքանչյուր երկու, երեքտող կամ քառատող տներին հաջորդում է կրկներգը, վերջինս կարող է հանդես գալ նաև երգի կա՛մ սկզբում, կա՛մ վերջում: Հայօրորներին հատուկ է մինչև 15 վանկանի նույնահանգ, երբեմն նաև անհանգ տողը: Օրորոցային երգերից շատերը հանպատրաստից ստեղծված երգեր են՝ քառյակներ և այլն, որոնք ժողովրդական երգերին հատուկ եղանակով հավելվելով, աճելով, համեմվելով կրկներգերով, դառնում են ծավալուն երգեր: Նման ճանապարհով առաջացած երգերի համար իբրև հենք մեծ մասամբ ծառայում են ժողովրդական խաղիկները, ջանգյուլումները, ինչպես նաև ժողովրդական բանավոր ստեղծագործության այլ երգատեսակներ:

Յուրաքանչյուր խաղիկ-քառյակը երկփեղկվում է և ամեն երկտողին հաջորդում է օրորոցային կրկներգը և այսպես պարբերաբար. ահա, օրինակ՝

Լուսունկան կամար, կամար,
Ես կուլամ քեզի համար,
Գառս ննննի՛, ննննի՛,
Եկո կլի քնացիր,
Իմ անուշ խաթիերըս համար[2]:

Սա հետևյալ հանրահայտ խաղիկն է.

Լուսունկան կամար, կամար,
Ես կուլամ քեզի համար,

---

1 «Աղգագրական հանդես», գիրք XX, Թիֆլիս, 1910, էջ 104:
2 «Բյուրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1898, № 1:

Բլբրվիր ետիդ նայիր,
Աստծու խաթեր համար[1]։

Լինում են նաև դեպքեր, երբ խաղիկը դուգորդվում է կրկներգով.

Ա՜խ էնիմ, արուն գուքա,
Սրտիցս սև արուն գուքա,
Վիզս զարկին, ոթղին շվար,
Առան յարս հետու տարան.
Նանի՜կ, նանի՜կ, ի՜մ բալա,
Դարդս ծով ա, ի՜մ լալա[2]։

Գեղչկուհու համար անհրաժեշտ միջոցը օրոր ասելու համար խաղիկն է՝ ջան-դյուլումը, որտեղ արտահայտելով իր տրամադրությունը, ստանում է օրորոցային կրկներգ և բարդվելով ու աճելով, դառնում է ընդարձակ օրորոցային։

Խաղիկներն առհասարակ ժողովրդական երգի տարերքն են և իրենց բազմազանությամբ ծառայում են մի շարք նպատակների, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Աբեղյանը. «Խաղիկը նախնական ժամանակներից ցայսօր մոդայից չընկնող բանաստեղծական ձևն է, ոչ միայն մեր, այլև ընդհանուր ազգերի մեջ տրամադրություն արտահայտելու համար ստեղծված հարմարագույն ձևն է»[3]։

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ

Ժողովածուի մյուս ծավալուն բաժինը խաղերգերն են։ Երգը մանկան խաղի անփոխարինելի մասն է, և խաղերը հիմնականում ղուգակցվում են երգով։ Խաղի հիմքում կենսուրախ և կենսահաստատ տրամադրությունն է ընկած։ Խաղը կապված է գործողությունի, դաղափարի հետ։ Երեխայի խաղը սկսվում է օրորոցից, երբ նա անգիտակցաբար, բնազդորեն թոթվում է թաթերն ու տոտերը։ Աստիճանաբար գիտակցվում է շրջապատը, նա սկսում է ավելի հաճախ առնչվել շրջապատի իրերին և երևույթներին ու իր խաղերով, շարժուձևերով փորձում է նմանվել մեծերին։ Նրան դար-

1 Մ. Աբեղյան, *Ժողովրդական խաղիկներ*, Երևան, 1940, էջ 523։

2 *Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ*, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ)։

3 Մ. Աբեղյան, *Ժողովրդական խաղիկներ*, Երևան, 1940, էջ 51։

մանք է պատճառում ամեն ինչ՝ թե՛ թռչնի ծլվլոցը, թե՛ կատվի մլավոցը, շան հաչոցը. երեխան փորձում է նման ձայներ հանել։ Վաղ հասակից իսկ երեխան իր խաղերը նմանեցնում է կյանքի իրական դեպքերին. որոշ ժողովուրդների մոտ, ինչպես՝ ֆրանսիացիների մոտ, այդ խաղերը հենց այդպես էլ կոչվում են՝ իմիտատիվ— նմանողական։ Հայերի մոտ ևս խաղերի մի խումբ կա, որ կոչվում է նմանողական։ Նմանողական խաղերը լայն տարածում ունեն երեխաների շրջանում, այդ տիպի խաղերից են հարսանիքի, որսի խաղերը, որոնց հիմնական նպատակ ու աշխատությունն է հաղորդում երեխան իր երևակայությամբ և հոգևոր հնարավորություններով։ Խաղերի դերը մեծ է երեխայի մտավոր և ֆիզիկական դաստիարակության գործում։

Խաղերը նախնական սովորությունների արտացոլումն են, նրանց միջոցով կարելի է որոշակի տեղեկություններ քաղել հնադարյան կյանքի և կենցաղի մասին։

Մանկական խաղերը առաջացել են ամենուր. նրանց բնորոշ է կենսուրախ և զվարճալի տրամադրությունը։ Երեխաները խաղերով հետևում են մեծերի կյանքին, ջանալով ամեն ինչում նմանվել նրանց, որի հետևանքով էլ հասարակական-տնտեսական զարգացման պատճառով շատ սովորույթներ, իրեր, գործիքներ, որոնք մոռացվում կամ դուրս են գալիս կիրառությունից, պահպանվում են երեխաների մոտ խաղալիքի և խաղի տեսքով։ Ուրեմն և պարզ է, որ յուրաքանչյուր ժողովուրդ իր էությամբ ու հոգևոր պատկերով խոր կնիք է դնում մանկական խաղերի վրա, հենց այդտեղ էլ թաքնված է նրանց պատմա-ազգագրական արժեքը։

Խաղերը նաև դաստիարակության լավագույն միջոցներ են։ Դրանք կրթական մեծ դեր են կատարում։

Մեր նպատակն է պարզել խաղերի անբաժանելի և ուշագրավ մասի՝ երգի, խաղերգի դերը մանկական խաղերի ընթացքում։

Կառուցվածքային տեսակետից խաղերգերը խմբավորված են ըստ բաժինների՝

I բաժինը հաշվերգեր, վիճակախաղիկներն են, որոնք ասվում են խաղը սկսելուց առաջ, խաղը առաջինը սկսելու կամ խմբի ավագ ընտրելու համար։ Հանգավորված քառատող, վեցնյակ, ութնյակ, մեծ մասամբ մթագնված բովանդակությամբ, հնարովի կամ օտար բառերի կույտից կազմված երգեր, որոնք աչքի են ընկնում իրենց շարժունակությամբ ու կենսուրախությամբ։ Թվում է, թե

Թվացող անրովանդակությունը խարուսիկ է, այն, ինչպես և բնահյուսական վիպա-էպիկական ժանրի մանր տեսակները, գալիս են խոր հնությունից, իսկ դրանց արտաքին տեսքը խոսում է այն մասին, որ դրանք հնարավոր է, որ հնագույն գուշակություններ բանաձևեր եղած լինեն, երբ վիճակ դցելը, ըստ բնապաշտ մարդու մտածողության, ղեկավարվել է վերուստ, անտեսանելի և անմնկնելի ուժերի միջնորդությամբ: Հաշվերգների կառուցվածքից կարելի է անգամ հասկանալ, որ դրանք իրենց ծագմամբ մանկական չեն եղել:

Հաշվերգների հիմնական առանձնահատկություններն են.

ա) երգերը ասվել են հաշվելու նպատակով և դրանք մինչև օրս էլ հիշյալ դերը պահպանում են մանկական խաղերի ընթացքում. բ) դրանք անխմատ թվացող և կամ օտար բառերի խըմբակցումից են առաջացել: Թվացող, որովհետև հաշվելիս բառն այնպես է աղավաղվում, որ անհնար է կռահել նրա սկզբնական, ճշգրիտ տեսքը, ըստ որում այդ աղավաղումը ինքնանպատակ չի եղել, այն հավանաբար պայմանավորված է հաշվի սրբելված (табу) լինելու հանգամանքին. այսպես, օրինակ՝

Ակլե, դուկլե, տնապե,
Ջարոխ, չամբար պուպուկ,
Ախտե կոճակ,
Տուր պլոմակ[1]:

Իսկ ինչո՞ւ մարդիկ հաշվի այս աղավաղված բանաձևերն չեն ընտրում: Արևելյան սլավոններին, կովկասյան շատ ժողովուրդներին, ինչպես նաև հայերի մոտ հաշվելը արգելված (табу) է եղել. այսպես, Իրկուտսկի նահանգում[2] *չէին հաշվում թռչնի որսը, սիբիրյան ռուսները՝ հավի ձվերը, հավին ձվից չկտրելու համար:*

Հայերի հնագույն հավատալիքը հավաստում է, որ ալյուրի պարկերը, թխած հացը, «ինչքն ու մալը» չեն հաշվի, տան «բերեքեթը կէրթա»[3]*: «Հավը ճիվը չեն հաշվի», «Գեղջին գիշ բանից ըմանչիլ չի, հեսաբից (հաշվից) կըմանչի»*[4] *առած-ասացվածքնե-*

---

1 *Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Տ. Նավասարդյանի ֆոնդ, № 38 (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):*

2 «Сибирская живая старина», вып. XI, стр. 20.

3 *Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):*

4 Ա. Տ. Պանալանյան, *Առածանի, Երևան, 1960, էջ 245:*

րը նույնպես խոսում են այն մասին, որ հաշիվը ժողովրդի կողմից փոխարինված պետք է լիներ ինչ-որ բանաձևով, կամ աղավաղված բառակուտով, որը հիմնականում ծառայելով իր նպատակին, «զերծ» էր պահում գյուղացուն այն ոգիներից, որոնք լսելով՝ կարող էին վնասել կամ խանգարել գործի ընթացքը: Ահա այս վախն էր պատճառը, որ մարդը սկսում է դիմել պայմանականության, պայմանական բանաձևերի օգնությանը, որի տակ թաքնված է հաշվելու և վիճակի գաղափարը:

Հաշվերգերը, վիճակախաղիկները առաջացել են մարդկային հասարակության նախնական շրջանում և անքակտելիորեն կապված են վաղեմի ըմբռնումների, պատկերացումների և սնահավատքի հետ: Դրանք իրենց հաշվելու ֆունկցիայով կապվել են երեխայի խաղի հետ և այդ լուրջ ու ժամանակի համար խիստ անհրաժեշտ դերը՝ հաշվելը, նմանողական ճանապարհով անցել է մանուկներին և աստիճանաբար զրկվելով իր սնուցող հողից, վերափոխվել է ավելի թեթև, անհոգ ու մանկան համար հասկանալի ձևի: Նոր բառերի ներմուծմամբ հաշվերգը կորցնում է իր նշանակությունը և երբեմն փոխարինվում է անիմաստ ոտանավորի ու միայն ռիթմով է կարծես գործակցում հաշվելու նպատակին. այսպես՝

Կոպալ, կոպալ,
Իվլի կոպալ,
Հերասա,
Մերասա,
Լակոտ թալեց,
Դուս թալեց[1]:

II. Խաղերգեր բաժնում ուշագրավ են և հետաքրքրության արժանի «խնամոցիկի», հարսանիքի նմանողական խաղերը: Սկսած խնամախոսության սովորույթից մինչև հարսանիքն ու նորահարսի «դարձի» ծեսը, անդրադարձել են մանկան խաղի մեջ: Ահա «խնամոցիկի» խաղերգից մի օրինակ.

Քա՛, խնամի ջան, էկե՞լ եմ, էկե՞լ,
Ա՛, խնամի ջան, ո՞ւր էս էկել:
Քա՛, խնամի ջան, աղջիկդ ուզող.
Ա՛, խնամի ջան, աղջիկ չունեմ,

---

1 «Ազգագրական հանդես», գիրք V, Թիֆլիս, 1899, էջ 54:

Քա՛, խնամի ջան, տեհել եմ, տեհել,
Ա՛խ, խնամի ջան, որդի՞ էս տեհել...

և այլն[1]:

Երգերի այս շարքում արտացոլված է գլխագնով՝ «կալինով» ամուսնության սովորույթը ևս.

— Քեզի կիտամ մաղ մի օսկի
Ա՛ռ, պարիշի, խնամի ջան[2]:

«Խնամոցիկի և հարսանիքի» երգերում տեղ է գտել նաև հարսին «զարձ» տանելու սովորույթյունը.

...Ջնգլիկ, մեր խարս խաննեցին,
Ջնգլիկ, տարան, ԹՀխ տանին,
Ջնգլիկ, զատկին կբերեն[3]:

Ինչպես տեսնում ենք, երեխաները ընդօրինակել են իրական կյանքը իրենց խաղերով: Խաղով երեխան նախապատրաստվում է լուրջ կյանք մտնելուն, և հենց այս իմաստով էլ այդ բնույթի երգերը անգնահատելի դանձարան են ժողովրդի ծեսերի ու հնագույն սովորույթների պահպանման տեսանկյունից, սա էլ հենց նրանց գիտական արժեքն է:

III. Առանձնակի ուշադրության են արժանի նաև մանկական ծաղրերգերն ու կատակերգերը: Այս երգերի ակունքը դարձյալ մեծերի կյանքն ու սովորույթներն են. նրանք հաճախ ժամանցի և կամ զվարճալիքի նպատակով ծաղրել են միմյանց, զավեշտական ածականներ տալով: Առայսօր հայկական գյուղերում պահպանված է այս սովորույթյունը. այսպես՝ Բասարգեչար գյուղում ծաղրական անուններ այժմ էլ տալիս են ոչ միայն առանձին անձանց, ինչպես՝ «Գիլու Ասլանն», «Աղվսու Կարոն», «Բոշու Հովհաննես», այլև ընտանիքների ու գյուղերի. այսպես՝ մի ընտանիքի, գիշերը

---

1 «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 45:

2 «Ազգագրական հանդես», գիրք VII, Թիֆլիս, 1901, էջ 437:

3 Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ռ. Գրիգորյանի ֆոնդ (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ):

սխալմամբ հորթի փոխարեն էշ մորթելու համար կոչում են «Ջոշիկ տուն», «Կոկոյ տուն» և այլն, այնպես որ մանկական ծաղրերգերը և կատակերգերը ևս երեխաները ժառանգել են մեծերից։ Այդ երգերում ծաղրվում են անուններն, մարդկային բնավորության արատավոր կողմերը՝ ագահությունը, ծուլությունը և այլն։ Ծաղրերգերն ունեն աշխույժ և կենսախինդ բնույթ։

IV. Հետաքրքրական են նաև բնությանը և երկնային լուսատուներին՝ արև, լուսին, աստղեր և կենդանական աշխարհին նվիրված երգերը։

Կան նաև երգեր նվիրված կենսաբեր զարնանն ու նրա ավետաբերներին՝ արագիլին, կռունկներին և այլն։ Այս երգերի հիմնական մոտիվը կենսահաստատ տրամադրությունն է, հավատը գալիքի նկատմամբ։

V. «Հարսանացուներ և հանդավոր ասույթներ» բաժնում ամփոփված են միահանդ բառաբարդությունների միջոցով, ժամանցային և զվարճալիքային տրամադրությամբ հյուսված մանկական երգերը։ Դժվար է ասել ովքեր են դրանց հեղինակները, երեխանե՞րը, թե՞ մեծերը։ Մի բան պարզ է, որ դրանք ևս խոր հնությունից են գալիս և ավելի շուտ դյութանքի, համայական խոսքի, աղոթքի բանաձևային դրսևորումներ են. այսպես, երբ աչքը որևէ բանի է ընկնում, ասում են.

Մեղ ես՝ ծալվի,
Ջեղ ես՝ հալվի[1]։

Կամ չսոդին՝

Ով որ չգա՝ չիքչքա,
Պատից կպչի, պոկ չգա[2]։

Սրանք բնույթով, կատարման եղանակով (թռչկոտելով են երգում) հարաբերաբար են մանկան հոգեբանությանը, սակայն ծագումնաբանորեն մանկական չեն և դեռ ավելին՝ որոշ դեպքերում, հավանաբար, կապվում են հնագույն հավատալիքների հետ, ինչպես, օրինակ.

---

1 «Ազգագրական հանդես», գիրք XI, Թիֆլիս, 1904, էջ 42։
2 Անդ, էջ 44։

Ստանա, ստանա,
Պոչիդ տակը պան մը կա,
Դու բի, կևսը ինձ, կևսը քեզ...[1]:

և այլն:

Այս ասույթները մեծավ մասամբ արտասանում կամ երգում են մեկ-մեկ. այնտեղ կան երգեր, ուր դիմում են մկանը՝ նոր և ամուր ատամի համար, խխունջին, թռչուններին. թռչկոտում են և արտասանում երգը, որպեսզի լողանալիս ականջը լցված ջուրը թափվի և այլն, և այլն:

Սրանք իրենց բնույթով ավելի շուտ բառախաղեր, խոսքախաղեր են և բանահյուսական մի շարք տեսակների նման ասվել են ժամանցի և կամ զվարճալիքի նպատակով:

---

1 «Ազգագրական հանդես», գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 175:

I

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ՕՐՈՐՈՑԱՑԻՆՆԵՐ

1

Օրո՜ր, օրո՜ր հայրենի,
Հայրենի, ծառդ արմավենի. է՛, է՛, է՛,
Արմավը քու ծառը կու լինի,
Պյուլպուլը քու ճեղդ կութառի։ է, է՛, է՛։

Ակն
ԲՆԱ 33 (601)

2

Աղվորս եմ դրեր օրան,
Մեջն է վարդ, բոլորն ըռահան,
Ով անցնի՝ վարդեն առնե,
Ով դառնա՝ կարմիր խնձորեն։

Ակն
ԲՆԱ 33 (601)

3

Թ'ելլե ի սարեն հովիկ,
Տանի օրրանդ ու բերե. է՛, է՛, է՛.
Թ'գայ ի ձորեն պյուլպյուլ,
Քեզ օրո՜ր, օրո՜ր թող կանչե. է՛, է՛, է՛։

Ակն
ԲՆԱ 33 (602)

4

Օրոր՛, իմ ատլաս ու խաս,
Աղվորին սափաթն է դրած,
Սափաթն է օսկուն շինած,
Ու զատկին ի դուրս է հանած։

Ակն
ԲՆԱ 33 (602)

226—4

5

Աղվոր ես չունիս խալատ,
Երթամ ո՞վ բերիմ[1] պէն խալատ.
Երթամ լուսնկան բերիմ,
Լուսուն աստղերը պէն խալատ։

Ակն
ՀԱԾ 407

6

Աղվոր ես չունիս խալատ.
Քու ամեն տեղտ է պէն խալատ։
Դուն ալ խալատ բան մ՚ունիս,
Քուն չունիս, արթուն կու կենաս։

Ակն
ՀԱԾ 407

7

Պյուլպյուլը վարդին սիրուն,
Չի լնիր գիշերն ալ ի քուն
Ո՛ւշ գիշերը քուն կուլլի.
Ո՛ւշ ցորեկն միժվի իրիկուն։

Պառկեմ անուշ քուն եղի,
Մինչուկ գա լուսն առավոտուն։
Լուսնա, բարի լուսը գա,
Պյուլպյուլս ալ կելլէ քնուն, (2 անգամ)
Կեսն է քուն, կեսն է արթուն։

Ակն
ՀԱԾ 409

8

Պյուլպյուլը պաղճան է իչեր,
Վարդենվոյն թփիկն է թառեր,
Անուշ մեննամշին հոտուն,
Աղվորիս քնիկն է տարեր։

Ակն
ՀԱԾ 409

9

Քու գինտ է հազար ոսկի,
Հազար ալ կուտամ էվըլի,
Հազար ալ անոր կուտամ.
Լոս երեսդ երկու պենկ։
Աղվոր ես ծոցուտ իվեր,
Երթամ ո՞վ բերիմ խաղ-ընկեր։
Երթամ լուսընկան բերիմ,
Լուսուն աստղը խաղ-ընկեր։

Ակն
ՀԱԾ 410

10

Կարմիր վարդ ու լան տերև,
Բացվեցար օտայիս վերև։
Քանի որ կա պախճա տերև,
Անխտար կուզիմ քեզ արև։

Ակն
ՀԱԾ 409

11

Մեծնաս դուն հազար տարի,
Ու չի գաս ավուր մի չարի,
Ավուր մ'ուր չարի տիգաս,
Քու չարերը դառնա բարի[1]։

Ակն
ՀԱԾ 409

12

Պյուլպյուլը վարդին սիրուն,
Խև եղեր չի դահիր ի տուն։
Պիլպուլ, դուն ալ տուն դահե
Խև եղեր մարիկտ սիրուտ,
Մարիկտ սիրուտ Թոռամեր,
Աչերտ ալ քու կարոտուն։

Ակն
ՀԱԾ 413

13

Պլպուլ ձան արևր ձագերուն,
Քուն է բևրևր շահևն աչերուն.
Քուն է բևրևր աչերն լցևր,
Անուշ քնով է քնացուցևր։

Ակն
ՀԱՃ 413

14

Դուն ապրիս հազար տարի,
Հազար ալ ապրիս նը պիտի,
Եաին դին մևռնիլ չի պիտի։

Ակն
ՀԱՃ 407

15

Աղվոր ւ՝ աղվորաց որդի,
Աղվորնաց քեռոց քեռ որդի։
Քու ծառտ ու ճեղտ ոսկի,
Քու տևրևտ վարդ կու մանի։
Քու ջուրն է անպակ դինի,
Քու կուղևլտ տեղ չի լինի։

Ակն
ՀԱՃ 407

16

Ծոցիկտ ի պախճա անիմ,
Քեզ մեջը մորճ տի տնկիմ,
Ջրեմ ու պահեմ պոծառ,
Ջինիա[1] չծոումցնեմ։
Պահեմ ու հեննեմ գարուն,
Ծաղկունացս հավսար ցուցնիմ։

Ակն
ՀԱՃ 408

17

Գուն ապրիս հորով մորով,
Հաց նստիս ջուխտակ աղբարով։
Ապրիս դուն հորով մորով,
Ու լցվի սրտիկտ արևով։

Սրտիկտ արևով լցվի,
Մեր դուվին կարմիր խնձորով,
Ով անցնի՝ վարդետ առնե,
Ով դառնա՝ կարմիր խնձորեն[1]։

Ակն
ՀԱՃ 408

18

Է՛ անիմ, օրո՛ր անիմ,
Սղնները քու բերին փայ անիմ,
Էմմենուն քչիկ-քչիկ,
Քու փայիկտ էվել տի անիմ։

Ակն
ՀԱՃ 408

19

Օրո՛ր, օրո՛ր քուն ունիս,
Պեշիկին մեջ տուն ունիս,
Օսկիե օրրան ունիս,
Մարդրտե յորղան ունիս,
Ճենփայիրեն բարձ ունիս,
Շար ու շամաթ չոր ունիս։*

Ակն
ՀԱՃ 412

20

Օրո՛ր, օրո՛ր, քներ ես,
Քներ ես քրտներ ես.
Գամ օուղանդ դան տանիմ,
Վարդի նման բացվեր ես։

Ակն
ՀԱՃ 412

---

* Բարակ, լավ— ասել կուզի, բայց ինչ լեզվով է, դժվար է ասել (Ծ. Բ.)։

21

Օրո՜ր, օրո՜ր կապիմ կախ օրան,
Ծառն ի ծառ շուքերն ի վրան,
Ծառ շքեր վրա նկնք,
Շուք արևք (անուն) վրան[1]։

Ակն
ՀԱԾ 413

22

Հայրիկա ապրի, մայրիկա արևի,
Հայրիկա ապրի՛, մայրիկա ալվա ծնի,
Նա ալ օրան դնե ու օրորե.
Օրո՜ր, օրո՜ր, իմ աղավնիկ,
Քնացնիմ սիրով սրտիս։

Ակն
ՀԱԾ 412

23

Օրո՜ր, օրո՜ր, ապրիս դուն հորով,
Ապրիս հորով ու մեծնաս մորով. է՛, է՛, է՛,
Պահեմ շարե-շար շապկով լաթերով,
Մարգըրտի նռան հատերով. է՛, է՛, է՛։

Օրո՜ր, օրո՜ր, իմ հարիկ, մարիկ,
Հարիկ, մարիկ ու բարկ արևիկ. է՛, է՛, է՛,
Արևը քու տնակը ցաթե,
Շաուվեղը քու մարիկն առնէ. է՛, է՛, է՛։

Ակն
ՌՆԱ 33 (602)

24

Օրո՜ր, օրո՜ր, այբխ եւ,
Լահուռ շալի լայբխ ես.
Լահուռ շալն ուր ինչ կանին,
Թագավորի լայբխ ես։

Ակն
ՀԱԾ 410

25

Որո՜ր, որո՜ր օրերուդ,
Թէս դեմ բերեմ չարերուդ. է՛, է՛, է՛,
Ձարխափան չարերդ խափանէ,
Աստվածամայր արևդ պահե՛. է՛, է՛, է՛։

Դուն քուն չես, այլըխ ես,
Լահուռ շալի լայլըխ ես. է՛, է՛, է՛։
Երեսդ երեք բենկ ունիս. է՛, է՛, է՛։

Ակն
ԲՆԱ 33 (602)

26

Որո՜ր կանչիմ իմանաս,
Պառկիս ե՝ անուշ քնանաս,
Քնանաս ու մեծանաս.
Մեծանաս ու մեծ մի լընիս,
Բոլըրիս ու գեղ մի լընիս,
Ան գեղն ուր մեծ չի կենա,
Ան գեղին մեծն դուն լընիս։
Դուն լընիս անտառ մորուն,
Ձարնես քոքիկդ խորուն,
Քոքիկդ խորուն զարնես,
Ծառտ շուք անե ճեղերուդ։
Ծառ շքեր, վրա եկեք,
Շուք արեք մեր պյուլպյուլներուն։

Ակն
ՀԱԺ 410

27

Որո՜ր, որո՜ր,
Իմ հոգուս հոգին, որո՜ր,
Իմ նորատունկ էգին, որո՜ր,
Որ նոր է՝ ժմներ, որո՜ր,
Պըտուղ չէ տվեր, որո՜ր,
Տըվեր այվա ու խնծոր, որո՜ր,
Մեկ ճըղեն, հազար տերևեն, որո՜ր։

Ակն
ԲՆԲ 48

28

Օրո՜ր, օրո՜ր իմ որբընոցին,
Որբընոցին ու դրկընոցին,
Որբընոցին օրերը շատնան,
Դրկընոցին տարեկն ավելանա,
Տարեկտ հազար տարու մոտնա,
Անձիկտ հազար բարու տիրանա։

Ակն
ՀԱՃ 411

29

Օրո՜ր, օրո՜ր եղներն ին եկեր,
Եղներն ին եկեր, լեռներն ին իջեր։
Քեզ ալ անուշ քնիկ ին բերեր.
Բերեր քու ծով-ծով աչերդ ին լցեր,
Անուշ քնովդ ին քնացուցեր,
Քաղցրը կաթնովն ին կշտացուցեր։

Ակն
ՀԱՃ 410

30

Օրո՜ր, օրո՜ր, աները տա քնիկ,
Մարիամ մար խաղաղութիւնիկ,
Մարիամ մար խաղաղութիւնիկ.
Դուն պառկիս ու՝ անուշ քնանաս։
Մարիամ մարը մար կանինք.
Իր մեկիկ որդին չարտըմճի։
Երթամ Եղկեցի մտնիմ,
Ուր բռնիմ սուրբը տուաճի։
Սուրբ խաչն ալ աղբար անիմ,
Թևը վրայնիս պահե։

Ակն
ՀԱՃ 410

31

Պեշիկն արծաթ, կամարն օսկի,
Օրոցքի կապը թելլի փոշի,
Աչքի կապոցը սրմա փոշի,
Մեջը պառկողըն անգին որդի,
Վարդի հոտով քուն աննի.
Սաղ աշխարհքի տեր աննի.
Օրո՜ր ասեմ, երերցընեմ,
Օրորոցով մեծացընեմ։

Ակն
ԲՆԱ 44 (771)

32

Օրո՜ր, օրո՜ր աննման,
Մարը չէ բերեր քու նման.
Ոչ մարն է բերեր նման,
Ոչ արևն ու ոչ լուսընկան։

Ակն
ԳԺՏԱ 243

33

Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր,
Ոչ քեզի մար իմ եղեր,
Ոչ քեզի օրոր իմ ըսեր,
Լեռներն օրոր ըսեր,
Հարաւ հովիկն ալ օրորեր։

Ակն
ԲՆԳ 763

34

Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր,
Ոչ քեզէ վատ եմ ուզեր,
Ոչ քեզի վատ եմ կամեցեր.
Արևն ուր մորեն փրթաւ,
Քեզ ալ ան իմ կամեցեր.
Ոչ քեզի մար իմ եղեր,
Ոչ քեզի օրոր իմ ըսեր.
Լեռներն օրոր ըսեր,
Հարաւ հովիկն ալ օրորեր։

Ակն
ԲՆԳ 763

Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր,
Քանի պզտիկ էիր՝
Դըրի օրրան, օրեցի.
Մեծցար, եղար մենծ արև,
Դրի համբու «դե գնա».
Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր,
Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր.
Երթաս շատ երկիր ժուռ գաս,
Շատ մազերով տուն գառնաս,
Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր,
Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր:
Ես էլ կուգամ հետ քեզի,
Թող մնամ ծարավ անոթի, օրո՜ր,
Չի մնամ տեսիդ կարոտի:
Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր,
Լեռներն ի վեր կէրթաս, կանաչ մորի է,
Քու մեկ օրըդ ինծի հազար տարի է,
Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր.
Ոչ քեզի վատ իմ ուղեր,
Ոչ քեզի վատ իմ կամեցեր,
Արևն ուր մորուն փրթավ,
Քեզ ալ ան իմ կամեցեր,
Օրո՜ր, գառնուկ, օրո՜ր.
Ոչ քեզի մար իմ եղեր,
Ոչ քեզի օրոր իմ ըսեր,
Լեռներն օրոր ըսեր՝
Հարավու հովիկն ալ օրըրեր.
Երթաս ու տուն գառնաս բարով,
Օրո՜ր, ձագուկ, օրո՜ր:
— Օրրիմ օրնակ, կապիմ կախ օրնակ,
Ուռև տըկի պաղ շուքն ալ վըրադ,
Գա թառի պուլպուլը վըրադ:

Ակն
ԲՆԲ 48

36

Ես քեզ օրով մեծցընիմ,
Նուշ ու շաքար կերցնիմ։

Ակն
ՀԱԾ 408

36 ա

Կարմիր վարդի նման բացվեր ես,
Անուշ ձանով կանչիմ օրո՜ր։

Ակն
ՀԱԾ 412

37

Քե գնեմ օսկի ուրուրոց,
Վերեդ քաշիմ մարկրտեն ծածկոց.
Շուտով քնես, բարով զարթնես,
Իմ վարդ որդի, խուկուտ եմ ես։
Տա՜ր-տա՜ր, որդի իմ, տա՜ր-տա՜ր,
Քյո մերիկն էր պրինտար։
Էրկնուց անանակ քյո պնտին թեղ,
Վերու ոչխար քե կաթ տեր,
Վարդիս իրես շուշան ծաղկեր,
Քամին ուրուրոցդ շար օրորեր։
Օրո՜ր, որդի իմ, տա՜ր-տա՜ր,
Քյո մերիկն էր պրինտար։
Ձեռացս խինի վերեն պառկի,
Մեր հայրենյաց սուգ ծրծի,
Աստված քեզի գրկեր շախեր,
Ջում քյո մերիկդ խանք առներ։
Ուրո՜ւր, որդի իմ, տա՜ր-տա՜ր,
Քյո մերիկդ էր պրինտար։
Քե շատ օրոր, տար-տար ասեմ,
Բացվիս իմ վարդ, քե մեռնեմ.
Բախն ու փեսատ առնես տանես,
Ափնիք այգին փորես ցանես։
Օրո՜ր, իմ վարդ ու տա՜ր-տա՜ր,
Քյո մերիկն էր պրինտար։
Տա՜ր-տա՜ր, իմ վարդս ու օրո՜ր,
Աստված քի տա զվարթ օր,
Առնես կյութանն ու խարոր,
Խաց վաստակես քյո խոր, մոր.

Ուրուր ասեմ, քե տա՜ր-տա՜ր,
Քյո մերիկն էր պրինատար։
Սուր գերբնաին ու մանկյաղ
Դիր վեր ենիդ՝ գնա դաշտ,
Կարիճ հեռյնած ցորենքաղ
Պեքոլ արա գու իմ վարդ։
Օրո՜ր, որդի իմ, նանի՜կ,
Պրինատար է քյո մերիկ։
Օրանր կրրի սելերով,
Խաղ ասելով բեր լից կալ,
Յորեն ծեվի խով տանով,
Խայան արա, ի՜շ արա՜ր։
Օրո՜ր, իմ վարդ ու նանի՜կ,
Պրինատար է քյո մերիկ,
Ախ, երբ կէլնի պրինատար,
Քյո մերդ ուտի վարդիդ պար։
Օրո՜ր, իմ վարդ, ի՜շ նանի՜կ,
Պրինատար է քյո մերիկ։
Ախ, ի՜րբ կէլնի կտրբճնաս,
Ծիլ ծալածալ փառք ծփաս,
Եվ իննոցից Բյուդ առնես,
Որ մեր իգին ավերես,
Որ նորատունկն մեր խլես,
Որ գինիից մեզ զրկես,
Որ բարութենից մեզ լռկես,
Որ սեր, սոնին կոտրտես,
Որ մեր գութանն լեխառես,
Որ խարոն մեր առես,
Որ մեր դաշտերն օղողես,
Որ մեր առն-առդ կործանես,
Որ խորոխպերդ ըսպանես,
Որ մեր հրկիրն էլ ճուփես։
Է՜հ, խոնք երբ որ ես տեսնամ.
Մեղրեն անուշ քե կաթ տամ.
Հայոց հրեշտակ սիրուն վարդ,
Օրո՜ր կասեմ քե զվարթ,
Քե շատ օրո՜ր ու նանի՜կ,
Երջանիկ է քյո մերիկ։

Վան
ՊՎՍ 59

Օրո՜ր, օրո՜ր, քուն ունիս,
Պեշիկթաշը տուն ունիս. է՛, է՛, է՛,
Մարգըրտե յորղան ունիս,
Ջևահիրե բարձ ունիս. է՛, է՛, է՛,
Ոսկե օրրոց կապ ունիս,
Շարուքնար շոր ունիս. է՛, է՛, է՛,
Օրոր կապեմ կախ օրրան,
Ծառե ծառ շուքեր վրան. է՛, է՛, է՛,
Ծառի շուքեր վրա էկեք,
Շուք արեք, որ աշխես քնանա. է՛, է՛, է՛,
Օրո՜ր, օրո՜ր, օրհրուդ,
Քևս դեմ բերեմ չարհրուդ։
Չարխափան, չարհրդ խափանեն,
Ասուվածամար արևդ պահե։
Բաղչայիդ բախչպանն եմ ես,
Բա՛ց դըռնակդ ուր մտնեմ ներս,
Մտնեմ վարդ ու նուռ քաղեմ,
Արմաղան դրկեմ դարիբիս։
Օրո՜ր, իմ ատլաս ու խաս,
Քևդ աղվորին սափսան է դըրած,
Ջատկե զատիկ ի դուրս է հանած,
Արևգական չէ ցըցուցած։
Դուն քուն չես ու այըխ ես,
Լահուռ շալի լայըխ ես,
Երեսդ երեք բննկ ունիս.
Թազըվորի լայըխ ես,
Բլբուլն ի վարդի շըքուն
Կուտ կուտե, արցունք կթափե,
Կուտ կուտե, արցունք կու թափե,
Իր բըննիկն ու տեղիկն կուզե։
Օրո՜ր, օրո՜ր քներ ես,
Ծածկեր եմ, քրտներ ես,
Երեսիդ շարը դեն տանիմ,
Վարդի նման բացվեր ես։
Վարդերու անուշ հոտուն
Պատկե՛ ես եղիր անուշ քուն։

Ակն
220 322

Օրո՜ր, օրըտ երկարի,
Օրշննենք առնես տեր պարի,
Մլիս ծախկիս, զորանաս,
Պարով առնես րո մուրազ,
Քամին ցըրվի քու բիուշամ,
Բիուշամ, քաքուլ ափըռշում։
Ճոչընաս, ճարտարանաս,
Պարով առնես քու մուրազ,
Ախչկներ ծըռին վերետ,
Նասիբտի առնես տերետ։

ՀԺԲԱՔ 3

40

Օրո՜ր, օրո՜ր, իմ որդիս,
Քունը տանի սիրականիս,
Քուն չունիս, արթուն կկենաս,
Ոչ ցերեկը քուն ունիս,
Ոչ ցերեկվան ինչվան իրիկուն։
Քնանաս ու մեծանաս,
Հազար բարու տիրանաս.
Օրո՜ր, օրո՜ր, քուն ունիս,
Բհշիկտաշը տուն ունիս.
Մարգրտե յորղան ունիս,
Ջավահիրե բարձ ունիս,
Էկար քեզ բաղջան տանեմ,
Ծառե ի ծառ կապեմ կախ ուրան։
Հովնուկն անուշ, քունդ անուշ,
Կարմիր վարդերն է բացվեր,
Վարդերուն հոտն ալ անուշ.
Քնացիր, սիրուն որդիս,
Քու քունդ ալ ըլլի անուշ։
Ա՜յ էննեմ, որ քնանաս,
Պզալիկ ես՝ մեծանաս,
Մեծանաս ու մեծ մը ըլլիս,
Բոլըրիս, գեղ մը ըլլիս։
Քներ ես, քնկրեր ես,

Ծածկեր եմ, քրտներ ես,
Գամ շալդ տան տանեմ՝
Վարդի նման բացվեր ես։
Վարդերը սիրուն հոտն անուշ,
Սիրականիս քունն անուշ։
Քնացիր, որդիս, ու մեծ մը ըլլիս,
Դուն աս քաղքի վրա խոսաց դեր ու իշխան ըլ...
Օրո՛ր, օրո՛ր, տուն մեծանաս հորով,
Սնանիս մորով,
Դնեմ ուրան, կանչեմ օրո՛ր,
Քաղցր կաթով տի կշտացնեմ,
Բազկիս վրա տի մեծցնեմ[1]։

Ակն
էԱԺԶ 71

41

Քուն դնեմ քնի, բալա ջան,
Ծածկեմ քրտնի, բալա ջան,
Օրոր ծածկանդ եդ քաշիմ,
Վարդի պես փուվիս, բալա ջան։

ՀԺԲԱՆԲ 3

42

Լուսընկան կամար-կամար,
Ես կուլամ քեզի համար,
Գառս, եկու կըլլի քնացիր,
Իմ անուշ խաթերս համար։
Ձագս, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր։
Օր ըսեմ, օրիկդ շատնա,
Օրդ ու արևդ շատնա,
Օրեդ, արևեդ տաքնամ,
Քեզի աղեկ յար մը գտնամ։
Ձագս, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր։
Օրո՛ր ասեմ, քնանաս,
Հազար փառքի տիրանաս,
Բայց երբ քունդ չի գա՝
Ծախու առնեմ, քնանաս։
Ձագս, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր, օրո՛ր։

Պախչան կապեմ կախ օրան,
Ծառև-ծառ շուքեր վրան,
Շուք ըրևք, որ աղաս քնանա,
Զագուկ, օրո՜ր, օրո՜ր, օրո՜ր, օրո՜ր։

ԺՆ 152

42 ա

Լուսունկան կամար-կամար,
Ես կու լամ քեզի համար,
Գառս, նէննի՜, նէննի՜, նէննի՜...
Եկո կըլլի քնացիր,
Իմ անուշ խաթիրս համար,
Զագս, օրո՜ր, օրո՜ր, օրո՜ր.
Գառնուկս աս տեղանը,
Ջուր կոլիր փոս տեղանը,
Սիրաս նզեր աղուննիկ,
Չի կենար աս տեղանը։
Ա՜խ ըսիմ, արին կու գա,
Սիրաս սև քարին կու գա,
Վախիմ թև ղարիպ մեռնիմ,
Ոչ քոր, ոչ աղբար կու գա։
Օր ըսիմ օրիկդ շատնա,
Օրդ ու արևիկդ շատնա,
Օրեդ, արևեդ տաքնամ,
Քեզ աղկեկ յար մի գտնամ,
Օրո՜ր ըսիմ, քնանաս,
Հաղար փառքի տիրանաս,
Բայց երբ որ քունդ չկա,
Ծախու առնեմ, քնանաս,
Լուսունկան բակ բոլըրեց,
Սև ամպին մեջ ոլըրեց,
Յարիս կուրպեք էրթալը,
Յոթը տարին բոլըրեց։

ԲՆԱ 1 (40)

43

Որո՞ր ըսիմ, քնացնիմ,
Վարդի ջրով լողացնիմ,
Որո՞ր ըսիմ, քունդ տանե,
Երդիկը դնիմ՝ շունը տանի։
Որո՞ր ըսիմ, քնանաս,
Հազար բարի տիրանաս,
Երեսիկդ ծածկեմ, որ
Անո՛ւշ, անո՛ւշ քնանաս։
Նեննիիս ձայնը կուգա,
Պառկիս նե քունդ կուգա, որո՛ր,
Հեռո՛ւ, հեռո՛ւ ճամբային
Աղա քեռիդ ուշ կուգա։
Եկե, քու մի շոր չորցուր,
Մեր տղան ալ օրորցուր,
Սարի եղնիկ դուն ծիծ տուր,
Իմ գառնուկս զորացուր։
Որ ըսիմ, որ քնիս դուն,
Քնիս ու քրտնիս դուն,
Երեսիկդ բանամ, որ՝
Վարդի պես ալ բացվիս դուն։

Բայբուրդ
ԳԹԱ 177

44

Որո՞ր, որո՞ր, որո՞ր,
Արևը կուծագի, ալվա կու մարի,
Սրտիս կեսն է տարած, կեսը կու ցավի.
օ՛ր, օ՛ր, օ՛ր,
Ճիկերս ի փորուս քաշած,
Քեպապի տեղ ոլըրած,
Տիգեկ, տիգեկ փայ ըրած,
Տիգեկ մը մոր չէ տըված. օ՛ր, օ՛ր, օ՛ր,
Որո՛ր, որո՛ր, պապդ գա բարով,
Մարըդ դեմն ելլա խնդալով, որո՛ր,
Անուշ քընկով քնանաս,
Մորով, պապով մեծանաս, որո՛ր,
Մեծանաս ու մեծ մի լընիս,
Շատընաս ու դեղ մի լընիս։

Ակն
ԲՆՐ 46

226—5

45

Ա՛խ, ի՞նչ անեմ, իմա՞լ անեմ,
էն չար աչքից հեռու պահեմ,
Մե ճար անեմ, իլաջ անեմ,
Քեզի քնցում, ջոջըցնեմ։

Ջոջըցնեմ, խանեմ ոտի,
խանեմ ոտի, կապեմ գոտի,
Կարմիր-կանաչ օրի խաստում,
Իմ սրտի դարդեր քշկըցում։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

46

Սախակ սարի տակ,
Բարոն քյարի տակ,
Կամիշն ուրուրոց,
Կոռ քյար քյն ծածկոց։

Հարաֆ քյամին քյն տանի-պիրի,
Ձեֆ-պետ աստղեր քյն դարդա՞ր ասին,
Էն վերի ոչխար կյա քյն կաթ տա,
Շրլես ու ծաղկես, բոյդ էրկննա։

Ուրո՛ւր, տղա, ուրո՛ւր, բալաս,
Շուշան ծաղիկ քյես վարդ իրիսին,
Ուրո՛ւր, ծագիչկս, ուրո՛ւր, որդիս,
Ջղղուն քյամին քյո ուրուրոցին։

Վերի մաքիչն քե ծիծ տեր,
Լիուսնակ քե դարդա՞ր ասեր,
Արեգակ քե, դադրական էլներ,
Ուրո՛ւր, բալամ, ուրո՛ւր.
Ուրո՛ւր, ձագիչկս, ուրո՛ւր։

Վան
ՎՍՇԱ 83

47

Որո՜ր ասեմ չըմ կյառնկիս,
Որո՜ր, որո՜ր չըմ բալիկս,
Միծը ծծի չըմ քաղցր կաթ,
Կահմցի, դառցի երկաթ,
Որո՜ր, որո՜ր, աղիղ կյառնիկ։

Ասեմ որո՜ր, որո՜ր, որո՜ր,
Խմի քաղցր կաթ քու մոր.
Ումուդ դու ես քու խոր ու մոր,
Որո՜ր ասեմ չըմ կյառնիկին։

Քնի կյառնիկ, շուտ ղորանաս,
Խերդ մենակ է, օգնություն տաս,
Հ'իմաստուն ըլնես, դու աշխատող,
Մեր ծերության օգնական կաս,
Որո՜ր, որո՜ր, քաղցր կյառնիկ։

Օրորոցդ շղմատից է շինված,
Խորտ ձեռք-ոտ աշխատելուց կահմցած,
Շուտ մեծանաս խորտ մեջքի սուն տառնաս,
Որո՜ր, որո՜ր քաղցր կյառնիկ։

ՀԾԲԱՂ

48

Օրդիս Օրին պապրկյան է՝
Նշմարք շարած հազիր կանե,
Խզմեքներուն թաղիր կանե,
Որո՜ր, որո՜ր, օրորցունիմ,
Քունը անուշ ավելցունիմ,
Շատ բաներու տիրացնիմ,
Վարդի ջուրով զարթեցնիմ,
Անուշ գինով հարբեցնիմ,
Կուլպե շաքրով կշտացնիմ։

Ղրիմ
ՀԾՀՀՆ 88

49

Սիփանա սարի տակ, մառմառ քարի տակ
Քե դնեմ վուսկի օրորոց, բալիկ ջան,
Վրեդ քյաշեմ առծին ծածկոց,
Վերին քե ծիծ տա, ուրո՜ւր, ուրո՜ւր,
Լուսին քե պախապան կայնի,
Արեգակ քե ծծդացուցի,
Իմ աղբոր տղեն, տան տղեն,
Քրոջ տղեն՝ շան տղեն։

Թիմարա Կյուանենց գյուղ
ԷԱԺՋ 66

50

Վերի քամին զարնեն քեզ օրորցնեն,
Վարի քամին զարնեն շորերդ չորցնեն,
Դշխուն Հեղին անուշ քեզի ծծցնեն։
Նանի՜կ ըսեմ, քնանաս,
Վարդի ջրով լողանաս,
Շատ պզտիկ ես, մեծանաս։

Բայբուրդ
ԷԱԺՋ 65

51

Հայրուրուրի՜, հայրուրուրի՜,
Իմալ էնիմ իմ դարդերուն,
Օրոր էնիմ իմ դառնուկին,
Հայրուրուրի՜, հայրուրուրի՜։

Օրոր էնիմ օրորոցին,
Անուշ քուն դա դրկանոցին,
Դարդեր ունիմ քանց դարդ բեթար,
Տնից տեղից էղա բիբար։

Դարի գլուխ ճղոր զարկիմ,
Հարավ քամին տանի-բերի
Վերու էծ գա քեղ ծիծ տա,
Մևկիկ աստված քեզի պահա,
Հայրուրուրի՜, հայրուրուրի՜։

Բուլանըխ...
ՀԾԲԱՄ 6

52

Նանա՜, նանա՜, Օրսագյուլ,
Օրդ ավելնա, Օրսագյուլ,
Մեննձատևրև թաթաշոր,
Մանրատևրև ոտաշոր,
Մանրատևրև փափկոց ա.
Լենատևրև ծածկոց ա.
Քամին փչի օրորի,
Լիսինը վրեդ բոլորի,
Քամին կգա ժաժ կտա,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգյար չունի քիչ կտա,
Ոտով կտա թոլ կանի,
Մարդ լացը բոլ կանի...։

Բորչալու
ԱՀԾԱ 37

52 ա

Նանա՜, նանա՜, Օրսանգուլ,
Օրդ ավելնա, Օրսանգուլ,
Մինձափոթոլ՝ կաբաշուր,
Մանդրափոթոլ՝ կռնաշոր,
Քամին փչե օրորե,
Լուսնիակը բոլորե,
Պախրեն գուբա, ծիծ կու տա,
Ջիգար չունե, ի՜նչ կու տա,
Մե լավ էլ ածկի կու տա։

Թիֆլիս
ԹՄԿԱ 33

52 բ

Նանա՛, նանա՛, Օրսանդյուլ,
Մի օրդ թամամ, Օրսանդյուլ,
Գոգնոցումս բարուր եմ արել,
Մանրատերև փափկոց եմ արել,
Լենատերև ծածկոց եմ արել,
Նանա՛, նանա՛, Օրսանդյուլ,
Մերդ գնացել ա բանջարի,
Քամին կգա ժաժ կտա,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգյար չունի քիչ կտա։

ՀԺԲՍՍ

52 գ

Նանա՛, նանա՛, նանա՛, Օրսանդյուլ,
Պախրեն կուգա ծիծ կուտա,
Օրո՛ր, օրո՛ր, ա՛յ էրա,
Ջիգյար չունի, քիչ կուտա,
Ա՛յ էրա, ա՛յ էրա։
Մանրատերև քեղ փաթթոց,
Լենատերև քեղ ծածկոց,
Ծառներ քեզի օրորոց։

ՀԺԵՊՄ 133

52 դ

Անձրև կգա շղալեն,
Լենատերև դողալեն,
Մանրատերև փափկոց,
Լենատերև ծածկոց,
Նանա՛, բալիկ ջան, նանա՛,
Պախրեն կգա ծիծ կտա,
Ջիգար չունի, քիչ կտա։

ՀԺԲՍՍ

52 ե

Նանի՛կ, նանի՛կ, Օրսագյուլ,
Օրը թամամ, Օրսագյուլ,
Սեզատերև թաթաշոր,
Նռնատերև տոտաշոր,
Սարի պախրեն ծիծ կտա,
Քամին կտանա, կօրորա։

ՀԺԲԱՆԴ 2

52 զ

Նանի՛կ, մտամոլորի օրդի, նանի՛կ,
Քամին փչեր, օրորացնուր,
Եղնիկնին գայլն քեզի ծիծ տայլին,
Հրեշտակնին գայլն քեզի լեզացնեին,
Նանի՛կ, մտամոլորի օրդի, նանի՛կ։

Խոտրջուր
ԵԱՀԴ 61

53

Ի՞նչ մայր է ըզքեզ բերեր,
Ի՞նչ դայեկ՝ ըզքեզ սնուցեր,
Ձքեզ եղն ի սարեն բերեր,
Ու շահին բազան՝ սնուցեր.
Լուսինն՝ քեզ ծիծ տվեր,
Արեգակն է դադրեցուցեր,
Քամին՝ տարուբեր արեր,
Սուրբ կուսանքն օրոր ասացեր։

ՀՄԺԵԱ 128

54

Նանա՛, նանա՛, բալա ջան,
Փաշա, դրոշա, բալա ջան,
Ճոճը ծառեն քըցած ա,
Ըևխեն մեջը քընած ա,
Վարթըն իրեսին փըռած ա,
Ծըծուկ, ծըծուկ քըրտնած ա.

Բախրնն կըկա ծիծ կըտա,
Ջիդյար չունի, քիչ կըտա.
Հա տան տանի ըրնգոցին,
Մեզրով լիքը քըթոցին,
Քընես, զարթնես ծաքոցին,
Քու ցավըն ընգնի սև օցին,
Նանա՜, նանա՜, բալա ջան,
Փաշա, ըրրոշա, բալա ջան։

Բորչալու
ԴՔՔ 107

54 ա

Նանար ասեմ բալիկիս,
Քունը տանի ջանիկիս,
Նանա՜, բալա ջան, նանա՜,
Իմ բալեն չուստ մննձանա։
Նանը մեռնի տուտերին,
Տոտիկ, տոտիկ ման արի,
Տոտոն տոտոն գնաս քեռոնց,
Քեռին ծեծի նստես լաս,
Տատիկը կանչի, ելնես գաս։

ՀԺԲԱՍ

55

Բուրիկ էրա, բուրիկ ման.
Արթուն կեցի Շայր իմ խան,
Հարավ քամին քեզ օրորան,
Վերի էծը քեզ ծիծ տա։

ՀԺԲԱՆԴ 3

56

Որդի քյնի քյո քունն անուշ,
Վերին քե ծիծ տա, աստված քե պահե,
Քյամին քե տանի-բերի,
Ջուր քու մերիկ դառնա գյա։

Կարճկանա Նանկաց գյուղ
ԷԱԺԶ 65

57

Աղոթքընի քյամին գուքա,
Քեզի անուշ քուն կքնքա,
Լա՛յ լա՛յ, բալա, լա՛յ լա՛յ, լալա,
Իմ մեկուճար անուշ բալա։
Լա՛յ, լա՛յ ասեմ իմ մանուկին,
Քունը կտանա իմ գառնուկին.
Սարի զամիշ քեզ օրորոց,
Վերու էծ գա քեզի ծիծ տա.
Իմալ էնեմ իմ զարդերին,
Իմ մինուճար զրկանոցին,
Թողնեմ ընդոր վերու խզճին,
Գրկանոցը զամշըներուն,
Անխեր, անմեր որբընոցին,
Թողնեմ ընդոր վերու խզճին։

Ալաշկերտ
ՀԺՔԱԳ 1

58

Առա, մտա մեշևն,
Լորի՛կ, լորի՛կ, լորի՛կ,
Կապի ծառի փեշևն,
Լորի՛կ, լորի՛կ, լորի՛կ։
Մանր թփեր քեզ փաթթոց,
Լորի՛կ, լորի՛կ, լորի՛կ,
Խոշոր թփեր քեզ ծածկոց,
Լորի՛կ, լորի՛կ, լորի՛կ...
Թոն կուգա կըլողցնև,
Լորի՛կ, լորի՛կ, լորի՛կ,
Քամին կուգա, կօրորա,
Լորի՛կ, լորի՛կ, լորի՛կ,
Մաքին կուգա ծիծ կուտա,
Լորի՛կ, լորի՛կ, լորի՛կ։

ՀԺՔԱԽ 5

59

Դընեմ գավակս օրանէ,
Պագնեմ անուշ բերանէ,
Նաննի՜-նաննի՜։
Նաննի ըսեմ, քնացնեմ,
Ասուած հիշեմ արթնցընեմ,
Նաննի՜-նաննի՜։
Օրո՜ր ըսեմ, քնացընեմ,
Խաչ հանեմ արթնցընեմ,
Խաչ հանեմ արթնցընեմ,
Նուշ ու շաքար կերցընեմ,
Նաննի՜-նաննի՜[1]։

Դիարբեքիր
ԲՆԱ. 568

60

Օրո՜ր, օրո՜ր, ջանիկս, օրո՜ր,
Քըներ ես, քըրտներ ես, ասեմ օրո՜ր,
Քանց քյաֆուր վարդ փըթըթեր ես, օրո՜ր, օրո՜ր,
Բեր պագնեմ կարմիր իրես, ասեմ օրո՜ր,
Խերով, մերով ծլես ծաղկես, օրո՜ր, օրո՜ր։
Արտամեաու խնձոր դյու ես,
Վարդ ու արհանի բացվեր ես,
Ամեն ծաղկանց հոտ դու ունես,
Ասուած պահի քեզ պարզերես։
Ես քի մեռնեմ, ամառնուկ,
Ամոան օրեր ես էլե,
Ես քի մեռնեմ, իմ գառնուկ,
Դել խաւը խաշկ չէր էլե։
Ես կանչեմ տաղով արե, օրո՜ր, օրո՜ր,
Դյու վերի թաղումն արե, օրո՜ր, օրո՜ր,
Վերին թաղի Մանուշակ, օրո՜ր, օրո՜ր,
Էլներ իմ լաճուս մշակ, օրո՜ր, օրո՜ր։
Խաշկա տըփան գարընցան,
Պըզտիկներաց աշընցան,
Ձայիր չիման կանչըներ,
Էրթիր նատիր էն գիվան։
Ծափուն տըվին թըզենիք,

Ծափուն տըվին ծառաստանք,
Քարվան բաշին քյո քյեոխք,
Բյոլուկ բաշին քեռու լաճ։
էն յոթն էրնց քյո կընքողղ,
Ես հավատամ քյո ստեղծողղ,
Սուրբ Սարգսա ձին զորավոր,
Խեծնիր էրթներ ուխտավոր։
Սարեն ես գամ, ձորեն դու,
Մեր ես առնեմ, աղջիկ դու,
Աղջիկ-աղջիկ, ջան աղջիկ,
Իմ լաճուս մատաղ, աղջիկ։
Ես էլ կուգամ կեսրանց խերով,
Ես էլ կուգամ հավ ձագերով,
Ես էլ կուգամ մուշկ ամբարով,
Հազար ու մի ծաղիկներով։
Ծաղիկ քաղեմ, յարոջ տամ,
Շաբաթ մի օր էրթամ գամ,
Օրո՜ր, օրո՜ր, ջանիկս, օրո՜ր,
Օրո՜ր, օրո՜ր, գառնիկս, օրո՜ր։

Վան
ՎՍՇԲ 12

61

Ըսկնամ տենիմ օրո՜ր, օրո՜ր,
Իմ գրկանոցին օրոր, տէնիմ,
Իմ պատի ջալրիկ տքնացուցիմ,
Իմ ջոջ ջալրիկ ուխախցուցիմ.
Ալա օղեր, քյալա պողեր,
Իմ պատի ջալրիկն եմ քնացուցեր.
Ասու կրակ թափի վըր իմ կեսեր,
Ճրագն ընցուց վեր իմ ջեհելին,
Իմ ջեհել մըրանջ ծովուն խեղդեցին։

Մոկաց Սեպ գյող
ԷԱԺՋ 65

62

Որո՜ր ընեմ, օրրիս դուն,
Ծածկեմ օր քրանիս դուն,
Էկածը վարդևաւ է,
Վարդերուն հետ բացվիս դուն։

Որոր ընեմ, օր մեծնաս,
Վարդին թումբերը ժուռ գաս,
Իրիկուն ըլլա տուն գաս,
Դրացներուն բարև տաս,
Հորտ, մորտ արև տաս։

Որո՜ր ընեմ, օր ընեմ,
Ղոչ գառը դուրպան ընեմ,
Բուրդը պապուտ քուրք ընեմ,
Ճայ մը չամիչ ճար ընեմ,
Քեզ կարգելու հալ ընեմ։

Օրոցք դնեմ, օրեմ քեզ,
Անուշ լեզվով դուխեմ քեզ,
Դուն կրակ ու ես պաղ ջուր,
Վրատ լլեմ, մարեմ քեզ։

Աղջիկը ծո՜վ-ծո՜վ աչեր է,
Մանչն երեսն հաչեր է,
Հասնողն հասեր, առեր է,
Չի հասնողն ալ պատեն ընկեր սատկեր է։

Սեբաստիա
ԲՍԳԳ 656

63

Նանի՜, նանի՜, բալա ջան,
Քունդ տանի, բալա ջան,
Նանա՜, նանա՜, նանով ըլես,
Ապրես ու սաղ ջանով ըլես։

Իմ բրնխանն քուն ունի,
Սողոմաքաշ[1] տուն ունի,
Իմ բրնխի քունը տանի,
Նրա դուշմանին շունր տանի։

Քանի ջուր ալին տա,
Քու դուշմանին քարին տա,
Քանի ջուրը փրփրի,
Քու դուշմանին քրքրի։

Էս իմ բալեն գնանա,
Անուշ քնով քընանա,
Կոկոմ ծիծս կմամա,
Բալքա մերդ դինջանա։

Նանա՛, նանա՛, բալա ջան,
Նանա՛, դարդ ու բալա ջան,
Նանա՛, նանը քեզ ղուրբան,
Նանա՛, ջանս քեզ ղուրբան։

Բորչալու
Ա.Հ.Մ. 37

64

Նանիկ ասեմ՝ քնես դու,
Ծածկեմ քրտնես դու,
Ծածկածն եդ դցեմ,
Վարդի նման փուվես դու։

Սիրտս խոցով յարա յա,
Թաքուն չի, աշկարա յա,
Դեղ կանեմ, դարման կանեմ,
Դյատ էն յարեն յարա յա։

Թոռ կա, տափը նամանա,
Նանին բերի քիանա,
Բաջու սիրտը թոռանա.
Ես նան ունեմ մոլորած,
Դշերը քունը կորած,
Նանն ու բաջին ի՞նչ անի,
Պուճուր տղա մոլորած։

Զարդախը ցան եմ ածել,
Բոյիտ նման եմ ածել,
Ես էլ քեզ ջան եմ ասել,
Մեծացրած ման եմ ածել։

Նանիկ արա, մեր պզտիկ,
Ջամիշ բերեմ կեր, պզտիկ,
Ծառի տակին ձնեբուկ,
Քաղեմ ուխեմ կեր, պզտիկ։

Դարալագյազ, Կնիշիկ գյուղ
Ա.ՀՔ 105

65

Նաննի՛, նաննի՛, օրոր բալիս, նաննի՛
Իմ վարդուհին քուն ունի,
Նաննի՛, նաննի՛, օրոր բալիս, նաննի՛,
Էրծաթած տուն-տուն ունի, նաննի՛, բալիս.
Մովիցը ծածկոց ունի, նաննի՛, բալիս,
Օսկուցը սփռոց ունի, նաննի՛, բալիս,
Նաննի՛ ասեմ, քունդ տանի,
Քու դուշմանիդ լեզուն կապվի,
Նաննի՛ բալիս։

Թավրիզ
ԷԱԺՋ 65

66

Ննի՛, բալա, ննի՛,
Սըրերի ծաղիկ բալա,
Բըղերի վարդեր բալա,
Ննի՛, բալա, ննի՛...

Ննի՛, բալա, ննի՛,
Ծալքի ղումաշ բալա,
Տըռնի կյումաշ բալա,
Ննի՛, ննի՛, ղուղում. է՛յ, է՛յ, է՛յ։

ՀԺԲԱԽ 1

66 ա

Սիրտս խոցով յարա յա,
Թաքուն չի, աշկարա յա,
Դեղ կանեմ, դարման կանեմ,
Դեռ էն տարեն յարա յա,
Գառնըս, նեննի՛, նեննի՛,
Արի անուշ քնի, իմ խաթեր համար։

Ալաշկերտ
ՀԺՐԱԳ

67

Նեննի՛, նեննի՛, բալա, նեննի՛, նեննի՛,
Քաշվի կորի սև սըտանան,
Իմ դուզոս ապան տաննա,
Նեննի՛, նեննի՛ բալա, բա՛յ, բա՛յ, բա՛յ, քալաէ

Լայ կանի, լայ, լայ կանի,
Ջալ կառնը մատաղ կանի,
Մեսը կոտի, խաշուն խըմի,
Վեսկեռը չարդախ կանի,
Նեննի՛, նեննի՛, բա՛յ, բա՛յ,
Նեննի՛, բա՛յ, բա՛յ, բա՛յ...

ՀԺՐԱԽ 1

68

Նանի՛կ ասեմ, քունդ տանի,
Ջար կամարաղ ճուրա տանի,
Նանի՛կ, նանի՛կ, բալա ջան,
Իմ թև-թիկունք Կալո ջան.
Լանդիկ եմ կապե ծառի ճողերեն,
Քամին ըո փչի սարի խովերեն,
Նանի՛կ ասեմ, ույու քնես.
Ծասկիր եմ քեզի, որ քոհնես,
Քնի որ շոտ ճոչանաս,
Ջարը, պարին խասկանաս,
Պարի խաբար խասկանաս,

Աղգ էրամիդ իմաս տաս,
Օրո՞ր, բալաս նանի՞կ անի,
Ջար կամարա ճուրդ տանի,
Քյո մոր կաթը հալալ ի,
Կե, կշտացի, նոր քնի,
Հալբաթ խո մե օր կասես,
Էդ իմ կաթընտու մերն ի...

Խոյ
ԷԱԺՋ 66

68 ա

Լայլա՞յ ասեմ, քյունըտ տանի,
Ջար կամարըտ ճյուրը տանի,
Լանդիկ եմ կապի ծառի ճղներեն,
Քամին ըտ փչի սարի խովներեն,
Ծաստոց եմ արի էքյու մյովներեն,
Տասկիր ես քեզ ի ուրիանդյ Ըռուներեն։
Լայլա՞յ ասեմ, ազիզ, տու քյնես,
Մրրես, ղըլուղ-ղըլուղ քյրճնես,
Քյընի, բալաս, շոտ ճոչանաս,
Ջարը, պարին խասկընաս,
Ճամբեմ էթաս խերանցս,
Պարի խաբար խասկընաս,
Ասկ-էրամիտ իմաս տաս։
Էօրյո՞ր բալաս՝ լայլա՞յ անի,
Ջար կամարըտ ճուրը տանի,
Քյո մոր կաթը հալալ ի,
Կե, կշտացի, նոր քյնի.
Հալբա՞թ խո մե օր կասես՝
Էտ իմ կաթնտու մերն ի.
Էօրյո՞ր, բալաս լայլա՞յ անի։

Խոյ, Հայքաղ
ՍՐ 659

69

Քոն տնիմ, քունըդ տանի,
Ջար օղողիդ ջուրը տանի,
Վեր ջուրը կյա, ալին տա,
Քու դուշմանին քարին տա,
Վեր ջուրը կյա փրփրի,
Քո դուշմանին բրքրի։

ՀԺԲՄԲ

70

Եղնարն եկավ ջուրը դնաց,
Ընկավ ու կուժը կոյրեցավ,
Ճո՜ր, Եղնար, ճո՜ր։
Մի՛ լար, Եղնար, մի՛ մղմղար,
Օսկի, արծաթ կուժըտ նորեր,
Ճո՜ր, Եղնար, ճո՜ր։
Վարդ փուշերով ջուրըդ թափիմ,
Քո՜ղ արցունքներդ ալ ցամքեն,
Ճո՜ր, Եղնար, ճո՜ր։

ԲՆՄ 7

71

Նանի՜, նանա՜, նաննըի,
Պերանդ է եկեղեցի,
Տուն էկա համփուրեցի,
Տուս էկա բարովեցի.
Փոթլում փաթաթած ես,
Մեղրում շաղախած ես,
Նանի՜, նանա՜, նաննըի.
Պերանդ է եկեղեցի։

Իջևան
ՀԺԲՄՄ 159

226—6

72

Քուն դնեմ, քնի իմ որթին,
Ծածկեմ, քրտնի իմ որթին,
Երբ որ էրեսը բաց անեմ,
Վարթի պես փռվի իմ որթին։

Գուլի, գուլին գալիս ա,
Թաթիդ, տոտիդ տալիս ա,
Էս իմ բալես խալիս ա,
Ծիծ ա ուզում լալիս ա։

Անուշ բալին ես ղուրբան,
Քաղցր բալին ես ղուրբան,
Նախշուն էրեսին մեռնիմ,
Սիրուն թաթերին մեռնիմ։

Նանա՛, իմ թագավոր ջան,
Օսկի քանքուլավոր ջան,
Նանա՛, նանդ քեզ մատաղ,
Նանա՛, հերդ քեզ հոտաղ։

Բորչալու
ԱՀԺԱ 37

73

Լեռներ, ձորեր ծին ա եկել,
Իմ գառնուկիս աչերը քուն ա եկել, օրո՛ր։
(Հովհաննես) ըրեխեն չպաչես,
Կամաց ման եկ չարթնցնես, օրո՛ր։
Հայրիկը Ջատիկին շոր ա կարելու,
Իմ տղեն ու հագնելու, օրո՛ր։
Շիտ արա մեննծացի,
Պապեն քեզ առնելու ա մի ձի, օրո՛ր։
Դու իմ աչքիս լիսը,
Լել մի սրտիս կեսը, օրո՛ր։

ԲՆԱ 5 (70)

74

Լուրի՛, լուրի՛, իմ մեկ գյառ ջան,
Լուրի՛, լուրի՛, սալդաթ յար ջան,
Իրիկվորն հարի մկա
Քու տամբուլի ձենը գուքա,
Լուրի՛, լուրի՛, իմ մեկ գյառ ջան,
Լուրի՛, լուրի՛, սալդաթ յար ջան,
Օրորոցի բնդնները խառ,
Մեջի քնողն էր անուշ գյառ,
Լուրի՛, լուրի՛, սալդաթ յար ջան,
Լուրի՛ կասեմ օրորոցին,
Քունը տաներ դրկանոցին,
Լուրի՛, լուրի՛, իմ մեկ գյառ ջան,
Լուրի՛, լուրի՛, սալդաթ յար ջան,
Թող եմ արնել ավետրան, անուշ գյառ ջան,
Բռնել եմ քո տամբուլան, խորոտ յար ջան։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ 1

75

Լուրի՛, լուրի՛, լուրի՛, լուրի՛, լուրի՛,
Կառնուկ, լուրի՛-լուրի՛,
Մեր աշնան ցանքս,
Ձեր աշնան ցանքս,
Արան տարան։
Մեր լոր թռավ, լուրի՛, ղուրբան,
Մեր արտեն,
Լուրի՛-լուրի՛.
Արևքնակը պացվել ա,
Ամբողջ աշխարքի վրա,
Իմ բալեն քնի,
Լուսնի լուսի տակ,
Լուրի՛, լուրի՛, լուրի՛,
Կառնուկ, լուրի՛։

ՀԺԲԱՍՓ

75 ա

Օրոճիկ վզիկդ եմ քցել,
Քցել ու դառնիկ արցունք եմ թափել,
Իմ մոմռալուց սարերն են լացել,
Լացել ու քրի քնիկ են բերել,
Վա՛յ, լուրի՛կ, ա՛խ, լուրի՛կ, իմ բալա։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

76

Լուրի՛, լուրի՛, իմ մնկ գյառ ջան,
Օրորոցի բնդերը խառ,
Մեջի քնողն ա անուշ գյառ,
Լուրի՛, լուրի՛, իմ մնկ գյառ ջան,
Լուրի՛, լուրի՛, սալդաթ յար ջան։
Լուրի ասեմ իմ մնկ գյառուն,
Շուտ ջոջընա խասի խայուն,
Խայն ա շվար՝ քյանց չոլու լոր,
Խայու արցունքն ա վարար ջուր։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

77

Ըստուծանա նըման ա.
Քա՛յ, բա՛յ բալամ, բա՛յ...
Թոռ կյաս, տափերը նըմանա
Քա՛յ, բա՛յ ղուշիս, բա՛յ...
Հու վեր պերի քըղանա,
Պաչի սերտը հովանա...
Քա՛յ, բա՛յ բալաս, բա՛յ...
Քա՛յ, բա՛յ ղուշիս, բա՛յ...

ՀԺԲԱԽ

78

Լալա ասեմ, քունդ տանի,
Ջար կամարիկ ջուրը տանի,
Ով որ քեզ չի սիրում,
Թող նրան ջուրը տանի։
Էսօր մեր տուն խան ա գալու,
Բաղ ու բախչեն ման ա գալու.
Հարս ու աղջիկ էյվանումը,
Թուփ ծաղիկը մեյդանումը.
Ոսկին ծոցին ճնկճնկաց,
Ալ ձին տակին խրխնջաց։

Հին Նախիջևան
ԱՔՍ. 203

79

Լայլա՛յ, Քնարիկ, լա՛յ, լա՛յ,
Քնարիկի քունը կտանեն,
Լայլա՛յ, Քնարիկ, լա՛յ, լա՛յ.
Նանեն մինակ ա,
Հ'նգեր Քնարիկն ա,
Լայլա՛յ, Քնարիկ, լա՛յ, լա՛յ,
Պոճախը մթեն ա,
Ճրագը Քնարիկն ա,
Լայլա՛յ, Քնարիկ, լա՛յ, լա՛յ.
Ոչխարը սարումն ա,
Տըմակը Քնարիկն ա,
Լայլա՛յ, Քնարիկ, լա՛յ, լա՛յ.
Կետը վարար ա,
Փրփուրը Քնարիկն ա,
Տռներ փակած ա,
Պալնիք Քնարիկն ա,
Լայլա՛յ, Քնարիկ, լա՛յ, լա՛յ,
Լայլա՛յ, քերփե բալաս, լա՛յ, լա՛յ։

Ղափան
ՀԺԲԱՍՎ

80

Իմ խնջոյին քյուն ունի,
Արծրթեև ղըփըլ ունի,
Օսկիեև պալիս ունի,
Սադափեև կամար ունի,
Ինգիոզեև լուլիկ[1] ունի,
Վըսկոռեև էորյորան ունի։
Զարխով քյաշուկ ճաղերն ի,
Շիրմահուց սուրաի լուծ քյաշուկ,
Ճաններն էլ մեննեն կախուկ.
Արփշումեև խութիկուռն ի,
Տակն էլ պուրթ թաղլան տրուկ.
Փիտուռեև պարցեր ունի,
Ալ դանավուղ լըխեի տրուկ,
Ուլգյուղի չիթ շորերն ի,
Ալ մայհմառուկ բանդերն ի,
Դանավուղ քյոբան դրուկ,
Սևթնդուր ճաճի շորն ի,
Օրոճիկը[2] վրան կարուկ.
Քընի, պարով ճոջանաս,
Զարը պարին խասկանաս,
Լա՛յ, լա՛յ, խնջոս, լա՛յ, լա՛յ անի,
Զար կամարտ ճուրը տանի։

Խոյ, Հայքաձ
ԱՐ (653)

80 ա

Իմ բալային քյուն ունի,
Արծթեև ղըփլ ունի,
Օսկիեև պալիս ունի,
Սադափեև կամար ունի,
Ինգիոզեև լուլիկ ունի,
Վսկոռեև օրորան ունի,
Զարխով քյաշուկ ճաղերն ի,
Շիրմահի էլ լուծ ունի,
Արփշումեև խութիկուռ ունի,
Տակա պուրթ խաղլա ի,

Փիտուռն պարցեր ունի,
Ալ դանավուզ լբխեփ ունի,
Ուլդուտի չիմ շորերն ի,
Ալ մահմառով բանդերն ի,
Սեթնդուր ճաճի շյորն ի,
Քնի, պարով ճոչանաս,
Խորն մորդ ամադա իմանաս,
Օրո՞ր, բալաս նանիկ անի,
Ջար կամարա ճուրդ տանի։

Խոյ
ԷԱԺՋ 66

81

Թումպուլ, թումպուլ, պըտըտիկ,
Իմ գառնուկս մեկ հատիկ։
Վաղը քնեն արթըննա,
Շարժե թևերն ու տոտիկ։
Աս ի՞նչ աղվոր հայրիկ է,
Մանչը ինձի կըձգե,
Խփե աչվիդ անուշիկ,
Տոնատուրդ ձագիկ հերիք է։

Սերաստիա
ՀԱ 356

82

Էսման աղջիկ վո՞վ ունի,
Ականջն օսկի օղ ունի,
Սադափե օրոցք ունի,
Հուլունե ղըխըր ունի,
Օրո՞ր ըսեմ, քուն ունի.
Էսման աղջիկ վո՞վ ունի,
Ջուր-ղարդարանք շատ ունի
Բմբուլ կակուղ բարձ ունի,
Կըտրիճ նըշանած ունի,
Օրո՞ր ըսեմ քուն ունի։
Էսման աղջիկ վո՞վ ունի,
Անուշ լեզու քուր ունի,
Կարիճ էլ աղբար ունի,
Ամեն տեղ պատիվ ունի,

Որոր ըսեմ քուն ունի՝
Էսման աղջիկ վո՛վ ունի,
Ամեն տեղ անուն ունի,
Թումպուլիկ մսեր ունի,
Ի՛նչ աղվոր է, ի՛նչ աղվոր,
Ջարթի իլլե փառավոր։

Վան
ԳԹՋ

83

Որոր ըսեմ օրորցունեմ,
Օրորոցով մեծացունեմ,
Օրո՛ր տղաս, օրո՛ր ննի՛,
Յավրդ, չորրդ շունը տանի։

Որոր ընեմ օրորցունիմ,
Անուշ քնով կշտացունիմ,
Օրո՛ր տղաս, օրո՛ր ննի՛,
Յավրդ, չորրդ շունը տանի։

Որոր ընեմ օրորցունեմ,
Շատ բաներու տիրացունեմ.
Օրո՛ր տղաս, օրո՛ր ննի,
Յավրդ, չորրդ շունը տանի։

Որոր ըսեմ օրորցունեմ,
Վարդի ջուրով զարթնեցնեմ,
Օրո՛ր տղաս, օրո՛ր ննի,
Յավրդ, չորրդ շունը տանի։

Որոր ըսեմ օրորցունեմ,
Անուշ գինով արթնցունեմ.
Օրո՛ր տղաս, օրո՛ր ննի,
Յավրդ, չորրդ շունը տանի։

Որոր ըսեմ օրորցունեմ,
Յուղով մեղրով կշտացունեմ,
Օրո՛ր տղաս, օրո՛ր ննի,
Յավրդ, չորրդ շունը տանի։

Վան
ԳԹՋ

84

Օրո՛ր, օրո՛ր,
Բուշդ խնձոր,
Քունդ անուշ,
Իմ Հայկանուշ։

Օրո՛ր, օրո՛ր,
Բևրանդ կլոր,
Մհռնեմ նախշիդ
Սև-սև աչքիդ։

Օրո՛ր, օրո՛ր,
Օրն վաշդևար,
Համով-հոտով
Վաշտ իս տևսքով։

Օրո՛ր, օրո՛ր,
Օր փառավոր,
Տուր ամեն օր
Օրո՛ր, օրո՛ր։

Նար Նախիջևան
ՆՆԲՓ 59

85

Դէր-Զոր կէրթանք լալագին,
Յավհրուն մեչ կըրակին,
Չի կա լույսու ճառճանչի,
Յավրուկս նեննիկ կկանչիմ։
Օրոր ըսիմ, քնացիր,
Մըչի՛կ-մըչի՛կ քընացիր.
Ճամփան երկար մի գիտնար,
Որ չխոսվի սիրտդ արթար։
Տարագիր ենք— տուն չունինք,
Աքսորված ենք— տեղ չունինք,
Ասված չունինք որ թագե,
Մեր տառապան(ք) էրկած է...

Օրոր ըսիմ, քընացիր.
Մըշի՛կ-մըշի՛կ քընացիր.
Ճամփան երկար մի գիտնար,
Որ չխոսվի սիրտդ արթար։
Լալեն-լալեն մարեցար,
Կաթիլ-կաթիլ ցամքեցար,
Ջորցած կուսկըս ծըծելեն
Արթար հոգիդ խոսվեցավ։
Օրոր ըսիմ, քընացիր,
Մըշի՛կ-մըշի՛կ քընացիր.
Ճամփան երկար մի գիտնար,
Որ չխոսվի սիրտդ արթար։
Լալեն-լալեն հոգնեցար,
Կաթիլ-կաթիլ մարեցար,
Ալ կաթ չունիմ, որ տամ քեզ,
Այրուն կուբա աշկերես։

Սիվրի Հիսար
ՄԱՄ

86

Նա-նա-նա, նանի՛ր, նանի՛ր,
Սիրուն լաճուս քունը տաներ,
Լաճն ամիրա, լաճն ամիրա,
Մեկ ձի մը տուր խեծնեմ վրաս։
Աղա յոլա խերդ ես իկե,
Բդրի լուսին մերդ ես իկե,
Կավկուլա քյո քեռըստանք,
Աղա պարոն քյո քյավորտանք,
Կարմիր խնձոր քյո մորքյրներ,
Սևաչըրծակ քյո խորքյրներ,
Սև անթրոց քյո խորոխպեր,
Սևաթաթախ քյո քևոկնկտեր։
Նա-նա-նա, նանի՛ր, նանի՛ր,
Խորոտ լաճուս քունը տաներ։
Նա-նա-նա, նանի՛ր, բալա,
Ջանանք իտևն, որ կլավնա։

Վան
ՎՍՇԲ 1

87

Նանի՛կ, նանի՛կ, սիրուն գառնիկ,
Մորդ սիրտին անգին դանձիկ,
Նանի՛, նանի՛, քունդ տանի,
Յավա, դերդա շունը տանի։
Որո՛ր, որո՛ր օրորցունիմ,
Անուշ քնով կշտացունիմ։

ՀԺՀՆ 91

87 ա

Որո՛ր, բալամ իմ, որո՛ր,
Որո՛ր, գառնուկս, որո՛ր,
Որո՛ր, օրըդ շատուցիմ,
Եղ ու մեղր կերցուցիմ,
Որո՛ր, բալամ իմ, որո՛ր,
Որո՛ր, գառնուկս, որո՛ր։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

88

Նանի՛կ, նանի՛կ անուշներով,
Օսկիե բեշիկ, արդաթ գամար,
Մեջի բառդողը եղբորը զավագ,
Նանի՛կ կասեի եղբորը օշթուն։
Աչքիսը արտըսուքավը գը լվայի,
Մազիսը թելերովը գը դախեի,
Սիրտիսը կրակովը կչորցընեի,
Նանի՛կ կասեի եղբորը օշթուն։

ՀԺԲԱՍ

88 ա

Նանի՛կ, նանի՛կ անուշներով,
Կարմիր կանանչ բաբուջներով,
Շար ու շարմաթ, սև մազերով,
Ոսկի օղով ու մարջանով։

ՀԺԲԱԳ

89

Օրդիս կէրթա օրը[1],
Խաս կբերի մորը,
Խամա խասը մորքուրին,
Ղուրչնի կապան հորքուրին,
Թևլի սարըղ հորը,
Թևի ապրջան կնկանը։
Օրո՜ր, օրո՜ր օրորցունիմ,
Վարդի ջուրով զարթնեցնիմ,
Անուշ դինով հարբեցնիմ,
Կուլպան շաքարով կշտացունիմ։

Նոր Նախիջևան
ՀԺՀՆ 91

90

Նեննի՜ ըսիմ, քընացընիմ,
Շաքրեվ մեղրեվ կշտացնեմ.
*Ճո՜ր, ճո՜ր, ճո՜ր կընոյ**,
Պապանին պեշոր օտ կընոյ,
Տար ճամբեքը համ էրոյ,
Պապանին ծծիկդ օտ կընոյ։

Մարաշ
ԱՍԱ 2

90 ա

Ճո՜ր, ճո՜ր, հա ճորճո՜ր,
Ճորիկ բերա ուրախ օր,
Ճո՜ր ճո՜ր հըլնես ման գաս,
Մենձ ու փոքրին պաչ տաս։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

91

Օրո՜ր, օրո՜ր, օ՜ր,
Մանչս, օրո՜ր, օ՜ր,
Քուն ունի, քուն ունի,
Մանչս քուն ունի,

---

* *Մարաշի բարբառում «ա»-ն փոխվում է «օ»-ի (Ս. Բ.)։*

Ենի-խափուն տուն ունի,
Օսկիե չախչախներ ունի,
Արծաթե խալխաններ ունի,
Մեջը պառկեր քուն ունի։
Տարուպեր, տարուպեր,
Հովերն ալ տարուպեր,
Իմ գառնուկիս քուներն ալ առ տես պերս
Նազերո՜վ-նազերո՜վ,
Նեննի կրնե նազերով,
Օսկիե թել սըրմա մազերով։
Օրո՜ր, օրո՜ր, օ՜ր.
Օրանդ է արծաթ,
Կամարդ է օսկի։
Օրո՜ր ըսեմ փարայով,
Սիրտիկս խոցեր յարայով։

Պոլիս
ԱՀՔ 168

92

Բալես պառկեմ մըջ բադանին,
Մերիկ ղուրբան թուխ աչերին.
Մերիկ, մերիկ ղուրբան, հերիկ
Բալես պառկի մըջ բադանին.
Իմ դարդերս քանց դարդ բեդար,
Հ'ելան խասան չունքի բերանս,
Էլ ճար չունեմ, իլաջ չունեմ,
Դուս հ'ընելու ճամբաս չունեմ,
Բերին կապին կարմիր կանաչ,
Տվին խորդ առանց ճանաչ,
Իմալ էնեմ իմ դարդերուն,
Ա՜յ իմ բալա, կարմիր լալա,
Իմ դարդերին դու ճար արա։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

93

Լուրի՜կ, լուրի՜կ բալաս, լուրի՜կ,
Քընի, քըրտնի, անուշ բալաս։

ՍԿ 134

Օրո՜ր, օրո՜ր
Սև հ՚լեր էնօր,
Ջառնի ես քո խոր,
Ջառնի ես քո խոր,
Ջըլնի սգվոր.
Առա ես քո խոր,
Հ՚րնգա էդ խոր ձոր,
Ջունեցա լավ օր,
Սև հ՚լեր էնօր,
Ջառնի ես քո խոր.
Օրո՜ր, օրո՜ր։

Ալաշկերտ
ՀԱՐՈՒԹ

95

Երբ կըթըմմի քառասուն օրըդ,
Որ ճանապես հորն ու մորդ,
Յորնով լըցվի հորդ ու ձորըդ,
Նանի՜կ, Ավիկ, սիրուն բալիկ,
Նանի՜կ-նանի՜կ-նանի՜կ։

Թե երեսըդ բանամ աշես,
Դու դեռ քյոռփա և մատղաշ ես,
Կուլաս, իմ սիրտը կըմաշես,
Նանի՜կ, Ավիկ, սիրուն բալիկ,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ։

Նանի՜կ ասե քո հայր Գարեն,
Տերը փրկի քեզի չարեն,
Ջեբիցըդ չըպակսի փարեն,
Նանի՜կ, Ավիկ, սիրուն բալիկ,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ։

ԱՐ 134

96

Ա՜խ էնիմ, արուն գուքա,
Սրտիցս սև արուն գուքա,
վիզս զարկին, թողին շվար,
Առան յարս, հեռու տարան։
Նանի՜կ, նանա՜, իմ բալա,
Դարդս ծով ա, իմ բալա,
Առան տարան ըզդ տանին,
Բալիս քունը ըզդ չառնին,
Օրո՜ր ասեմ իմ բալին։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

97

Դու պըզտիկ ես, բարով ջոջնաս,
Հարավ քամին քն օրորե,
Բուրի՜-բուրի՜, բուրի՜, բուրի՜,
Իմալ էնեմ գառնուկ տըղաս։
վերու ոչխար քեզի ծիծ տա,
Իմալ էնեմ գառնուկ տըղաս,
Բուրի՜-բուրի՜, բուրի՜, բուրի՜,
Իմալ էնեմ գառնուկ տղաս։

ԱՐ 134

98

Ա՜խ, ի՞նչ կլեր էթինք էն սարը,
էթինք էն սարը, հելնինք էն դարը,
Ա՜խ, ի՞նչ կլար, որ հելնինք էն դարը,
էն դարի ալխին մոռնինք մեր ցավը։
էն դարի ալխին ճղոր շիքեի,
Իմ բալիս դնի, օրոր ասեի,
Օրո՜ր ու նանի, քնի մեծացի,
Ղուզուս դմկով ա, դելը կտանի...

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

99

Դանդա՜ն-դանդա՜ն՝ ղընկոցիք,
Մեղրով լիքը քիոցիկ,
Դան էննենք, դանդան էննենք,
Սև գառը մատաղ էննենք,
Միան ուտենք, շորվեն խմենք,
Օսկոններ չարդախ էնենք։
Մեննծ իրիցու բուռվառն ա²,
Պզտիկ տերտորչ շուրջառն ա,
Անուշ նանի բալիկն ա,
Թառ քավորի սանիկն ա,
Գրկեր ա տուն ա բերև,
Չի դըն շունը կերե։
Սարեր ըմեն բիար ա,
Բալես կանանչ խիար ա,
Սարեր ըմեն ուսին ա,
Բալես բատրի լուսին ա,
Սարեր ըմեն ապասի,
Իմ բալին բան մի ասի։

Շիրակ, Կարքե
ՏԱՄ 93

100

Աղջիկ տանն էր, տան քընջան,
Ձեռքերն էր շուշա, մերջան,
Աղջիկ ծաղիկ էր տան միջին,
Հորն ու մոր էր խըզմաթին։
Աղջիկ մամուն բան կաներ,
Տախտ կավիլեր՝ թոզ կաներ,
Ջուր սըրսկեր՝ մոզ կաներ,

Աման լվեր չլոլ կաներ,
Աղջիկ մամուն, դեմ դըրամուն,
Թող ճոչաներ, մներ մամուն,
Խա՛լ-խալա՛, խա՛լ-խալա՛ մերջան,
Ձեռքերն ի շուշա, մերջան,
Ձեռաց մատեր շողշողուն,
Աչք ու ընքվերն ևն սիրուն։

Վան
ՎՍՇԲ 4

100 ա

Աղջիկը տան, տան քնջան,
Աչքն ու ունքը լալ մրջան,
Կոկոն վարդ էր թշերը,
Սիվտա՛կ, սիվտա՛կ փեշերը,
Աղջիկ էր տան, տան քնջան։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

101

Տանանա՛-տա՛ն[1], տանանա՛,
Նա-նա՛, նա-նա՛, նա՛ կուշի
Կերածս է հալվա կուշի,
Հագածս է ալ կումաշի.
Ելա տանիս իրիշկեցի,
Թև վով նախիր կըբըշի,
Ջյարով զարկի գլուխ փրշխի,
Աղեն որ գա գուլում քաշի,
Էլի, էլի կայնի, կեկեն կեկմ արա,
Քո կեկն ի խաղար փարա,
Տար տուր քե կնիկմ արա,
Կընկանդ անուն էլնի Մարան,
Էն որ մեռնի՝ մեկել արա։

Վան
ՎՍՇԲ 6

102

Տանտա՛ն տաները,
Մեռնի տրդիս աները
Մեզի մնա մալերը։
Տա՛ն-տա՛ն, տանտիկս,

Կու կարգինք կոնտոլիկս,
Հեղնիկ նինեն ժամուն գա,
Կորկոտ ապուր պր՛շշ անե,
Եղը վըրան ճր՛շշ ընե,
Տըշաս ուտե ր՛մմ ընե,
Տանտա՛ն տանտրկիչ,
Կյուլ ծառերուն պլպուլիկ,
Խաչ աղբըրա ճնճղկիկ,
Թոնեի բունդ իյնալի,
Բուներդ իվար ճըվճըվաս,
Ճվճվաս, ճչեր ձգես,
Հեղնաս էրթաս եղները,
Եղները ճոր է նստեր,
Ճորը ճմուռի ըրեր,
Տարեր դրեր փեթակը,
Էկեր կերեր կատվակը,
Հա՛ քարեցեք ան կատուն.
Հա՛ քարեցեք ան կատուն,
Ալ մի՛ քարեք շան կատուն։

Նոր Նախիջևան
ԲՆՐ 48

103

Դանդանի՛, դանդա՛ն պիտի,
Մի լավ տղա բանդ պիտի,
Ջիբը քար ու քանդ պիտի,
Դա՛ն, դանի՛, դան դանեցի,
Բևրանը եկեղեցի,
Տուն եկավ համբուրեցի,
Դուրս եկավ բարևեցի,
Աղջիկ ունեմ նմանի,
Ջենք տալ հազար թումանի,
Բուրդ բերեք՝ բաժինք անի,
Ուզտ բերեք՝ բարձի տանի,
Կտանք մի բազիրգյանի,
Ջորին գա ճհեզը տանի։

Հին Նախիջևան
Ա.Հէ 204

104

Դա՜ն, դա՜ն դիարն ես,
Կանաչ բաղի խիարն ես,
Շքարըմը շղախածն ես,
Վազան տակին պահածն ես,
Մամի ջիբի խուրմեն ես,
Դեղի աչքի սուրմեն ես,
Քեզ ո՞վ պոկեց էբեր մեզ,
Սիրուն գուլգազ գովեմ քեզ։

ԱՀԺԱ 39

105

Դա՜ն, դա՜ն, դա՜ն, որթի՛
Իմ Ըրևանա խան որթի՛,
Թավրզու թավթա որթի՛,
Շամախու փարչա որթի՛,
Թավրզու թավթա իմ որթի՛,
Ծալած փարչա, իմ որթի՛,
Շարմաղ սուրու, իմ որթի՛,
Կարմիր նախիր, իմ որթի՛,
Դա՜ն, դա՜ն, դա՜ն արա,
Դուսիել ու մեյդան արա։
Քաղցր շարբաթ կում արա,
Գյանջեն կեր ու խում արա,
Դա՜ն, դա՜ն, դա՜ն բալա,
Ես քի մատաղ ջան բալա,
Մորդ համար դու մին ես,
Առքով մի օլքի գին ես։

ԱՀԺԱ 39

106

Քիչմ տա՜ն տա՜ն, քիչմ պա՜ն պա՜ն,
Արի պապա հայտա արա,
Մի՛ լար, տղաս, մի՛ լար,
Շընտի պապադ կու դա քեզի,
Տանդի տղաս, տանտի է՛։

Ղրիմ
ՀԺՀՆ 89

107

Աղջիկ ունիմ մազերով,
վարպետ կէրթա նազերով,
Սեպհիը իլինք թազերով,
Տանտի, տղաս, տանտի է՞։

ՀԺՀՆ 90

108

Հայտա՜ն, հայտա՜ն օսկիե շամտան,
Ֆա տղուս որի՜ն տամ.
Թագավորի տղին կուտամ,
Տասը արապա ձիհնդ կուտամ,
Ան ալ քիչ ըլա՝ տրհա կուտամ,
Տասը դըհա էդիք կուտամ,
Տանտի՜, տղաս, տանտի է՞։

Ղրիմ
ՀԺՀՆ 89

108 ա

Սիմոն ծերունի հ՚ըլնես,
Քոքիկդ խորունկ զարնես,
Կարմիր կանանչ կապես,
Իմ դարդին դարման հըլնես։
Դուշմանիդ արևը թաղես,
Իմ հաշկի արցունք սրբես,
Հայ տա՜ն, հայ տա՜ն, իմ բալա,
Իմ սրտի դարդեր շատ ա։

ՀԺԲԱԳ

108 բ

Հայ դա՜ն, հայ դա՜ն իմ տղեն,
Իմ էրեվանու խան տղեն,
Օսկի ջղա խան տղեն,
Ջոքնչի համա շան տղեն։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

109

Հա դա՛ն, հա դա՛ն իմ ըրևխա,
Բուրջ ու բադան իմ ըրևխա,
Հա դա՛ն, հա դա՛ն իմ ըրևխա,
Օսկու մատան իմ ըրևխա,
Հա դա՛ն, հա դա՛ն իմ ըրևխա,
Գևանջու սուլթան իմ ըրևխա,
Քաղքի քաթան իմ ըրևխա,
Ջանիս վաթան իմ ըրևխա,
Շարմաղ սուրու իմ ըրևխա,
կարմիր նախիր իմ ըրևխա,
Ձիու իլխա իմ ըրևխա,
Գոմշի գյալլահ իմ ըրևխա,
Դաշտումը դարթա իմ ըրևխա,
Սարումը ըլաչուխ իմ ըրևխա,
Դաշտումը ըմարթի իմ ըրևխա,
Սարումը չագիր իմ ըրևխա,
Ղուդրաթ դանա իմ ըրևխա,
Ջուստ վևնձանա իմ ըրևխա,
Մամին հասնի իմ ըրևխա,
Նանդ ուրխանա իմ ըրևխա։

Բորչալու
Ա.Հ.Ժ.Ա. 38

110

Դա՛ն, դա՛ն, դա՛ն կասեմ,
Իմ ըրևխին ջան կասեմ,
Դա՛ն, դա՛ն դնդոցը,
Իմ էրևխի թնդոցը,
Մեղրով լիքը քթոցը,
Մեծ մոնթերի փուռվառը,
Իրիցնևրի ժամհարը։
Դաա՛ն, հա դա՛ն քե ղուրբան,
Պառավ նանը քե ղուրբան։

Բորչալու
Ա.Հ.Ժ.Ա. 39

111

Դա՛ն, դա՛ն, դա՛ն էլավ,
էս ինչ թավուր բան էլավ,
Քուլլու ալամ ջամ էլավ,
Բալես ուրիշ նշան էլավ։
Էսօր էլավ, վաղ էլավ,
Վարթի թփին շաղ էլավ,
Ծնդանս դրի դան արի,
Բիճ գառի պես խաղ էլավ։
Ջրի ափան էս տղեն,
Օչխարթափան էս տղեն,
Ախպրի ափան էս տղեն,
Գառան թափան էս տղեն,
Ախպրի լուլա էս տղեն,
Թոփի գուլլա էս տղեն,
Սուփրի մազա էս տղեն,
Թավադ թազա էս տղեն.
Իմ ըրևիեն նախշած ա,
Աստծու իրան բախշած ա։

Բորչալու
Ա.Հ.Մ. 40

112

Դա՛ն, դա՛ն, դա՛ն էս տղեն,
Անբանի բան էս տղեն,
Խիստ աննման էս տղեն,
Անչանի չան էս տղեն։

Ես քի մատաղ, որ դու կաս,
Ուրախ օրով խնդմնդաս,
Հրսանքումը թրմփաս,
Ոնչ նեղանաս, ոնչ տնքաս։

Քու տվողը շեն կենա,
Ասղի կուրծը լեն կենա,
Խայաթին երգեն կենա,
Ինքը կարի դեն կենա,

Անուշ բալին ես ղուրբան,
Քաղցր բալին ես ղուրբան,
Նախշուն աչերին մեռնիմ,
Սիրուն թաթերին մեռնիմ։

Բորչալու
ԱՀԺԱ 40

113

Դա՛ն, դա՛ն, դնգոցը.
Քաղցր ա բալիս տնքոցը.
Դա՛ն, դա՛ն, դնգոցը,
Իմ ըրեխի թրենգոցը։
Դա՛ն, դա՛ն, դնգոցը,
Մեղրով լիքը բիոցը,
Դա՛ն, դա՛ն, դնգոցը,
Դիրեկան ա ձրնգոցը։
Դա՛ն, դա՛ն, դա՛ն կասեմ,
Իմ ըրեխին ջան կասեմ,
Դա՛ն, դա՛ն, քի ղուրբան,
Պատավ նանը քի ղուրբան։

Բորչալու
ԱՀԺԱ 41

114

Դա՛ն, դանի, դա՛ն որթի,
Ես քի մատաղ, ջան որթի,
Քու տունդ սարին ըլի,
Դուռդ հովհարին ըլի,
Կովը սարին բռանչի,
Գութուն ծառին կկանչի,
Ոտնե ոտը ծառ կըլնես,
Ճուղկնե ճուղկը թառ կըլնես,
Օրը պլեսրիկ արևով,
Ծառը կանանչ տերևով,
Թող խնդան ու ուրխանան,
Էդ քու աղիզ արևով,
Թող ուրխանան, բայց ըլին,
Դուշմաննիդ լաց ըլին։

Բորչալու
ԱՀԺԱ 40

115

Դա՛ն, դա՛ն, դա՛ն արած,
Քաղքիցն լկած բիդարած,
Փեշերդ ճամբուկ արած,
Խուրջինդ էլ քաշմ արած։
Քու խուրջինը չալ պտի,
Բոխջեդ ծալվածալ պտի,
Բայց չի անես, որ տենան,
Որ նեաֆով քար կանեն[1]։

Բորչալու
ԱՀԺԱ. 40

116

Դա՛ն, դա՛ն, դիարն ես,
Կանաչ բաղի խիարն ես,
Փոթոլումը փթաթած ես,
Վաղան տակին պահած ես։
Դա՛ն, դա՛ն դնգոց ես,
Մեղրով լիքը բթոց ես,
Մատի չափ մատնոց ես,
Ինդան չափ սիրադեղ ես։

Բորչալու
ԱՀԺԱ. 38

117

Դա՛ն, դա՛ն դնգոց ես,
Մեղրով լիքը բթոց ես,
Սառն աղպրի շվաքն ես,
Ալ ոչխարի դմակն ես,
Մութ գիշերվա ճրագն ես,
Դրնտեղի կրակն ես[1],
Պառավների մանիշն ես,
Աղջկերանց չամիչն ես,
Ծառի ծերի ծերատն ես,
Աղջկերանց կերածն ես,
Ծառի ծերի ծուղեն ես,
Մեղրատանձի ճուղեն ես,
Ծառի ծերի վարթեն ես,
Աղջկերանց մարթեն ես։

Բորչալու
ԱՀԺԱ. 39

117 ա

Դա՛ն դա՛նի դնգուցն իս,
Մեղրով լիքը քիուցն իս,
Ջաղ օչխարի դմակն իս,
Դուն մուքը տան ճրագն իս,
Ով քեզ սիրե՝ սիրագեղ,
Ով քեզ ատե՝ մահադեղ։

Թիֆլիս
ԹՄԿԱ 29

117 բ

Դա՛ն ու տան դնջուքին,
Տղես մտնի մարդկուքին,
Թամբի իրան ալվան ձին,
Գնա խասնի սիրածին։

ՀԺՔԱԳ

118

Դա՛ն, դա՛ն, էսօր դա՛ն,
էքուց քամամ տարեկան,
Դա՛ն, դա՛ն, էքուց դա՛ն,
էլօր քի պարնուքին տան։
Դա՛ն, դա՛ն, էլօր դա՛ն,
Գալօր քամամ Դավիթ խան,
Դա՛ն, դա՛ն, սիրուն խան,
Թիֆլիսը քեզ դիվան խան։
Դա՛ն, դա՛ն, քամամ խան,
Արդանվել ու Շիրախան,
Դա՛ն, դա՛ն նարդիվան,
Շաքիզը քեզ Շիրվան խան։

Բորչալու
ԱՀԺԱ 41

119

Դա՛ն, դա՛ն, դա՛ն աղջիկ,
Ջանս քեզ զուրբան աղջիկ,
Ուզողներդ գան աղջիկ,
Բևրեն քեզ նշան աղջիկ։

Դա՛ն, դա՛ն, դա՛ն աղջիկ,
Մուշտարիդդ գան աղջիկ,
Ճամփին իրար տան աղջիկ,
Ետ դառնան ու գնան աղջիկ։

Իմ աղջիկը կռնել ա,
Վարդը ձեռին բռնել ա,
Ամեն ծառին մի փշատ,
Իմ աղջկա ումրը շատ։

Իմ աղջիկս բշարող ա,
Մանր ուլունք շարող ա,
Թավթա շաբիք կարող ա,
Իգիթ տղա ճարող ա։

Իմ աղջիկս լավ աղջիկ,
Հագին ալ հալավ աղջիկ,
Հնեվան որ ձին գցի,
Ղազախից գումպա կապ կարի։

Բոբշալու
ԱՀԺԱ 41

120

Դա՛ն, դա՛ն դանեցի,
Բերանդ ա գեղեցի[1],
Տուն մտա համբուրեցի,
Դուս էկա բարովեցի,
Վարթաջրով ջրեցի,
Փունջ մանիշակ փռեցի,
Հայը էկավ բարով տվի,
Դուշմանն էկավ՝ քարով տվի,
Ով քեզ սիրե՝ սիրադեղ,
Ով քեզ ատե՝ մահադեղ։

Բոբշալու
ԱՀԺԱ 39

121

Դա՛ն դա՛նի, դա՛ն դանի՛,
Կապերտ կարիմ ժանգառի,
Քոբեն դնիմ ծիրանի,
Կոճկնիրը գիլանի,
Օսկե սուրա, քի մեռնիմ,
Կլկլան կուլա, քի մեռնիմ,
Դալմաքրի ծառ, քի մեռնիմ,

Սուփրի մադա, քի մնոնիմ,
Շուշա բազար, քի մնոնիմ,
էսօր դան ու էքուց դան,
էլօր Թամամ տարնկան,
Շաքիզը քնզ շիրվան խան,
Նարդիվանը՝ դիվան խան,
Թիֆլիզը քնզ սիրան խան,
Թուղն ու նուշն ուտելու տամ.
Շաբար կրկտելու տամ,
Շաբրի Միվով քի ջուր տամ,
Գիդի՞ս քի ումը կու տամ,
Բնհբուրդի տղին կու տամ,
Օրթաճալա՝ բաղ կուտամ,
Վերաջրի ջաղաց կուտամ,
Կրծանիս իդի կուտամ,
Ջորսոի դուքնիր կուտամ,
Մելիքի բաղնիս կու տամ,
Ջարնքեն չափրաստ կու տամ,
Լդրանուց քամար կու տամ,
Քաղքի կնսը քնզ կու տամ,
Քաղքումը դարբաս կու տամ,
Հավլաբարը քոծ կու տամ,
Ջուղուրնիը բիջ կու տամ։

Թիֆլիս
Թմկա 31

122

Դա՛ն դա՛նի, դա՛ն դա՛նի,
Գիտե՞ս, քի ումը կու տամ,
Քաղքի մելիքի տղին կուտամ,
Լդրանուց ջնջիլ կուտամ,
Ջարնքեն չափրաստ կուտամ,
Մե չարնք քամար կուտամ,
Վերաջուրու ջաղաց կու տամ,
Օրթաճալա բաղ կու տամ,
Կրծանիս՝ իդի կու տամ,
Էյլանի բաղնիսը ջնրխարջլուխ կու տամ,
Թանդարին գոգո կու տամ,
Ջաքարին բիճո կուտամ։

Իփոր փեսին կու մնձրիմ,
էրկու դուռը բաց կոնիմ,
էրկու աճկին պաչ կոնիմ,
Օթախը խոլվաթ կոնիմ,
Միչումը սոյբաթ կոնիմ,
Իփոր փեսեն կու զարթի,
Տաշան ու ալիափեն մոտ կու տանիմ,
էրեսը լվանալ կու տամ,
էրեսրփին մոտ կու տանիմ։
Դա՛ն արա, կեկելո ջան,
Բա՛ն արա, կեկելո ջան,
Էսօր մե դան չիս արի,
Մե փուղի բան չիս արի,
Մե փուղ կու տամ շամամի,
Դուն քու դեղին թամամիս։

Թիֆլիս
ԹՄԿԱ 30

123

Դա՛ն դա՛նի, դա՛ն դա՛նի,
Կաբևտ կարևմ ժանդաոի,
Քոբևն դնևմ լանգարի,
Կոճկնիրը Գիլանի[1]
Կարևմ դոշիդ բևրանին,
Շապիք կարևմ ուհանի,
Գդակ ծածկևմ ծիրանի։

Թիֆլիս
ԹՄԿԱ 30

124

Դա՛ն, հա՛ դան, դա՛նդանի,
Կաբեդ կարևմ ժանգաոի,
Քոբևն դնևմ ծիրանի,
Կոճակնևրը գիլանի։
Դա՛ն, դա՛ն դիարն ևս,
Կանաչ բաղի խիարն ևս,
Սուսամբարով կլոլած ևս,
Վազան տակին պահած ևս։

Անուշ բալին ես ղուրբան,
Քաղցր բալին ես ղուրբան,
Նախշուն բալին ես մեռնիմ,
Սիրուն թաթերին ես մեռնիմ։
Օսկի սուրու քի մեռնիմ,
Կլկլան կուլա քի մեռնիմ,
Սուփրի մաղա՝ քի մեռնիմ,
Թավար բազա քի մեռնիմ,
Ջա՜ն, զալամքար քի մեռնիմ,
Թայ ջուհարդար քի մեռնիմ,
Շուշա բազար քի մեռնիմ,
Սուփրի մաղա քի մեռնիմ։

Բորչալու
ԱՀԺԱ 42

125

Դա՜ն, դա՜նի դանեցի,
Բևրանտ է էգեղեցի՝
Տուն գնացի, համբուրեցի,
Դուս էկա՝ բարովեցի,
Վարթաջուրը ջրեցի,
Մանուշակը փուեցի։

Թիֆլիս
ԹՄԿԱ 29

126

Դա՜ն, դա՜ն, դա՜ն շվիլի
Մուշաարիքդ դան շվիլի,
Ճամփին իրար տան շվիլի։

Թիֆլիս
ԹՄԿԱ 29

126 ա

Դա՜ն, տա՜ն, որթի տան,
Մաշի քու մոր ջան,
Առնի քև մարջան,
Վառի քյո շամդան։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

127

Դա՛ն դա՛նի դիարն ես,
Կանանչ բաղի խիարն ես,
Փոթլումը [1] կոլլած ես,
Ադիլ տիղը պահածն ես,
Շաքրումը շաղախածն ես,
Շաքրի թիվով քի ջուր տամ։

Թիֆլիս
ԹՄԿԱ 30

128

Դա՛ն, դա՛նի, դա՛ն արա,
Էրվան մեյդան արա,
Թավրիզ առուտուր արա [1],
Գըգդի ճուզը կարև,
Թե կարիս, խուռը կարև։

Թիֆլիս
ԹՄԿԱ 29

129

Էսօր դու դան չես արել,
Կես փողի բան չես արել,
Մի փող կտամ դան արա,
Անորդ տանը բան արա։
Թե քու աները դեմ գա,
Մազը միրուքը վեր գա,
Թե քու զոքանչը դեմ գա,
Ջիքիլ մանդիլը վեր գա։
Թե քու նշանած դեմ գա,
Ճուխտ դոներդ բաց արա,
Օթախդ խոլվաթ արած,
Վղով ընկիր, պաչ արա։
Բաղ ու բախչեն ջուր արի,
Ջալ մոդին մատաղ արի,
Պոդերը չարդախ արի,
Նրա քոլգում խաղ արի։

Բորչալու
ԳՔՔ 2

130

Դա՛ն, դա՛ն դնդուցը,
Միզրով լիքը քթուցը,
Փոքլումը կոլլածը,
Վազնի տակը պահածը։

Թիֆլիս
ԹՄԿԱ. 28

131

Դա՛ն, դա՛ն աննման
Կուդին կտրած չան նման։

Թիֆլիս
ԹՄԿԱ. 28

132

Դա՛ն, դա՛ն, դինկլիկո չան,
Դիբա իգին վազնիկո չան,
Ճութ հաղուղը գողնիկո չան,
Բաղմնչին վրա հասնի,
Ո...ին խփե կոբլիկո չան։

Թիֆլիս
ԹՄԿԱ. 28

133

Դա՛ն, դա՛ն, դա՛ն չունիս,
Պապանց տանը բան չունիս,
Քարով կու տան, բան չունիս։

Թիֆլիս
ԹՄԿԱ. 28

134

Դա՛ն, դա՛ն, դա՛ն կանեմ,
Օրը մի շահու բան կանեմ,
Էն էլ կտամ շամամի,
Մինչի տարիդ թամամի։
Ես քու չարը կտանեմ,
Կշլակեմ ժամը կտանեմ,

Կոկլիկ կլևպտար[1] կվառեմ,
Մի նշանած կճարեմ։
Դա՛ն, դա՛ն, դա՛ն, դանի՛.
Կաբեդ կարեմ ժանդառի,
Քորեն դնեմ ծիրանի,
Կոճակները պիլանի։
Դա՛ն, դա՛ն, դա՛ն արա,
Օր օրի վրա ջան արա,
Դուս գնա մեյդան արա,
Իդիթ տղի նշան արա։
Դա՛ն, դա՛ն, դա՛ն չունիս,
Էլոնց տանը բան չունիս,
Քարով կտան ջան չունիս,
Դու լաց լելու նան չունիս։

Բորչալու
Ա.Հ.Մ. 38

135

Դա՛ն դա՛ն, դա՛ն որթի՛,
Իմ Ըրևանա խան որթի՛,
Թավրզու թավթա որթի՛,
Շամախու փարչա որթի՛։

Դա՛ն, դա՛ն, դա՛ն բալա,
Ես քի մատաղ ջան բալա,
Մի հատիկ ես, դու մին ես,
Առքով մի օլքի դին ես։

Դա՛ն, դա՛ն, դա՛ն արա,
Դուս էլ ու մեյդան արա,
Գյանջեն կելուխում արա,
Քաղցր շարբաթ կում արա։

Ալ խնձորի էս տղեն,
Շեկ շլորի էս տղեն,
Կանանչ թզնի էս տղեն,
Կարմիր նռնի էս տղեն։

Ըսօր էլավ վաղ էլավ,
Վարթի թփին շաղ էլավ,
Մնգան դրի տան արի,
Բիճ դառի պես խաղ էլավ։
Դա՛ն, դա՛ն, դա՛ն արա,
Օր օրի վրա ջան արա,
Ըրևան մէյդան արա,
Իգիթութինդ նշան արա։

Բորչալու
Ա.Հ.Ա. 37

136

Օխի՛ դանի, դա՛ն, դա՛ն,
Ասկիեն դինդան,
Իմ զավակին վի՞րա տամ,
Թագավորի լաճուն տամ։
Տա՛շ, տա՛շ, փնդղի տաշ,
Նանայի աղջիկ տրռճկան,
Թևերա կշտի անի սյան,
Խաց շըլկի տանի կուտան,
Տը՛նգ, տը՛նգ, տը՛նգ աչո ջան։
Ախչի՛կ, ախչի՛կ քարե չխչիկ [1],
Ահա քյո խրծիկ քելի խաղա,
Ալուր մաղեմ, կյամ քե թաղեմ...

Խոյ, Հայքաղ
Է.Ա.Ժ.Զ. 67

136 ա

Օխի՛ դանի, դա՛ն, դա՛ն,
Ասկիյեն դինդան,
Իմ զավակին վիրը տամ,
Թագավորի լաճուն տամ։
— Հա՛ դընգի, դընգի, դնգան,
Նանայի բալա սկըտան,
Քևին էկավ պակյա,
Սև պտուկը շլակյա,
Պատյն ինգյավ կոտովավ,

Սըկոտիկյդ կտուվավ։
Ախչիկ, ախչիկ, շան պոլոճիկ,
Ա.ռ քյո խրծիկ քյնգի խաղա,
Ալուր մաղամ իկյամ քե Թաղամ։

Խոյ
ԱՐ 7—8 (653)

136 բ

Օ՜խ, տան անա, տան անա,
Իմ բալեն մեյդան անա,
Իգիթ տղի նշան անա,
Պատերս օսկի անա։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

137

Դա՜ն արա, դա՜ն դա՜ն արա՛,
Ղոչ գառը քի մատաղ արա,
Օսկոռը քի սալա արա,
Մեջն նատե, դիվան արա։

Ջահարմահա։
ՋՀԲԲ 5

138

Որքի ունիմ օչերով.
Հարս գըպերեմ քողերով,
Բաբան գելլե մոմերով,
Մաման գելլե խունկերով.
Խաս մորը, խաս հորը
Աչը, բաչը գնգան,
Դանդա՜ն, դանդա՜ն,
Գարաբեդիս դանդան։

Դոնի-Ռոստով
ՀԺԲԱՍՎ

139

Անձրև գուբա, արուն կուլա,
Կուլա, կուլա, կուլա, կուլա, իմ բալա,
Սարի սելվոր, սնձի սուլոր, իմ բալա,
Ա՜խ, ի՞նչ կլնի, էթանք սնձի,

Մեկտեղ էինք սարը սնձի,
Քաղենք դաստեն իմալ գնձի,
Սարի սելվոր, սնձի սովոր, իմ բալա,
Սուփրի մաղա, յարդ թաղա, իմ բալա։

ՀԺՔԱԳ

140

Տա՛ն, տա՛ն, դռները,
Ելնեն, իջնեն խաները,
Մորթենք խարամընները,
Ուտենք գեր-գեր մսերը։
Ըսկոռը տյուտյուկ ընես,
Ջալես, ցատկես ու պարես,
Ջալես, ցատկես ու ժուռ գաս,
Իրկուն ըլլա նե, տուն գաս,
Դրացներուդ բարև տաս,
Հորըդ, մորըդ արև տաս,
Հո՛ւի, հո՛ւի աղաս, հուփփալա,
Ցատկե, տըղաս, տանտանա,
Ուտե, կարգա ու մեծնա,
Հորը, մորը արև տա։
Արևս առնու պաչիկ տա,
Լուսավորչիս բարև տա։
Ծափի՛կ, ծափի՛կ ծիրանի,
Հովը թել-թել կտանի,
Էկուր պագնեմ չըտանի,
Կաղ-շուն դտողը չը տանի,
Ով կտանի, թող տանի,
Մեր պարոնը չտանի։

ԱԴՄ (ԿԳ)

140 ա

Տա՛ն-տա՛ն-տա՛ն-տա՛ն-տա՛ն-տա՛ն-տա՛նէ,
Տանես կելլէ ղոյ կաննէ,
Աղային ախչինը չըլլա նա,
Փաշային ախչինը հաղիր է։

Տա՜ն-տա՜ն օղում, տան յավրում,
Տա՜ն-տա՜ն օղում, տան բալա,
Քայային էղին չայիր է,
Ջորս էղիրաիը բայիր է,
Ի՜նչ կանդնած եք, ախչինէր,
Հարս ըլլալու տարի է։
Ա.ոնինք փախչինք ախչիններուն,
Տան-տա՜ն, տան-տա՜ն, տան հեռուն,
Տան-տա՜ն, տան-տա՜ն, տան էնիմ,
էլլամ տաննես դոյ էնիմ,
Իմ յավրուկիս... համար ալ
. . . . . ին ախչինը ուզիմ,
Տա՜ն-տա՜ն-տա՜ն-տա՜ն-տա՜ն-տա՜ն-տաննէ՜։

Սիվրի Հիսար
ՄԱԱ

141

Քիչ մը տա՜ն, տա՜ն,
Քիչ մը պարպար,
Քիչ մ'ալ պապան,
Աւ հոփփա տար։

ԲՆԱ 87

142

Դանըա՜ դանի՜, դանդանի,
Կապիտ կարիմ ժանգաոի,
Քոբեն դնեմ ծիրանի,
Կոճակները Գիլանի։

ՀԺԲԱՆԲ 2

143

Դա՜ն, դա՜ն, դիարն ես,
Կանաչ բաղի խիարն ես,
Թղթումը կոլոլածն ես,
Մեր չութումը պահածն ես։

ՀԺԲԱՆԲ

143 ա

Տան-տանի՛ պիպի, տանտանա՛,
Տան-տա՛ն մինչև քընանա,
Օրոր չուզե խեղճ մանգիկ,
Սիրտ պետք է որ դիմանա։
Ծափի՛, ծափի՛, ծիրանի,
Կարմիր խնձոր նըմանի,
Ջյունե ճերմակ թաթիկներ,
Կոպեն ոսկի մատանի,
Փուսուս աղվոր մատանի,
Վառ-վառ վարդի նըմանի,
Ոսկե գերձան մազերը,
Հովը թել-թել կտանի։

ԱՐ 1

144

Ջա՛ն, տան ու տան, հորթի Մինաս,
Մարըդ պառկե բերե Թոմաս,
Աղա, փաշա հարըդ ըլլենաս,
Խանում-խաթուն մարըդ ըլլենաս,
Խաս տանտիկին մորքուրդ ըլլենաս,
Տոտոխ քերող հորքուրդ չըլլենաս։

Կարին
ԷԱԺՋ 70

145

Դար էնիմ, դա՛ր դա՛ր էնիմ,
Սև հավեր մատաղ էնիմ [1]*,*
Ոսկոռներ դարկա էնիմ,
Նստիս մեջ դիվան էնիս.
Մարդիկ դան լավ տատ էնիս,
Ոչ հիվնդնաս, ոչ տքաս։

ՀԺԲԱՆԳ 3

146

Էկել են տղուս ձան կուտան,
Դուռ երթիկը վար կուտան,
Բերեք իմ տղիս չալ ձին,
Բերեք սրմալը խամչին։

Տիվիթը մեջքը Թող խոթև,
Գառակը ալչի Թող դնե,
Հափըր հափըր Թող երթա։
Օրո՜ր, օրո՜ր, օրորցունիմ [1],
Անուշ քունով կշտացունիմ։

Հ֊ԺՀՆ 9

146 ա

Դա՛ն, դա՛ն, դա՛ն, դա՛ն,
Էգիլ ին, տղիս ծան գուտան,
Գևցիք կոդին Թող գաբե,
Բուրը քովը Թող գախե,
Պևրևք դղիս չալ ծին,
Կտաղ դրից ալչին,
Սրմայե խամչին,
Ջարնինք շուտով փախչի,
Սուրփ Գարաբեդ հասնի։

Գոնի Ռոստոմ
Հ֊ԺՐԱՎՍ

147

Դա՛ն-դա՛ն դընգութին,
Մեղրով լիքը քՌոցը,
Ջալ ոչխարի դմակը։
Աղջիկը նանինն ա,
Ճամփու կծածինն ա,
Մամու համա հաց կտանի,
Սինձը քաղի դաստա անի։

Նոյեմբերյան
Հ֊ԺՐԱՆ

148

Մև լաճ ունիմ օղերով,
Խարս կպևրեմ քողևրով,
Նանան կլա խնկևրով,
Բաբան կլա փինջևրով,
Հա՛ դան, դանի, դա՛ն դանի,
Կապան կարեմ չանդանի,

Քյոբան տնեմ բաց մավի,
Նանան քյո չարը տանի,
Հա՛ դա, դանի, դա՛ն չունենք,
Դուշմնի խետը պան չունենք,
Դուշմանն իկյալուն կացնով տանք,
Խայն իկյալուն պարով տանք,
Տղա, տղա, օսկն ջղա,
Առ քյո ճաներ, քեզի խաղա,
Ալյուր մաղեմ, կյամ քե պախեմ։

Խոյ
ԷԱԺՋ 67

148 ա

Մե լաճ ունեմ օղերով,
Խարս կպերեմ քողերով,
Նանան կըլա խնկերով,
Բաբան կըլա փինջերով.
— Հա՛ դան, դանի, դա՛ն չունենք,
Դուշմանի խետը պան չունենք,
Դուշման իկյալուն քարով տանք,
Խայն իկյալուն պարով տանք,
— Հա՛ դան, դանի, դա՛ն դանի,
Կապան կարեմ շանդանի,
Քյոբան տնեմ պաց մավի,
Նանան քյո չարը տանի։
— Լաճի՛կ, լաճի՛կ, քարե խաչիկ,
Ա՛ռ քո ճաներ, քեզի խաղա,
Ալյուրը մաղեմ, իկյամ քե պախեմ։

Խոյ, Հայքաղ
ԱՐ 655

149

Մանչս կայնե կարմնճին,
Մանդուշ օղերն անկճին,
Խապար տարեք ղոքնչին,
Մատաղ կտրե էսպես կտրճին։

Տա՛ն, տա՛ն ու տա՛ն, տուն չունեննաս,
Քրդին օբան բան չունեննաս,
Քեր քյուչուկ նանասի վար,
Ումազ բաշի խոխմազ սաչի,
Եամռսի ումռի գյանասի վար։

Բայբուրթ
ԷԱԺԶ 71

149 ա

Քիր քյուչուկ նանասի վար,
Իմ տղին ջանասի վար,
Մեր ծառին շաֆթալու կար,
Իմ տղին ջանասի վար։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

150

Հա տընգ անգի՛, տընգոցն ի,
Նանայի մերդի քըթոցն ի,
Պանն ինչ անեմ, տիզոտ ի,
Պամպակչա չոր կտոտ ի,
Ավելի ծերին ծաղիք ի,
Խավու ոտին թաղիք ի,
Դմբլան բերեք որ թփենք,
Ծամոն տկի, որ ծամենք,
Տնիսոն տիտիկ աննենք,
Էդ տղային թամոշա աննենք։
Հա՛ տը՛նգ, տը՛նգ, տը՛նգ փաշա,
Նանան քև ղարավաշ ի,
Ախոն քյո ջլավ քաշի,
Հա՛ լա-լա՛յ լալկներով,
Ճաշ էփեմ պտուլքներով,
Էդ տղան[1] ուտի ճանճերով,
Հա՛ ղընգ, գնգի՛ ղընգան,
Նանայի բալա սկոտան,
Քեռին էկավ պյակչա,
Սև պուտուկա շլակչա,
Պուտուկա յնդյավ կոտռվավ,
Սկոտիկչա կոտռվավ։

Խոյ
ԷԱԺԶ 67

151

Տա՛շ, տա՛շ, փընդղի տա՛շ,
Նանայի ախչիկ տոճկան,
Թևեր կշտի անի պան,
Խաց շըլկի տանի կյուտան,
Տը՛նգ, տը՛նգ, տը՛նգ, աչո ջան։

ԱՐ (653)

152

Հա՛ տընգ, տընգի՛, տընգողի,
Նանայի մերղի կողղն ի,
Պանն ի՞նչ աննմ տիզոտ ի,
Պամպակ չոր կտոր ի,
Ավելի ծերա ծաղիք ի,
Խավու ոտու թաղիք ի,
Դըմբլան պերնք, որ թափենք,
Ծամոն պերնք, որ ծամենք,
Տընիսա տըտիկ աննենք,
Էդ տղայքին թամաշա աննենք։

Խոյ
ԱՐ 653

153

Կարմիր նըռնի, էս րեխս,
Կանանչ թըղնի, էս րեխս,
Բաղ ու բախչա, էս րեխս,
Ծալած բոխչա, էս րեխս։
Հա՛ նըման ա, նըման ա,
Թոռ կա, տատը նման ա,
Ով որ քեղնից չուննենա,
Յարաբ ընչի՞ նըման ա։
Դիմաց մորի, էս րեխս,
Շեկ շըլորի, էս րեխս,
Թազա կուլա, էս րեխս,
Սառը ճուր ա, էս րեխս։
Հա՛ դան արա, դընգոցըն ես,
Մեղրով լիքը քթոցըն ես,

Շամամ կուվի սիրոցն էս,
Լավ փիրուզի քորոցն ես։
Հորը մուշտակ, էս րեխս,
Մորը շուշտակ, էս րեխս,
Հորը ծոցի խուրմեն ա,
Մորը աճեղի սուրմեն ա։
Ասղիս կուրծը լեն կենա,
Խայթին էրգեն կենա,
Ասսու տունը շեն կենա,
Հա՜յ դան, դանա՛, դա՜ն դանա՜։

ԴՔՔ 107

154

Մեկ էլի՛, մեկ հատ կայնի,
Խեմ բյո բաժին ինչ կըվելի,
Բաժիդ մեռնեմ ալաշ-կալաշ,
Բեղերդ էլնի կալամ-թըրաշ,
Աստլաս կաբա կըվելի քեզ,
Կարմիր ջըմնեք ոտիդ լայեզ,
Կարմիր խընձոր գոտիդ դնես,
Ծալ-ծալ շորեր սալվի-սաբաթ.
Ընկեր գոնես բաբաթ-բաբաթ։
Կարմիր խնձոր կըծած ի,
էն էլ յարոջ տված ի,
Յարիկդ էլնի խորոտ-մորոտ,
Վզիդ կապենք կարմիր նարոտ[1]։
Մեկ էլի՛, մե՛կ էլ խաղա,
Բաժիդ մատաղ աղա-մաղա։

Վան
ՎՍՇԲ 11

155

Ելիր, կայնի պոյիդ կուգա,
Տեսնամ ինչ կը վայել ա,
Ըսեմ Ամուն կտրա, բերա,
Նանեն նստի ու կարա։

ՀԺԲԱՆԴ 84

156

Ելի կանի ու քելե,
Տեսնամ բաժիկ ո՞նչ վելե,
Ասիմ Աբոյին բերե,
Թարզին կարե ու կարե,
Ջանըղնակ սըճեֆ դնե,
Ջթուխ ամպեր բամբակ դնե,
Ջաստղեր կոճակ շարե,
(Երուանդ) հագնի ու գելե։

Բնա 37

157

Դո՛լ ես, դո՛լ-դո՛լ ես,
Նոզըլամանիս դուլաբն ես,
Յաղութիս փշրանքն ես,
Ալմազիս գլխանքն ես,
Սուվգագարիս ձագն ես,
Ղալամքարիս թագն ես,
Դու իմ սիրուն տղեն ես,
Դու իմ օսկի ջղեն ես։

Ջահարմահալ
ՋՀԲե 5

158

Ախչիգ ունիմ հարսնացու,
Գարիշ գուգիմ փէսացու,
Ախչիգ ունիմ օղէրով,
Հարս բիդ անիմ քողէրով,
Գանանչ ֆարախ մոմէրով,
Յալտուր-յալտուր խոլէրով,
Որին տամ, որին չիտամ,
Դանիմ իշխանին որթուն տամ,
Դասն արաբա ճեհեզ դամ,
Ան չօքդէ նե՝ դահա դամ,
Գլոր կուվխուն ֆես ալ տամ,
Սրմա մազին սանդր տամ,
Պարագ մեջքին՝ կոդի տամ,

Բզտիգ ոդքին մաշիկ տամ,
Տուռն ու երթիգը վար տամ,
Դանիմ իշխանին սրթո՛ւն տամ,
Հաբադա՛, հաբադա՛, թո՛ղ էրթա։

Դոնի Ռոստով
ՀԺԲԱՎՍ

159

Որդի ունեմ օղերով,
Հարս կըբերեմ քողերով,
Պապան կելլե մոմերով,
Մաման կելլե խունկերով,
Խաս մորը, խաս հորը,
Աճը բաճը կընկանը,
Տանտա՛ն, տանտա՛ն,
Կարապետիս տանտա՛ն։
Տանտա՛ն, տանտա՛ն,
Եկիլին տղիս ձան կուտան.
Կեցեք գոտին թող կապե,
Թուրը քովը թո՛ղ կախե,
Բերեք տըղիս չալ ձին,
Գըտակ դըրից ալչին,
Սըրմայե խամչին
Ջարնինք շուտով փախչի,
Սուրբ Կարապետ հասնի։

Նոր Նախիջևան
ՀԺԲԱՍՎ

159 ա

Կարիճ ունեմ օղերով,
Հարս պիտ բերեմ քողերով,
Պապան կելնե մոմերով,
Մաման կելնե խունկերով,
Խաս մորը, խաս հորը,
Աճը, թաճը կընկանը,
Տանտա՛ն, տանտա՛ն։
Տանտա՛ն, տանտա՛ն,
Էկիլ ին տղիս ձան կուտան,
Կեցեք, գոտին թող կապե,
Թուրը քովը թող կախե,
Բերեք տղիս չալ ձին,

Գտակ դրից ալչին,
Սըրմայի խամչին
Ձարնինք, շուտով փախչի,
Սուփ Կարապետ Հասնի։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 60

160

Տը՛նգը, տը՛նգը, դը՛նգ օշնակ,
Մեղրով լիգը քթոշնակ,
Մթեն տանը ճրաքն ա,
Թոխ վըչխարին դիմակն ա։

ՀԺԲԱԻ

161

Տնգլը՛մ, տընգլը՛մ, դը՛նգ դընգոցն ըս,
Մեղրավ լիքը քթոցն ըս,
Սև ոչխարեն դմակն ըս,
Առավոտյան արաղն ըս,
Մըթեն տեղեն ճրաքն ըս։

ՀԺԲԱՆԱ 30

162

Ճո՛ր, ճո՛ր, պար-պա՛ր,
Էկու հայրիկը ճոպպան տար,
Պզտիկ է, չեմ իտար,
Քիչ մըն մեզնա, հապա տար։
Որի՛ տամ, որի՛ չի տամ,
Պեչլեր պեչին տղին տամ,
Տասն արապա ճհեզ տամ,
Ան ալ հատնի՝ տահա տամ։

Կ. Պոլիս
ԱՀՔ 168

163

Ճոր գնա՛, բոր էկո՛,
Հըմա կիգա մենծ մաման,
Բերե քըզի արմաղան,
Ուտես, ուտես մեծանաս,
Ջոչուներուն հեծընաս,
Ըմմըն տեղրանք օլորտիս,
Մամուդ, պապուդ հաց բերես։

Նաննի՛ ըսեմ, քընցնեմ,
Նուշ ու շաքար կերցընեմ,
Ճոր գնա՛, բոր էկո՛,
Եղիկ ու մեղրիկ բեր,
Կեսն իտանք լղճորկան,
Կեսն իտանք պղճորկան,
Կեսն իտանք մամային,
Կես իտանք դադային,
Կեսն իտանք բաբային։

Կ. Պոլիս
ՀՀՍ 358

164

Ճորիկ պար, ճորիկ տար,
Նենեն էկո գողցեր տար,
Պըզտըտիկ է, չեմ իտար,
Երբոր մեղնա՝ էկո տար։

ԲՆԱ 31

165

Ճո՛ր կընե, պա՛ր կընե,
Ջաուկին հայրիկը նոր կընե.
Ան հիննա մեյ մ՛ալ կընե,
Հիններն ա մայրիկը շոր կընե։
Ճորիստա՛ն, պարիստա՛ն,
Է՛կու էրթանք Հինդիստան,
Առապիստան, Քյուրդիստան։

Կ. Պոլիս
ԱՀԲ 169

165 ա

Ճորի՛կ, հա՛յ ճոր, ճորճորի՛կ,
Մամայի նախշուն քթոցիկ,
Դատայի օսկի տոլաբիկ։

Աշտարակ
ՀԺԲԱԳ

165 բ

Ճո՛ր, ճո՛ր, ճլորի՛կ,
Մամայի նախըշած լորիկ,
Դադայի անգին կոլոլիկ,
Ճո՛ր, հա՛ ճոր, ճլորի՛կ։

Աշտարակ
ԳԱԱ

Ճո՛ր էնիմ, ճորճո՛ր էնիմ,
Խոշերը խուրպան էնիմ,
Միսն ուտիմ, չորպան խըմիմ,
Փոստն տղաիս բյուրք կարիմ,
Օսկորը չատր շինեմ,
Փորդիկը փոթթիկ կարեմ։

ԲՆՒ 48

166 ա

Ճո՛ր-ճո՛ր, ճո՛ր մանի,
Կարմիր խընձոր կըլմանի.
Էսի որո՞ւն կըլմանի՝
. . . . . ին կըլմանի։
Ճո՛ր-ճո՛ր, ճո՛ր էնիմ,
Փեշըդ կըյրիմ շոր էնիմ,
(Փեշըս կըյիմ՝ շոր էնիմ),
Աս տարի էսի էնիմ,—
Էկող տարի նորն էնիմ։
(Գարուն էլլամ՝ նորն էնիմ),
Ճո՛ր-ճո՛ր, ճո՛ր էնիմ,
Սև ղոչը ղուրբան էնիմ,
Միսն ուտիմ, շորվան խըմիմ,
Դերին քեպի քուրք էնիմ։
Ճո՛ր-ճո՛ր, ճո՛ր օշիկ,
Քելե գընա, քյոր օշիկ,
Օքն է հաքեր է կոշիկ,
Ինք՝ պըղդիկ, պաքն՝ անուշիկ։
Ճո՛ր-ճո՛ր, ճո՛ր մանի,
Էսի նենի կըլմանի,
Հաղի խաղը հատնի նև,—
Էսոր քունը կըտանի...
(Սըվոր քունն է կըտանի)։

ՄԱԱ

167

Ճո՛ր, ճո՛ր, ճո՛ր մամա,
Ե՛լ մամայիդ տուն կնա.
Տե՛ս մամադ ի՞նչ էփեր է,
Պուլղուր ապուր թարխանա,
Կեր, կեր կշտացիր։
Ճո՛ր, ճո՛ր, ճո՛ր մամա,
Քանի մաման ճամըննա,
Կորկոտ ապուր պիշիննե,
Յուղը վրան խաշըննա։
Էկո զիս կանչըննա։
Ճո՛ր, ճո՛ր, ճո՛ր ընենք,
Միսը ուտենք, չորպան խմենք,
Մորթը կարենք, քյուրք ընենք։

Այնթափ
ԱՍԲ 61

168

Ճո՛ր, ճո՛ր, ճո՛ր էնիմ,
Սև հավ մի կուրպան էնիմ,
Կուրպանը տղիս օտքեր տա,
Ել վազե տատան գընա.
Տատան քըզի ինչե՞ր տա,
Ճեպերոքդ լոլոկ տա։

Մալաթիա
ԳԹԱ 236

169

Ճո՛ր-ճո՛ր ճորապար,
Օսկուն թային պարապար,
Նենեն էկո դուն տար,
Պըզտըլիկ է չիմ տար։
Ճո՛ր, ճո՛ր, ճո՛րն էրթանք,
Ջուաձեղ էլինք ձորն էրթանք,
Կատուի մանուխ նենե տենք,
Մըկան ձագտիք խալա տենք,
Չեն ըսիր թե մերն էրթաք։

Մալաթիա
ԳԹԱ 236

170

Ճո՜ր, ճո՜ր, ճորապա՜ր,
Օսկի թախտին պարապար,
Նեննեն էկո չաչան տար,
Դավա պզտիկ է չիմ տար։

Մալաթիա
ԳԹԱ 236

171

Քնացիլ արթընցիլ է,
Վորդն ճորեն մտիլ է,
Նեննի ըսիմ, քընացընիմ,
Շաքրևվ, մեղրևվ կշտացնիմ։

Ճո՜ր, ճո՜ր, ճո՜ր կընո,
Պապանին պեշոր օռ կընո,
Տար համբոքը համ էրո,
Պապանին ծծիկդ օռ կընո։

Մարաշ
ԱՍԲ 2

172

Ճո՜ր անինք, ճորպա՜ր անինք.
Օսկուն թուխուն պար անինք.
Կապան կըլինք շոր անինք,
Ան ալ կտրտի՝ ալ անինք։

Ակն
ՀԱՃ 465

173

Ճո՜ր պար, ճո՜ր պար։
Օսկուն թուխուն պարապար,
Աղա պապա էկուր գողցի տար.
Պզտիկ է՝ չենք իտար,
Եբ որ մեծնա, էկուր տար։

Ակն
ՀԱՃ 465

174

Ճորճորն ելեր ժուռ կուգա,
Վախիմ քի մեր տունը գա,
Գա չաղաս առնե էրթա,
Ճորճո՛ր, պարպա՛ր,
Աղբար, էկո հոպպան տա՛ր,
Պըտըտիկ է չեմ իտար,
Մեծանա նե՝ ևկու տե տար։
Կարմիր կոշիկ հագըցնեմ,
Տընե տըներ պոռթցընեմ,
Պապուն ձառքը պագըցնեմ,
Ճորճոր անեմ, որ մեծնաս,
Ելլաս իպոս ձին հեծնաս,
Մորդ ու պապուդ արև տաս,
Դըրասներուդ բարև տաս։

ԲՆԱ. 48

175

Տղա՛, տղա՛, ալ կապա,
Բարակ միջաց շալ կապա,
Ելիր տանիս պտուտա,
Աշխարհն աստ կոլոտ ա,
Նանի որդին խորոտ ա։
Տղեն կաներ կարմընջին,
Տոլաբ դնդեր ակընջին,
Ջուաբ ճամբեք զոքանչին,
Թո՛ղ դա մեռնի իր ջանին,
Տղա՛, տղա՛ տաղլիշա,
Տաղլի խնձոր տամ խաղա։

ՀԺԲԱՆԴ 33

176

Ծո՛ տղա, դյու ալ կապավոր,
Սաղմոսդ ի ծոց պասավոր,
Աղջիկ դյու ալ սայավոր,
Խայլինդ ի ծոց պասավոր։

Վան
ՎՍՇԱ. 16

177

Ելա տանիք թափ քելեցի,
Օսկի խնձոր պլորեցի,
Ձլանկեն զարկի զերդիկ բացի,
Գառնուկս տուն չէր, նստա լացի,
Ձդարդակ օրոցն օրորեցի։
— Դե տղա՛, տղա՛, իմ ձագուկ,
Հոգուս ճնճղիկ, իմ գառնուկ։

ԱՔ 1

178

Ելա տանիս թափ քելեցի,
Օսկի խնձոր պլորեցի,
Լանկեն զարկի իրդիս բացի,
Լալեն տուն չէր նստա լացի.
Լալի օրոց օրորեցի։
Լալեն գացեր գետնի լըվա,
Տաշտեր կոտրավ, ջրեր գնաց,
Ավտալ աղի շորեր մնաց։
Տղա՛, տղա՛, տաղլիշա,
Տաղլի խնձոր տամ խաղա։

ՀԺԲԱՆԳ 37

179

Աննման, նանուն մնան, նման խաբար,
Թեզած, բիթուն մնան,
Ղարաղաչ գայուն մնան,
Քյաքլիկ պոչիկ ամուն մնան։

ՀԺԲԱՆԳ 68

180

Նանը քը մատաղ, վանքը [illegible],
Հացեն կտորը՝ հանքը տո,
Տոնը մթեն՝ լիսը տո,
Նանը մենակ՝ հր՝նկերը տո։

ՀԺԲԱՆԳ 67

181

Աչուկ է՝ աչուկը
Կըլմանի ժամուն խաչուկը.
Կտիկն է՝ կտիկը
Կըլմանի ժամուն կոթիկը.
Կռնակն է՝ կռնակը
Կըլմանի ժամուն դռնակը.
Բերանն է՝ բերանը
Կըլմանի ժամուն խորանը։

ՀՍ. 6

181 ա

Իմ աղջկան աչերը՝
Կըլմանի ժամուն խաչերը,
Իմ աղջկան բերնակը՝
Կըլմանի քամուն խորնակը,
Իմ աղջկան կռնակը՝
Կըլմանի ժամուն դըռնակը։

ԲՆԱ. 7

181 բ

Իմ աղջկա աչերը՝
Կընըմանի ժամու խաչերը.
Իմ աղջկան բերնակը՝
Կընըմանի ժամուն խորնակը.
Իմ աղջկան կըռնակը՝
Կընմանի ժամուն դըռնակը։

Վան
ԳԲՋ

181 գ

Էն ի՞նչ աղջիկ, աղջիկ է,
Կըլմընի ժամու խաչիկ, է՛,
Էն ի՞նչ աղջիկ, քնքիկ է,
Կըլմընի ժամու ֆընտիկ, է՛,
Էն ի՞նչ աղջիկ, բերան է,
Կըլմընի ժամու խորան, է՛։

ԲՆԱ. 30

181 դ

Իմ աղջիկը աշու չա,
Աչքը ժամուն խաչուկն ա,
Բևրանը՝ խորան ա,
Կռնակը՝ դռնակ ա,
Քթիկը՝ ֆնտիկ ա,
Իմ աղջիկը աշու չա։

Աշտարակ
ՀԺԲԱԳ

182

Կեռտանը սիրեմ, կեռտանը,
Կըլմանի ժամուն մեչտանը.
Թուշիկը սիրեմ, թուշիկը,
Կըլմանի ժամուն խուշիկը.
Պևրանը սիրեմ, պևրանը,
Կըլմանի ժամուն խորանը.
Քիթիկը սիրեմ, քիթիկը,
Կըլմանի ժամուն քուրեկը.
Աչուկը սիրեմ, աչուկը,
Կըլմանի ժամուն խաչուկը.
Անկաճը սիրեմ, անկաճը,
Կըլմանի ժամուն զանգակը.
Ճակատը սիրեմ, ճակատը,
Կըլմանի ժամուն գագաթը.
Մաղերը սիրեմ, մաղերը,
Կըլմանի ժամուն ավելը։

ԱՀԹ 172

183

Հալալա, հալկներով,
Ճաշ էփիմ պուտկներով,
Դուն ուտիս թաթիկներով։

ՀԺԲԱՆԳ 83

184

Խալալա խալկին ասեմ՝
Ըռեսի խարսին ասեմ,
Թող քո աղջիկ տանես չելներ՝
. . . . . ին աչքով չաներ։

ԱՀԺԹ 104

184 ա

Խալալա, խալկներով,
Բալաք ճաշ էփեմ կճուճներով,
Խնամիք գան նաղարայով,
Դուռ դրկից շերեփներով.
Խալալա, խալկներով,
Քեֆ քյաշենք ճժով, պժով։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

185

Հալալա, հալկներով,
Պաս կիփեմ պուտկներով,
Խերքուրն էկավ հա՛մ կտելով, հա՛մ շերեփով,
Գրողի մախ Մուքոն տանի,
Թե ես ասի մուկն սպանի,
Մուկն ինկի կարասն խարամի,
Ո՛վ հալալա՛, հալալա՛։

Թխմարա Կյուանենց գյուղ
ԼՍԺԶ 68

186

Խալա՛լ, լաճ կեր մամուն,
Ձին խեծներ էրթեր էորտուն,
Սարի լաչին պիրեր մամուն,
Սարի մըխակել խաթուն մամուն,
Կինդը Թոռ պիրեր կընոջ,
Ալ դարահին խաթուն քուրոջ,
Ոսկի քամար ուր խորքըրոջ։

ԱՀԺԲ 104

187

Հալալա՛, հալեր ույու ես,
Մութը տան հրագ ույու ես,
Մամեն մենակ՝ ընկեր ույու ես,
Աղի ծոցի լալախ ույու ես։
Հալա՛, հալըմ չկա,
Թան խփեմ՝ պուտուկ չկա,
Կումկումեն արաղ չկա,

Սուրահին դինի չկա,
Խարանիս անեմ տեր չկա,
Օհան աղին բեղ չկա։
Հալալա՜, հալկըներով,
Խալխալ շինեմ տոտկըներով,
Մատնիկ շինեմ մատույնքներով,
Ալմաստ, զմրուխ ակույնքներով։
Հալալա՜, հալեր տյու ես,
Ծովը կուկյա, անդող տյու ես,
Գյաուը կուկյա, դմակ տյու ես,
Սողպաթ փռեմ, ծաղիկ տյու ես,
Կիզնեն լցեմ, մազեն տյու ես,
Մամեն մենակ, ընկեր տյու ես։
Հալալ էր, հալը կուշ էր,
Դռներ տանիս իրիշկեր,
Տեսներ նախիր վո՞վ կը քշեր,
Քյարով զաներ, դյլյոխ փխշեր,
Աղեն կեյր զուլում քյաշեր։
Հալալա՜, հալեր տյու ես,
Մութը տան ճրագ տյու ես,
Մամեն մենակ, ընկեր տյու ես,
Աղի ծոցի լալախ տյու ես։

Վան
ՎՍՇԱ 83

188

Հալալա, խալեր վերեն,
Ատլաս, ջուբեր զուլեր վերեն,
Քև դըրկեմ սրտիս վերեն,
Առնեմ էրթամ վարդի բուխեն,
Վարդեր քյաղեմ փունջ անեմ,
Օրորոցիդ շուրջ անեմ,
Վարդենին ֆող հոտ աներ,
Քյո անուշ քընիկ տաներ։
Թևերըս խով անեմ վերեդ,
Որ չիրիցիր պարկ արևեն,
Վարդի բըլբուլ որ ճըլվըլեր,
Քյո անուշ ձենիկդ առներ։
Աչքերացդ ասեմ հատակ,
Քիթ բերանդ շահ գյուլիստան,

Ասլան ձկներ քյո դեմ խաղան,
Աշխարհ ալամ քյո դեմ դողան։
Հալալի՜ր, խալխր վերեդ,
Արծրթին կապեր վերեդ,
Սրրմալու սալիեն վերեդ,
Աշխըրքի աչքն էր վերեդ։
Խուռումախմեն քեզ սրմադան,
Աղունակ որ ձեն կածեր,
Զուկն ի ծովուն քե դուլք ասեր։
Ծըլվըլուն ճրնճղիկներ,
Կըվկըվան սարի կաքավ,
Քյո խաղին էլնեն ընկեր,
Քյո լեզվին փակ ու բալնիս։

Վան
ՎՍՇԲ 10

189

Մեր էդուն պատնէշուն,
Խնձըլընուն ծառնեշուն,
Յաճուցնք մոդըմ առնում,
Աս դըղուն պապան սիրտը առնում։
Պո՜յ կենեմ, պո՜յ կենեմ,
Թումըն ձեյունին կու մնկընիմ,
Իքիշմեյը խելքը գլխեն կանցնի.
Գնո՜ տըղո բոն ունիմ,
Քեյկոֆնիմ բոն ունիմ,
Ընդ քեզի մի խե տըղո ամեն տեննեյ, մոտոմը ունիմ,
Աս տըղան կիննե տեննեյը,
Կը լողե տունըղ տեննեյը,
Գեննչ բեյդին ուռքը,
Բամոն բուսնի փըշրոնքը,
Դիմացի պաղչեքը մեյը կիյմանե,
Մեջը փիլիշ մը կոյ տղաս կիյմանե.
Գրկին Թոփուխը պըդըզիկ կիյմանե։
Աս տըղան մատիկ, մատիկ,
Լալի բաբուճ չընաբր վաղիք է՞,
Բարոկ առունուն պող ջուն է՞,
Հացին փշրոնքն է . . . . . խատոք։

Հաճն
ԳՔԱ 132

190

Ելիր կայնիր խետ իրկան,
Ծանդրիկ կուգա բադրկան,
Դեղ ու դեղդիր քու կնկան,
Դաստա լաչին քու մամուն,
Կարմիր խնձոր քու պապուն,
Թուր ու ֆվանք քապպուն։

ՀԺԲԱՆԴ 84

190 ա

Անձրև կուգա վերին սարեն,
Վերին սարեն, մարմառ քարեն,
Ելիր կայնիր էն սարեն,
Էն սարեն ու էն քարեն.
Դեղդիր դրի աչերիդ,
Դաստա մաղերիդ, մաղերիդ,
Ղուրբան էլիմ քու չանիդ։

Մուշ
ԴԱՄ

191

Աչքերացդ ասեմ ըստան,
Աչքապերացդ շահ կուլիստան,
Ասլան ձկներ խետ քի խաղան,
Կագըվներ խետ քի կըրվըրան.
Խալալա խալ էր տըղեն,
Արծըթե թառ էր տըղեն.
Ծառ չինարին աղեն էր,
Չինար պաժին մամեն էր,
Ճըլի ճըլտուզ մորքըրներ,
Վարդ վըռըհան խորքրներ,
Քան քաֆուր վարդ քեռկինքներ։

ԱՀԺԹ 103

192

Անձրև կուգա կուլկուլա,
Մեռնիմ պաժիտ մարդարա,
Մարգարեն կաներ կարմընջին,
Գացեք կանչեք զոքընջին,

Ջոքանչ մեռնի կտըրճին,
Կարիճ գնաց խիյարի,
Թումպան իզուր տիյարի։

Բաղեշ
ՀԺԲԱՆԴ 33

193

Մեռնիմ քե, պատիկ լուսնակ,
Դու նդ ո՞ր կէրթաս մեն մեննակ,*
Շատ մի ունիմ քեզ օրինակ,
Պատուղ բերա քաղցր ու բարի,
Շատ սիրելին կուկեցնա,
Շատ ատելին սիրեցնա։

ԲՆԱ 346

193 ա

Մեռնի նանը մեռներով,
Քեռին դուքա բեռներով,
Ադեն քու չանին մեռնի,
Ղալամքաշ աչքերիդ մեռնի,
Իմ սարի մադան, բալա,
Դարդերիս դարման, բալա։

Ալաշկերտ
ԳԱԱ

194

Իմ լաճն ի սարի մադան,
Իմ լաճն ի Թուխըմ քաթան
Ղոչի տրմակ,
Հորը քոմպ,
Շառի ծիրան,
Խան, ամիրան,
Շաղկի դաստան,
Բաղը բոստան,
Բուռջը բադան,
Վանքի շամդան,
Վարթի քրթոց,
Կըրակը պոց,
Կըլտոր-մըլտոր,
Փոլտի կըտոր։

ՀԺԲԱԲ

* «Դուն դո՞ր» պետք է լինի. «դու ո՞ր» (Ծ. Կ.)։

195

Սև լաճ ուր ձին թամքիլրի,
Մեջ խիծիլին խաղցկլրի,
Սև խալ սև լաճուն մատաղ,
Պատի քյուրեր իմ լաճուն մատաղ,
Մորքրներ իմ սարուն մատաղ։

Վան
ՎՍԵԱ 17

196

Նանը ղուրբա՛ն,
Ջանը ղուրբա՛ն,
Սարղամիշու սարը ղուրբա՛ն,
Ղարսի ղուբերնատորը ղուրբա՛ն,
Թուրքերու սուլթանը ղուրբա՛ն,
Աճմներու շահը ղուրբա՛ն,
Սաղ աշխարհի լավը ղուրբա՛ն,
Ադիլ նանիլ ջանը ղուրբա՛ն,
Իմ ձձմի թանը ղուրբա՛ն,
Մեր օջախի ցանը ղուրբա՛ն,
Ունեցվածքն ու մալը ղուրբա՛ն,
Ֆրանկի ատլասը ղուրբա՛ն,
Հինդու յաղութ քարը ղուրբա՛ն,
Նանը ղուրբա՛ն,
Ջանը ղուրբա՛ն։

Ղարս
ՀԺԲԱԳ

197

Պապատ կանի կըտիտը,
Հարսն ու աղջիկ խտիտը,
Խնձորը կծի, ծուլ անի,
Ջիզի հարսին կուլ անի.
Ծառի ծերի չարշն եմ,
Աղջկերանց մարդն եմ.
Ծառի ծերի հոպոպն եմ,
Աղջկերանց փուփոքն եմ.
Ծառի ծերի ճուղեն եմ,
Աղջկերանց պուղեն եմ։

Ղազախ, Ուզունթալա
ԱՀէ 203

198

Քև մեռնեմ, քյո քյավուրոչ,
Որ քև պըրկե բերեր ի տուն,
Որ չըβոզեր կերեր ի շուն։
Տերտեր լուսըար գովք են ասե,
Ավազանի մեջ մըկըրտե,
Անունդ Կարապետ ասե,
Կարապետ անուն բարի,
Յոβն անվան տեր քեզ մուրատիւ
Իմ կճատիկ արուխ-մարուխ,
Քյո կճատ թևքերը վեր վերու,
Օտերացդ տուր զորություն,
Սարե սար կա գնալու,
Սուսուն ծաղիկ կա քաղելու,
Փունջ կապելու, տուն բերելու,
Թառ քյավուրոչ օղորկելու,
Կանաչ մեռոն համբուրելու։
Քև մեռնեմ, քյո քյավուրոչ,
Մումպարաք ձեր տիրոջ,
Տերն ի տվե, մամեն բերե,
էն քյավուրոչ մունաթ ավիլցե։

Վան
ՎՍՇԲ 9

199

Քև մեռնիմ կճատ մեղու,
Քյո կճատ թևեր վեր,
Սարե-սար կա էրթալու,
Շուշան ծաղիկ կա քաղելու,
Թառ քավորին հ'ողորկելու։
էրնեկ էն օր ինչ դու էղար,
էն օր վարդ էր ու վարդեվար,
Ավագ զատիկ ճրագն էր վառ,
Շուն ի դուս շուքր կտեր,
Կյաքավ էրդիս մորն ավետիս։

Կարճականա Նանկաց դյուղ
էԱԺՋ 67

200

Կճատիկ արուխ-մարուխ,
Կըճատ թիվքերդ վեր վերու,
Սարե-սար կա էրթալու,

Սուսուն ծաղիկ կա քաղելու,
Քու քավուրոջ օրոխկելու,
Թառըմ ույու, թառմ քո քավոր,
Թառոջ խաթուն էր քավոր կինու։

Ա.Հ.Թ 104

201

Կճատ մեղուն, հա՛ կճատ մեղուն,
Կճատ թևեր վի վերու,
Սարե սարն թռնելու,
Անթառան ծաղիկ բերելու,
Թառ քաբըբուն յօղորկելու,
Դու թառ, քաբըբ թառ,
Մեռնիմ քըզի, քու քաբըբուն,
Կնքեր ա՝ տուն ա բերի,
Չթողեր ա կատուն ուտի։

Փ.Թ.Հ 75

202

Հա՛ կճատ մեղու, հա՛ կճատ մեղու,
Թավի տու քու կճատ թևերուն,
Սարե-սար ես էրթալու,
Շուշան ծաղիկ ես բերելու։
Թառ ես դու, թառ քու քավոր,
Յոթ երեց քզի կնքեր ա,
Յոթ սարկավագ մոմեր բռներ ա,
Կը ավտնամ քու ստեղծողին,
Քզի շալակե տուն բերեր ա,
Չթորկեր ա կատուն կերեր ա։

Ալաշկերտ
Է.Ա.Ժ.Զ 69

203

Ա՛ պզան մեղու, ա՛ պզան մեղու,
Քու մանրիկ թևեր վերու,
Բանձրիկ սարերն ես էրթալու,
Սուսան, սումբուլ ես քաղելու,
Քաղցրիկ մեղրն ես կրելու։

Ալաշկերտ
Է.Ա.Ժ.Զ 69

204

Հա՛ կճատ մեղու,
Հա՛ կճատ մեղու,
Դու քու կճատ թևեր վերու,
Սարից սար ես էրթըլու,
Սալամ կաքավ բերելու։

ԱՀՆ 12

205

Հա՛ կճատ մեղու, դե՛հ կճատ մեղու,
Թափ տուր քու կճատ թևերուն,
Սարե-սար ես էրթլու,
Շուշան ծաղիկ ես բերելու։
Թառն ի դու, թառն քու քապապ,
Թառ ու մառ էտ քու քապապ,
Յոթն երից էր քու կնքող,
Յոթ սարկավագ էր մոմ բռնող,
Հավատամ քու առեղծող,
Որ համբեր ա տուն ես էկեր,
Չը թորկեր ա գելնի կերեր։

ՀԺԲԱՆԴ 83

206

Երանեկ էն օր ինչ դյու էլար,
Մորն ավետիք որդի մ'էլար,
Ամպ խովանի օսկիմ էլար,
Կաքավն էրտիս, մորն ավետիս։

Տերտեր կնքեն հաղն ի առեւ,
Թե մեռոնն ճյաշն ի կերե,
Տերն ի տվի, մերն ի պիրե,
Էն քյավուրոչ մունաթն ավել,
Որ գրկեր ի, տուն ի պիրե,
Որ չթալե, շուն ի կիրե։

Ջուկն վեր ծովուն քեյ կյովք ասաց,
Յոթ սարկավագ մոմ կպուցին,
Յոթ տերտերով քեյ կնքեցին։

Ճյոչ տղա, ճյոչ նաղարա,
Դմբիկ զանեմ, նստի խաղա։

Վան
ՎՍՇԱ 19

207

Վեր կըթըռնիմ, ծաղիկ եմ,
Թնթնվախոտի աղջիկ եմ,
Սերկևվելին ծաղիկ եմ,
Աղապ լաճու մատնիկ եմ,
Թառ քյավուրոչ սանիկ եմ։
Մեռնեմ, մեռնեմ մեռոնով,
Քեռին էկավ բեռներով,
Բեռները պյութուն քյարբար էր,
Իմ լաճ վիրեն սարուբար էր։
Ջանն ջան, ջանըս քե կուրբան,
Փողնի մարդեր լաճուս կուրբան,
Լաճն էր աղա, լաճն ամիրա,
Աղջիկներաց վերեն խաղա։

ՎՍՇՔ 10

208

Երնեկ էն ավուր կուտամ,
Պարկը շալակիդ կուտամ,
Դագնապը ծեռիդ կուտամ,
Սըլեքը թևիտ կուտամ,
Մաղերը մեչքիդ կուտամ,
Տըռնեն ի տուռ ման կուտամ։

Գառնի
ՀԾԲԱԲ

209

Լաճուն մեռնեմ քյանի կա,
Ոչ խիվընդնա, ոչ տքյա,
Լաճն ըխտատեղրանք շուռ մուռ գյա,
Լաճն առավոտ, լաճ,
Գյառներ տար արոտ, լաճ։

Վան
ՎՍՇԱ 12

210

Կարապետ աղբյուրի խետ,
Քեր խետ, կըլորի գետ,
Տյու գյոր կէրթաս՝ մամեն տար խետ։
Կանչես, կանաչես, տըղա։

Քյո յարիկ շուտ ճանաչես։
Յարիկդ էրկնն բաժ էլներ,
Ծամերն խետ կըընկան էլներ։
Սև ես, սերակեր ես,
Քանց ղըմեն ծաղկունքը վեր ես,
Սիվատակ ես, ծծի տակ ես։

Վան
ՎՍՇՐ 3

211

Խանեհ, խան, խանղադա,
Թորվըննեն խան, խանղադա,
Խավու խորված խանղադա,
Խնամու կերած խանղադա,
Ջոր խաց չեմ կանա ուտե,
Ատըմներս խախուտ են,
Կակուղ խաց առաձա կառնի,
Կակուղ բաղարջ փորիս դեղն ի,
Դարիվեր չեմ կանա էլնի,
Գլոխ վեր՝ խանդըս կկտրի։

Վան
ՎՍՇՐ 5

212

Ջագ ու ձագ, ձագարակ,
Ջագս էլեր բերդի բարա,
Կանչեցի տեր Ջաքարա,
Որ ղբի օրհնե, իմ բալա,
Ջգառն ու մաքին ես տեսա,
Ես կթեմ, դու մերե,
Ես բրդեմ, դու գտալե։

Մուշ
ԱՔ 1

213

Ջագ ու ձագ, ձագարակ,
Ջագ իլեր բերդի պարա,
Կանչեցին տեր Ջաքարա,
Ջուխտակ գառներ ի բե դեսա,
Ես կթեմ՝ դու մերա,
Ես բրթեմ՝ դու գտալա։

ՀԺԲԱՆԳ 33

214

Քնիր ես, քրոջընիր ես,
Մամին քե կուրբան,
Վախենամ տայտ քայիր ես,
Գրող քե տանի։

Վան
ՀԺԲԱՇ 5

215

Երկինքը պեպեք մի կա,
Նատիր քերկեֆ նախշեյա,
Հեննեն պուղլութխալեյա,
Քրտինքոքը հավկիթի խաշեյա,
Վարտիքը վեր-վեր քաշեյա,
Կելենն կիտենն չոշուղ։

Մալաթիա
ԳԹԱ 160

216

Ախչիկս ախչա ունի,
Համամի բոխչա ունի,
Ջառուվ սանդուխչա ունի,
Մարդու գնա՝ տուն ունի,
Ճուճուկներուն բուն ունի,
Դե՛, բունիբունի ճուճուկներ,
Համամ գնացած ախչիկ,
Ողներդ վլացած ախչիկ,
Ջուրաբ չհայտաբուվ ախչիկ,
Փայ ու բաժինքուվ ախչիկ։

Ջահարմահալ
ՉՀԲ 8

217

Ախչիկ ունենք բռանդին,
Պահել ենք տանք ֆռանդին,
Ֆռանդն էկավ մեր դուռը,
Օսկին համրեց հեր բուռը։
Վով արժան է զա տանի,
Վով արժան չէ՝ չտանի,
Հ՚աճկերը ցոյդը տանի,
Ողները ճունը տանի։

Ջահարմահալ
ՉՀԲ 8

326—16

218

Օվսաննա ջան, Օվսաննա,
Ուրախ Զադիդդ լուսաննա,
Բարիդ գա Հնդստաննա,
Բևռներ բերե քաթանա.
Քաթան դոշակը տակիդ է,
Ջառ թակալեն հաքիդ է։

Ջահարմահալ
ՋՀԲԵ 6

219

Ախչիկյ օնիմ վորդ-խաթուն,
Բեժինքյը կարվածֆ-քաթուն,
Բուրդ բարիքյ, բեժինք արի,
Օղա բարիքյ բևռնի տանի։
Ո՞վ այ գնչիս, գայ տանի,
Մագամ տոլ ը՞մ, օր տանի։
Դառ հայրը հո դառ մայրը չէ,
Ախչիկյ օնիմ հումանի,
Տոլ չիմ հրդոր ըրմանի,
Էխտը ձի, էխտը ջերի,
Էխտը բոլամա հրլերի,
Ուվ շուտ բերի, նա տանի,
Ուվ յատի գայ՝ փշմանի,
Դառ հայրը հո դառ մայրը չէ։

Ագուլիս
ԱԲՍ

220

Աղջիկ ունեմ հունարի,
Գլխին ունի ջունարի.
Աղջիկ ունեմ հունարի,
Բոյն սալը ու չինարի։
Աղջիկ ունեմ հունարի,
Տալ չեմ հաղար թումանի,
Գլխին ինչքան մազ ունի,
Էնքան իլթիմազ ունի։

Բուրդ բերենք բաժինք անի,
Ուղտ բերենք բարձի տանի,
Գեղով կգան խնամի,
Տալ չեմ աղջիկս տանի։
Ո՞ր խնամի քեզ տանի,
Բաս քու մերն ի՞նչ անի,
Ո՞վ կարա, որ քեզ տանի,
Իր մոր ձեռից դուս հանի։

ԱՀԺՍ 41

221

Աղջիկ մը ունիմ մազերով,
Վարդի կէրթա նազերով,
Սակառը լիք թուղներով.
Տա՛ն ընի, տանտա՛ն ընի,
Մեծնա՝ մեղի բան ընի։

Մեռնիմ իրա մազերուն,
Հազար ու մեկ նազերուն,
Տոտիկ, տոտիկ վազելուն.
Տա՛ն ընի, տանտա՛ն ընի,
Մեծնա՝ մեղի բան ընի։

Իմ աղջիկը որին տամ,
Մեծ իշխանի որդուն տամ,
Թագավորին տղուն տամ.
Տա՛ն ընի, տանտա՛ն ընի,
Մեծնա՝ մեղի բան ընի։

Մատաղ ըլեմ աչերուն,
Կնմանի ժամու խաչերուն,
Կանթեղներուն ջահերուն,
Երկնքի աստղերուն.
Տա՛ն ընի, տանտա՛ն ընի,
Մեծնա՝ մեղի բան ընի։

Վան
ԳԹՋ

222

Էսպես աղջիկ ո՞վ ունի,
Շորևրով շապիկ ունի,
Մեծ գետը բաղնիք ունի,
Մեյդանը հարսնիք ունի,
Մարգրտով կոշիկ ունի։

ԱՔ 5

223

Ծափիկ-ծափիկ ծիրանի,
Ծովը խայմախ կըլմանի,
Կարմրուկ խնձոր կըլմանի,
Մազերը սըրմա կըլմանի,
Օսկի դերձան մազերն ալ՝
Հովը թել-թել կը տանի,
Էրեսս էրեսիդ քսեմ,
Հապա քունը կը տանի։

ԱՀՔ 168

224

Դըմպը՛լ, դմպը՛լ, մաղարա,
Հարս մը բերեմ կխաղա,
Ջուրը ձգեմ կլողա,
Ջուրեն հանեմ կտողա։
Ծափիկ, ծափիկ, ծիրանի,
Հովը թել-թել կտանի,
Կարմիր խնձոր կմանի,
Յուր կտանի թող տանի,
Հայրիկին պաղչան թող տանի։

Սեբաստիա
ԲՍԳ

225

Ախչիկյը մառնի բխչումը,
Շարարը դրիքյ թաղչումը,
Մոյն թոս գինի տոք պաշտումը,
Քշարավ արիքյ թաղումը,
Նոք դուք՝ վայ տոք,
Քշարավ վիկոյ չայ տոք։

Ախչիկյը մառնի, ո՞ւնչ իրիքի,
Բկըլտըխտակն ճոշ խփիքյ,
Բկըլքըշովն հոց թխիքյ,
Դրիյ տխտակին լվանիքյ,
Խում կտավավ պտանիքյ,
Ախչիկյը թաղիքյ պրծանիք։

Ադուլիս
Ա.ԲՍ

226

Գնա գնդումը թավում քըշուր արա,
Արի նանի ծոցումը կուշուր արա,
Գընա գետումը լողացի,
Արի նանի ծուցում տաքացի։
Աուլի ափան էս րևխս,
Գառան թափան էս րևխս։

ԳԹՔ 107

227

Միվ, ծիվ ծիտոնա,
Հարա տարա պիտոն ա,
Ես պիտոնին փնտա եմ,
Ճիճի մալարին հարսն եմ։

Ախա՛ջխա
ԺԽԲ

228

Մերն ի կիրև խավըրծիլ,
Աղջիկ ծընե օսկի ծիլ,
Մերն ի կիրև գապի տակ,
Տըղեն ծընե պատի տակ։

ԱԴՄ

229

Քո մեր կերեր խավրծիլ,
Ձքե բերեր օսկու ծիլ.
Քա մեր կերեր եղնղեն,*
Քեզ ա բերեր խըրեղեն.
Քո մեր կերեր տափի տակ,
Ձքե բերեր բալի տակ.
Քո մեր կերեր ձվաձեղ,
Ձքե բերեր քոռ անծեղ.

---

* «Քաա»-ն քո դերանվան աղավաղված հնչյունափոխումն է (Ս. Կ.)։

Անձրև կուգա կաթու կաթ,
Դուն մարդըբիտ անկալաթ,
Քեղի կասեն ջրի բաղ,
Գնացիր էղար հոտին վարդ։
Խազար բարուց խուրն ես դուն,
Հռավի պաղ ջուր էլ ես դուն,
Յամաք հայի կուլն ես դուն։

ԲՆԱ 5

230

Ծալքի ղումաշ ա բալաս,
Տիռնի կյումաշ ա բալաս,
Խոսա անումըդ հըրցընեմ,
Ժամումը շամ կըպցընեմ։

Օնքերըդ ղալամ քաշած,
Ճակատըդ ռանդավ տաշած,
Կորի-քինա սև սըտանա,
Իմ ղուղու ապան տաննա։

Գորիս
ՀԺԲԱԽ 3

231

Ըթեմ, ըթեմ, կաթդ կթեմ,
Մերեմ մածուն, լցեմ ցծում,
Նղ շատըցում, թան քչկցում, իմ բալա,
Խատ քյարի ցան,
Օխչրի թացան, իմ բալա.
Քունքուդո քյոռ մուկ ա,
Քունքուդո նխշուն ձուկ ա,
Իմ բալա։

Բասարդեչար
ՀԺԲԱԴ

232

Խաս դարնցան իմ աղջիկ,
Մաքուր թացան իմ աղջիկ,
Լըմըռ բաթման իմ աղջիկ,
Կարեաիրան իմ աղջիկ.
Արախչին ծուռ մի՛ դներ,
Արախչին պինդ ու տալաշ,
Նանեն մեռնի, պատիկ քալաշ։

ԲՆԱ 5

233

Աղջի՛կ, աղջի՛կ, ուզրի աղջիկ,
Աղջի՛կ, աղջի՛կ, գըհպրի աղջիկ.
Էլեր սարեր կսըղսըղա,
Մատնիք մատքեր կը պսպղա.
Թռի՛, թռի՛ Թառուցեմ,
Սև խալեր կերուցեմ,
Արաղ, գինին խմացուցեմ։

Մոկս, Սեպ
ԷԱԺՋ 68

234

Աղջի՛կ, աղջի՛կ, քարե չըխչիկ,
Մըկան պոչիկ, կաւվու տոտիկ,
Պըտիկ մըտիկ շան ակընջիկ, առ քյո խրձիկ,
Ալուր մաղեմ, գյամ քե թաղեմ։

Տըղա՛, տըղա՛, սիրուն տըղա,
Առ քյո ճաներ գյնա խաղա,
Դու իմ գլխուն պոծառ ջըղա,
Ալուր մաղեմ, գամ քե պահեմ։

Վան
ՎՍՇՐ 13

235

Հ՛ախչիկ ունեմ ջամալի,
Խելքը, շնուրք քյամալի,
Որ կա են, շեն տան սուն ի,
Որ կա են, օջախ քուվ ի,
Մարիֆաթլու մանշուր ի,
Բարվանողի բաշուր ի.
Ոսկի մատնիք պերեք նըշան,
Առծըթե թաս՝ կըլխին քըսակ,
Բեշիբիրլի շարեք հնե,
Ուր թևերաց բիլազուգներ,
Ջառգառաշեն պերեք ինե,
Հ՛ակնջներաց օսկի օղեր,
Կապու տղաշով կախեք ինե,
Խաս կանավուզ մեջկապ պերեք,
Դուգուն բանդով կապեք ինե,
Ջարնեցեք, զարթարեցեք,
Ուր մուրազին խասուցեք։

ՀԺԲԱԹ 3

236

Աղջիկմ ունիմ անի մանի,
Մազերը շեկ աննմանի,
Մեկմ էլ ունիմ, էլի մելի,
Գրողը գա հ՚ինքը տանի։

Բասարգեչար
ՀԺԲԱԳ

237

Աղջիկը տամ ը քընջան՝
Ձեռքերը կեր ալ մըռջան,
Ձիանք փակչախ խրխինջան՝
Լաճերը տուն վըրվընջան։

Ա.ՀԺԲ 104

238

Գինի, գինի գինըստան,
Ախչիյ մ՚ունեմ Շահրըստան,
Վախենամ տանեմ Ոստան,
Ծամեր վեր գլխուն գուս գան։

Վան
ՀԺԲԱՇ 2

239

Որդի ունիմ ալնաւոր՝
Հարս կբերե քողերով,
Կանանչ վառած մոմերով,
Մաման կելլե խունկերով,
Պապան կելլե փունջերով.
Էկել են տղուս ձան կուտան,
Դուռն ու երթիկը վար կուտան,
Կեցե՛ք առլաս կապաս հագնիմ,
Թելլի գոտիս մեջքիս կապիմ,
Սրմալի խամչին առնիմ,
Տանդի՞, տղաս, տանդի՞, է՞։

ՀԺՀՆ 9

240

Աղջիկ ունիմ հարսնացու,
Կարիճ կուզիմ փեսացու.
Աղջիկ ունեմ օղերով,
Հարս պիտ անեմ քողերով·
Կանաչ ֆառախ մոմերով,

Յալտուր, յալտուր, խոլերով,
Յալն կանեն աղջիկս,
Վեր-վեր կըյնի աղջիկս.
Որի՞ն տամ, որի՞ն չըտամ,
Տանիմ, իշխանին տղին տամ,
Տասն արաբա ձրհնդ տամ,
Ան չօգտեն նը՝ դահա տամ,
Կլոր գլոխին ֆես տամ,
Սըրմա մաղին սանտըռ տամ,
Բարակ մեջքին գոտի տամ,
Պըղտիկ ոտքին մաշիկ տամ,
Դուռն ու երթիկը վար տամ,
Տանիմ իշխանին տղին տամ,
Հարայտա՜, հարայտա՜, ըո՜ղ էրթա։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 59

240 ա

Աղջիկ ունիմ հարսնացու,
Կարիճ կուզիմ փեսացու.
Աղջիկ ունիմ հարսնացու,
Կարիճ կուզիմ փեսացու։
Որի՞ն տամ, որի՞ն չտամ,
Հանիմ իշխան տղին տամ,
Ան չօգտեն նը՝ դահա տամ,
Պղտի գլոխիդ մեծ ֆես տամ,
Սըրմա մաղիդ սանտըռ տամ,
Բարակ մեջքիդ գոտի տամ,
Փոքրիկ ոտքիդ շիրլիթ տամ։
Աղջիկ ունիմ օղերով,
Հարս պիտի անիմ քողերով,
Փեսա կուզիմ ոըղ նամուսով,
Ձրհնդ կուտամ փեշ-փեշտամալով։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 59

240 բ

Արի աղջիկս ինձի,
Կըլմանիս բուլիծի,
Թըռլ-թըռլ կքալիս,
Փոռթակալի կըլմանիս։

Աղջիկ գնաց ավելի,
Կըլմաներ լալեի,
Օղիկս գնաց չուլկիի,
Կըլմաներ բուլկիի։
Երկու թուշդ թուղի պես,
Քու ճակատդ պուղի պես,
Օղիկիս վրան արծաթ կոճակ,
Ինքը միքամ տեսոք չիշակ։
Օղիկս գնաց խոտ-օրախ,
Սիրտը շեն ու ուրախ,
Գլոխը դրեր է չիշակն ֆես,
Կըցատկատ թոռդայի պես։
Օղիկս կըխաղա, օչին հավա,
Հալխը կայնած, կըզարմանա,
Օղիկս կըխաղա խաչախ հավա,
Գետինը տակը կըթնդա։
Օղիկս մեկ հատ բացված վարդ,
Էրկանը հետ պիտ ապրե հաշտ,
Նանի՛, նանի՛, իմ բալաս,
Ծըլիս, ծաղկիս, մեծանաս։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 60

241

Թե շիլ եմ՝ նը շիրին եմ,
Թե կուզ եմ՝ նը կոուզ եմ,
Թե կոլոտ եմ՝ խորոտ եմ,
Քանց ամեն ծաղկունք վեր եմ,
Թե գեշ եմ՝ նը աւլասի փեշ եմ,
Թե կաղ եմ՝ նը կաքավ եմ,
Թե սև եմ՝ նը սերակեր եմ։

Վան
ԳԹՋ

242

Ճի՛վ ու ճի՛վ, ճըվճըվկա՛ն,
Ջագս թըռեր հըտ ծիծըռկան,
Ճուղ կբերեր հըտ ըղվընկան,
Բլբուլն ու ինքը վարդի վրան,
Տաղեր կըսեն, յամա՛ն, յամա՛ն։

ԱՔԲ 1

243

Կարմիր երես, բոլոր սուրաթ,
Դընգռ գլուխ ու լեն ճակատ,
Բաժ ու բալեղ չինարի ծառ,
Ոչ լավ ողիկ, ու ոչ լղառ,
Կարմիր թշներ, մռռ-մռռ աչքեր,
Գնվազ երես, թուխ-թուխ ընքեր,
Փամպուխ ձեռքեր, ճանկ ու ճվեր,
Թոթոշ, փուփուշ հաստիկ ճռներ,
Էդ կռնծուկ ոլոր ծամեր,
Այնի մընի արծթե թել։

ԱՀՋ 71

243 ա

Էդ կուտռավի մազերը,
Բախով բացուկ աչքերը,
Ով որ քեզի քար թալի,
Ընդու դյարդանը խոմի։

Բասարգեչար
ՀԺԲԱԳ

244

Քեզի ղուրբան, քեզի շուն,
Ի՞նչ իս պատցի քյո իշուն,
Ալվան ըռանդ ափրշում,
— Հ՛ըմմեն տարար սիրողիդ,
Մեկը չթողիր ծնողիդ
Տատ մի մամի,
Տատ մի գղի,
Առ, պատի տակը պըպզի։

Խոյ
ՊԹԱՍ 106

245

— Մեռնիմ քեզի մեռնելով,
Քեռին էկավ բեռներով,
Ջամիչ բերեց թեռներով,
Ջագուկս կերավ թաթերով։

Ելեր կաներ մեկ աղաչե,
Տե՛ս քանի՞ ծառ կը կանաչե,
Մեկն է ընկղի, մեկը թըղի,
Ս. Կարապետ բախշե ղրկեղի։

Մուշ
ԱՔ 1

246

Քեռին էկավ բեռներով,
Բեռներ ամեն քարուպար,
Իմ աղջիկ վրեն սար ու պար։

ՀԺԲԱՆԳ 86

247

Մեռնի, մեռնի մեռնելով,
Քեռին կգա բեռներով,
Քեռու բեռը քյարըբար,
Դու էլ միջին առըբար։

ՀԺԲԱՆԲ 87

248

Առանց մադի գըմաշվիմ,
Հողին հեդ գըշաղվըվիմ,
Կեդինեն դադը գըթաղվիմ,
Ջառին բուսին գուտամ աջ,
Սև հողը գըներգիմ գանանչ։

Դոնի-Ռոստով
ՀԺԲԱՍՎ

249

Էլի՛, կանի՛, աղչա,
Պապու ծառներ կանաչ ա,
Մեկն ա հըղի, մեկ թղի,
Մեկ աստված պահա քըղի։
Թռի՛, թռի՛ եղվընիկ,
Ալազանի ծիծրռնիկ,
Խաչ պատուհան կուտ կերե,
Ալազանի ջուր խմե։
Տա՛ն էնիմ, տունա՛ն էնիմ,

Ղոչ գառներ մատաղ էնի՛մ,
Ոսկըրներ չարտար էնի՛մ։
Մեջ նոտեր* քրկիբ կենա,
էլեք, տեսեք ո՞ն էկավ,
Սաթենիկ խանումն էկավ,
Ալ ձին տակն էր խազելին,
Նխշուն օտեն ավլեցեք,
Խալի-խալիչեն փռեցեք,
Սաթոն վերեն նստուցեք,
էրաղ-գինին խմցուցեք,
Մատի հովին քնցուցեք։
Մեզի կոկոլ հետ մի կեր՝
Տանբե-տանիք ժուռ կիգեր,
Բարով իրկուն տուն կիգեր։
էլի տեսնեմ բաժ ի՞նչ վեյա,
Հայրիկ էրթա քաղքեն բերա,
Ջոջիկ կտրա, նաննեն կարա,
Սաթոն հագնի, բարով վեյա։

Ալաշկերտ
Ա.Հե

250

Ծափի՛ն, ծափի՛ն, պուպուլա՛,
Հալվա շաքար կուլ կուտա՛,
էլեք աշեք վե՛ր քուքա,
Պիճիլիկին տանելու.
Պիճիլիկ է չեմ տա,
Սարերուն սմբուլն է,
Բախչաներուն բուլբուլն է,
Պաղ ախպըրին ջուրն է,
Հորն ու մորը դոխն է,
Մամին պապին գառն է,
Հորոխպորը ձագն է։

Ախալցխա
ժԽԲ

---

* Քստ բանահավաքի անմեկնելի, անհասկանալի բառ է։ Երգի իմաստից կարելի է կռահել, որ այն «նստել» բառի աղավաղումն է (Ս. Կ.)։

251

Ծափի՛ն, ծափի՛ն, կուլկուլա՛,
Հալվա շաքյար կուլ կուտա,
Ելեք աշեցեք վի՛վ գուքա,
Տուբիթ խանումը տուն գուքա,
Դաբրիել աղան տուն գուքա,
Չլի խորոզը մորթեցեք,
Թղթով թնդիր վառեցեք,
Տուբիթ խանումին փայը պահեցեք։

Շիրակ
ԱՀԷ 204

252

Ծափի՛կ, ծափի՛կ, վաղն ի գատի՛կ,
Էն մեկել օր ավազ կատիկ,
Օ՛ն նինա, տոտիկ նինա՛,
Մարմարական մարդու չկա,
Սուսուն ծաղիկ սար չկա,
Իմ խորոտիկին թայ չկա։
Ամպ գամպ, գընկըռ-մընկըռ, փը՛ստ,
Ամպ գամպ, ճըլ-ֆըթ-պը՛թ։

Վան
ՎՍՇՐ 2

253

Ծափի՛կ, ծափի՛կ, ծիրանի,
Կարմիր խնձոր վանեցի,
Աղջիկներուն ճուղպեցի,
Մեկ աղջիկին չմնաց,
Գլխի վայր գետը գնաց,
Աղջիկ դարձիր տուն եկուր,
Քու փայդ դոտիս մնաց։

Վան
ՀԱ 356

254

Ծափի՛կ, ծափի՛կ, ծիրանի,
Ծովը խայմաղ կըլմանի,
Կարմրիկ խնծոր կըլմանի,
Մաղերը սըրմա կըլմանի։

Օսկի գերձան մազերն ալ,
Հովը թել-թել կտանի.
Էրեսս երեսիդ քանմ,
Հապա քունը կտանի։

ԱՀՔ 168

255

Մաիի՜ն, ծափի՜ն, ծափ նաներով,
Փըլավ կէփեմ պուտկներով,
Գդալ չկա, լավաշ չկա՝
Մենք ա կուտենք մատովըներով։

ԳԱԱ

256

Պարպա՜ր անի իմ ըրախան,
Օրախ ապրի իմ ըրախան,
Հա՜ շատ ապրի իմ ըրախան,
Յավ չի քաշի իմ ըրախան,
Վարդի կուտուր իմ ըրախան,
Շըքյարի ձոր իմ ըրախան,
Պարկի ըրինձ իմ ըրախան,
Մոթալի եղ իմ ըրախան։

ՄՀ 62

257

Պարի՜ն, պարի՜ն, պզտի շուն,
Ի՞նչ ես կատղի, կարմիր շուն,
Խնկով, մոմով ապրեշում,
Խունկն ու մոմը խաչերուն,
Պարկով օսկին մանչերուն։

ԱՔՔ 5.

258

Պարի՜ն, պարի՜ն,
Պար տոշանին,
Քրդին յայլա տուն չի տանի,
Ապրեշըմե խոդուն նստի,
Կավե փարչով ջուր չի խմի,
Օսկի թասով գինի կը խմե,

ԱՔՔ 5.

259

Պա՛ր, պա՛ր, կլոր պա՛ր,
Արշակ արի Նունիկին տար.
Պա՛ր, պա՛ր, չամչի պա՛ր,
Քևռին էկև հոպրա տա՛ր,
Հըլը պզտիկ է՝ մի՛ տանի,
Կևցի մեծնա՝ հապա տա՛ր։

ԱՔՔ 5

260

Պա՛ր էննինք, պա՛ր-պա՛ր էննինք,
Ղոչ գառը մատաղ էննինք,
Միան ուտինք, ջուրը խմինք,
Օսկոռներն այվան շիննինք։
Տա՛ն արա, տա՛ն, տա՛ն արա,
Ոչխարը ղուրպան արա,
Միսը կի, շորպան խմե,
Օսկոռները չարտաղ արա։

Նուրդուտ
ԱՔՔ 5

261

Պա՛ր ընինք, պարպա՛ր ընինք,
Սարերուն խապար ընինք,
Ղոչ գառը մատաղ ընինք,
Միան ուտինք, շուրպան խմինք։
Էլլինք աշինք վեվ քուքա,
Ադա քևռին տուն քուքա,
Ջամիչ կուտե, ժուռ քուքա,
Ճանճը... դուս քուքա։

ԳՔՔ 15

262

Դե՛, պարե՛ս, պարե՛ս ըրախաս,
Լոխին բըրըբար ես ըրախաս,
Դե՛, կաղնի, բոյըտ տեսնամ,
Մըծացի սոյըտ տեսնամ.
Նըշանիտ կանանչ կապեմ,
Հըրսընիքտ կարմիր կապեմ,
Դե՛ պարե՛ս, պարե՛ս ըրախաս,
Լոխին բըրըբար ես ըրախաս։

Գորիս
ՀԺԲԱԽ 3

263

Յար էրա, պա՛ր-պա՛ր էրա,
Աղջիկներուն սա՛ր-սա՛ր էրա։

ՀԱՐԱՆՑ. 67

264

Հա՛ թռի, թռի՛ թռցնեմ,
Սև խավու միս կերցնեմ,
Հով ծառի տակ քնցնեմ.
Հա՛ թռի, թռի՛, չուր ի լուս,
Պատկեն գիգա կենա դուս։

Ալաշկերտ
ԷԱԺՋ 69

265

Հա՛ թռի, թռի՛, թռցնեմ,
Սև հավի միս կերցնեմ,
Կարմիր բուբուջ հադցնեմ,
Ծառի տակը քնցնեմ։
Քևռին էկավ բեռներով,
Բեռներ Ղրմեն քարուպար,
Գրկոն վրեն սարուպար,
Յամա՛ն, յամա՛ն, ես քեզի դաման,
Քու ծծեր հաղորդ աման,
Քու բերան խնկի աման,
Ալի էրթանք սարի սեյրան,
Քաղենք դաստա մանիշակ,
Բերենք թալենք յորղան դոշակ,
Դու մեջ քնես, էղնիս ջարնան շիշակ։
Ա՛ պղան մեղու, ա՛ պղան մեղու,
Քու մանրիկ թևեր վերու,
Բանձրիկ սարերն էս էրթալու,
Սուսան սումբուլ ես քաղելու,
Քաղցրիկ մեղրն ես կրելու։
Հա՛ թռի, թռի՛, թռցնեմ,
Սև հավու միս կերցնեմ,
Հով ծառի տակ քնցնեմ,
Հա՛ թռի, թռի՛ չուր ի լուս,
Պատկեն գիգա կենա դուս։

226—11

Հա՛ կճատ մեղու, հա՛ կճատ մեղու,
Թափ տու քու կճատ թևերուն,
Սարի-սար ես էրթլու.
Շուշան ծաղիկ ես բերելու
Թառ էս դու, թառ քո քավոր,
Յոթ Ւրեց քզի կնքեր ա,
Յոթ սարկավագ մոմեր բռներ ա,
Կը ավտնամ քու ատեղծողին,
Քզի շալկե, տուն բերեր ա,
Չթորկեր ա կատուն կերեր ա։

Ալաշկերտ
ԷԱԺԶ 69

265 ա

Թռի՛, թռի՛, թռցընեմ,
Դեր-գեր մսեր կերցընեմ,
Իշխանի ակ ընցրցնեմ,
Խորոտրկի ծոց քընցընեմ։

Մուշ
ԱՔԱ 1

265 բ

Թռե՛, թռե՛, թռցընեմ,
Սև հավու միս կերցընեմ,
Արաղ, գինի խմցընեմ,
Կարմիր շորեր հագցընեմ։

ՓԺԲՀ 75

265 գ

Թռի՛, թռի՛, թռցնեմ,
Արաղ, գինի խմցընեմ,
Սև խալի միս կերցընեմ,
Հով ծառի տակ քնցնեմ։

Բալու
ՀԺԲԱՐ

265 դ

Թռի՛, թռի՛, թռցուցեմ,
Սև հավու միս կերցուցեմ,
Կարմիր գինի խմցուցեմ,
Ծառի հովին քնցուցեմ։

Բաղեշ, Արճեշ
ԱՀՆ

265 ե

Թռի՛, թռի՛, թռցուցեմ,
Գեր-գեր մսեր կերցուցեմ,
Իշխանի ակ ընցուցեմ,
Խորոտկի ծոց քնցուցեմ։

Մուշ
ՀԺԲԱՆԳ 33

265 զ

Հա՛ թռի, թռի՛, թռցնեմ,
Սև հավու միս կերցնեմ,
Բաշ էրադին խմցնեմ,
Դռան հ՚ետև քնցնեմ։

ՀԺԲԱՆԳ 33

266

Թռի՛ր, թռի՛ր, թիթեռնիկ,
Եկեղեցու ծիծեռնիկ,
Խաչ պատուհան կուտ քաղե,
Ավազանի ջուր խմե,
Միս կեր, օսկոռ թալի,
Մատմըռե այվան դու շինե,
Մտիր ինե, դիվան ըրե։

Մուշ
ԱՔԱ 1

266 ա

Դե՛ թռի, թռի՛, թռըչնիկ,
Եկեղեցի եղունիկ,
Խաչ պատուխան կուտ ուտես,
Ավազանի ջուր խմես։
Բոզ-բոզ ձիանք խեծուցեմ,
Խավ-խավ տեղրանք քնցուցեմ,
Սիվտակ խացեր կերցուցեմ,
Կարմիր գինին խմցուցեմ։

Բաղեշ
ԷԱԺՋ 68

267

Հա՛ թռի, թռի՛ թռցնեմ,
Սև հավի միս կերցընեմ,
Վարդի դաստա խորոտիկ,

Ռեհանի փունջ մորոտիկ,
Քեզմեն առնեմ հոտհոտիկ,
Իմ սիրունիկ աղունիկ։

ՀԱՅԱՆԳ

268

Թռի՛ր, թռի՛ր, թավրական,
Հապու պեկի պաղըկան,
Թուխ-թուխ շիլեն քո մերկան,
Ալկնավուզ քո կնկան,
Կանանչ վարոց քո յարոջ։

ՀԱՅԱՆԳ 33

269

Թռի՛, թռի՛, թռցնեմ,
Արաղ գինին խմցնեմ,
Պատի տակը քնցնեմ,
Պատը վրեդ բլըրնեմ,
Սև հավի միս կերցնեմ։
Մեղի մե կոկոլ հավ կա,
Փողոցն փողոց ժուռ կուգա,
Ջատկին ոտը կոտրեցին,
Դրին պուտուկն էփեցին,
Ճժերն էկան թեփեցին։

Շիրակ, Կարին
ԷԱԺՋ 70

270

Թռի՛, թռի՛, թռցնեմ,
Ծառի տակը քնցնեմ,
Պաղ-պաղ ջուրը խմցնեմ։
Աղջիկ ունենք համանի,
Ջենք տա խաղար թումանի,
Օխտը ձի, օխտը ջորի,
Ով կբերի, կտանի,
Ով չի բերի՝ կա կանի։
Վարդուհի խանում դու էլնիս,
Թըսխտ էրևան քուն էլնիս,
Նըս բախի աննես, նըս չայի,
Բալա, փուշդ խաթայի։

Թավրիզ
ԷԱԺՋ 68

271

Թռի՛, թռի՛, թըռցընեմ,
Սև մաքու կաթ կերցընեմ,
վըր բոզ ճիուն նըստցընեմ,
Ծառի տակին քընցընեմ,
Ջառ ու ղումաշ հագցնեմ,
Իմ ծուռ տղին մեծըցնեմ։

Տարոն
ժԽԲ

272

Թռի՛, թռի՛, թըռցնեմ,
Արագ, գինի խըմցընեմ,
Սև խավի միս կերցընեմ,
Հով ծառի տակ քընցընեմ,
Մամայի վիզը շոցընեմ։

ժԽԲ

273

Թռի՛, թռի՛, թիթղնիկ,
Եկեղեցու ծիծղնիկ,
Խաչ պատվական կուտ քաղա,
Ավազանի ջուր խմա.
Միս կեր, ոսկորը թալա,
Ոսկորե այվան շինա,
Մաիր ինք, դիվան էրա։
Թռի՛, թռի՛, թռցուցեմ,
Գնր, գեր մսեր կերցուցեմ,
Իշխանի ակ ընցուցեմ,
Խորոտակի ծոց քնցուցեմ։

ՀԺԲԱՆԴ 33

274

Թռի՛, թռի՛ Թուլըռկան,
Յապո բեկի պազրկան,
Թուխ-թուխ շիլեն քո մերկան,
Ալ-խնայուղ քո կնկան,
Կանանչ վարոց քո յարոջ,
Նխշուն օրոցք քո քուրոջ,
Ֆասով ընկույզ հորքրոջ,
Ջամիչ պաստեղ մորքրոջ,

ԱՔԱ 1

274 ա

Թուխ՛, թուխ՛, թըռնոցիկ,
Ադիզ մամուդ մատնոցիկ,
Սև հավու միս կերցնեմ,
Ավազ ղրոներ ընցուցեմ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

275

Դե՛ թուխ, թուխ՛, թռցնեմ,
Ջալ հավի միս կերցնեմ,
Կարմիր գինի խմցնեմ,
Փափուկ տեղում քնցնեմ,
Հազար բեռնի, բեկրզյան,
Բառնա էթա Հնդստան,
Մաղ մարդարիտ ուր կնգան,
Թուխ-թուխ շիլեն մորքվոր,
Կոռ-կոռ ձվեր հորքվոր։

ՀԺԲԱՆԳ 8

276

Դե՛ թուխ, թուխ՛, թռուցեմ,
Ավազ սարեր ընցուցեմ,
Դե՛ թուխ, թուխ՛, տարեկան
Մսըր էրթաս բաղրկան,
Բերես օսկի ու մարջան,
Բանաս քու հլին ջըղան,
Օսկի խանես քու կընկան,
Որ գա նստի քո ծնկան։

Ռշտունիք
ժԽԲ 86

277

Թը՛ռ թըռցընեմ, թըռի՛, թըռի՛, թըռցնեմ,
Իմ լաճուն կաբա հազցընեմ,
Սև խավու միս կերցընեմ,
Կարմիր գինին խըմցընեմ,
Նըխշուն օդեն քընցընեմ,
Ճոճիկ կախեմ, կախ անեմ,
Մախմուդից շորեր կարեմ,
Աւլասից բարձը կարեմ,

Թանթևլա ճըթներ շարեմ,
Իմ լաճուն կապոց անեմ։
Ճոճիկ արոշ մարոշ էր,
Ճոճիկ կանաչ կարոս էր,
Առվի ափեր բուսեր էր,
Տախ աղջիկներ տիսեր ին,
Վերեն մայիլ մացեր ին,
Առին շեղփիկ՝ վազեր ին,
Ճոճկեն թևլեր կտրեր ին,
Ուրախ, ուրախ տարեր ին,
Մառնեն մառան տըրեր ին,
Մառնի պատհան պահեր ին,
Յոթն օր վերեն խարսնիս արեր ին։

Վան
ՎՍՇՐ 5

278

Հերդ հիմա դաշտեն կգա,
Խարազանով մեջքիս կտա,
Հեր Լևոնին ծիծ չի իտա,
Դե՛հ թուխ, թուխ՛, թուցնեմ,
Տարտարիդ մեջ նանացընեմ։

ՀԺԲԱՆԳ 41

278 ա

Հարի՛ր, հարի՛ր, հարիր ման,
Բաժիդ մեռնեմ բաղրկան,
Ծամերիդ ծամթել ղնեմ,
Աչքերիդ սուրմա քաշեմ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

279

Հարի՛ր, հարի՛ր, հարիր ման,
Արթուն կեցիր պազըրկան,
Յոթն օր մանցի իմ խոր տուն,
Էնտան աղեկ չը լսեցի,
Իմ ծամերով աղը թաւիեցի,
Իմ ձեռքերով տուն մաքրեցի,
Իմ տղի հ՛ապով քուն բերեցի,
Իմ ծծերով կաթ կերցուցի։

ՀԺԲԱՆԳ 33

279 ա

Խարի՛ր, խարի՛ր, խարիր ման,
Իշու վրի բալդզյան,
Յոթն օր մնաց խոր տունը,
Մատներով աղբը թափեց,
Ծամերով պոլը սրբեց։

Աշտարակ
ՀԺԲԱԴ

280

Իմ տղա՛ս, իմ տղա՛ս, ալ կապե,
Բարակ միջացդ շալ կապե,
Ելիր տանիք պտըտե,
Աշխարհ տեսնե կոլոտ է,
Նանեի սրտին խորոտ է։

Մուշ
ԱՔԱ 1

281

Աստուածածնի մանանա,
Մարդ կա մարդի նման ա,
Ում տանը որ Աբրամ չկա,
Յարաբ ինչի՞ նման ա։
Իմ Աբրամը սաղ ըլի,
Մեր խոզի պես չաղ ըլի.
Իմ Աբրամը նուշ ըլի,
Ջարի աչքին փուշ ըլի.
Իմ Աբրամը նախշած ա,
Աստծու իրան բախշած ա.
Աղեմ, աղեմ իմ ըրեխին,
Դուշմանը թաղեմ իմ ըրեխին։

Բորչալու
ԱՀԺԱ 41

282

Նանա՛, նենի՛, բալա ջան,
Իմ թաղավոր բալա ջան,
Բախբեն կըգա ծիծ կըտա,
Ջիգյար չունի քիչ կըտա։
Հա՛ դան, դանի դնգոցին,
Մեղրով լիքը քթոցին,
Քնես, զարթնես ծագոցին,

Քու ցավն ընկնի սև օձին։
Էն շան տղին քարով տուր,
Հայի տղին բարով տուր,
Նուռնա՜, նռնի՜, բալա ջան,
Փաշա դրոշա բալա ջան։

ԳԹՔ 2

282 ա

Նանա՜ ասեմ իմ բալին,
Հանդի լալա իմ բալին,
Աչքը խումար իմ բալի,
Բոյը չինար իմ բալի,
Ունքը կամար իմ բալի։

Երևան
ՀԺԲԱԳ

283

Ափին ակալ այ՝ բեռնը դու,
Գետըն ակալ այ՝ փոփուռը դու,
Ըսկըջրվեժ շանդունը դու։
Տոնը քշիր՝ ճրոգը դու,
Ծյղին մանակ՝ հինգիրը դու,
Ղալամալ նախշված էյվունը դու,
Վարդարը բահված՝ բուլբուլը դու,
Ծառարը ծաղկած՝ ծաղիկյը դու,
Արտարը կանանչ՝ սումբուլը դու,
Դուրքը բնդնծ՝ բլանիքը դու,
Օջախը վառված՝ սունդունը դու։

Ագուլիս
ԱԲՍ

284

Տղես կայներ կարմընջին,
Տոլաբ գնդեր ակընջին,
Ջուաբ ճամփեր զոքընչին
Թո՜ղ գա մեռնի բրջըմին,
— Դե՛ տղա, տղա՜, իմ ճագուկ,
Մանրիկ տոտիկ իմ գառնուկ։

Մուշ, Տարոն
ԱՔՍ 1

285

Տուտուզան բախչեն նատեր էր,
Տուտուզան ծաղիկ քաղեր էր,
Բրռի՛, Բրռի՛, խատիկ ես,
Քառ բյավորոչ ատիկ ես,
Կակուղ խաց ուտամ կառնի,
Լըմլըմուն ծրծիչ կուզի,
Վա՛խ, նանե՛ր, նանե՛ր,
Նաննր հա՛յ, հա՛յ,
Տա՛ն նա նանանե՛ր։

Վան
ԳԲՋ 48

286

Լուս մի դո՛ւն, լուս մի քո խե՛ր,
Արևի ճոթ էր քո մեր,
Ուռի-ուռի քո հորողբար,
Կանանչ վարոցն էր քո քեռին,
Տա՛ն էրա, տըն տա՛ն էրա։
Ջարկ գնա Հնդստան,
Կևռի կովեր բեր քե կթան,
Մողալ եղներ քե լծկան,
Քայլան ծիեր բեր քե խեծկան,
Օսկի դեղդիր բեր քո կնոջ,
Օսկի կաքավ բեր քո քուրջ։

ԲՆԱ 5

287

Արև դո՛ւ, արև քյո խե՛ր,
Արևու ջոջ խորոխպեր,
Սթլիկ, Շոպիկ քյո խորքրներ,
Թուխ աչք քյո մորքրներ,
Ես քե մեռնեմ մամու դամ,
Ամռան օրերն ես էղեր,
Խաչկա թփեր դարնցան,
Պտուտն էկեր աշնցան։

Կարճկանա-Նանկանց գյուղ
ԷԱԺՋ 68

288

Էրշևու ճուր խորոխբեր,
Հետևու ճուր մորքուրներ,
Սևատոճակ խորքուրներ։

ԺԽԲ

289

Արև այո՛ւ, արև քյո խե՛ր,
Արևու մել ճյոքին ի քյո մեր,
Ուռենին քյո խորոխպեր,
Բարդինին քյո քեռատան,
Վարդենին քյո քեռու խեր,
Սաքը մոջան քյո խորքերներ,
Ճըրի ճըրծակ քյո մորքերներ։

Վան
ՎՍՇԱ 16

290

Արև դո՛ւ, արև քյո խե՛ր,
Արևու ճոքին ա քու մեր,
Օսկի բառն ա քու քեռին,
Կաքի մըջան՝ քեռնկին։

ՀԺԲՆ 75

291

Անուշ բալին ես ղուրբան,
Քաղցր բալին ես ղուրբան,
Նախշուն երեսիդ մեռնեմ,
Սիրուն թաթերիդ մեռնեմ։

ՀԺԲԱՆՔ 2

292

Ի՞նչ խորոտիկ լաճ կեր մամուն,
Ի՞նչ վուվունիկ լաճ կեր մամուն,
Ձին կը խեծներ, էրթեր Օրդուն,
Թաս ու թևիսի բերեր մամուն,
Թուր ու թվանք՝ ախպերներուն,
Ոսկի գնդեր քուրիկներուն,
Հյուր-մյուր՝ տեր սիրողին,
Անուշ պագեր՝ բերողին։

Ռշտունիք
ԺԽԲ 405

293

Տղա, տղա, տղացի,
Քո բերան եկեղեցի,
Կռացա համբուրեցի,
Դուրս էկա բարուվեցի։

ՀԱՅԱՆԴ 37

294

Տղա՛, տղա՛,
Դու ալ կապավոր,
Ղամպի շալ կապավոր,
Դու իմ հայոց թագավոր,
Աստմանի կապավոր,
Քո զաւիկը շնորհավոր։

Զահարմահալ
ՉՀԲՆ 5

295

Մե տղա ունենք՝ մե տուն է,
Դուս կանչեցնք, դա տեսնենք,
Տեյտերի քանքուլ ունի,
Մոնթերի ճալվեր ունի,
Թել-թել քամուն չի տանի,
Զանգամանի հորն է,
Քալանթար Սարգսի թոռն է,
Է՛ս բեմեն, է՛ն բեմեն է,
Բեմատակում ջուր խմե,
Սուրբ սեղանում կուտ կուտի,
Էրկթե-էրկթե մարդիկը,
Փետե-փետե կնանիքը,
Ջաու քաքուլով տղերքը,
Փունջ մանուշակ հաշնիքը,
Հաշներու միջի ո՞րն է սիրուն,
— Կառճ ու բոլորը
Տղերանց միջի ո՞րն է սիրուն.
— Թուփ-թուփ քաքուլը։

Զահարմահալ
ՉՀԲՆ 5

296

Ով՛ տղա, լաճ, կապեդ կարեմ կարճ,
Կոճկներդ շարեմ խաչ,
Վով քե կասի՝ ումպրիկը շատ,
Ուր տուռ կայնի քառասուն մշակ.
Վով քե կասե՝ ումպրիկը կարճ,
Ուր տուն ու տեղ տար պրիշակ։

Վան
ԱՀԺԲ 104

297

Ալ խնձորի, իմ տղեն,
Շեգ շլորի, իմ տղեն,
Կանանչ Թղնի իմ տղեն,
Կարմիր նռնի իմ տղեն,
Մեռնիմ քու արարողիդ,
Բարակ թավկար անողիդ,
Որ ճուղ արավ, ճեղ չարավ,
Եթիմ բալիս խեղճ չարավ։

Բորչալու
ԱՀԺԱ 39

298

Ա՛յ տղա, դու ճարտար ըլիս,
Սև հավի կատար ըլիս,
Եղի մաշնակ իմ Լևոն,
Մեղրի պոզակ իմ Լևոն,
Գինու կարաս իմ բալաս,
Խմի ման գա իմ բալաս։

ՀԺԲԱՆԳ 41

299

Մանչըս կայներ ը կարմընջին,
Մաուկիշ օղերը անկըճին,
Խաբար էրեք զոնքնչին,
Մեռնի ասպես կտրիճին։

ՀԺԲԱՆՍ 67

300

Մեռնի՛մ, մեռնի՛մ մեռնելով,
Քեռին էկավ բեռներով,
Բեռներ լիքը քարուբար,
Բեռան վրեն սար ու բար։

Ես քե կուրբան, ես քե շուն,
Ի՞նչ իս բարձե քու իշուն.
— Խունդն ու հինեն աբրշում։
— Խունդ որ՞ կտանիս։
— Պաուլքներուն,
Աբրշում՝ հարսներուն,
Հինեն՝ ապագ ախչիկներուն։

ԲՆԲ 75

301

Սրտիդ մեռնիմ, սևհրով ա,
Աչքերուդ մեռնիմ, լուսով ա,
Էրսիդ մեռնիմ, ջոհրով ա,
Գլխուդ մեռնիմ, խելքով ա։

ՓԺԲՀ 76

302

Անքուլ, քանքուլ իմ Արոն,
Դաստա քանքուլ իմ Արոն,
Սարեր շուռ գա իմ Արոն,
Բարով տուն գա իմ Արոն։
Մալաքա ձորն ամպել ա,
Արոն ձինը թամբեր ա,
Անձրև էկե թոշեր ա,
Արև զարկե չորցեր ա։

Շիրակ, Դրմզլու
ԷԱԺՋ 71

303

Ես քե մեռնիմ գյոլի բադ,
Գյոլից իլար նստար ափ։
Ես քե մեռնիմ գյոլի կազ,
Ես քե մեռնիմ խորոտ մազ։
Ես քե մեռնիմ, որ գյու կաս,
Նրա խիվնդնաս, նրա տքաս,
Ըխտատեղրանք էրևնաս,
Խառնստեղրանք տռտնկաս։

Թիմարա Կյուանենց գյուղ
ԷԱԺՋ 68

304

Ա՛խ, ի՞նչ անեմ, իմա՞լ անեմ,
Էն չար աչքից հեռու պահեմ,
Մե ճար անեմ, իլաջ անեմ,
Քեզի պահեմ, ջոջըցնեմ։
Ջոջըցնեմ խանեմ ոտի,
Խանեմ ոտի, կապեմ գոտի,
Կարմիր-կանաչ օրի խասցում,
Իմ սրտի դարդեր քշկցում։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

305

Ո՞վ նըմանի, ըլմանի,
Իմ տղեկն ով ըլմանի.
Ջատու մամը չըլմանի,
Մեր պապուկը ըլմանի, յա՛ր, յա՛ր։
Ո՞վ նըմանի, ըլմանի,
Իմ տղեկն ո՞վ ըլմանի,
Խենդուկ հորքուր կըլմանի,
Թոսուն քեռին ըլմանի, յա՛ր, յա՛ր։
Ո՞վ նըմանի, ըլմանի,
Իմ տղեկն ո՞վ ըլմանի,
Արև, լուսին ըլմանի,
Հարիկն ու մար ըլմանի, յա՛ր, յա՛ր։
Ո՞վ նըմանի, ըլմանի,
Իմ տղեկն ո՞վ ըլմանի,
Միրան ծով չըլմանի,
Աստուծո ըլմանի, յա՛ր, յա՛ր։
Ո՞վ նըմանի, ըլմանի,
Մեր տղեկն ո՞վ ըլմանի,
Արև, լուսին, չըլմանի,
Լուսավորիչն ըլմանի, յա՛ր, յա՛ր։
Միրանի գոտի ի մեջքը,
Թող կապե մեր տղեկը,
Նըմանի ու ըլմանի,
Սուրբ Կարապետին ըլմանի, յա՛ր, յա՛ր։
Ոսկի թագը գլուխը,

Ոսկի սոլեր տոտիկը,
Ո՞վ նըմանի, ըլմանի,
Աստվածամորն ըլմանի, յա՛ր, յա՛ր։
Ո՞վ նըմանի, ըլմանի,
Հեչ մեկուն թող չըլմանի,
Ո՞վ նմանի, ըլմանի,
Տղեկս իս թող ըլմանի, յա՛ր, յա՛ր։

ԱԴՄ

306

Ծծում, կարայք,
Եղիկ մարայք,
Էրթաս Վարագ,
Ուտես կարայք։
Ծո՛ տղա, տյու ալ կապավոր,
Սաղմոսդ ի ծոց պասավոր,
Աղջիկ տիվ ալ սայավոր,
Խայլինդ ի ծոց պասավոր,
Թա՛թ տյու արև, թա՛թ տյու արև,
Սոլերը խան, մխսով արև,
Քեյդ պուլուլիկ յարմ եմ ճարե,
Իմ սիրունիկ, թաթ տու արև։
Սև լաճը ուր ձին թամքեյրի,
Մեջ խիծիլին խաղցերի,
Սև խալ սև լաճուն մատաղ,
Պատի քյուրեր իմ լաճուն մատաղ,
Մորքերներ իմ սաբուն մատաղ։
Դալար թաթիկ, ճյուր պե,
— Ես չեմ կանա, տյու պե,
Ժաժիկ շինեմ, տյու կե,
Պանիր շինեմ, տյու կե,
Փլավ խիեմ, տյու կե։
Դալար թաթիկ ճյուր պե,
— Ես, չեմ կանա, տյու պե.
Արե տա՛ր, տա՛ր տա՛ր տղեն,
Տուն իլին մալ էր տղեն,
Նազանիկ շալ էր տղեն,

Թաչը թամաղեն տղեն,
Արև տա՛ր, տա՛ր, տա՛ր տղեն։

Վան
ՎՍՇԱ 16—17

307

Հա՛ ձձո՛ւմ, հա՛ կարա՛գ,
Եղն իվի, ջուրն իվի,
Քընց լուանակ բոլորիս,
Քընց երկիր կլորիս,
Ընծի ընդրան փայ էղնիս։

ՀԺԲԱՆԴ 3

308

Հա՛ ծրծում, հա՛ կարաք,
Հա՛ ծրծում, հա՛ կարաք,
Բալաս ուտի գյամշի կարաք.
Հա՛ ծրծում, հա՛ կարաք,
Բալաս ուտի կովի կարաք.
Հա՛ ծրծում, հա՛ կարաք,
Բալաս ուտի ոչխըրի կարաք.
Հա՛ ծրծում, հա՛ կարաք,
Բալաս ուտի էշի կարաք.
Հա՛ ծրծում, հա՛ կարաք....

Սալմաստ
ՀԺԲԱԲ 11

309

Ծծո՛ւմ, կարա՛ք,
Շոտ էլնի, էրթա մարաք,
Տղեն ուտի, էրթա քաղաք,
Ջամիչ, պնտուկ, պառնա եղան,
Տանի ծախի էժա՛ն-էժա՛ն։

ՀԺԲԱՇ 5

310

Հա՛ ձգում, հա՛ ձգում,
Շալկեմ սարեր անցըգում,
Հա՛ ձգում, հա՛ ձգում,
Շալկեմ դաշտեր պատգում,

Հա՛ ձգում, հա՛ ձգում,
Շալկամ գետեր անցկըցում,
Հա՛ ձգում, հա՛ ձգում,
Մածուն ու կաթ կևրցըցում,
Հա՛ ձգում, հա՛ ձգում,
Իմ փոքրիկին մեծըցում,
Հա՛ ձգում, հա՛ ձգում,
Ականջ քաշիմ երկընցում,
Օրորոցում քիզ քընցում,
Քեռակնկատ կուղին քնցում,
Տատուտ գոզը նստցում։

ԴԱՍ

311

Ծծյո՛ւմ-կարա՛ք, ծծյո՛ւմ-կարա՛ք,
Շատ էլի, շատ խասի՛,
Պապիչն ուտի, էրթա խիզան,
Ջամիշ, պնդյուկ պանա եզան,
Պիրի ծախի էժա՛ն, էժա՛ն,
Կառըմ թողնի թոռներ վերևն,
Վժա՛ն, վժա՛ն...

Վան
ԱԽՋ 48

312

Ծծյո՛ւմ-կարա՛ք, ծծյո՛ւմ-կարա՛ք,
Շատ էլի, շատ էլի,
Տղես ուտի, էրթա քյաղաք,
Կռան զանի, խացխան շինի,
Պիրի՝ մեր տաշտ քերենք...

Վան
ԱԽՋ 49

313

Ճըղլավըղիկ, թափ դու ճըրիկ,
Գառու մըսիկ, երկնավըղիկ,
Ջաղամաթի քունը քեզիկ,
Առնի մըտնի ուրուրոցիկ,
Քե դրեր եմ պանըրիկ ուրուց,
Վերեն քաշեր եմ մարգըրտե ծածկոց։
Ուրո՞ւր ասեմ, քնանա,
Սիրտ պիտի որ դիմանա,
Անսիրտ մերին խերիք, խերիք,
Աչքեր կապես աննես պաչիկ,
Քունըս չի գա՝ կանիմ ճի՞կ-վի՞կ։

Վան
ԳՔՋ

314

Երկնավըղիկ,
Թևթվաջրիկ,
Ջաղամաթի քունը քըրիկ։

Ալաշկերտ
ԷԱԺՋ 31

315

Էրկըն վըղիկը,
Թափտեր ջրիկ,
Առներ քնիկ,
Ջաղամաթի քունը քըրիկ։

Դարալագյազ
ԳԱԱ

316

Ղուլա՛ճ-ղուլա՛ճ թևեր ըլլա,
Ծո՛վ-ծո՛վ աչեր ըլլա,
Բայլա քթիկ ըլլա,
Ղութի բերան ըլլա,

Հըմմե հրամմե ըսես,
էրկան վզիկ ըլլա,
Կովերդ կթվան ըլլա,
Հավերդ ածան ըլլա,
Տավարդ սյուրու ըլլա։

ՀՍ. 356

317

Օրն այսքա՜ն էրկըննաս,
Օրն այսքա՜ն էրկըննաս։

ԺԽԲ

318

Թոթվե չրիկ,
Ժողվե մսիկ.
Կամար ընքվի լընես,
Երկար թարթիչ լընես,
Շահեն աչվի լընես,
Պզտիկ քինե լընես,
Պզտիկ բերան լընես։

Ա.Կն
Ա.ԳԳ

319

Ջուշամբսիկ, չուշամբսիկ,
Թեթվամսիկ, թեթվաչրիկ,
Հ'երկե՜ն վզիկ, հ'երկե՜ն վըզիկ,
Ջաղամաթի քունը քըզիկ։

Տարոն, Մուշ
Ա.ՀՍ. 26

320

Էրկա՜ն վզիկ,
Թաւի տու ցավիկ,
Շալկե մսիկ։

Ջավախք
Ա.ՀՍ. 1

321

Հորավ ըլես,
Մորավ ըլես,
Ումրդ էրկան ըլի,
Քու հորն ու մորը

Հնազանդ ըլես։
Քու հերը բան ա ուզում
Քու մերը բալա ա ուզում,
Քու յարն էլ ծամ ա ուզում։

Գանձակ
ԱՀՋ 5

322

Թափեր ճրիկ,
Պոններ մսիկ,
Ջաղամաթի քյուն վեր քեչդիկ։
Թազա խարաններաց արիուն,
Թազա լաճուն էլնի քյուն։
Ախչկներաց մերկներ,
Պինդ փակեյցեյք ձեր դռներ,
Մուղնիկ աճառն ի փոքիկ,
Ոսկի գլուզն ի կոտրիկ։
Կանթ ու կզիկն ընցուցեն,
Առև, փախ, կնացեն։
Աղչկներաց գյող կնացեն,
Ուր սիրած ախչիկն ի կնդի,
Վեր կնդածին նշանվի։

Վան
ՎՍՇԱ 15

323

Տոտիկ փոխիր,
Կանաչ կոխիր։

Ղարս, Շիրակ
ՀԺԲԱԳ

324

Տոտա՜, տոտա՜
Տոտ էրա,
Կանաչ խոտիկը կոխա։

ԱՀՋ 5

325

Ճոչ արա՜,
Ճոչ նաղարա,
Տմբլիկ զանեմ՝
Կայնի խաղա։

Վան
ԱԽՋ 82

326

Մեկ էլի՛, մեկ հատ խաղա՛,
Իմ խորոտիկ-մորոտիկ լաճ,
Մեկ էլի՛, մեկ պար արա՛,
Աղջիկներաց դարտ արա։
Մեկ էլի՛, մեկ խաղ արա՛,
Սև հավ քի մատաղ արա,
Սև հավու միս կի, անուշ արա,
Մորթը բոլորի, մուշտակ արա,
Անուշ-անուշ քուն արա։
Ոսկոռներ չարդախ արա,
Մնջը նատի, խով արա,
Ժամհար որ դա, դիվան արա,
Մամուդ քունը հարամ արա։
Մեկ էլի՛, մեկ հատ կայնի՛,
Քանց չինարի ծառ կանաչի,
Մեկ էլի՛, մեկ հատ կայնի՛
Ես քեզ բաժին ի՞նչ կըվելի։
Աղին ասեմ քաղքեն բերի,
Թարղուն ասի, որ դա կըտրի,
Շողշըղան մատնով կարի,
էն սուրահի բաժովդ չափի։
Քանց բարունակ էլնես հըղով,
Քանց բարդի ծառ՝ էրկեն բաժով,
Բաժդ ի կանաչ, կանաչ-մանաչ,
Աղջիկներաց սըրտին ճանաչ։
Մեկն է խըզի, մեկն է թըզի,
Սուրբ Կարապետ պահեր քեզի,
Մեկ էլի՛, մեկ հատ խաղա՛,
Սև հավ քի մատաղ արա։

Վան
ՎՍՇԲ 8

327

Թաթ տյու արե՛, թաթ տյու արե՛,
Սոլերը խան, մխաով արե,
Քեղ պուլուղիկ յարմ եմ ճարե,
Իմ սիրունիկ, թաթ տյու արե՛։

Վան
ՎՍՇԱ 16

328

Նախդ զարնիմ՝ հաստանաս,
Մեծ ծառի չափ բարձրնաս,
Սարևրուն տոտիկ կանիս,
Ծագևրուն մտիկ կանիս։

ՆՆԲՓ 64

329

Եղիկ, մեղրիկ,
Ջուածեղիկ,
Բևրանն ի վար՝
Կը՛լ-կը՛լ-կը՛լ։

ՆՆԲՓ 64

330

Ամմա հատիկ,
Սիրուն թաթիկ,
Ուտենք հատիկ,
Որ ատամիկ,
Հնշտ տա տղիկ։

Վայոց ձոր
Ա.Հ.Ժ.Ե

331

Ա՛ խև,
Ոտի տակը վարդ է,
Կանաչներով զարդ է,
Մորդ համար տարդ է։

Վայոց ձոր
Ա.Հ.Ժ.Ե

332

Տոտի՛կ, տոտի՛կ տաքցի,
Գարուն էլի խաղցի,
Վերև տոտկան մարդ էր,
Ներքև տոտկան վարդ էր.
Գարուն էլի խաղցի,
Տոտիկ տոտիկ բաբի,
Պապան առնե ճիճի փափիր։

ԲՆԱ 30

II

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ

333

Մաշա՛, մաշա՛
Կրակի մաշա,
Խոխանն էկավ,
Մեզ թամաշա,
Վանքի տակեն
Ջուր ա գալի,
Իսկ Կոկոլը
Տուն ա գալի։
Ոտը դիպավ
Անգեր քարին,
Ի՞նչ դուս էկավ՝
Կարմիր արին։

Բասարգեչար
ՀԺԲԱԳ

333 ա

Մաշա՛, մաշա՛, կրակի մաշա,
Խոխոբն էկավ քեզ տամ մաշա,
Վանքի տակը ջուր էր գնում,
Գիժ-Գիդոլը տուն էր գնում,
Ոտը դիբավ անտեր քարին,
Ի՞նչ դուս էկավ՝ դախլու արին։

Թիֆլիս
ՀՄԿԱ 14

333բ

Մաշա՛, մաշա՛,
Կրակի մաշա,
Խոխան էկավ,
Քե թամաշա.

Մանքի տկեն
Ջուր մի կէրթա,
Ոտսի քիսավ
Անտեր քարին՝
Դուս էկավ՝
Կարմիր արին։

Ալաշկերտ
Ա.Հ.Ն

334

Մոթա՛լ, մոթա՛լ,
Դին աթար,
Դամուր ղաթար,
Էյրան ղուվի,
Ջեյրան ղուվի,
Նա հար ասի,
Նա մար ասի,
Լակուտ քցի,
Էս դուս քցի։

Ղարաբաղ
Մ.Հ. 62

334 ա

Մոթա՛լ, մոթա՛լ,
Թարսի մոթալ,
Դին աթար,
Դամար ղաթաբ,
Հեյրան ղուվի,
Ջեյրան ղուվի,
Համարասի,
Լակոտ գցի,
Էս դուս գցի։

Դարալագյազ, Արփա
Ա.Հ.Ր 100

334 բ

Մոթա՛լ, մոթա՛լ,
Էլլար օթար,
Ղարմու թոթաղ,
Ջիլմա չիլիկ,

Եդդի իլիկ,
Սարի սակկիզ
Դուռնա դոխխուզ,
Ավճի գալեր
Մաուազ ղաշեր։

ԺԽՐ 13

334 գ

Դոլ, դոլ ախբան,
Ախշա, ախշա չախբան,
Մոթալ, մոթալ,
Գանջու մոթալ,
Ին աթալ,
Դամբուլ ղաթալ,
Իանղուլի,
Գիանղուլի
Օվոր բռնե,
Նա վիքաղե,
Ղուլուղուշ,
Ղաինի աչ։

Թբիլիսի
ԹՄԿԱ 22

335

Տիտոխին, տիտմորոխին,
Զուրնա թխին, թուխ մանուկին[1],
Նիլի քաղա, կուպուլուճան[2],
Իղն ի վրեն կու պճպճան,
Ուտեին, խմեին,
Մաշեին, ելնեին։

Թբիլիսի
ԹՄԿԱ 23

335 ա

Տիտոխիկ,
Տիտմալոխիկ,
Զուռնաթողիկ,
Էփա գաթա,
Ու կուլիչա,

Եղն ի վերևն,
Կը ճպճպա,
Ուտա էնա,
Խմա էնա,
Քաշա էնա։

Ալաշկերտ
Ա.Հե

335 բ

Տիտոխիկ,
Տիտամարոխիկ,
Ջուռնա դոխիկ,
Էփա էս ա,
Ուտա էս ա,
Եղն ա վրեն
Կալըճպտճա։

ՀԺԲԱՆԴ 37

335 գ

Տուտ մարուխիկ, տուտուխիկ,
Ջուռնափընջիկ, տուտոկ փըշիկ.
Էնա կերավ, էնա խըմավ, էնա թրռավ։

Վան
ՎՍՇԲ 8

335 դ

Տիտոպիկ, տիտամորպիկ,
Ջուռնաթաւիկ, թուխ մանուկիկ,
Եփև դաթա ու կուլունճա,
Եղն ի վրեն կու պճպճա.
Հազնի իտա,
Կապե իտա,
Խմե իտա,
Ելնա իտա,
— Վի՞ տուն իջնա.
— Գոզալի տուն.
Էս Գոզալ,
Էս Մուրար,
Էս Դիվլար,
Էս Բաղդատ,

էս Բաբրոն,
էս Կաբրոն,
էս կատուն,
էս մուկիկ։

Տարոն, Մուշ, Ալաշկերտ
ԱՀԶ 70

335 ե

Տիտոխիկ,
Տիտմատոխիկ,
էփա գյաթեն,
Ուզուլիճի,
Ու պճպճա,
Եղն ի վրեն,
Ալենա,
Տալենա,
Ուտա էնա,
Խմա էնա,
էնի էնա.
Էստեղ մեղր ու կարագ կա, կե՛ր,
Էստեղ խորիզ կա, կե՛ր,
Էստեղ քեռակին ձվածեղ էփի, կե՛ր,
Էստեղ հոտ արա տես հոտ կո՞ւգա։
Շուռ տու գնա, պապի փողուց։

Խլաթ
ԺԽԲ

335 զ

Տիտոխիկ, տիտմանոխիկ,
Ջուռնա թոխիկ,
Էպե գաթեն կուլլիջա,
Եղլէ վրեն պղպջա.
Ուտե իդա,
Խմե իդա,
Հագնի իդա,
էլնի իդա։

Մուշ
ՀԱԱ

335 է

Տուտուխիկ,
Տուտ մարուխիկ,
Տամբլաբաղիկ,
Ջուռնափչիկ,
Թուխ մանուկիկ.
Էճբնա էճըմ վերեն,
Մեղրը գիով՝ բռուբ վերեն,
Էնա կերավ,
Էնա խմավ,
Էնա թռավ։

Վան
ԱԽՋ 64

336

Ակլև, դուկլև տնազ ա,
Շավեռ մավեռ տուտուզ ա։
Էծիկ մեծիկ մազոտ ա,
Ամբար աղեն պարոն պատիկ,
Մեջ կոլոտիկ,
Տանակ ըրեմ,
Ձեր խավերաց վիզ կտրեմ,
Ըզտե կոճակ,
Տեր պողոճակ,
Ճան ճուկ։

Վան
ՎՍՇԱ 20

336 ա

Ակլա—դուկլա,
Միշկի—խամըի,
Թազի—թուզի,
Ավտալ հուզի,
Բիլի—բիստի,
Ղըլըջի—թուփպուզի։

Կիրովական
ՀԺԲԱՍ

336 բ

Ակլա, դուկլէ, տնազէ,
Ջարուխ, չամբար, պուպուշէ.
Ախտէ, կոճակ,
Տու պլոճակ
Ճանճ ճուկ։

ՀԺԲԱՆԴ 38

336 գ

Ուկուլ, տուկուլ,
Ջարէ, չըմբէ,
Հավլթէ կոճակ,
Մէ պողոճակ
Դանակ սրի,
Սէ խավլի վիզը կտրի։

Դարալագյազ
ԱՀէ 97

336 դ

Ակկէ, դուկկէ օմրզա,
Մախթէ կոճակ կոկոզա,
Լուսու մտավ քարվազա,
Ճուկ պոլոճակ ճանճին ճուկ։

Բայազետ
ԱՀէ 97

336 ե

Աքլոր, դիքլոր,
Ջարուղ, չամբար,
Ոսկե ղամբար,
Հայի հուզի,
Թուրքի թազի,
Պոմբլա պզի,
Յալալի,
Ղըլըջ, մըլըջ,
Դոլդուր բիստի,
Աբաստ։

Երևան
ԱՀէ 97

336 զ

Ուկուլ, դուկուլ, դինազև,
Շամիլ, մամիլ, պիպազև,
Դանակ սրիմ,
Սև խալու վիզը կարիմ։

ԱՀԲ 36

336 է

Ակալ, տուկալ տումազ ա,
Շամամ տոտիկ լավեզ ա,
Եղնևր, մեղնևր կուլպատա ա,
Ճան ճուկ, թա՛ֆ։

ԱՀԺԲ 101

336 ը

Ակև, դուկև, դնազև,
Զարոխ, չամբուռ, պոպոզև,
Մախթև
կոճակ,
ճո՛ւկ
պողոճակ։

Բասարգեչար
ՀԺԲԱԳ

336 թ

Էկև-դուկև,
Տըմբզա,
Զալան չուկե,
Պուպուզա,
Մախթի կոճակ,
Դամ պլոճակ,
Ճա՛ն ճուկ։

Ալաշկերտ
ԱՀԲ

336 ժ

Էկև տուկե տնազե,
Շամամ խոպո տիտիզ է,
Զալ չըմբըլ, մըշկո հըմբըլ,
Տազի տուզի, ավտալուզի,
կեր ու կզի, վըր շան պըպըվի։

Տարոն
ՊԲԼ 64

337

Էլիմ, ևի իլիմ,
Կանգար ցանիմ,
Բուն դըրիմ,
Հավ թառի,
Ճընճուղ ծառ։

Տարոն
ՊԹԼ 64

338

Ակլուն, տակլուն,
Ջարան, չիպլի,
Մսրև տիպլի,
Ակլև գորի,
Սիթըլ ճունճի,
Պաղև պաղման,
Յուրան կուրա։

Մոկս
ՊԹԼ 64

339

Աքլոր, դիքլոր,
Ջարուխ, չամբար,
Ոսկէ դամբար,
Հավլի, հուղի,
Թուրքի թաղի,
Ղլեճ, մլեճ,
Տոլտուր բիստի։

ՀԺԲԱՆԴ 37

340

Ակտան, մակտան,
Ջարև ջակտան,
Օրո ընկլի,
Թութա ղընկլին,
Պուտուկ փլավ,
Ձըրի խղի,
Աստված տվեց քըզի,
Տև էկո կըզի։

Տարոն
Տե

341

Ակաուն մակաուն
Չարև դաակուն,
Օրո վընզլև,
Թուխա չընզլի,
Պատուկ փըլավ,
Ձը՞ռ, խը՞չ։

Տարոն
ՊԹԼ 64

342

Թուր ու թվանք
Մըշկե կապան,
Խաղըն կոկո,
Ճըշն արտո,
Ավա պտև,
Ավա ճրտև,
Կուզ Մարգարեն
Քիթըդ խթև։

Տարոն
Տխ

343

Ատատև, բատատև,
Շամամ շուլ,
Շամշուլակին
Մի դամբուլ։

Երևան
ԱՀՔ 98

344

Էքե-բեքե,
Չարա չըքե,
Բըսկե բեռե,
Թազի թուղի,
Աբրամ խուղի,
Ճան ջուկ,
Մե աչք խուփ։

Խանչողլու
ՀԺԲԱԲ 37

345

Ուկլև, դուկլև,
Ջարան չըմբև,
Բիբև ռաժև,
Ալան կալան,
Բարդի կոճան,
Մևկ պողոճակ,
Դանակ սրեմ,
Վզիկ կտրեմ։

Ռշտունիք
ԺԽԲ 3

346

Էկև տուկն դմբջան,
Ջարոխ չմբռ պոպողան,
Ոսկե նուկի ալբաբան,
Շրռ տիկր, մախթի կոճակ,
Ճուկ բլոճակ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

347

Ակուդա, դուկադա,
Ջարեն չուկադա,
Խալ-խալ մարև,
Բատըմ տարև,
Կոնձև կոկոզև։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

348

Դոզիկ, դոզիկ, տոզիկ տամ,
Յապայուզու յարա տամ,
Յարս բեգու սիրա տամ,
Ծաղկավանքին փարա տամ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

349

Ակև, դուկև, դեմրճան,
Ջարոխ չմպռ պոզպոզան,
Հավթե կոճակ,
Ճուկ պողոճակ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ 32

350

Ակըտ-մակըտ կարա կըտ,
Տարոց-տարի,
Ջորոց-ջայի,
էս գնացի պապիս տուն,
Պապըս բաավ լիմոն տուվի,
Ըստաքան,
Գնա կորի քոփակ շուն։

Հժբաբ

351

Ճընա հա ճընճըղ,
Թար ու թաբան,
Մըսրև բաբան,
Խարա գողև,
Թըշնա բոտև,
Ավա պըտև,
Ավա ճըտև,
Ծուռ մարգարեն
Ձեռը խըտև։

Տարոն
ՊԹԼ 64

352

Հատիկ, հատիկ, հայ վատիկ,
Ջալ խնձորիկ, փշատիկ,
Կուտ ուտեմ, կոտրեմ ուտեմ,
Պապոնց տուան տակը պաճիկ էնե՞մ։

Ալնքսանդրապոլ
ՊԹԼ 64

352 ա

Հատիկ, հատիկ, հավատիկ,
Ջաղցին ջուրը փշատիկ,
Կուտ ուտեմ, կուտաման ուտեմ,
Ավագ դուան տակը պաճիկ անեմ։

Ալաշկերտ
Հժբագ

352 բ

Հատիկ, հատիկ, հավլավատիկ,
Ջալ խնձորիկ, պատլամատիկ,
Հափլափաթիկ, դուռնատափիկ,

Ջալիկ, մալիկ, ծուռ աքլորիկ,
Կուտ կուտա, կուտման կուտա,
Մեր դուռ, ձեր դուռ պաչիկ կենաս։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

352 գ

Հատիկ, հատիկ, հալուատիկ,
Ջալ խնձորիկ փշատիք,
Կուտ ուտեմ, կուտման ուտեմ,
Ամպ դռան պահիկ անեմ։

Շիրակ
ԱՀՔ 98

353

Ովի, վանի, կապիտան
Ձեմի, կոմի զաբիտան,
Լատտան, բիտտան,
Ռոզ, բռռզ,
Քևրվա իզդա,
Կոկին կնյազ։

Հ. Նախիջևան
ԱՀՔ 97

354

Ջընճլիկ,
Պար ղընճլիկ,
Թուր ու թվանք,
Մորն կապանք,
Ամա պտե,
Ամա ճառե,
Կուղ մարզարեն,
Կողդ ի խթե։

Ալաշկերտ
ԱՀԵ

354 ա

Ջնճլիկ, վա՛յ ղնճլիկ,
Կարմրակոթիկ ղնճլիկ,
Թուր ու թվանք ղնճլիկ,
Ջնճլիկ պար ա բռնե,

Ջնճլիկ խաղ ա ասի,
Ջնճլիկ պար, ջնճլիկ,
Ամա պտի,
Ամա ճառ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

355

Օնի, օնի,
Կապիտոնի,
Դերձիկոնի,
Նապրիտոնի,
Իշկի,
Վիշկի,
Վինց գավիդա
Վիդա վօն։

Թիֆլիս
ՀՄԿԱ 13

355 ա

Օվի, վունի, վանի, վանի
էրևանի կապիտանի,
Ձվածեղի,
Դեղձիկոնի,
Ով որ բռնի,
Վեր քաշի։

Երևան
ՀԺԲԱԳ

356

Եղի, եղի,
Ձվածեղի,
Ով որ ուտե,
Նա վեր քաղե.
Ես գնացի
Պապոնց տուն,
Պապս ըսավ.
— Կորի գնա,
Քոփակ շունն։

Երևան
ՀԺԲԱԳ

* *Վր. ով որ դուրս գնաց։*

357

Ալանճալա,
Պուլանճալա,
Սա ուտես,
Սա վերցունես։

ԱՀԲ 170

357 ա

Ալմանճա, ալմնամանճա,
Պուլանճա, պուլպուլանճա,
Էսիկ կուտեմ ու կթալեմ,
Էս կվերցում ու կքալեմ։

Մարտունի
ՀԺԲԱԳ

358

Ալիս, պալիս,
Քելի յարի,
Ժամտան
Դուրը բաց։

Դարալագյազ
ԱՀԲ 100

359

Ըստում ընդում,
Քարե դնդում,
Վեր տամ ըստում,
Գտնեմ ըստում։

Դարալագյազ
ԱՀԲ 100

359 ա

Ըստում, ընդում,
Դեղին դդում,
Քցեմ, բռնեմ,
Գտնեմ ուտեմ,
Պապոնց տանը
Տիտիկ անեմ։

Երևան
ՀԺԲԱԳ

360

Ապատ, պապատ,
Բեղլու պատ,
Բեղլու բիչոն,

Թավլու պո,
Հալալա պացո,
Հո՛։

Թիֆլիս
ՀԺԲԱԳ

361

Կոպա՛լ, կոպա՛լ,
Լիդր ու կոպալ,
Քսան սալակ
Դելի Թալակ.
Աղբերն էկավ,
Տախտակն ուսին,
Նա հուս արավ,
Նա տուս արավ։

Թիֆլիս
ԹՄԿԱ 25

362

Կոպալ, կոպալ,
Իփլի կոպալ,
Հերասա,
Մերասա,
Լակոտ թողից,
Դուս թողից։

Ալաշկերտ
ԱՀԲ

363

Աղուտ կուտ, կըր-կուտ,
Ելանք սարեր ղընկըլ կուտ,
Ջանիկ մանիկ, դաստա կուլեկ,
Դը-հան-պուտ։

ԱՀԺԲ 19

363 ա

Աղըտ, կըտ-կըտ,
Կըտման ջուխտ,
Աղըտ, կըտ-կըտ
Ջուխտն ի սարեն,
Քարն ի դռնեն
Մտավ տուն։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

364

Ախպարըն ակալ,
Տախտակը թակալ,
Ան հարասի,
Ան մարասի,
Ան կոտ օտի,
Ան ջուր խմի,
Ան դուս էլի։

Ագուլիս
ԱԲՍ

365

Ալոճենի, կոճենի,
Վուվ օր թծծե՝ թին էլլե,
Թիապոչը ո...ն էլլե.
Ամպուխ, չըպուխ,
Ֆիթիլ բամպակ,
Հոս, մոս,
Տումպևևկ թը՛աս։

Սևբաստիա
ԲՍԳ

366

Էկեք հաց ուտենք,
Ո՞րտեղից ուտենք,
Աստված կտա,
Գուցե չտվեց,
Գողանանք կուտենք։

ԱՔԱ 5

366 ա

— Չ՚եկեք հաց ուտենք.
— Չ՚ո՞ւստ ուտենք.
— Աստծուն խնդրենք.
— Բա որ չտա՞.
— Գողնանք ուտենք,
Ուտենք, խմենք, քեֆ քյաշենք։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

367

Իսիկ կըսե՝ ել էրթանք,
Իսիկ կըսե՝ ո՞ւր էրթանք,
Իսիկ ա կըսե՝ Հալապ էրթանք,

Խիկ ա կըսե՝ Շատ էրթանք,
Խիկ ա կըսե՝ ճըղտըլիկ եմ, պըղտըլիկ եմ,
Ճամբա չիտեմ, ո՞ւր էրթամ։

ԺԱ.Բվ 35

368

Բութամատը կըսե.
— Գալ կու գա։
Յուցամատը կըսե.
— Ուակի՞ց կու գա։
Միջնամատը կըսե.
— Լեռնեն կուգա։
Մատնեմատը կըսե.
— Ատանկ է նե՝ ես կփախիմ։
Ճկույթը կըսե.
— Ես ալ կուճուկ իմ,
Քու վրա կնկլեմ կը փախիմ։

ՀԱ. 357

369

Հայրը՝ բութամատ,
Ոչխար մը գնեց,
Մայրը՝ յուցամատ,
Ձատիկին մորթեց։
Տղան՝ միջամատ
Մորթեց ու քերթեց,
Քույրը՝ մատնեմատ,
Տափկեց ու էփել ց,
Փոքրիկ ճկույթն ալ,
Նեմնամ ծամեց։

ՀԱ. 357

370

Բութամատն ասեց՝ գայլը էկավ։
Յուցամատն ասեց՝ որտե՞ղից էկավ։
Միջամատն ասեց՝ սարիցն էկավ։
Մատնամատն ասեց՝ վե՛ր կացեք փախչենք.
Ճկույթն ասեց՝ պստլիկ եմ, ճատլիկ եմ,
Ոտիկ չունեմ, թևեր չունեմ, ի՞նչպես փախչեմ։

Քանաքեռ
ՀԺԲԱՂ

371

Ճրկութին ըսաց՝ էկեք ուտենք,
Ճրկատամատն ըսաց՝ ի՞նչ ուտենք,
Էրկան լոլոզ միջի մատնը ըսաց՝ աստված կուտա,
Աման լիզոզ ցուցամատն ըսաց՝ թե օր չը տա՞,
Օչիլ կոտրոզ բութ մատն ըսաց՝ դողնանք կուտենք։

ԳԱԱ

372

Էսա կասի՝ անոթի եմ,
Էսա կասի՝ ո՞ւստ ուտենք։
Էսա կասի՝ աստված կուտա,
Էսա կասի՝ բալքիմ չի տուր,
Էսա կասի՝ հալբաթ կուտա,
Կամ՝
Էսա կասի՝ դատենք ուտենք։

Վաէ
ԱԽՋ

373

Էս ասեց՝ «Դուղն ամ»,
Էս ասեց՝ «Խաց չունենք»,
Էս ասեց՝ «Աստված կտա»,
Էս ասեց՝ «Բալքի չտա»,
Էս ասեց՝ «Կդողնանանք կուտենք».
Տանք, տանք գըլխին՝
Ջըմենձանա.
Ծըկիկ, ծըկիկ,
Ծըկնամատիկ,
Մեջտեղ մատիկ,
Թան լիզողիկ
Մենձ մատ չկա։

Խոյ, Սալմաստ
ՀԺԲԱ

374

Իսիկ կըսէ՝ էկեք հաց ուտենք.
Իսիկ կըսէ՝ ո՞րտեղից ուտենք.
Իսիկ կըսէ՝ աստված կուտա.
Իսիկ կըսէ՝ թե որ չըտվե՞ց.

Իսիկ կըսէ՝ գողնանք կուտանք։
Իսիկ կըսէ՝ դելը էկավ.
Իսիկ կըսէ ուրկի՞ց էկավ.
Իսիկ կըսէ՝ սարեն էկավ.
Իսիկ կըսէ՝ ալ էրթանք.
Իսիկ կըսէ՝ ճամբա չիտեմ, ո՞ւր էրթանք։

ՀԱՅԱՍՏ

374 ա

Իսիկ կսե՝ սով է.
Իսիկ կսե՝ փլավ կե.
Իսիկ կսե՝ որտեղի՞ց,
Իսիկ կսե՝ ասպած տա,
Իսիկ կսե՝ որ չիտա՞.
Գողնանք ուտենք։

Ալաշկերտ
ՀԱՅԱՍՏ

375

Ճըկոթիկ, ճըկոթիկ մերիկ,
էրկեն տաճիկ, բարակ մաճիկ,
Ճաշ լըկըսթիկ, փլավ ուտիկ,
Օճիլ կուվիկ, ճըվիկ, ճըվիկ։

Վան
ՎՍՇՐ 8

376

Ճկոթ կասի՝ էկեք հաց ուտենք,
էնա կասի՝ ո՞ւստ կա, որ ուտենք,
էնա կասի՝ աստված մեզ կուտա,
էնա կասի՝ բալքիմ չի՞տա,
Բյոթ կասի՝ գողնանք ուտենք։

Վան
ՎՍՇՐ 8

376 ա

Ճվի՛կ, ճվի՛կ, ճկոթիկ,
էրկեն տաճիկ, բարակ լաճիկ,
Ճաշ լպստող, փլավ ուտող,
Կթվահատիկ, ճվի՛կ, ճվի՛կ։

Ալաշկերտ
ՀԱՅԱՍՏ

377

Ճկութն ասաց՝ ա՛յ քույրիկներ, չա՛ն քույրիկներ,
սուաց եմ.
Մատնու մատն ասաց՝ խաց ուտենք.
Միջնամատն ասաց՝ որտեղի՞ց ուտենք.
Յուցամատն ասաց՝ գնա՛նք ճարենք.
Բութ մատն ասաց՝ դողնա՛նք ուտենք։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

377 ա

Համամհատիկ ուտող մատիկ,
Չալ խնձորիկ ու փշատիկ,
Խաց ուտենք.
Հուստի՞ց ուտենք,
Գողնանք ուտենք։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

378

Հատի՛կ, հատի՛կ,
Ուտող մատիկ,
Չար խնձորիկ,
Չար փշատիկ,
Նա մեր անի,
Նա կուտ ուտի,
Ավազն ասի, պաչիկ անի,
Դուռը բանան դուս անի։

Չահարմահալ
ՉՀԲԲ

379

Պուլի, պուլի,
Պուլիին քուրը
Օրթաճալա,
Շերեփ լիզող,
Օճիլ կոտրող։

ԱՔԱ 5

380

Պուլի-պուլի,
Պուլիին քուրը
Օրթաճալա,

Շերեփ լիզող,
Օշիլ կոտրող։

ՀԺԲԱԴ 35

381

Մաննը՛ս, մաննը՛ս,
Մին մաննըս,
Կիճի մաննըս,
Մին մաննըս...

Ղարադաղ
ՀԺԲԱԼ

381 ա

Օխի մատս, լավ մատս,
Պիճի մատս, չալ մատս,
Փլավ ուտող, շերեփ լիզող
Չալ մատս։

Երևան
ՀԺԲԱԴ

382

— Գայլը էկավ.
— Ո՞րտեղից էկավ.
— Սարից էկավ.
— Ել էրթանք.
— Համփա չիտեմ,
Ո՞ւր էրթանք։

ԱՔԱ 5

383

Թալու թաթիկ ջուր բեր,
— Ես չբերիմ, դու բեր.
— Փլավ էփիմ, դու կեր.
— Ես չուտեմ, դու կեր։

Ալաշկերտ
ՀԱԺԶ 69

383 ա

— Թալա թաթիկ ջուր բեր,
Ժաժիկ շինեմ, դու կեր,
Փլավ էփեմ, դու կեր,
Ես չըուտեմ, դու կեր։

ԴԱԱ

384

— Տալար թաթիկ, ճյուր պե՛,
— Ես չեմ կանա, տյու պե՛,
— Փլավ խփեմ, տյու կե՛։

Վան
ԱԽՋ 34

384 ա

— Դալար թաթիկ, ջուր բե՛,
— Ես չեմ կանա, դու բե՛,
— Սեր ու մածուն դու կե՛։

ԺԽՒ 75

384 բ

— Դալար թաթիկ, ճյուր պե՛,
— Ես չեմ կանա, տյու պե՛,
Ժաժիկ շինեմ, տյու կե՛,
Պանիր շինեմ, տյու կե՛,
Փլավ խփեմ, տյու կե՛,
— Դալար թաթիկ, ճյուր պե՛,
— Ես չեմ կանա, տյու պե՛։

Վան
ՎՍՇԱ 17

385

Ճի՛վ, ճի՛վ, ագռվու ճի՛վ,
Ագռավ գնաց երուսաղեմ,
Բուրդ հբեր,
Բամբակ չհբեր,
Շալ էրաց,
Շըլվար չհրաց,
Ճնճղուկ թռավ,
Էնա ծոցո՛ն։

Ալաշկերտ
ԱՀԲ

385 ա

Ճի՛վ, ճի՛վ, ագռավու ճի՛վ,
Ագռավ գնաց երուսաղեմ,
Բուրդ բերից,
Բամբակ բերից,
Շալ էլավ,

Շալվար չէլավ,
Թը՛ռ, ճնճուղ։

ՀԺԲԱՆԳ

385 բ

Ճի՛վ, ճի՛վ, ագռավու ճի՛վ,
Թռավ գնաց Երուսաղեմ,
Բուրդ եբեր,
Բամբակ չեբեր,
Շալ եբեր,
Շալվար չեբեր,
Ճնճղիկ թռավ գնա՛ց։

ԱՀՋ

385 գ

Ճի՛վ, ճի՛վ,
Ագռաճիվ,
Ագռան գնաց Երուսաղեմ,
Բուրդ բերից,
Բամբակ չիբերից,
Շալ արաց,
Շալվար չարաց,
Թը՛ռ... ճնճղի՛կ։

ԱՀԹ

385 դ

Ճի՛վ ու ճի՛վ, ագռավու ճի՛վ,
Առավ գնաց Երուսաղեմ,
Բուրդ եբեր,
Բամբակ չեբեր,
Շալ եբեր,
Շալվար չեբեր,
Ճնճղիկ թռավ գնա՛ց։

Տարոն
Տհ

385 ե

Ճվի՛կ, ճվի՛կ, կակլա ճվիկ,
Կակլեն գնաց Երուսաղեմ,
Բուրդ իպե, բամբակ իպե,
Շալ արաց, շլվար արաց,
Ուրն արաց, ուր լաճուն չարաց,

Թո՜ւռ, ճուճուղիկ,
Կաի՜կ, կաի՜կ։

լբ

385 գ

Ճըվի՜կ, ճըվի՜կ, Ակլա ճըվիկ,
Ակլեն կնաց Իրուսաղեմ
Պուրթ իպե, պամպակ չիպե,
Շալ արաց, շլվար չարաց,
Ուրն արաց, լաճուն չարաց,
Թո՜ւռ, ճուճուղիկ։

վան
ՎՍՇԱ 12

385 է

Ակլա ճվի՜կ, կակլա ճվի՜կ,
Կակլեն գնաց Հնդիստան,
Շալ բերից, զառբաբ բերից,
Բուրդ չբերից,
Թը՜ռ, ճվկան ծոցիկը։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

385 ը

Ճըվի՜կ, ճըվի՜կ, ակլա ճըվիկ,
Ակլեն կնաց Երուսաղեմ,
Պիուրթ իպե, պամբակ չիպե,
Շալ արաց, շլվար չարաց,
Ուրն արաց, լաճուն չարաց.
Թո՜ւռ, ճուճուղիկ, կըտրի՜կ, կաի՜կ։

վան
ԱՀԺԲ 102

385 բ

Ճի՜ն ու ճի՜ն,
Ակռեն ու ճին,
Ակռեն գնաց,
Երուսաղեմ,
Բուրդ եբե,
Բամբակ եբե,
Շլվար եբե,
Ջոջ մամուն

Թումբան չկբև,
Թո՜ւս, ճուճուղիկ.
Քեռին քո Հ՝երթիս,
Կըգի՜, վըգի՜, վըգի՜։

Ռշտունիք
ժԼՔ

386

Ճիվո՜ւ, ճիվո՜ւ, ճնճղի՜կ,
Թռալ գնաց աուվու եղրիկ,
Կերալ կաիկ, խմեց ջրիկ,
Թռա՜վ մտալ Մկրտչ ծոցիկ։

Աշե 70

387

Ճի՜վ-ճի՜վ, ճընճըղի՜կ,
Թռի գնա աուվի պղիկ,
Կի կաիկ, խմի ջրիկ,
Աբի մաի նանևի ծոցի՜կ։

Տարոն
ՊԲԼ 65

387 ա

Հա՜ ճի՜վ ու ճի՜վ, ճըվճըվկան,
Թռալ գնաց Հընդստան,
Կերալ կուտիկ, խմեց ջուրիկ,
Էկալ մտալ մամու ծոցիկ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

388

Ճի՜վ, ճի՜վ, ճըվանա,
Խարսըս տարան Մատոնա,
Ես Մատոնի տղան եմ,
Թագավորի փեսան եմ։
Ձիդ ու կամագ ինձի տու,
Հեծնեմ էրթամ Հնդստան,
Քեզի բերեմ մատնիստան։
Թռի՜, Մաման էրթիկ,
Թո՜ւս, ճուճուղիկ։

Կարին
ՎՍՇԱ 13

389

Ճի՛վ, ճի՛վ, ճիթոնա,
Հարուստ գնաց պատոնա,
Ես պատոնին տղան եմ,
Թագավորին փեսան եմ.
Միտ ու ճորիտ ինձի տու,
Հեծնեմ էրթամ Հնդստան,
Քեզի բերեմ մատնեստան,
Մատդ ինքը պլպստան,
Դաշղա կուվերս էկել են,
Պուտ պո՛ւտ, պուտ պո՛ւտ,
Կաթ կոպուն,
Պրթուճ, պրթուճ կուլ կուտան,
Թը՛ռ մամանին էրթիկը։

ԳՔՔ 15

390

Ճի՛վ, ճի՛վ, ճիտոնա,
Հարսին տարան բատոնա,
Ես պարոնին տղան եմ,
Թագավորին փեսան եմ,
Պարոն աղբար դուրս արի,
Ձիդ ու ջորիդ ինձի տուր
Հեծնեմ էրթամ Հնդստան։
Քեզի բերեմ մատնստան,
Մատդ դնես փոլկստան,
Բուդաղլարը հաբ բոստան։

Շիրակ
ԱՀՔ 102

390 ա

Ճի՛վ, ճի՛վ, ճիթոնա,
Հարսըս տարան բաթոնա,
Ես բաթոմի տղան եմ,
Թագավորի փեսան եմ,
Թը՛ռռ մամոյենց երտիքը։

ՀԺԲԱՆ 3

391

Ճի՛վ, ճի՛վ, մատնոցիկ,
Կանաչ խաղողան պռնեցինք,
Փորեն հավկիթ հանեցինք,
Եղով, մեղրով տապկեցինք,
Սանամարին կերցուցինք։

— Թռա՛վ... տերտերին պախճան,
— էկո՛ւ, էկո՛ւ, էկո՛ւ... թռա՛վ,
— էկա՛վ, էկա՛վ, էկա՛վ,
— Հո՛ս է, հո՛ս է, հո՛ս է...

Սևբաստիա
ԲՍԳԴ 634

391 ա

Ճի՛վ, ճի՛վ, մատնոցի,
Կանանչ դաշտան բռնեցի,
Օձուն հավկիթն հաննեցի,
Եղով, մեղրով տապկեցի,
Կնքամարին կերուցի։

Սևբաստիա
ԲՍԳԴ 634

391 բ

Ճի՛վ, ճի՛վ, հավու ճիվ,
Հավ ու ճիվուն կանչեցին,
Սուր դանակը բերեցին,
Բոկլկազից կտրեցին.
Ճի՛վ, ճի՛վ, հավու ճիվ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

391 գ

Ճի՛վ, ճի՛վ, մատնոցիկ,
Դանանչ խաշդան պռնեցինք,
Իրիցգինին դէրցուցինք,
Իրիցգինը չի դէրավ,
Բարոնին բախշան թռա՛վ։

Դանի-Ռոստոմ
ՀԺԲԱՍՎ

392

Ճի՛վ, ճի՛վ, հավի ճիվ,
Հավը էլավ երթիքը,
Կերավ մեղր ու կարագը։
Դանա՛կ, դանա՛կ կանչեցին,
Առանց դանակ մորթեցին,

Փատե դանակով քերթեցին։
Թր՛ռ առավ պապիին երթիքը։

Նոր Նախիջևան
ՀԺՀՆ 8

392 ա

Հավ ճի՛վ, ճի՛վ, ճի՛վ,
Հավը էլլավ թարաքը,
Գէրավ մէռղով գարաքը,
Թր՛ռռռ բաբիին էրթիդը,
Ընդավ հավին վարդիքը,
Շաշմիշ արին մարթիքը։

Դոնի-Ռոստով
ՀԺԲԱՍՎ

392 բ

Հավի ճի՛վ, ճի՛վ, ճի՛վ,
Հավը էլլավ թարաքը,
Կերավ մեռղով կարագը։
Դանա՛կ, դանա՛կ, կանչեցին,
Առանց դանակ մոշթեցին,
(Փաթե դանակով մոշթեցին),
Օսկոռը բուն խոշթեցին,
Թևպուրը վրան ծածկեցին,
Թր՛ռռ մամիին երթիկը։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 62

393

— Ջա՛թ, չա՛թ...
— Ճնկառքշթ...ան վո՞վ է.
— Հրեշտակ է (կամ սատանան է).
— Ի՞նչ կուզե.
— Քօռտեղա.
— Ի՞նչ ըռենկ։
— (Գոյնի մը անունը)։

Կ. Պոլիս
ԱՀՔ 172

394

— Ջա՛թ, չա՛թ...
— Ճնկառաքշթ... ան վո՞վ է։
— Անունը խաթունն է։

— Ի՞նչ կուզե։
— Փապուճս պահճեն ինկավ, առնեմ պիտի,
— Վեր էլի...

Կ. Պոլիս
ԱՀՔ 170

395

Մեկ, երկու՝ երկննաս,
Իրեք ու չորս՝ չորանաս,
Հինգ ու վեց՝ վերանաս,
Յոթ ու ութ՝ կոտրի քու բութ,
Մնա քու ճկութ։

ՀԺՐԱՆԳ 100

396

Մեկ, էրկուս՝ էրկննաս,
Իրեք, չորս՝ չորանաս,
Հինգ, վեց՝ վերանաս,
Օխտը, ութը՝ ո՞ւր կէրթաս,
Ինը, տասը՝ տուն կերթաս։

ԳԱՍ

396 ա

Մեկ, էրկու՝ էրկննաս,
Իրեք, չորս՝ չորանաս,
Հինգ, վեց՝ վերանաս,
Օխտը, ութը՝ վա՞ր կէրթաս,
Ինը, տասը՝ ժամ կէրթամ,
Տասնը մեկին տուն կուգամ,
Տասվերկուքին հոգիս տամ։

Կ. Պոլիս
ԱՀՔ 174

396 բ

Մեկ, էրկու՝ էրանաս,
Իրեք, չորս՝ չորանաս,
Հինգ, վեց՝ վերանաս,
Օխտը, ութը՝ ո՞ւր ես գնում,
Ինը, տասը՝ տուն ես գնում։

Թիֆլիս
ՀՄԿԱ 14

396 գ

Մեկ, էրկու՝ տասէրկու,
Քեզ ո՞վ ասեց տասէրկու,
Դետեն ասեց տասէրկու։

Թիֆլիս
ՀՄԿԱ 12

396 դ

Մեկ, էրկու՝ տասնէրկու,
Ես էլ ասի տասնէրկու,
Դուն էլ ասիր տասնէրկու,
Քիզ ո՞վ ասավ տասնէրկու,
Բիջոն ասավ տասնէրկու։

Թիֆլիս
ՀԺԲԱԳ

396 ե

Մեկ, երկու՝ երկննաս,
Իրեյհ, չորս՝ չորանաս,
Խիյհ, վեց՝ վերանաս,
Յոթ, ութ՝ ուրանաս,
Ին, տաս՝ տաճկնաս,
Իմ խոր ավիլի փարին պերիս տաս։

Վան
ՀԺԲԱՇ 5

396 զ

Մեկ, երկուք՝ երկընննաս,
Իրեք, չորս՝ չորնաս,
Հինգ, վեց՝ վերնաս,
Օխտնին, ութնին՝ յո՞ւր կէրթաս,
Իննին, տասնին՝ հոգիտ կուտաս,
Տասնըմեկին՝ քարին ներքև կէրթաս,
Քանի ծովը փրփրի,
Դուն ալ հետը քրքրիս։

Սեբաստիա
ԲՍԳԳ

397

Մեկ, էրկու, տասն ու վեց.
— Տասնուվիցը ո՞վ ասավ,

— Տասնուվիցը ես ասի,
Թե չիս ալատա, համբրե, տես։

Թիֆլիս
ԹՄԿՄ 26

397 ա

Մեկ, երկու, տասնվեց,
Ես էլ քսի տասնվեց,
Դուն էլ քսիր տասնվեց,
Չես հալատա, համբրե տես։

Շարուր
ԱՀՔ 94

398

Այբ, խե, զա,
Էշ հնծա,
Գնա ընցա,
Էշ դռաց,
Ես վախցա։

ՀԺԲԱՆԴ 85

399

Այբ, բեն, գիմ՝ պապադ հեքիմ,
Դա, եչ, զա՝ պապադ տեսա,
Է, ըթ, թո՝ պապադ թոթո,
ժե, ինի, լիոն՝ սուլու իլիմոն,
խե, ծա, կեն՝ պապայիդ խալխախը ծակեն,
Հո, ձա, խատ՝ պապատ սախատ,
ձե, մեն, յի՝ յաղլը եչմենի,
Նու, շա, ո՝ ըռաֆտա շամտան քո*,
Չա, պե, ջե՝ յաղլը քչե,
Ըռա, սե, վեվ՝ պապադ սև է,
Տյուն, բրե, ցո՝ փատոցի մը յուղ լեցու
Հիյուն, փյուր, քե՝ պապադ թիվըք է,
Եվ, օ, ֆե՝ պապադ Մոսկոֆ է։

Կ. Պոլիս
ԱՀՔ 173

400

Այբ, բեն,
Տաշտին դմփեմ,

---

* Պահարանի մեջ աշտանակ դիր (Ծ. Բ.)։

Օխտը պաղարճ խըտըտամ,
Գնամ գեղը պտտամ,
Գամ կլեսխդ դմփեմ։

Ղազախ
ԱՀՔ 94

401

Այբ ու բեն,
Տախտակ տփեմ,
Բանի գա՝ փախնիմ,
Հացի գա՝ պռպռվիմ։

Տարոն
Տխ

402

Այբ, բեն, գեմ՝
— Պապըտ գրկեմ.
Դա, եչ, զա՝
— Պապըտ տեսա.
է, ըթ, ժոյ՝
— Պապտ պետոյ.
ժէ, ի, լըվեն՝
(Ջունի)
խե, ծա, կեն՝
— Պապուտ ղոլփախը ծակեմ.
Հո, ձա, ղառ՝
— Պապուտ ո...ը սախատ։
Ճե, մեն, հի,
— Կարմիր համեմի։

Սեբաստիա
ԲՍԳԳ

403

Այբ՝ բենին,
Գիմը՝ դայինն,
Եչը՝ պայինն,
Գաբրել տայինն
Ախսարայինն*

* Ախսարայ՝ բաղ մը Պոլսոյ մեջ (Ծ. Բ.)։

Տուրը տարին,
էրկու հարուր
Ջուպուխ զարկին։
Ամա՜ն, ուստա,
Փևքեն վուրմա
Թննճերե տե
Թոփ սալաթա*.
Ծովին օրթան ոսկի ամաններս կվլայի,
վերևն տաք տաք հացի մը հոտ էկավ։
Կնա նայի վո՞վ էկավ.
— էրկու ձիավոր էկավ,
Մեկը՝ պահապան,
Մեկը՝ պախճեպան։
— Պահապան, պահապան, վո՞ւր կերթաս.
— Հիվանտիս տունը կերթամ.
Պալլինքս պարձիս տակ մոռցա,
Վով առնե նէ՝ լեղուն փիս ըլլա։

Կ. Պոլիս
Ա.ՀԲ 173

403 ա

Այբ, բեմ՝
Գլխիս դմփեմ,
Կուշտ կերցնեմ,
Ու խմցնեմ,
Ու հագցնեմ,
Գրկեմ, պաքեմ,
Թալեմ, բռնեմ,
Առնեմ, թռնեմ.
— Ա՛յ, քյուչուկ, դո՞ր կերթաս.
— Պապոնց տուն.
— Գնա կորի քոփակ շուն։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

---

* Ա՛յ, վարպետ կաթսայի մեջ
Ուժով մի պարնիր կլորիկ ոտքան (տաճկերեն) (Բ. Բ.)։

404

Հեքիա՛թ, հեքիա՛թ, թևք մի գտա,
Գնացի էգին վեզ մի գտա,
Փորիցի մեջը մտա,
Հարսնիք արի, ինչո՞ւ չէկիր.
— Մեղքը կանեի։
— Մեկալ օրը ինչո՞ւ չէկիր։
— Սրբուածք կանեի։
— Մեկալ օրը ինչո՞ւ չէկիր,
— Գլոխս կու ցավեր։

Ակն
Ա.Գ.Գ

405

Քա՛, խնամի ջան, էկել եմ էկել,
Ա՛, խնամի ջան, ո՞ւր ես էկել,
Քա՛, խնամի ջան, աղջիկդ ուզող,
Ա՛, խնամի ջան, աղջիկ չունեմ,
Քա՛, խնամի ջան, տեհել եմ, տեհել,
Ա՛, խնամի ջան, որդի՞ ես տեհել,
Քա՛, խնամի ջան, խաս բաղումը,
Ա՛, խնամի ջան, գլխին ի՞նչ կար,
Քա՛, խնամի ջան, չալ քլաղա,
Ա՛, խնամի ջան, ոտին ի՞նչ կար,
Քա՛, խնամի ջան, ծուղով մաշիկ,
Ա՛, խնամի ջան, մեջքին ի՞նչ կար,
Քա՛, խնամի ջան, բուղմա գոտիկ,
Ա՛, խնամի ջան, ի՞նչ ես բերել,
Քա՛, խնամի ջան, սերով սեղան,
Ա՛, խնամի ջան, ո՞նց ես էկել,
Քա՛, խնամի ջան, պռատ գավով, պոչատ հավով։

ԱՀԺԱ 45

— Էկալըմ, էկալ, ա՛յ խնամի.
—Հո՞րըս էկալ, ա՛յ խնամի.
— Էկալ ըմ աղջիկդ օղիմ, ա՛յ խնամի.
— Աղջիկ չունիմ, ա՛յ խնամի.
— Տեսալ ըմ, տեսալ, ա՛յ խնամի.
— Ի՞նչ տեղըս տեսալ, ա՛յ խնամի.
— Մեր բազումըն ըմ տեսալ, ա՛յ խնամի.
— Ի՞նչ անելիսա տեսալ, ա՛յ խնամի.
— Գլոխը շինելիս, ա՛յ խնամի.
— Ի՞նչու վերա, ա՛յ խնամի,
— Մեծ պատնոցու վերա, ա՛յ խնամի։

ՀԺԲԱՆԱ 40

407

— Եկալ ըմ, եկալ, այլի հո՛...
— Հո՞ւնչու յըս եկալ, այլի հո՛...
— Ըխչիզան ըմ եկալ, այլի հո՛...
— Ախչիզ, չօնըք, այլի հո՛...
— Տեսալ ըմ, տեսալ, այլի հո՛...
— Ի՞շաըէղըս տըէսալ, այլի հո՛...
— Բաղըմըն ըմ տըեսալ, այլի հո՛...
— Ի՞նչ ըրիլիս, այլի հո՛...
— Թիլ կըծկելիս, այլի հո՛...

ՀԺԲԱՆ

408

— Ասօր ձեզի ո՞վ էկավ։
— Տըմպլիկին պապուկը։
Տըմպը՛լ, տըմպը՛լ չալեցին,
Տըմպըլիկին խաղցուցին.
Ռախին, գինին, պաստուրման,
Հավի միսն էլ հազեր կան։
Հարսի անունը՝ Խավ-խորոզ,
Փեսին անունը՝ Նիկողոս,
Առին տարին սուրբ Նիկողոս,
Պսակողն էր Տեր-Պողոս,
Կնքահարն էր Քոռ-Փանոս,
Տավալճին էր Ջըմբըլ-Թորոս։

Տըմպըլ՛ չալեցին.
Տըմպըլիկին խաղցուցին,
Վերջը մեյնակ ճամբեցին։

Հծհբն

409

— Քեզի կիտամ մաղ մի օսկի,
Ա՛ռ, պարիշի, խնամի ճան.
— Մաղը ծակի,
Օսկին թափի,
Չը՛մ պարիշի, խնամի ճան։
— Քեզի կիտամ մաղ մի արծաթ,
Ա՛ռ, պարիշի, խնամի ճան.
— Մաղը կոտրի, արծաթ թափի,
Չը՛մ պարիշի, խնամի ճան։
— Քեզի կիտամ դամ մի ոչխար,
Ա՛ռ, պարիշի, խնամի ճան.
— Դամը բըլի,
Ոչխար չարդի,
Չը՛մ պարիշի, խնամի ճան։
— Քեզի կիտամ մաղ մի խնձոր,
Ա՛ռ, պարիշի, խնամի ճան.
— Մաղը չարդի,
Խնձոր թափի,
Չը՛մ պարիշի, խնամի ճան։
Բարով ու խոշ ես ակե, խնամի ճա՛ն,
Դարտակ ու պոշ ես ակե, խնամի ճա՛ն,
էրկու պոլոճ ես պերե, խնամի ճա՛ն,
էն էլ ճամբախն ես կերե, խնամի ճա՛ն։

Ա.Հէ 437

410

Ալուճ-մալալուճ, խնամի ճա՛ն
Ալուճ եմ քաղե, խնամի ճա՛ն
Դոտիկս եմ շարե, խնամի ճա՛ն,
Քաղքից-քաղաք ման էկա, խնամի ճա՛ն,
Տոպրակս լցի, խնամի ճա՛ն,
Բերանն էլ հարի, խնամի ճա՛ն։

Ալաշկերտ
Ա.Հէ 437

411

Պսա՛կ, պսա՛կ,
Տիկնի պսակ,
Արջի պոլոլ,
Դևդին դմակ,
Կուժն ու կուլեն,
Գլխիդ կոտրեմ,
Տե՞ր ես, թե չէ։

ԱՀԺԱ 44

412

Ածին մածածին, զնկլի՛կ,
Էկած կտանին, զնկլի՛կ,
Տարան Թըղ տանին, զնկլի՛կ,
Ջաուկին կբերին, զնկլի՛կ,
Կարմիր սոլերով, զնկլի՛կ,
Դևդին բճերով, զնկլի՛կ։

ԱՀԷ 437

413

Զնգլի՛կ, ալոճ եմ քաղել,
Զնգլի՛կ, գոտիս եմ շարել,
Զնգլի՛կ, մեր պատը ծակեցին,
Զնգլի՛կ, մեր խարս խանեցին,
Զնգլի՛կ, տարեն, Թըղ տանին,
Զնգլի՛կ, Ջաուկին կբերեն։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

414

Դի՛լ, դի՛լ հրսանիք,
Հարսի մատին մտանիք,
Դե դուրս բերեք որ տանեն,
Փոխան չունի ի՞նչ անեն։

ԱՀԺԱ 44

415

Փըսա՛ք, փսա՛ք, կոնտի մըհակ,
Արշու պանիր, դեղին մըհաք,
Մածնու երիս, եղ ու կարաք,
Էծու տոն, ճանճու փարախ,

Մին թաս գինի, կես թաս արաղ,
Մին կտոր հաց, մին խրեզ աղ,
Մին հիմար, մին ուշախ,
Կոժն ու կոլան գլխեդ կոտրիմ՝ տա՞րն ըս։

ՀԺԲԱՆԱ 1

416

— Կուկլո՜ւ կո՜ւ կո՜ւ, սանամեր,
Մե խավըմ կեր դեռ՞ր կնաց.
— Ծարավ ախպուր ճուր կնաց.
— Ի՞նչ կեր կտուց.
— Ջիր ու չամիչ.
— Վի՞ր կտաններ.
— Խարս ու փեսին.
— Խարս դյո՞ր ի նստեւ.
— Վեր ոսկէ թախթին.
— Փեսեն դյո՞ր ի նստեւ.
— Վեր կույտա ցախավելին։

Վան
ՎՍՇԱ 25

417

Դե թռի՛, թռի՛ խոճիկ,
Յըմ մոր ծեռի կծիկ,
Կըծիկի թել կը մանեմ,
Խոճիկիս ֆիստան կը կարեմ,
Հա՜ թռի, խոճիկս,*
Խոճկիս անուն Ամիր,
Խոճկիս ֆիստան կարմիր։
Խոճկիս անուն Սասուն,
Խոճիկ տառցավ անասուն։
Խոճիկ նստուկ վըր իշուն,
Խոճիկի ֆիստան առիշում։
Խոճիկս անուն կուզե,
Թռավ էկավ մեր մոտը։
Խոճիկիս անուն Ֆիդան,
Արե կնանք մե կութան։
Խոճկիս անուն Թամամ,
Խոճիկս խորոտ էր խանըմ։

ՀԺԲԱՂԱ 90—92

* Գրկնել յուրաքանչյուր երկտողից հետո (Ս. Բ.)։

418

— Ագագա՜մ.
— Ագրի գագա՜մ.
— Դուվի թա՜մ.
— Դուվթի միշա՜մ.
— Մելիք ա՜մ.
— Մելքի մեշամ.
— Բիր բիչողին.
Չիզի հարսը գցի գա։

ԳԲՔ 18

419

Տանկը՜ու-տանկը՜ու մերտևինով վեր էլլավ,
Տընկը՜ու-տընկը՜ու մերտևէնեն վար ինկավ,
Առին տարին հիվանդանոց,
Ձևոը ոտքը կատկցին,
Գլոխը լաթով փաթթնցին,
Ձևոքեն բռնեցին, ձևոքը էլլավ,
Ոտքեն բռնեցին, ոտքը էլլավ,
Գլոխեն բռնեցին, գլոխը էլլավ,
Աս ի՞նչ ճառիզ բան էղավ։
Վազեց տա-ա՜,
էլավ տա-ա՜,
Ինկավ տա-ա՜.
Ամեն բան թուփ արեք մեկտեղ,
Ինքներդ ալ թուփ էղեք մեկտեղ,
Խավալներդ չալեցեք,
Ինքներդ ալ խաղացեք։
Վազեց տա-ա՜,
էլավ տա-ա՜,
Ինկավ տա-ա՜։

Նոր նախիջևան
ՆՆԲՓ 65

420

— Դմփո՛, դմփո՛, քու մամ ի՞նչ ա էփե։
— Քեալաջոդ։
— Ի՞նչ ա թալի մեջ։
— Կառվի դոշ։
— Ի՞նչ ա կորի։
— Օսկի մատնիք։
— Գահր եմ ու չեմ իտա։

Ալաշկերտ
ՀԺԲԱՆԳ 91

420ա

— Ա՛յ նանի, ի՞նչ ես էփել,
«Թանով սպաս, ա՛յ բալա»։
— Մեչըն ի՞նչ ես քըցել։
«Կառվի չաղ դոշ»։
— Բա ի՞նչ ես կորցրել։
«Վեսկա մատնիկ»։
— Ես քթել եմ, տալ չեմ,
ես քթել եմ, տալ չեմ։

ԳԹՔ 18

421

— Ի՞նչ ես խփե։
— Ոսպնե պաս։
— Մեչն ի՞նչ ես թալե։
— Տեր աղոթիկ[1]։
— Վո՞վ ի կիրե։
— Կոլոտ Օղիկ։
— Խարաներ դո՞ր են։
— Քյոշկի կուբեն։
— Ի՞նչ են պիրե։

— Լաճ վ՝ աղջիկ։
— Անբյտերն ի՞նչ ի։
— Ջանգյակ, պամպակ։
— Սուլթան դյո՞ր ի։
— Մեռեր ի։
— Վա՜յ, վավելե՜ր, Սուլթան, վավելե՜ր,
Շեյկ ծամեր գեյտին կավիլե՜ր։

Վան
ՎՍՇԱ 18

422

— Սարի կել եմ կը տանեմ։
— Տաշտի չոբան եմ, չեմ տա։
— Իմ պաժինըս կը տանեմ։
— Պաժին չըկա, կորի քել։
— Ես էտ մաքին կը տանեմ։
— Տըվող ըլնի կը տանես, և այլն։

Սալմաստ
ՀԺԲԱԲ 11

423

— Ենա մասիկ որ կը տանեմ։
— Ենա մասիկ որ չեմ տա։
— Ենա մասիկ իմ պաժին ի։
— Ենա մասիկ քյո պաժին չի։
— Ենա մասիկ կը փախցընեմ։
— Ենա մասիկ որ չես կանա։

Սալմաստ
ՀԺԲԱԲ 11

424

— Աղեն կասի՝ կրակ տուր։
— Խոգյիդ էլնի, գա՜ր տար։
Ջը՛խկ, չը՛խկ, ի զար տարավ։
— Ա՜խ, մեկ էլ տուր։
էն ինգյավ փեսի մուրտան իրիցավ։
— Ջա՜ր տա՜ր։
Ջը՛խկ, չը՛խկ, ի զար տարավ։
— Ա՜խ, էն ինգյավ խաբսի քյողքն իրիցավ։
— Աղեն կասի՝ կաթ տուր։
— Խոգյիդ էլնի, կթի տա՜ր։

ճը՛ժ, վը՛ժ, ճը՛ժ, վը՛ժ։
Կթնց տարավ։
— Ախ էն բռան կաւռուն ի զար թափեց։
— Աղեն կասի՝ մածուն տուր։
— Խոքյիդ էլնի, մերի տա՛ր։
— Աղեն կասի՝ միս տուր։
— Խոքյիդ էլնի, մորթի՛ տար։
— Աղեն կասե՝ գյառ տուր։
— Էնա մասիկ որ չեմ իտա։
— Էնա մասիկ որ կտանեմ։
— Էնա մասիկ որ չեմ իտա։
— Էնա մասիկ որ կտանեմ։

ՎՍՇԱ 19

425

Պո՛ւտ ձեր էքին,
Պո՛ւտ մեր էքին,
Պո՛ւտ ձեր էքին,
Պո՛ւտ մեր էքին,
Էքի ջրեմ,
Էքի քաղեմ,
Կալկուճ կարեմ,
Օրոճ շարեմ։

Շարուր
ԱՀՔ 102

426

— Տակդ ի՞նչ կա.
— Յորղան-դոշակ.
— Վրեդ ի՞նչ կա.
— Աստղ ու լուսնյակ։

Ալեքսանդրապոլ
ԱՀՔ 102

427

Ջո՛ւ, չո՛ւ չուանդի,
Իմ աղբերը Գյանջա ա,
Գյանջի խանի դռանն ա,
Սամուր քյուրքը կռանն ա։
Փետե-փետե մարդիկը,

Երկաթե կնանիքը,
Փունջ մանիշակ աղջկերքը,
Վարդ ու խնձոր տղերքը։

Արարատ
Ա.ՀԹ 104

428

Քի՛վ, քի՛վ, քիվանջա՛,
Իմ աղբերը Գյանջա,
Գյանջու խանի դռանը,
Կանանչ կապեն կռանը։

Հին Նախիջևան
Ա.ՀԹ 104

429

Ջի՛ր-ջի՛ր, չիչանջա՛,
Իմ աղբերս Գյանջա,
Գյանջան գալի դռանն ա,
Թավլա քաշեմ ձիանն ա,
Կալի կտալը կեցին,
Ոկալ քցի ծալքին,
Ծալքը ղումշով լիքը,
Տյուրը թուխ կևոմշով լիքը,
Փուդա՛ռ, փուդա՛ռ մարդիկը,
Ոսկե բյաթուլ աղերքը,
Փունջ մանիշակ աղջկերքը։

Ուզունթալա
Ա.ՀԹ 105

430

Ճլորթի բազի,
Շիմշիրի թազի,
Շիմշիրը փուլ կյա,
Տակալը ճյուր կյա։

Ուզունթալա
Ա.ՀԹ 105

431

Քու՛ֆ, քո՛ւֆ, դարա՛, դարա՛,
Ես էլա քերդի բարա,
Կանչիցի տեր Ջաբարա՛,
Խունկը մոմ հազըր արա.
Առավոտն պաշտոնմ արա,

Իրիկուն խթում արա,
Խարկի խաբար տեղն արա.
Թյո՛ւ, էնա պուճախ, թյո՛ւ էնա պուճախ,
Մեր բյավարանց մեղրի պուճախ,
Շեն կենա իմ խոր օջախ։
Քուֆ, քո՛ւֆ, դարա՛, դարա՛,
Ես էլա բերդի բարա,
Իմ ախպեր վեր էն բերդին,
Օսկի թուր վեր էն թիվին,
Կերթա խաղա վեր լուսնըկին,
Լուսնակ ափեց մեջ իրիսին։
Թյո՛ւ էնա պուճախ (կրկնել)
Քո՛ւֆ, քո՛ւֆ, կէրթամ, կուկյամ,
Իմ ախպոր կնիկ ճարեմ,
Վարագա սարեն ճարեմ։
Դուռ ափեմ մարմաո քյարով,
Մանեմ ներս զարդարանքյով,
Ներ խափեմ թասըմ արաղով,
Մեր խափեմ մատըմ խինով,
Ախպեր խափեմ պոլատ ձիով,
Ախչիկ պիերմ խազար պարով։
Թյո՛ւ էնա պուճախ (կրկնել),
Թյո՛ւ էնա պարան, թյո՛ւ էնա պարան,
Ամեն տարան, ղիս չտարան։
Քյո՛ւֆ, քյո՛ւֆ մեր տղեն,
Կախվերի ծառի ճղեն,
Ծառ չինարի, խերիկն էր,
Ջինար բաժիկ, մերիկն էր
Ճյողմ ուրհան, քեյոխքյն էր։

Վան
ՎՍՇԱ 23

432

Կըզտը՛, կըզտը՛, խաչերես,
Մորին էրթա՝ փայտ չիկա,
Աղբուր էրթա՝ ջուր չիկա,
Պինտ ապուրին՝ եղ չիկա,
Խնամիներուն տեղ չիկա։

ՍՀՏ 100

433

Կոտո՛շ, կոտո՛շ, գոմշի կոտոշ,
Կոտո՛շ, կոտո՛շ, էշի կոտոշ,
Կոտո՛շ, կոտո՛շ, կովի կոտոշ,
Կոտո՛շ, կոտո՛շ, ուղտի կոտոշ,
Կոտո՛շ, կոտո՛շ, իծու կոտոշ,
Կոտո՛շ, կոտո՛շ, կատվի կոտոշ,
Կոտո՛շ, կոտո՛շ, խոզի կոտոշ,
Կոտո՛շ, կոտո՛շ, խուզու կոտոշ։

ՀԺԲԱԲ 11

434

Տրոմբինա՛, տրոմբինա՛,
Խաչ, կյավադան փրոռոշինա,
Ուսթեն կասի՝ վերեն քաշի,
Ուսթեն առնի, տակեն տաշի,
Դե՛ տու տաշի՛, դե՛ դու քաշի՛,
Հա՛ ը տիմացի։

ՀԺԲԱԲ 11

435

Մամուլլա՛, ջան մամուլլա՛,
Մամուլլա կու բավէ տա,
Կուբավետա տոմահոլե,
Տոմահոլե ճանճե մնճե,
Ճանճե, մնճե, կունճե,
Բաբաս էկավ ճնկը՛լ, մնկը՛լ։
Արտը կորեկ եմ ցանե,
Ջիֆրի հավերն ի կերան,
Աթակ մաթակ հեչ դադման,
Տիրուն սիրուն նախսորուր։

Մուշ
Ա.ՀԲ 99

436

Կա՛ր, կա՛ր, մաստանը,
Կարկամ գեալդի բոստանա,
Բոստանչի դէօյդի, դէօյդի,
Դէօյդի կըզը կըռըլդի։
Թանով ապուր թեյրանի,
Կարպետը ծակ ջեյրանի։

Գնացի մի մարագ,
Գտա կճուճ մի կարագ,
Ձարկի պատին կոտրեցի,
Կանթը էրթիկ թաբլեցի.
Աթաք-մաթաք հեչ բակմազ,
Թառլի կոյին դուշըմազ.
Ուլն էլավ սարը,
Քար կերավ, քացախ խմեց,
Արյուն շռնց, պանիր թափեց.
Կոդմ կսրեկ էի ցաներ,
Հավքերն էին կևրեր,
Գնացի բերդի դուռը,
Գտա մի նուռը,
Կեսը հոտած էր, կեսն անուշ.
Շապղա դնել, թռնել հեչրանի,
Շապղա տանել հեչրանի։

ԱՀԹ 99

437

Կտո՛, կտո՛, մատանա,
Ոտնե գլոխ սատանա,
Կտոն կանի վըր փլին,
Փրթավ ընկավ մըջ տլին։

Տարոն
Տխ

438

— Տեր Օվանես.
— Պատրուք ու կես[1].
— Ձուռնով էրթա՞մ, թե՞ դափով.
— Դափով.
— Հ'աճկդ լուս որ տղա ես բերե.
— Հ'աճի լուսով ապրես.
Բարով կապես կարմիրը.
— Սրի էրթանք գաղի.
— Ձվան չունեմ.
— Ձվանդ կուտամ.
— Հաց չունեմ։
— Հացդ կուտամ.

— Դաթըխ չունեմ.
— Դաթըխդ կուտամ.
— Ջուր չունեմ.
— Ջուրն ածա չանախդ.
— Ջվանս կարճ է.
— Քաշե՛, ինչու օր երգնենա։

Ջահարմահալ
ՋՀԲ

439

— Խնամի խորա՛ն.
— Ի՞նչ է.
— Հավերս կորան, ձեր տո՞ւնն է.
— Մեր տունն է.
— Քշե՛, քշե՛ գա։
— Քշե՛մ, քշե՛մ, չի գա.
— Տաք, տաք սպաս վրեն լից՝ գա.
— Լըլե՛մ, լըլե՛մ, չի գա.
— Մախաթ կոխե թո՛ղ գա։
— Կոխե՛մ, կոխե՛մ, չի գա.
— Հավերս քանի՞ հավկիթ են ածէ.
— Մաղ ու կես.
— Քա ան օր ես ձեր դռնեն անցա, ան ի՞նչ պարակ մուխ կելեր ձեր երդիկեն.
— Հարս պատկեր էր, տղա էր պերե, ձվածեղ էփեր ես։
— Ի՞նչ ի պերե.
— Մանչ.
— Անուն ի՞նչ դրիք.
— Ստեփան։

Ալեքսանդրապոլ
ԱՀՔ 104

440

— Մին խավըն դո՞րը գնաց, մինը՝ դո՞րը։
— Մինը՝ տհան ու մինը՝ դենը։
— Ի՞նչ կեր կըտըցին։
— Ջիր ու չամիչ։
— Բա իմ բաժինն ո՞ւր ա։

— Ադաավի կոըցին,
— էն սարի ծերին
— Աշուշտակ,
Բու շուշտակ,
Երված-խորոված շուշտակ։

Նոր Ջուղա
ՀԺԲԱՄ 2

441

— Կուկլի՜կյ, կուկլի՜կյ, սնամեր.
— Հրըմե՛.
— Միր հովը նոր ա՜յ, ձիր հովը նոր ա՜յ.
— Միրը՝ հեն վարդին տակին,
Ձիրը՝ հեն քարին տակին.
— Քա՞նի աման կոտրս տվեծ.
— Էխտը քունը, էխտը էմը.
— Քա՞նի աման ջուր ըս տվեծ.
— Էխտը քունը, էխտը էմը.
— Քա՞նի աման ձու ըս կետաժ.
— Էխտը քունը, էխտը էմը։

Ագուլիս
ԱԿԳ

442

— Հա՜յ, ասիր՝ ցախավելը Թալեմ մարաքը.
— Ուտես կովի կարագը.
— Հա՜յ, ասիր՝ չոխտրիք.
— Ուտես հավի չըխտրիկ.
— Հա՜յ, ասիր՝ չոխտրիքի տակ խոտ կանաչի.
— Օխտը գրող քե կանչի.
— Հա՜յ, ասիր՝ մեյկ.
— Կլոխդ քյաշեմ լեկ.
— Հա՜յ, ասիր՝ երկու.
— Ուտես քյալի կու.
— Հա՜յ, ասիր՝ իրեյք.
— Կլոխդ քիրեյնք.
— Հա՜յ, ասիր՝ չորս.
— Թիեմ էվաս Հորս*.

* Կյուղ Գաբալագյազում (Ծ. Բ.)։

— Հայ, ասիր՝ խինդ.
— Աշկդ մտնի մև լինդ.
— Հա՛յ, ասիր՝ վնց.
— Մոլլան քև ծվնց.
— Հա՛յ, ասիր՝ օխտը.
— Կլոխդ դնեմ նոխտը.
— Հա՛յ, ասիր՝ ութ.
— Ուտես մի կողով թութ.
— Հա՛յ, ասիր՝ ինը.
— Անիծեմ դուշմանի դինը։
— Հա՛յ, ասիր՝ տասը.
— Սիրեմ քո խարսը.
— Հա՛յ, ասիր՝ խաց.
— Բերանդ թաց, վազի թեղ ճաղաց։
— Հա՛յ, ասիր՝ բրինձ.
— Դադյոդ տուր ինձ.
— Հա՛յ, ասիր՝ պանիր.
— Բողազեդ խանիր, քյանդիրը կանիր.
Ճարխակը մանիր...
— Հա՛յ, ասիր՝ էրթանք ձեր տուն.
— Ուտենք մածունը, քանդենք ժամտունը, կրակ տանք սունը.
— Հա՛յ, ասիր՝ հացեր.
— Դոնները բաց էր, աչքերդ թաց էր.
Մարդիկ ղուրցած էր, ճիժեր կլացեր.
— Հա՛յ, ասիր՝ մտամ ես մարաղ.
Մենք քաշուանք ղրաղ, արինք ճոչ չրաղ,
խմանք շատ արաղ.
— Հա՛յ, ասիր՝ ծուն կա.
— Տները սուն կա, ճնջղանը բուն կա,
Աչքերը քուն կա։

Դարալագյազ
ՓԳ

443

— Խըլի՛գ, խըլի՛գ, դիդիկ արա,
Յեդքի պանը, մդիդ արա.
— Ասա ախչիգ.
— Գաբադ քուռչիկ։

— Ասա մանչ.
— Գարատ գանանչ։
— Գարարէդ, գարմիր Գարիդ
Ախի ձևձեմ, կնա վարրեդ։
— Ուրո՜ւր, ուրո՜ւր՝ աչքդ դար,
Դասնէրգու ձագուկս դար։
— Ախչիդ, ախչիդ գծիդ արա,
Մեյ մի անիլ բզդիդ արա։

Դոնի Ռոստով
ՀԺԲԱՍՎ

444

Ականա դեդա,
Նա՞ դեդա,
— Ջուռնո՞վ գուբաս, թե՞ գափով.
— Ջուռնով էլ գուբամ,
Գափով էլ գուբամ,
Կճուճ կոտրելով գուբամ,
Հուլունք փշրտելով գուբամ,
Մարքրիդ վի քաշելով գուբամ։

Թիֆլիս
ԹՄԿԱ 22

445

Նանե՛, նանե՛, կրակ տուր,
էլի վերի թաղեն (4 անգամ)
— Հուդա ճնջուղ մի կար, ի՞նչ էղավ.
— Թռավ դիղու գլոխ.
— Դեղն ի՞նչ էղավ.
— Կով կերավ.
— Կովն ի՞նչ էղավ.
— Գել կերավ.
— Գելն ի՞նչ էղավ.
— Շուն կերավ,
— Շունն ի՞նչ էղավ.
— Դուան էտև կապուկ է.
— Հաց օր էպիկ խո չխա՞ծև.

— Չէ՛, էպե՛։
— Կաթն օր դնիմ թունդիր խո չթա՞փի.
— Նանե՛, նանե՛, կաթը թափա՛վ։

Մուշ
ՀԱԱ

445 ա

Թունդի՛ր-թունդի՛ր, կրակ տո՛ւր,
— Վերևի թառը,
— Կրակը թունդիրն է, կուակեցի հանե՛,
— Գել չկա՞.
— Օնչինչ չկա՛.
— Աղվես չկա՞,
— Ջաղալ չկա՞,
— Ջաղալ չկա,
— Օնչինչ չկա՛.
— Շիր ու փալանգ չկա՞.
— Օնչինչ չկա՛.
— Եախնի դի՛ր.
— Վա՛յ, մաշիկս նի ընկավ,
— Կուակեցի հանե.
— Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ։

Ջահարմահալ
ՋՀԲՆ

446

— Դեդի՛, դեդի՛, ո՞ւր ես գնում.
— Կոտմի* ժամը.
— Ես էլ գուքամ.
— Վայ թե գցիս.
— Ջիմ գցի.
— Սիպտա հաց իմ կերի,
Կարմիր գինի իմ խմի։

Թիֆլիս
ԹՄԿՄ 22

447

— Էշը ջուրը տարիլ ի՞ս.
— Տարա.
— Տա՞ք էր, թե՞ սառը.

* Անուն է (Ս. Բ.)։

— Տաք էր,
— Բաս սառցո՛ւ.
— Սառն էր.
— Բաս տաքցո՛ւ.
— Հանտարտ էր։

Թիֆլիս
ԹՄԿԱ. 24

448

— Խաթո՛ւն, խաթո՛ւն, ի՞նչ կփնտռես.
— Ասեղ կփնտռեմ.
— Ասեղը ի՞նչ պիտի ընես.
— Տոպրակ պիտի կարեմ.
— Տոպրակը ի՞նչ պիտի ընես.
— Քար պիտի լեցունեմ.
— Քարը ի՞նչ պիտի ընես.
— Պաղնիք պիտի շինեմ.
— Պաղնիքը ի՞նչ պիտի ընես։
— Վլասվիմ պիտի.
— Էս ա կա՞մ.
— Էկու, ամա չը տտ..ս.
— Չէ՛, չեմ տտ.ի։

ԱՀԹ 170

449

Աքլորն հարց կաներ.
— Կուկուլիկո՛ւ, սանամե՛ր,
Մե ձագուկ խավ տի՞որ գնաց.
— Ծարավ աղբուր կուլ գնաց։
— Ի՞նչ կեր կտուց.
— Ջիր ու չամիչ։
— Վի՞ր կու տաներ.
— Խարս ու փնսին։
— Խարս տիո՞ր նստաև.
— Վրր օսկի Բաղթին։
— Խարս ի՞նչի խփե։
— Կուրկուտ։
— Մեջ ի՞նչ ի Բալև.
— Խավդ ծրտոտ։
— Վո՞վ ի բերի.

— Ջաչալ Հակոբ.
— վո՞վ ի պախեն.
— Մամիկ մեր ճան։
— Տիո՞ր ի դրե.
— Օսկի պատխան։
— վո՞վ ի կերի.
— Կարա փսիկ։
վա՛յ կարա փսիկ, վա՛յ կարա փսիկ,
Քիո մերն ուտի քիո թշիկ։

ԱԴՄ, լԳ

450

— Ինչո՞ւ կուլաս դուն, Գառնի՛կ.
— Խիստ ծեծ կերա ես մայրիկ.
— Ո՞վ ծեծեց քեզ, Գառնի՛կ.
— Շերուկ կախարդ մեկ կնիկ.
— Ինդո՞ր ծեծեց քեզ, Գառնի՛կ.
— Շառին տակը իս մարիկ.
— Ինչո՞վ ծեծեց քեզ, Գառնի՛կ.
— Մեյ գավազանով, ի՛մ մարիկ.
— Որ տեղդ զարկեց քեզ, Գառնի՛կ.
— Ոտըուներուս, ի՛մ մարիկ.
— Ինչպե՞ս լացիր դուն, Գառնի՛կ.
— Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, ի՛մ մարիկ։

ԱԴՄ 19

451

Հովիվ — Գիտեք ի՞նչ է եղեր մեր աբլոբի գլխին։
Ամեքը — Ի՞նչ է եղեր, ի՞նչ է ելել։
Հովիվ — Բերվոր մամիկը տեսայ՝
Կուգար կըթոցվոռիկ,
Աղջիկը՝ կուժ կոտրիկ,
Ջրիկը՝ բըրոր-մըրոր,
Բարիկը՝ գըլոր-մըլոր,
Շառիկը՝ ճրդակոտոր,
Անձրևիկ՝ թևաթափիկ,
Աբլոբիկը՝ կատար կըտրիկ,
Մոխրաչափիկ,
Ավագ մկնիկ ինկեր թոնդիր,

Եղեր ճըպտի՛կ-վըպտի՛կ։
Ամենքը՝ Ձեռք-ձեռքի շուրջպարով.
— Մուկն ի մեռեր, ինկեր Թոնդիր,
Եղեր ճըպտի՛կ-վըպտի՛կ։

Վան
ԳԹՋ

452

— Էն ո՞վ է գալի.
— Աղեն է գալի.
— Վո՞ւրդանց է գալի.
— Բաղեն է գալի.
— Տո՛, պստի տղա,
Ի՞նչի իս լալի.
— Էնդուր եմ լալի,
Ինձ միրք չեն տալի։
— Ջաղ մի ուտի, գեր կի,
Մե պստի ձգան ծեր կի.
— Միրուքդ ո՞վ է նեբկի.
Պըծի՛, պըծի՛ Օսեփ դեդեն։

Թիֆլիս
ԹՄԿՄ. 24

453

— Գառնուկը պախճա՞ն է։
— Պախճան է։
— Վո՞վ ներս առավ։
— Տանտերը։
— Տանտերը կե՞շ մարդ է։
— Կեշ մարդ է։
— Տուրս էլի։
— Չեմ էլլար։
— Շուն մը ունիմ պաճախդ կխաղնե։
— Կատու մը ունիմ էրեսդ կճանկռէ։
— Տուրս էլի։
— Չեմ էլլար։
— Կպռնեմ։
— Պռնե՛։

Կ. Պոլիս
ԱՀԹ 170

454

— Ղո՛չ, ղո՛չ,
Իմ ղոչ հ՚ո՞ւր ա։
— Մորթի կերա։
— Իմ փայ հ՚ո՞ւր ա։
— Դրի Թարևք,
Գացի ջրի, էկա,
Կատուն կերեր էր։

Ալաշկերտ
Ա.Հ.Ե 186

455

— Ղո՛չ, ղո՛չ, էս ի՞նչ ա։
— Եղ ու մեղր ա։
— Հասի ես բերե։
— Քաղքեն։
— Ո՞ւր կը տանես։
— Մեր տուն։
— Ի՞նչով կուտես։
— Իմ ղոլ գալով։
— Դոր ա ղոլ գտալ։
— Պադե կորե։

Ալաշկերտ
Ա.Հ.Ե 186

456

Էծը կնաց վեր պադին խաղաց,
Ընդյավ ոտը կոտրավ,
Ասաց.— Պա՛ղ, տյու շատ զոռպա ես,
Ասաց.— Թո՛ւ, որ ես զոռպա էլնի,
Արևը ձի չէր խալե։
Կնաց մոտ արև, ասաց՝
— Ա՛րև, տյու շա՞տ զոռպա ես։
Արևն ասաց.— Որ ես զոռպա էլնի,
Ամպը իմ դեմ չէր ծածկե։
Ասաց.— Ա՛մպ, տյու շատ զոռպա ես։
— Թո՛ւ, որ ես զոռպա էլնի,
Քյամին ձի չէր գվրե։

Ասաց.— Քյամի տյու շատ զոռպա ես։
— Որ ես զոռպա էլնի չէրթի մանե պատի ճեղը։
Ասաց.— Պատի ճեղը, տյու շատ զոռպա ես։
— Թո՛ւ, որ ես զոռպա էլնի, մուկը ձի չէր վարե։
Ասաց.— Մո՛ւկ, տյու շա՞տ զոռպա ես,
— Թո՛ւ, որ ես զոռպա էլնի,
կատունը ձի չէր պռնե։
Ասաց.— Կատո՛ւ, տյու շատ զոռպա ես։
կատուն պոչը թախթփելով ասաց.
— Զոռպա եմ, զոռպա, զոռպեյաերաց ճոչն եմ,
Աղեյաերաց մուշտակն եմ, խաթիվտերաց
շուշտակն եմ.
Ամառ՝ վըր դյողվան, ձմեռ՝ վեր թորվան
Անուշ քուն կանեմ,
Փը՛շտ անեն, կթռնեմ, ծառի ծերին կնստեմ։

Վան
ՎՍՇԱ 10

457

— Կո՛ճ, կո՛ճ, ինչի՞ թայդրմիշ էլար։
— Պուղը թայդրմիշ կանե ո՞ւ։
— Պո՛ւղ, պո՛ւղ, ինչի՞ թայդրմիշ կանեիս։
— Ապա արևը ինծի կհալցունե ո՞ւ։
— Ա՛րև, ա՛րև, ինչի՞ կը հալցունեիս։
— Ապա արոտ պիտի էլլե ո՞ւ։
— Արո՛ւտ, արո՛ւտ, ինչի՞ պիտի էլլիս։
— Ապա կովը ինծի պիտի ուտե ո՞ւ։
— Կո՛վ, կո՛վ, ինչի՞ պիտ ուտիս։
— Ապա խասաբն ինծի կը մորթի ո՞ւ։
— Խասա՛բ, խասա՛բ, ինչի՞ կը մորթես։
— Ապա մուկը եղս կուտե ո՞ւ։
— Մո՛ւկ, մո՛ւկ, ինչի՞ կուտիս։
— Ապա կատուն ինծի կուտե ո՞ւ։
— Կատո՛ւ, կատո՛ւ, ինչի՞ կուտիս։
— Ապա լուն ինծի կխածե ո՞ւ։
— Լո՛ւ, լո՛ւ, ինչի՞ կը խածնես։
— Հե՛մ կը խածնիմ, հե՛մ խանի ծոցը կը պառկիմ

ՀԺՀՆ

458

Պզտիկ, պզտիկ տունիկը,
Ավլից պզտիկ կնիգը,
Էլավ պզտիկ էրթիկը,
Առավ պզտիկ ստակիկը,
Կնաց պզտիկ պազարը,
Բերից պզտիկ հացիկը,
Տվից պզտիկ կընգանը,
Դրից պզտիկ տոլապը,
Կերավ պզտիկ մուկիկը,
Ալ չմնաց հացիգը։

Հժշն

459

Բրի՛նձ, բրի՛նձ, հաղլա բրինձ,
Աղ արա, տամբուլ արա,
Հրեշտականց կարմունջ արա,
Աղլունջ, բաղլունջ,
Ջիֆտա, միֆտա,
Ղարա, քո՛չ։

Ագուլիս
ԱԲՍ 21

460

Էլիմ, էլիմ հոփալա,
Էլտեն չըխտըմ թոփալա
Թոփալանըն եարըսը,
Յումուրթանըն սարըսը,
Էրթանք Դըխենցը (Թուխենցը),
Դըխմանուկենցը (Թուխմանուկենցը)[1]
Գաթան ուտենք, քողիճան վերցնենք։

Սերաստիա
ԲՍԳ

461

Անթրան,
Պատեն թռամ,
Ինգեամ, մեռամ։

Շարուր
ԱՀԹ 92

462

Ավաշան*
Թումուշան*
Գնացինք, պոլորին բերին քյանց մե շան,
Վեա՞վ էր տըսե էդ Թամաշան։

Շարուր
ԱՀԲ 93

463

Նանա՜, նանա՜, ճուրի նանա՜,
Պոլ պոլենջա, պոլ Թուխինջա,
Ընտեղան ասեց, ըստեղան ասեց,
Վեր կաց ղրաղը, դուս եկ ղրաղը։

ՀԺԲԱՆԱ 1

464

Քար պահուկ, պահուկ, պահուկ,
Իմ քարը ղայիմ պահե,
Գաւրինդա դա ծավիտա**։

Թիֆլիս
ԹՄԿԱ 21

465

— Կեմին ինչով կէրթա։
— Ելքենով։
— Ելքենը ինչո՞վ կէրթա։
— Հովով։
— Օ՜շտ, օ՜շտ, օ՜շտ։

Կ. Պոլիս
ԱՀԲ 171

466

— Մաճուն ծախեմ, վո՞վ կուզե։
— Ես չեմ ուզեր, ան կուզե։
— Մաճուն ծախեմ վո՞վ կուզե։
— Կնա կեղտոտ շորերդ վէլա։

Կ. Պոլիս
ԱՀԲ 171

* Անուններ են (Ծ. Բ.)։
** վրաց.—թռա՜վ դնաց (Ծ. Բ.)։

467

— Պուպո՜ւ, քանի՞ հաց ես թխե։
— Ո՜ւթ, ո՜ւթ։
— Դիո՞ր ես դրե։
— Պուռուվ։
— Ի՞նչ ես տրե պերան։
— Խո՜ւփ, խո՜ւփ։
— Վո՞վ ի կնդե։
— Ճուճուն։
— Վո՞վ ի կիրե։
— Կուճուն։
— Դի՞որ ի փախե։
— Տուտո՜ւն։

Վան
Ա.Հ.Զ 8

468

Սխատոր ծեծեմ փաչային՝
էրանիկին հարսնիբին։

Ա.Հ.Թ 171

469

Աղվեսն էկավ վերին թաղեն,
Օո՜ւ, պըճինգոո՜ւ, պըճինգոո՜ւ,
Մածուն կերավ, թափավ վերեն,
Օո՜ւ, պըճինգոո՜ւ, պճինգոո՜ւ։

Վան
Ա.Հ.Զ 57

470

Տոտոլոզ, թաղսե քոլոզ,
Տոտոլոզ, կատվու քոլոզ։

Վան
Ա.Հ.Զ 68

471

Գնացի գոմեր ման էկա,
Նեղ կճուճում եղ գտա,
Բերան բացի զատ չըկա,
Եղի, եղի,
Ձմածեղի,
Ով որ ուտի,
Նա վեքադի։

Թիֆլիս
ՀՄԿԱ 10

472

Էս մի գարի,
Հալալ բարի,
Կաթնաբերթուկ,
Ավանանուխ,
Եվնաշանգս,
Էս մի սալ։

Թիֆլիս
ՀՄԿԱ 11

473

Ատատա, բատատա, շամամշու
Շամշուրակի, բիթամբու,
Բամբուխիար վ. .. թ....

Թիֆլիս
ԹՄԿԱ 23

474

Տը՛պ-վը՛պ չխարակ,
Ես հաստ մանեմ,
Դու՝ պերակ։

Շամախի
ԱՀԲ 95

475

Սըրմի վիլա,
Կուռդ թիլ ա,
Ընկերը հետուկ,
Աչքիդ ծետուկ,
Ընկերիդ ճաթեն կտրես,
Բաբինունց Ջատինի կոլոլ աչքն ուտես։

Ղազախ
ԱՀԲ 94

476

Ջփի՛կ, ջփի՛կ զարն է,
Ալվան ծաղիկն առնե,
Իմ տալը տախտակումն է,
Կանանչ կապան գլխուն է,
Բերանն առած լիղի է,

Բերնես թափածն գինի է.
Գինի՜, գինի՜ լաջերուն,
Վարդ մանուշակ՝ հարսներուն,
Տանձ ու խնձոր՝ աղջկներուն,
Քթոցըմ աղը՝ մանչերուն։

Շիրակ
ԱՀԹ 93

476 ա

Ջըպպի՛կ, ըզպպի՛կ զարն է,
Ալվա՛ն, ալվա՛ն արն է,
Իմ տատը Շուշանն է։
Քնացի վերի պերթը,
Կտալմ խավիծ առա լեղի էր,
Բերնես թափեցի գինի էր,
Վարթ մանուշակ՝ հարսներուն,
Տանծ ու խնծոր՝ աղչկներուն,
Քրոց մատիք՝ մանչերուն,
Կրողը տանի պառվըներուն,
Պապանիշը՝ հարսներուն։

ԳԲՔ 15

477

Ամեկ ուր տուն, լակլակ ուր բուն,
Խաչ գալաղան՝ իմ քեռու տուն,
Ոսկի անդուկ՝ իմ կակոի տուն։

ՀԺԲԱՆԳ 85

478

Ամեկ ուր տուն,
Լակլակ ուր բուն,
Խաչ գալաղան
Իմ քեռու տուն։

Տարոն
Տխ

479

Ծոի բո՛ւն, ծոի բո՛ւն,
Երբ պոի մթնի գնանք տուն,
Գնանք տեսնանք Հարսը քուն,
Կեսուրը կշտին, քոփակ շուն։

Շիրակ
ԱՀՔ 94

480

Ծրնտու բուն,
Կըքավու բուն։
Ծրնտու բուն
Կըքավու բուն,

ՀԺԲԱԽ

481

Ծի՛տ, ծի՛տ, ծտաբուն,
Իփոր մթնի, գնաս տուն, թը՛ռու։

Թիֆլիս
ԹՄԿԱ 25

Գըշտուն, գըշտուն,
Մեչ-մեկ ուր տուն,
Ետաչ գյավառան մեր տուն,
Մուչն ու կատուն ձեր տուն։

Վան
ՎՍՇՍ 27

483

— Սոխ.
— Սըխտոր.
— Կանանչ.
— Կարմիր.
— Գըխտոր։

ՊԲՀ 66

III

ՄԱՆԿԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՈՒ ԽԱՌՆ ԵՐԳԵՐ

484

Ով որ խոսի,
Խոստովանի,
Ջաղացպանի
Գլուխն ուտի։

Թֆլիս
ՀՄԿԱ 12

484 ա

Ով որ ուտի ձվածեղ,
Աննեղ-մեղր ձվածեղ,
Էն չգտնի հ'իրան տեղ,
Պոլոլ-մոլոլ թաց անթեղ,
Թող տապակվի աննեղ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

484 բ

Ով որ խոսի, խոստովանվի,
Ոճիլն ուտի ղըրղըրճալի.
Ով որ խոսի, խոստովանվի,
Ջաղացպանի կոնտին տանի։

ԱՀԺԱ 44

485

Դմբրի, դմբրի դմբրակալի,
Տակիս մի նահալի,
Ջիմ գնացին շան հրսանիք,
Ես մնացի տան բլանիք։

ԱՀԺԱ 42

486

Ըղունգ, ըղունգ ըտի կաց,
Աքաամ, դուն վկա կաց,
Եփոր հարցնեմ, հաղիր կաց։

Ա.Հժ.Ա. 42

487

Մահը մտիս է,
Ահը ճտիս է։

Ա.Հժ.Ա. 42

488

Մուկի՛կ, մուկի՛կ, ա՛յ մուկիկ,
Առ քու էրկաթե աւտամը,
Ինձի՝ իմ օսկուռե աւտամը։

Ա.Հժ.Ա. 42

489

Ծեղ ես՝ ծալվի,
Ծող ես՝ հալվի։

Ա.Հժ.Ա. 42

490

Անա՛ խանում, անա՛ խանում,
Դու ասա՝ խի՞ ես պողերդ հանում։

Ա.Հժ.Ա. 42

491

Թո իմ ախպեր ոտը կոտրի ոչ,
Իմ ոտը կոտրի ոչ, չալ ակռավի ոտը կոտրի։

Ա.Հժ.Ա. 43

492

Ճորի՛, ճորի՛ ճամփորդեմ,
Օխտը եղը կմորթեմ,
Դանակ չունեմ որ մորթեմ։

Ա.Հժ.Ա. 43

493

Ալի՛ր մաղի, ալի՛ր մաղի,
Մաղի՛, մաղի՛,
Ալի՛ր մաղի՛,
Ինձ հետ արի
Ծաղիկ քաղի։

Ա.Հժ.Ա. 43

494

Թիթըռ մադի՛,
Ալուր մադի՛,
Թիթըռ մադի,
Ալուր մադի։

ՀԺԲԱԲ

495

Աղի հաց,
— Պիշտապ կաց,
Քու հար կը գո՝
Վըօռէն կաց։

ՀԺԲԱԲ

496

Խըպլիկ՛, խըպլի՛կ, տիտիկ արա,
Եաքի բանը մըտիկ արա։

Նոր Նախիջևան
ԱՋՏ

497

Թա՛փն արա, հա՛, թա՛փն արա,
Տանձ ու խնձոր գոքս արա։

ԱՀԺԱ 43

498

Սինդրիկ ու սխորիկ,
Հարսն ու աղջիկ կլորիկ։

ԱՀԺԱ 44

499

Ով որ չքա, չիք չքա,
Պատիցը կպչի, պոկ չգա։

ԱՀԺԱ 44

500

Քեռի,
Արի գնանք ղկեռի,
Ջկեռն ուտենք, ղկռի տանք,
Բամբքու ձորին կռիվ տանք,
Որ քացի տամ, այ քեռի,
Քուցափ արա ու մեռի։

ԱՀԺԱ 44

501

Ես ու դուն Հ'նգեր,
Մի թարախ ղկեր
Ես բերեմ դու կեր։
— Էդիկ ո՞վ է,
— Էխլա մովել,
— Էդիկ մալչիկ,
— Թևերի փուլեբս վարչև։

Թիֆլիս
ՀՄԿԱ 10

502

Ախչի՛, դու ոչ ըլես,
Կատվներբի փայ ըլես,
Աղամանին աղ ցանես,
Օխտը խախալ ցավս աննես։

ԱՀԺԱ

503

Անլվա, աման լվա,
Տեր-Պուղուսու
Ծայ ոռ լվա։

ՀԺԲԱՇ 5

504

Ղղտիկ, ըղտիկ,
Շարան կղտիկ,
Մկան ականջ
Կա քե՝ չկա։

ՀԺԲԱՇ 5

505

Ակա՜ն, ակա՜ն, ակն ա ծովին,
Ջալ-չալ աչքեր պախրի կովին,
Իմը ականեմ աղաքս աննեմ,
Հ'նգերնևրինս հետը տանեմ։

ԱՀԺԱ 43

506

Սատանա՛, սատանա՛,
Ոտիդ տակին մի բան կա,
Դուս բի՝ կեսը ինձ,
Դուս բի՝ կեսը քեզ տամ։

ԱՀԴ 43

507

Սատանա՛, սատանա՛,
Մի գազ եմ կորցրել,
Դուս բի՝ կեսը ինձ, կեսը քի։

ԱՀԺԱ 43

508

Սատանա՛, սատանա՛,
Պոչիդ տակը պան մը կա,
Շատը՝ քեզի, քիչը՝ ընծի։

ԱՀՔ 175

509

Ով որ իմ արևս ունի,
Օխտը խախալ ցավս ունի։

ԱՀԺԱ 42

510

Պառա՛վը, պառա՛վը, ձայն արա,
Դունչը դխոցն արա։

ԱՀԺԱ 44

511

Գերան պարոն, գերան պարոն,
Պարոնն ասավ՝ թուր ու թվանքով կտամ, եդ դառ։

ԱՀԺԱ 43

512

Միտը թռչի,
Գորտը կպչի։

ԱՀԺԱ 44

513

Վիլա՛, վիլա՛,
Չ՚ընդևրս գա։

ԱՀԺԱ 44

513 ա

Վիլա՛, վիլա՛,
Ես վիլա,
Վիլա ու առաս Հ՚ելա։

ՀԺԲԱԳ

514

Ձևրա՛, ձևրա՛, սիրուն ձևրա,
Ման ևս գալի հետի ձևրա,
Վերի բաղեն կուտ կտամ,
Ներքի բաղին հուր կտամ։

ԱՀԺԱ 43

515

Կորցննեկ, տղեդ կուլա,
Ճանկիմ չամիշ պես որ չի լա։

ԱՀՋ 103

516

Կորցընընեկ, տղետ կուլա,
Լոշ խաց պերիմ՝ կլր կնա։

ՀԺԲԱՇ 5

517

Սարեն թըռի,
Ծառեն թըռի,
Վախտը որ գո՝
Կավը ծընի։

Ղարադաղ
ՀԺԲԱե

518

Ջհաևգը թըռի,
Մըեր կավը ծընի,
Ջհաևգը թըռի,
Մըեր կավը ծընի...

Ղարադաղ
ՀԺԲԱե

519

Նի՜... նի՜... նի՜...
Բիդի տոն.
Նի՜... նի՜... նի՜...
Բիդի տոն։

Ղարադաղ
Հժաւե

520

Իմը մադի,
Քունը շադի,
Իմը մադի,
Քունը շադի։

Ղարադաղ
Հժբաե

521

Կրակիկ, վար էկու,
Յաթաղ ձգեմ, չեն էկու,
Աս պաներեն վազ էկու։

Կ. Պոլիս
Ազք 175

522

Ներակ ինձ,
Կաթնավ բիրինձ,
Իմ քուր գենցալ ա,
Հըերքըն ինգալ ա ինձ։

Ղարադաղ
Հժբաե

523

Բաղի՜, բաղի՜, բաղ քըցեմ,
Բաղին վեր ընիմ չանի քցեմ,
Ոննը կոտրեմ, վեր քցեմ։
Ջափար տակին թեք քցեմ։

Հժբանա 12 (37)

524

Ամառ ամիրա,
Ձմեռ բև խիրա.
Աշուն ու շուն,
Գարուն ու նիշուն։

Տարոն
Տե

525

Ես աղջիկ եմ,
Շատ դանազան եմ,
Կնշանվեմ՝
Սուլթան ու խան եմ.
Կպսակվեմ՝
Քոռ տրիժան եմ։

Հանելուկ
ՀՀԲ 35

526

Գուլը կասի.
— Ինչքա լեշակ,
Կըխոթես խեշակ.
Տըղա տափաղ,
Վա՜յ լալա, ջանըս։

Դարաբաղ
ՀԺԲԱԵ

527

Ա՛ քի՛շ,
Ա՛ քի՛շ,
Տոն, տոն.
Ա՛ քի՛շ,
Ա՛ քի՛շ,
Տոն, տոն։

Դարաբաղ
ՀԺԲԱԵ

528

Մամո՛ւկ, մամո՛ւկ վո՞ւր կէրթաս,
— Էրուսաղէմ՝ ժամ կէրթամ։

Կ. Պոլիս
ԱՀԲ 175

529

Ափըմբս,
Մափըմբս,
Կիլիկչին
Հափռըմբս....

Ղարադաղ
ՀԺԲԱՆ

530

Խաբարբըզան,
Խաբարբըզան,
Թա խեր ըս՝
Հափռըմբս գուզեր,
Թա շառ ըս՝
Վրոննըդ կոտրեր։

Ղարադաղ
ՀԺԲԱՆ

531

Խափած,
Խիլատած,
Տախտակը,
Վոռնն կապած։

Ղարադաղ
ՀԺԲԱՆ

531 ա

Ավատամ—
Ջնջիլիբադամ,
Քարըս կըտամ,
Վե առ ու փախիր։

Նոր Ջուղա
ՀԺԲԱ

532

Հեքա՛թ, հեքա՛թ պապս,
Նախշուն քոռակը տակս,
Մեծ կամուրջն անցնեմ էրթամ Հնդստան[260],
Ձեռքով բերիմ
Ակ ու մատնեստան։

ԳԱՄ

532 ա

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապըս,
Խաշխա քուրեկը տակըս,
Տաք-տաք գաթան փորս,
Ելլիմ էրթամ Երևան,
Հացըս ուտեմ գերանամ,
Թագա՛, թագա՛ ծերանամ։

Նոր Նախիջևան
ԱԶՏ 100

532 բ

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս,
Ղաշղա քուռիկը տակս,
Քողքով հարսը գավակս,
Բարդով գաթան շալավս,
Մեկ գաթան խածեմ,
Մեկ հարսա պաչեմ։

ԱՔՍ 5

532 գ

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս,
Ղաշխա քյուրեկս տակս,
Էլնեմ էրթամ քաղաքս,
Մեծ հարսս առնեմ շալակս,
Պզտիկ հարսս ալ կռնակս,

Շիշով ոսխին ճեպըս,
Ջամչով սամսան ծոցս,
Մեղրով խաթլաման բերանս,
Էրթամ, էրթամ, հեռանամ,
Հավերն ուտեմ գերանամ։

Դրիմ
ՀԺՀԺ

532 դ

Հեքյա՛թ, հեքյա՛թ պապս ա,
Ղաշղա քուռակ տակս ա,
Հեծնեմ էթամ էրևան,
Էրևանա կուտ բերեմ,
Կուտը տամ հավերին,
Հավերն ինձի ձուձու տան,
Ձուձուն տանեմ դարփինին,
Դարփինն ինձի շղփինկ տա,
Շղփինկ տանեմ հարսներին,
Հարսներն ինձի գաթա տան,
Գաթին տանեմ չոբանին,
Ջոբանն ինձի գառն տա,
Գառը տանեմ Աստրծուն,
Աստված ինձ մի աղբեր տա։
Աղբե՛ր, աղբե՛ր, ջա՛ն աղբեր,
Դու բերդի գլխին աղբեր,
Ես բերդի տակին աղբեր,
Ջա՛լ, չա՛լ կովերն ի՞նչ էլան.
Նախրատափին գում էլան..
Մերա՛, մերա՛, դիշերն արի կաթ կթի,
Կաթը դրի կրակին,
Ման էկա չալ տորակին,
Այ չալըմ աղբերակին,
Դու իմ աղբորն ի՞նչ արիր,
Քե դնեմ իշի քուռակին։

Արարատ
ԱՀԹ 89

532 ե

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս,
Ղաշղո քուռակ տակս,
Հեծնեմ էրթամ Երևան,
Գինին խմեմ գերանամ,
Հավերուս չալթուկ բերեմ,
Հավերս ինձի հավկիթ ածեն,
Հավկիթը տանեմ դարբնին տամ,
Դարբինը ինձի տանակ տա,
Տանակը տանեմ չոբնին տամ,
Չոբանն ինձի գառ տա,
Գառը տանեմ աստծուն տամ,
Աստված ինձի աղբեր տա։
Աղբե՛ր, աղբե՛ր, ջան աղբեր,
Դու վերի բերդը աղբեր,
Դուն վարի բերդը աղբեր,
Ես շաքար մաղեմ,
Դու կեր աղբեր։

կամ թե ասում են՝

Աստված ինձի ցորեն տա,
Ցորենը տանեմ ջաղցին տամ,
Ջաղացը ինձի ալյուր տա,
Ալյուրը տանեմ ջրին տամ,
Ջուրը ինձի խմոր տա,
Խմորը տանեմ թնրին տամ,
Թնդիրն ինձի հաց տա,
Հաց տանեմ բոշին տամ,
Բոշան ինձի ձուք տա,
Ձուքը տանեմ մորս տամ,
Մ'երս ինձի ծիծիկ տա,
Ուտե՛մ, ուտե՛մ, կշտանամ։

ՀԺԲԱՆԳ 2

532 գ

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս,
Ղաշղա քուռակ տակս,
Հեծնեմ, էրթամ էրևան,
Գինի խմեմ գիրանամ,

Հավերին կուտ ու ջուր տամ,
Հավկիթը տանեմ խառատին տամ,
Խառատն ինձի շվի տա,
Շվին տանեմ չոբնին տամ,
Ջոբանն ինձի գառ տա,
Գառը տանեմ աստծուն տամ,
Աստուած ինձի աղբեր տա.
Աղբե՛ր, աղբե՛ր, ջա՛ն աղբեր,
Դու բերդի պատին աղբեր,
Ես բերդի տակին աղբեր,
Շաքար մաղեմ, կեր աղբեր։

Շիրակ
Ա.ՀՔ 89

532 է

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս է,
Աշնան քուռակ տակս է,
Հնծա գացի Յէրևան,
Գինի խմի գիրացա,
Հաղող կերա զորացա,
Էշն հնծա, ջուրն հ՚ընցա,
Էշ տառեց, ես վախեցա։

Մուշ
ՀԱԱ

532 բ

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս է,
Ղաշղա քուռակ տակս է,
Հնծա գնացի էրևան
էրևնու չալտուկ բերի,
Չալտուկը տամ հավերիս,
Հավերս հավկիթ ածեն,
Հավկիթը տամ չարչուն,
Չարչին ընձի դանակ տա,
Դանակը տամ չոբնին,
Ջոբանը ինձ գառ տա,
Գառը տամ աստծուն,

Աստվածն ինձի աղբեր տա,
Աղբե՛ր, աղբե՛ր, ջա՛ն աղբեր
Շաբար շաղվիմ, կեր աղբեր։

Մուշ
ՀԱՒ

532 բ

Հեքիա՛թ, հեքիա՛թ էս պապս,
Դաշղան քուռակ էս տակս,
Գնացի Շուլավեր,
Տեսա մի հլիվեր,
Մտա մի ճաղաց,
Միջին մի կտաղաց,
Մի հաց ուներ մկան կերած,
Մի հարսն ուներ թուների էրած,
Լինդը քաշեց կոճերն աղաց։

Դաղախ
ԱՀԲ 91

532 ժ

Հեքիա՛թ, հեքիա՛թ էս պապս,
Դաշղա քուռակը տակս,
Ձիզի հարսը քամակս,
Ջալ կրկենին աղաքս,
Ջափ դնեմ չկել Շուլավեր,
Ընդի տեհա մի ջաղաց,
Տակին կար մի կտաղած,
Լինդը վեկալավ կոճերս աղաց,
Թուրը վեկալավ մեջքս խաղաց,
էլ պարկով, ասաց, չդաս էս ջաղաց։
Ջաղացի գլխին օխտը բուն,
Օխտը բնին մի բմբուլ,
Բմբո՛ւլ, բմբո՛ւլ, դուրը բաց,
Սոսին էկավ գլխաբաց.
Մեր հավը ուներ կեռ կտուց,
Ի՞նչ ուտեր՝ վիմ ձուի դեղնուց
Սոսին գնաց մի օր հունձ,
Բերուց մի լավ ծաղկեփունջ։

ԱՀԺՍ 45

532 ժա

Խեքյա՛թ-խեքյա՛թ պապըս ի,
Փայխի քուռակ տակըս ի,
Ջրվնի վիրվին քամակըս ի,
Տաշտի միչին փորըս ի.
Քուռակ սար կը սըլվըլա,
Պապիկ վըրեն վըլվըլա։

ՀԺԲԱԲ 11

532 ժբ

Հէքիա՛թ, հէքիա՛թ բաբս,
Խաշխա քիրէք դագս,
Դաք-դաք գաթան փորս,
Էլլիմ էրթամ Յերեվան,
Հացս ուտիմ կերանամ,
Թակա, կուգա ձերանամ։

Դոնի Ռոստով
ՀԺԲԱՍՎ

532 ժգ

Հէքիա՛թ, հէքիա՛թ բաբս,
Խաշխա քիրէքը դագս,
Էլլեմ էրթամ էրէվան,
Ջաքա-չուքա գէրէվամ,
Հավս ուտիմ գշտանամ։

Դոնի Ռոստով
ՀԺԲԱՍՎ

532 ժդ

Հէքիա՛թ... հավերուս կուտ տամ,
Կուտը տանիմ պոշին տամ,
Պոշեն ինձի իլուն տա,
Իլուն տանեմ մամիս տամ,
Մամս ինձի ծիծիկ տա,
Ախպարս էլլե տոճիկ տա։

ԳՔՔ 15

532 ժե

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս,
Դաշխա քուսիկը տակս,
Ըրընաիկ հարսը գավակս,
Պարկով գաթան շալակս,
Մեմ հարսը պաքնեմ,
Մեմ գաթան խածեմ,
Հեծնեմ էրթամ Երևան,
Գինի խմեմ կիրանամ։

ԳԲՔ 15

532 ժզ

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս,
Խաշխա քյուրեկը տակս,
էչնիմ, էրթամ էրևան,
Հավս ուտիմ, գերանամ,
Գինին խմիմ, կշտանամ
Նորեն եդ գամ Նախշվան։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 130

532 ժէ

Հեքիա՛թ, հեքիա՛թ պապս,
Խաշխա քուռակը տակս,
Տաք, տաք գաթան փորս,
էլլիմ, էշթամ Երևան,
Հացս ուտիմ գերանամ,
Թաքա, թաքա ծերանամ։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 130

532 ժը

Հեքիա՛թ, հեքիա՛թ
Էս պապս,
Շաշղա քուռակ
Էս տակս,
Հեծնեմ գնամ Ըրևան
Գինի խմեմ զորանամ։

Կիրովական
ՀԺԲԱՍ

532 ժր

Խերիա՛ր, խերիա՛ր
Իմ պապս,
Քյահվան քուռակը տակս,
Խնծեմ, էթամ Հերևան,
Էրաղ խմեմ դորանամ։

Ալաշկերտ
ՀԹԲԱԳ

533

Նաղըլ-նաղըլ պապըս ի,
Ղաշղա քուռակ տակըս ի,
Խահնեմ ըլեմ՝ փահվլևան,
Խեղնեմ եթամ Երևան,
Երևանա ի՞նչ առնեմ,
Պնդուկ, շիր, չամիչ առնեմ,
Պերեմ ծեզի պաժինեմ .
Բալքի խոքիս ազատեմ։

ՀԹԲԱԳ 11

534

Ջոնգուր, չոնգուր
Դուն հաստ մանիս, իս բարակ,
Փուշը տվի լոշը առա,
Լոշը տվի օխշարն առա,
Օխշար տվի, չոնգուրն առա,
Ցնգլի՛, ցնգլի՛,
Իս հաստ մանեմ, դուն բարակ։

Թիֆլիս
ԹՄԿՄ 33

535

Էքուց կիրագի է,
Կոկոն քաղելու է,
Կոկոն քաղեմ դեղին տամ,
Դեղին ինձ մի բլիթ տա,
Բլիթ տանեմ չոբան տամ,
Ջոբան ինձ մի գառը տա,
Գառը տանիմ աստուձ տամ,

Աստուձ ինձ մի աղբեր տա,
Աղբե՛ր, աղբե՛ր, իս քու շուն,
Գոտկի ծերին աբրեշում,
Աբրեշում չըլի, կապ ըլի,
Սուփրի ծերին սաղ ըլի,
Հավերուն հալվա կու տանի,
Վուտով կու տանի, շուտ կու տանի։

Թիֆլիս
ԹՄԿԱ 27

536

Ասօր կիրակի է, կոկամ քաղելու է,
Կոկամ տանիմ տերտերին տամ,
Տերտերն ինձի նշխարք տա,
Նշխարք տանիմ չոպանին տամ,
Չոպանն ինձի ոչխար տա,
Ոչխարը տանիմ աստծուն տամ,
Աստված ինձի աղբար տա.
— Աղբա՛ր, աղբա՛ր, ո՞ւր կէրթաս։
— Ան աղջկա տուն կէրթամ։
— Ան աղջիկը ի՞նչ ունի։
— Ճընկը՛լ-մընկը՛լ օղեր ունի։
— Ես ալ հավերուն հալվա կուտամ,
— Բաղերուն բակլա կուտամ,
Լուսինկայինն բարև կուտամ։

Հժշքն

537

Էս օր ի՞նչ է, կիրակի է,
Կիրակոսը թոռն է,
Բռնեցի փերչեմն ածիլեցի,
Ընծի բարա մի տվավ,
Բարան տարի Աբասին տվի.
Աբասն ընծի ցորեն տվավ.
Ցորենը տարի ջաղցին տվի.
Ջաղացն ընծի ալիր տվավ.
Ալիրը տարի դաշտնին տվի,
Դաշտնը ընծի խմոր տվավ։
Խմորը տարի թոյրին տվի,

Թանիրը ընծի պլիկ տվավ,
Պլիկը տարի նենուն տվի,
Նենուն ընծի կակաղ տվավ,
Կակաղը տարի տատուն տվի,
Տատան ընծի մանած բան մը տվավ։

ԲՆԲ 2

538

Վաղը կիրակի է,
Քիթդ ըրաթի է,
Պերանդ խայմախ է,
Շունը քեղի ապլա է։

ԱՀՔ 175

539

Ջա՜ն, ջա՜ն, կիրագի,
Վա՜յ, էրկուշաբթի,
Դեդի ջան փուրս ցավում է,
Ջիմ դնա աշակիրտ։

Թիֆլիս
ԹՄԿԱ 26

540

Բատյա՛, բատյա՛, ջա՛ն բատյա,
Ջալթուգ փոնեմ չորանա,
Տամ հավերես զուրանան,
Հավերը ինձ մի ձու տան,
Ձուն տանեմ պառավին տամ,
Պառավն ինձ մին քաթա տա,
Քաթան տանեմ հարսիկին տամ,
Հարսիկը ինձ մի շվի տա,
Շվին տանեմ չոբանին տամ,
Չոբանն ինձ մի ոչխար տա,
Ոչխարը տանեմ աստծուն տամ,
Աստուծը ինձ ախպեր տա,
Ախպե՛ր, ախպե՛ր, ջա՛ն ախպեր,
Խաչը կռանդ, ա՛յ ախպեր,
Ճորին տռանդ, ա՛յ ախպեր,
Վերին ղոլին տուն շինի,
Ներքև ղոլին տուն շինի,

Հարսնու աղջիկ նի բրա,
Հու վեր փեսա տեն բրա,
Հու վեր լավ ա հոլ բրա,
Ըն էլ տու քնզ Հարսնը բրա։

ՀԺԲԱՆԱ 1

541

Զրը՛նգ, զրը՛նգ, զանգյուլա,
Զանգյուլան քիթիս կպավ,
Քիթիկիկս առնուից,
Առունը տարի տափին տուրավ,
Տափը ինձի խոտ տուրավ,
Խոտը տուրի օխշարին,
Օխշարը ինձ դումակ տուրավ,
Դումակը տուրի պառավին,
Պառավը ինձ պիլիվ տուրավ,
Պիլիվը տարի տերտերին,
Տերտերը ինձ մին թուղթ տուրավ,
Թուղթը տուրի աստոծին,
Ինձ մին ախպեր տուրավ,
Ախպե՛ր, ախպե՛ր, ջա՛ն ախպեր,
Օսկի շալակիդ մեռնեմ.
Հոթոդ դուխան մանիցի,
Մամուտ չուխան կեցարի։

ՀԺԲԱՆԱ 1

542

Ջա՛, չա՛, չալթուկ չա՛,
Չալթուկ փռեմ չորանա,
Տամ հավերին կուրանա,
Հավերն ինձի ձուձու տան,
Ձուձուն տանեմ դարբինին,
Դարբինն ինձի շղփինկ տա,
Շղփինկ տանեմ հարսին,
Հարսն ինձի գաթա տա,
Գաթեն տանեմ չոբանին,
Չոբանն ինձի գառ տա,
Գառը տանեմ աստծուն,
Աստված ինձի աղբեր տա,
Աղբե՛ր, աղբե՛ր, ջա՛ն աղբեր,

Ջանս քե դուրբան, աղբե՛ր,
Դու բերդի դլխին, աղբե՛ր,
Ես բերդի տակին, աղբե՛ր,
Բերդը պլուցին, աղբե՛ր,
Գինին թափուցին, աղբե՛ր։

Երկան
ԱՀՔ 90

543

Ջիդ-ձիդ, ձիավոր,
Ջիդ վածծուր պարոնին տուռը,
Պարոնը փեդ տաշէ կա,
Խաթունն հավկիթ խաշէ կա։
Խաթունը հավկիթ տվավ,
Հավկիթը չօբանին տվի։
Չօբանը գառ մը տվավ,
Գառը ասծուծու տվի։
Աստված ինձի ախպեր տվավ.
Ախպե՛ր, ախպե՛ր, ջա՛ն ախպեր,
Ղոլլարը մերչեն, ախպեր։

ՄԱԱ

544

Կո՛ւ, կո՛ւ, կո՛ւ, կուրմանջի,
Աղբեր դարաճանճի,
Ճանճա մանուկ դռանն էր,
Աղբերը քու կռանն էր,
Ջամիչ դուռը չոր աներ,
Հասեր տունը ղըժժաններ.
Ջամիչ տվի հավերուն,
Հավերը ընձի հավկիթ տվին,
Հավկիթը տարա չոպանին,
Չոպան ինձի գառ տվեց,
Գառը տարա աստրծուն,
Աստված ընձի աղբեր տվեց,
Աղբերս բերդի գլխին,
Աղբեր, ես բերդի տակին։

Ալաշկերտ
ԷԱԺՋ 96

545

Հա՛վ, հա՛վ, հավկիթի տուր,
Տանիմ տամ բալնբին,
Բալնիք մարգի դուռ բանա,
Մարագ հարդ տա,
Հարդը տանեմ տամ կովուն,
Կովը կաթ տա,
Կաթը տանիմ տամ պատվուն,
Պատավ իմ պոչ տա,
Պատա՛վ, պատա՛վ, իմ պոչ տու,
Կցեմ կցմցեմ, էրթամ հասնեմ
Իմ շատ ու քիչ ընկերոջ,
Ջրսին՝ կանաչ-մանաչ ուստի՞ց պիքաս։

ՀԾԲԱՆԴ 3

546

Աղպե՛ր, աղպե՛ր, ես քեզ շուն,
Դռակիդ ծերևրն աբրշում,
Աբրշում չըլնի՝ յաղ ըլնի,
Սուփրի ծերին առնող ըլնի։

ՀԾԲԱՆԲ

547

Աղբե՛ր, աղբե՛ր, ես քու շուն,
Ի՞նչ էս բարձև քու իշուն
— Խունկն ու հինեն ապրշում.
— Դո՞ր կտանես՝ դզեզին,
— Դզեզ եաև սարերուն,
Արջկան կմանա արբերուն,
Ճախրակ կմանա արջներուն,
Բուճ կգործա թաթերուն։

Ալաշկերտ
ԷԱԺԶ 69

548

Աղբե՛ր, աղբե՛ր, ես քեզ շուն,
Ի՞նչ ես բարձև վըր իշուն.
— Խունկ ու հինեն, արպըշում.
— Վի՞ր կտանիս.
— Տզեզին.

— Տղեզ հահւ սարերուն,
Բուրդ կգզա գելերուն,
— Արջկան մանա հավքերուն,
— Շըլվար գործա ճրժերուն։

ԱՀԲ

549

Ախպե՛ր, ախպե՛ր, ջա՛ն ախպեր,
Մեջկդ գոլըստան ախպեր.
Կապա կարեմ կառճ գուբա,
Դուգմա շարեմ խաչ գուբա,
Կարմիր կովանդ ինչ արիր,
Ծառի տակը գում արիր։
Շերեփ-շերեփ կթեցինք,
Գդալ-գդալ բաժնեցինք.
Հոռոմն ասավ՝ ինձի տուր.
Կաքավն ասավ՝ ինձի տուր.
Ո՛չ Հոռոմին, ո՛չ կաքավին.
Չ'ամմեն ծառին մի փշատ,
Իմ ախպրտանց ումբրը շատ։

Ջահարմահալ
ՋՀԲԲ 7

550

Ախպերս շահի դուռը չոգած էր,
Ջոգուռը դոշին քոքած էր,
Փողը ծնգին կիտած էր.
Հայըն էկավ, բարով տվեց,
Դուշմանն էկավ, քարով տվեց,
Նասրան էկավ, կոպլով տվեց։

Ջահարմահալ
ՋՀԲԲ 7

551

Տիկի՛ն, տիկի՛ն, տիկնակոթ,
Տիկինը գնաց բանջարի,
Բանջար չհլավ խոտ իլավ,
Խոտի տակին ծիտ իլավ,
Ծտի տակին ձու իլավ։

Իմ քրոին փայտ կոտրեց,
Քռակինս ձու խաշեց,
Եկա ին մինն առնեմ,
Շերեփը գլխիս քաշեց։

ԱՔԱ 5

552

Ջմփի՛կ, ջմփի՛կ, զարինա,
Իզդա շուշան զարին ա,
Նանեն գնաց աղցանի,
Աղցան չկալավ խոտ կալավ,
Խոտի տակին ծիտ էլավ,
Ծիտը թռավ գերանին,
Կանանչ խոտը բերանին.
Առավ բերան լեղի էր,
Թափեց գետին գինի էր.
Գինի-գինի գինատան,
Ախպեր ունեմ Շահստան,
Մանրիկ հըլնի շարող ա,
Թավտա շապիկ կարող ա,
Բի՛լ ա, բիլբո՛ւլ ա,
Տավարճյուղ ա, ճնճուղ ա,
Թռնեմ է՞, թը՛ըռռու։

ՀԺԲԱԳ

553

Քեցե բենճարու՝ բենճար չըկար, խոտ կար,
Խոտեն տակեն մեծ ծետ կար,
Իմ դայի տախտակ քաշար,
Իմ քռակեն ձու խաշար,
Ըսեցի թա մինը հոր օնեմ,
Ջամչիզը ինձ վրա քաշեց,
Քեզ մատաղ քռակեն,
Քացի կը տամ ղըխրաննեմն,
Թա իմ դայու հավան չըս,
Քինա տերին տերանեն,
Օղդ քցի պռանեն։

ՀԺԲԱՆԱ 35

Հուսին գնաց բանջարի,
Բանջար չկար, խոտ կար,
Խոտի տակին ծիտ կար,
Ծիտը թռավ գերանին,
Կանաչ խոտը բերանին,
Մեռնեմ աստծու դիվանին։

ՀԺԲԱՍ

554

Դո՛ւզ, դո՛ւզ, դո՛ւզ մանի,
Դուզս նահալ բինջարի,
Բինջար չինել, խուտ այնել,
Խուտին տակին ղուշ այնել,
Քարավ ըմ տվել՝ վեր չի ընգել,
Ճուճու ըմ կանչալ՝ դուրս չի ընգել,
Մոյն հայր ունիմ մելիքյ այ,
Ասկայ դանակ էլիկյ այ,
Ալ չի մատիլ՝ հերիքյ այ։

Ագուլիս
ԱԲՍ

555

Տուտի՛, տուտի՛, տո՛ւտ մանի
Տուտին նահալ պինջարի,
Պինջար չի էլալ՝ խուտ էլալ,
Խուտի տակին ծետ էլալ,
Քարավ ըմ տվալ՝ վեր չի գնալ,
Մուն հեր օնիմ՝ մելիք այ,
Էլ չը պետըմ՝ հերիք այ։

Ագուլիս
ԱԲՍ

556

Զալթուկ տըփեմ չորանա,
Տամ խավն ուտի՝ կըլավնա,
Խավիկը ծի ճուճու մը տա,
Տանեմ դնեմ խաչկանց տուն,
Խա՝ ավետրան վեր գլխուն,
Մեռնեմ իմ պուպուշ էծան,
Ուլ մի բերե չանց կատուն։

Ախբե՛ր, ախբե՛ր ջան, ախբե՛ր,
Ջանիկս բե կուրպան, ախբեր,
Ի՞նչ ես բարձեր քյո իշուն.
— Խունկ ու խինեն արփըշուն.
Վի՞ր կտանես։
— Տըպիզուն.
— Տղեզը փախե սարերուն։
Մեռնեմ իմ պուպուշ էծուն,
Ուվ մի բերե չանց կատուն։
— Կուկլուկուկո՛ւ, սանամե՛ր,
Մե խավըմ կեր տիո՞ր գնաց.
— Ծարավ ախպուր կուլ գնաց։
— Ի՞նչ կեր կտուց.
— Ջիր ու չամիչ։
— Վի՞ր կտաներ.
— Խարս ու փեսին։
— Խարս դի՞որ ի նստե.
— Վեր օսկի թաղթին.
— Խարսն ի՞նչ ի իփե.
— Կուրկոտ.
— Մեջն ի՞նչ ի թալե.
— Շան լակոտ.
— Վո՞վ ի կիրե.
— Ջաչալ Ակոբ.
— Վո՞վ ի տրուրե.
— Աղա սոլթան.
— Տիո՞ր ի դրե.
— Ոսկի պատխան.
— Վո՞վ ի կիրե.
— Ջաչալ Ակոբ.
— Վո՞վ ի տրուրե.
— Աղա սոլթան.
— Տիո՞ր ի դրե.
— Ոսկի պատխան.
— Վո՞վ ի կիրե.
— Կարա փըշիկ.
Վա՜յ, կարափըշիկ, վա՜յ, կարափըշիկ,
Քյո մերն ուտի քյո թըշիկ։

Վան
ՊՎՍ 120—121

557

— Անոն մեռնի, ի՞նչ կլինի,
— Փլավի կղը քիչ չըլի։

Թիֆլիս
ՀՄԿԱ. 16

558

Ա՛յ Թալիկո, Թալիկո՛,
Մուրաբի գող Թալիկո։

Թիֆլիս
ՀՄԿԱ. 16

559

Աքլո-մաքլո,
Աճիկ-մաճիկ,
էփեմ չաշիկ,
Ուտե խաշիկ։

ԱՔԱ. 5

560

Պրվա՛, պրվա՛,
Դիփ լավ ա,
Շիլի փլավ ա։

Թիֆլիս
ՀՄԿԱ. 12

561

Տիկրի՛, տիկո՛, նաղարա՛,
Աղջի վեկաց հաղ արա,
Խմոր կտամ հաց արա,
Քաչալ գլուխդ բաց արա։

Թիֆլիս
ՀՄԿԱ. 13

562

Գիգոլ, Գիգոլ,
Գլխի գլոր,
Հավի ճակատ,
Ուխտի կտոր։

Թիֆլիս
ՀՄԿԱ 16

563

Ջարի՛, ջարի՛,
Մածունը մարի,
Ակոն կուտե,
Ջոր գարի։

ՀԺԲվ 34

564

Կարապետ,
Կարմիր վարպետ,
Շան վարդապետ,
Իշու կարպետ։

ԱՀՔ 93

564 ա

Կարապետ,
Կարմրապետ,
Շան վարժապետ,
Իշու վարպետ։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

565

Մկրտիչ, կոտրած կթիչ,
Ջարի ջաֆան, գինլու թափան,
Սև չուրթան, սիպտակ քաթան։

ՀԺԲԱՆԱ 12 (37)

566

Գևի՛, գևի՛, գև քցեմ,
Ոտնած փռնիմ,
Դեն քցեմ։

ՀԺԲԱՆԱ 12 (37)

567

Բալը բանչի, մեր բաբան տան չի,
Ջենմ տամ գնամ չի,
Որ կնամ ա,
Էլ քինում չի։

ՀԺԲԱՆԱ

568

Վանե՛ս, Վանե՛ս,
Հա՛վ, հա՛վ, անես,
Ջափարին տակին ճուտ հանես,
Մինը կոխեմ,
Վա՛յ, վա՛յ կանես։

ՀԺԲԱՆԱ 11 (35)

569

Կարապետ, կարմիր կարպետ,
Արի ծնծիմ՝ գնա վարպետ։

ԱԶՏ 7

570

— Տիգրան.
— Ամե.
— Շաքար ծամե.
Կը՛ութ, կըռ՛թ անե.
— Տու ո՛ւլ ես, թե՛ գյառ.
— Ուլ (կամ գառ)։

Վան
ԱԽՋ 8

571

— Լևոն.
— Համմե.
— Շաքար ծամմե.
— Ինձ ա կուտա՞ս.
— Կուտամ (կամ՝ չեմ տա)։

Ախալքալաք
ԺԽՋԲ

572

Սբհակ,
Մբհակ,
Կաղնեն բութիլ,
Թանաւ ճաշ։

Ղարադաղ
ՀԺԲԱՆ

573

Ակլի (Հակոբ) կաքավ,
Վեւրդի՝ տափար,
Փետուվ զարկեմ,
Փիտուր թափար։

Շարուր
ԱՀՓ 92

574

Ասվատո՛ւր, Ասվատո՛ւր,
Բարձր պատեմ աթլա տուր,
Մածունը կեր՝ Թորպան տուր,
Սև շունին բարև տուր։

Ղրիմ
ՀԺՀՆ

575

Անդրեա՛ս, անտեր մնաս,
Ուրտեղ գնաս, անտեղ մնաս։

Ղրիմ
ՀԺՀՆ

576

Մարտիրո՛ս, մարտի խոռոզ,
Տանեն քեզի խուճռլոզ։

Ղրիմ
ՀԺՀՆ

577

Օվանե՛ս, Օվան կալես,
Տուգուք չալես,
Կաթը հարես, եղը՝ չալես։

Ղրիմ
ՀԺՀՆ

578

Ընթերցվածս առակաց,
Եվ գիշերին դուռը բաց,
Փախչավան կևր, պոչին խած։

Ղրիմ
ՀԺՀՆ

578 ա

Հովհաննես,
Հովկապանես,
Հեծի աղվես,
Գնա Թարվես,
Մորթե կատուն,
Կիր ճրագուն,
Հեծի լուն,
Արի տուն։

ՀԱԱ

578 բ

Հովհաննես,
Շուտ հաննես,
Շատ հաննես,
Դուս թալես,
Գամ բռնեմ,
Վա՛յ աննես։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

579

Մայիս ա՛, մայիս ա՛,
Գալոխ կնիկը գալիս ա։

Թիֆլիս
ՀՄԿԱ 12

580

Մաշինա՛, մաշինա՛,
*Խփեմ սանն բաշնա**։

Թիֆլիս
ՀՄԿԱ 12

581

Պուզո՛, պուզո՛,
Մարտիրոս զո,
Իծի պուզո։

ՀՄԿԱ 12

* *Բրջ.—քո գլխին (Ծ. Բ.)։*

582

Հովհաննես,
Ամպի ակին ճաներ հաննես,
Գամ տրորեմ,
Վո՜ւյ, վո՜ւյ աննես,
Սարի ակին ճաներ հաննես,
Ա՜յ հաննես, վա՜յ հաննես։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

582 ա

Ասեմ, չասեմ,
Լավ բան ասեմ,
Քթիդ խփեմ,
Քեզի խաւիեմ։

ՀԺԲԱԳ

583

Բան ասեմ,
Բամբակ ասեմ,
Քնթիդ խփեմ,
Ջանդակ ասեմ։

Թիֆլիս
ՀՄԿԱ. 9

584

Բարով ուսաս, գամարջոբա,
Կուդա իդհոշ, սայթիկենա։

Թիֆլիս
ՀՄԿԱ. 9

585

Մա՛րշ, մա՛րշ, գեներալ, մա՛րշ,
Ռա՛պ, գվա՛, տրի՛, ափիցերի մարշ։

Թիֆլիս
ՀՄԿԱ. 12

586

Խոգևոց խանգերոց,
Քյառասուն շուն, կես նախշուն,
Բալայք կատուն ճլպլատուն,
Գյորգ ճրագուն
Խալի էրթա, թշնամու խոդյուն։

Վան
ՎՍՇԱ. 22

587

Եղ մի ունիմ Քոլո,
Հոտաղ մի կրոնիմ՝
Ուր անունն ա Ջոլո,
Գամփռ շուն մի ունիմ.
Անունն ա Խոլո։

ՀԱՅԱՆԴ 86

588

Հայր մեր, որ երկինք վկա,
Կերա թթու՝ փքա,
Ընկա ջուր՝ սկա,
Էլա տուս՝ լկա։

Տարոն
Տխ

589

Ելա էրդիկ, վե՛ր-վե՛ր ընկա,
Խաչքը կոտրավ, ես նես ընկա,
Գլորեցա, թնդիր ընկա,
Օխտը պուտուկ տոլմա կերա,
Էլի ըսի՝ չկշտացա։

Շիրակ
ԱՀՔ 93

590

Սարի սարի կսրվրա,
Պապիկ վերեն կկրվրա.
Շրտե շրիտ պարկս ա,
Ջաշտան քուռակ տակս ա։
Իրիկուն՝ ծաղրս ա,
Առավտուն՝ լացս ա.
Սարը սարին կսրվրա,
Պապիկն վերեն կկրվրա։
Խավիծ, խավլավիծ,
Պապիկն ուտի ինի ոտից։
Բաս թթուի թան,
Պապիկն ուտի էրթա գյուման,
Թա՛ն, թանանա՛,
Պապիկն ուտի, զվարթանա՛։

Վան
ՎՍՇԱ 23

591

Քոակին,
Քաուին տվել դմակին,
Ասկին շարալ ճկատին,
Ջմփրցահալ շվաքին.
Դու միր էգուն գուղն ըս,
Պժավագին[1] յուղն ըս,
Դու էմ քեռուն հուվան չիս,
Իկյ մեր էշին քուռակին։

Ադուլիս
ԱԲՍ

592

Ջը՞նկ, չը՞նկ ու չարխանա՞,
Քո պապ բոնի պարխանա,
Պարխանի բեռներ բինուկ
Քու մամու ձեռներն հինուկ։
Մտա ախոռ, գտա գեղի բղիկ,
Ջարկի գետին, կոտրեցի,
Կանթեն ի վարոց էձգեցի,
Արախչի ջան, արախչի,
Դրեցի ու գացի։

Տարոն
ՏԽ

593

Ա՛յ, հաբյարի, հաբյարի՛,
Սընտըլի մանի շաբյարի,
Փետե, փետե մարդիկը,
Ըրկաթի կնանիքը,
Ջառ մանիշակ բղջկերը,
Աղբի կուտուր պառավնի։

Ղարաբաղ
ՄՀ 62

594

Փաշա՛, փաշա՛, փըշտըցնեմ,
Մեն ճոթ հացավ քշտըցնեմ,
Գինի տամ լակիս,
Քացի տամ սըտակիս։

ՀԺԲԱՆԱ

595

Տուտուն էկավ մեր տունը,
Բռնին կապին մեր սունը,
Ա՜խ ախ տուտո՜ւլ, տո՜ւլ, տուտո՜ւլ,
Վա՜խ ախ տուտո՜ւլ, տո՜ւլ, տուտո՜ւլ.
Ընչի՞ էկար մեր տունը,
Բռնին կապին մեր սունը,
Քըսքըս տվին սև շունը։

ԺԽԲ

596

Իմ մամ կերի խավոծել,
Ջիս է բերի օսկեծել.
Քու մամ կերի ձվածեղ,
Քըղի բերի քոռ ընծեղ.
Իմ՝ կերի գարնցան,
Ջիս է բերի ի հնձան.
Քու մամ կերի թթու թան,
Քըղի բերի վթվթան։

ԱՀՋ 71

597

Ակլա մարեմ,
Ակլա մարեմ,
Բակլա ցանեմ,
Ձեր հարսի սոլը կարեմ,
Ջամիչ տվեք ատամներս շարեմ,
Պոպոք տվեք փորս լարեմ,
Աղանձ տվեք թորբես թալեմ,
Ուտե՜մ, խմե՜մ, քե՜ֆ անեմ։

ՀԺԲԱՆԳ 38

598

Խազար պարով, մեր խելքով խարս,
Ինը խենդինք էլայնք տաս,
Խազար պարով մեր փեսեն,
Մեյ ոտ կարճ, մեյ երկեն։
Փեսեն ասաց աներոջ.
— Ես խավան չեմ քյո քյուրոջ,
Առճև քթին ի փուղոց,
Եղընգներն ի քյանց սղոց։

Վան
ՎՍՇԱ 26

599

Տը՛ղ-վը՛ղ, բենբակ,
Աբրաշումի պանդյակ,
Պառավը քինաց քթոցը,
Ճանճը կծեց կտոցը։

ՀԺԲԱՆԱ. 34

600

Անոթի իս, փափա կև,
էշ կը մորթեն, էշ կև,
Կոլոտ մուխսու ո.. կև։

Վան
ՀԺԲԱՇ 5

601

Թա՛ն, թթու թա՛ն,
Պապեն ուտի էթա գութան.
Խավիծ, խավլավիծ,
Պապեն ուտի, ընկնի ոտից։

ՀԺԲԱՆԳ

602

Ջանա՛մ, ղղջանա՛մ,
Ձիր ճուտը գողանամ,
Թեփուեմ, լվանամ,
Օտիմ քուշտանամ,
Վազ տամ, նըղանամ,
Նստեմ տինջանամ։

ՀԺԲԱՆԱ. 1

603

Քշո՛ւ, քշո՛ւ, ջուջուն է,
Խիղնա ամիրեն քեռին է,
Սամուր քըռքով պապեն է,
Քաղքի մուտուռ Աբոն է,
Խոջա խաթուն ջոջ նանեն,
Պղտիկ խանում քու նանեն,
Սանդ կծեծեմ բեղար-բեղար,
Էրիկ մը ունիմ չունի դիտար,
Ձեն էլ կուտամ չար դրողին,
Առնեմ զձագուկս դընեմ չուչին,

Թորկիմ կէրթամ հետ սիրողին.
Սիրող կայներ բաղչի պատին,
Վարդ ուհան զարկեր գոտին։

ԱՔԱ 1

604

Կուկուլիկո՜ւ,
Կուկլիմ ծեր տուն,
Ես խարսն առնեմ,
Փախնեմ մեր տուն,
Ըսկուն պայեմ,
Մեն զա ծեր տուն։

Վան
ՀԺԲԱՇ 5

605

— Կուկուլուկուկո՜ւ, սանամեր,
Մե խավըմ կեր դո՞ր կընաց.
— Մարաւ աղբուր ջուր կընաց։

ԱՀԺԲ 103

606

Տղա՛, տղա՛, ոսկե ջղա,
Առ քու ճաներ,
Գնա խաղա.
Ալիր մաղեմ,
Գամ քե պահեմ։

ՀԺԲԱՆԴ 37

607

Աղջի՛կ, աղջիկ,
Մկան քարջիկ,
Ա՛ռ քու խոծիկ,
Գնա՛ խաղա,
Ալիր մաղեմ,
Գամ քե թաղեմ։

ՀԺԲԱՆԴ 37

608

Քա՛թ, քա՛թ, մին չուվալ ցաքատ,
Վրեչ կոթ օնե, վրեչ արկաթ,
Ճրղացըեն կըլխըեն օխտը կյուլ,
Օխտը կյուլը մին բլբուլ,
Բլբո՜ւլ, բլբո՜ւլ, տոռնը պեց,

Հասանը էկավ կլխրսկեց,
Մբեզ մին հավ օննրյ կրմկրթոց,
Հինչ վրեր ածում ա, յոխ տեղնոց,
Պապրեն օտում ա քյինում հոնձ.
Նենտը պիրում ա մին չալ կլոնձ։

Ղարաբաղ
ԱՔԱ 50

608 ա

Ջղացին գլխին օխտը գյոլ,
Օխտը գյոլին մին բյուլբյուլ,
Հասա՛ն, Հասա՛ն, գյոռնը բեց,
Փյուրի Հասան գյոռն բեց,
Մի հավ ունիմ կրկշոց,
Մին ձու կածի լոխ դեղնոց,
Պապը կոտի՝ գնա հոնձ,
Կը բերի չալ-չալ կլոնձ,
Արշակը տական կծի, տաղ անի,
Ես գլխան կծեմ, նազ անեմ։

Ղարաբաղ
ՄՀ 62

609

Էգուց կիրակի,
Էրմանի բյապի,
Ջալ հավը ծրտեց,
Ջուն քամակից շպրտեց։

Ղազախ
ԱՀՔ 175

610

Ասա մանչ՝
Կապադ կանանչ։

ԱՋՏ 100

611

Ուրո՛ւր, ուրո՛ւր՝ աչքըդ կուր,
Տասներերկու ձագուկըս տուր։

ԱՋՏ 101

612

Աղջի՛կ, աղջի՛կ, կծիկ արա,
Մեծ մի անիլ, պըղտիկ արա։

ԱՋՏ 102

613

Կառավարիչ, կարմիր չամիչ,
Պատին վրա
Երկու չամիչ։

ԱՀՔ 175

614

Ա՛ճի՛մ, ա՛ճի՛մ,
Քիթդ կճեմ,
Պերանդ պաց,
Մեջը խմջեմ։

ԱՀՔ 174

615

Պառա՛վ, պառա՛վ,
Ճաշը սառավ,
Մեծ քթով վեր կալավ,
Մարդը մեռավ։

ՀԾՔԱՆՆ. 11

616

Ընթերցված Յոբա,
Էրկու մարդ էկան Կուփա,
Ամեկու ձեռք մեկ-մեկ սուփա,
Վին որ զարկեն, կսեն՝ Թոպա՛։

Տարոն
Տխ

617

Ընթերցված առակաց,
Քասեմ թթու, էրկու հաց,
Իրեք մարդ էկան Մոկաց,
Բերան ուրանց մնաց բաց։

Տարոն
Տխ

618

Արա՛բ, արա՛բ,
Վիր կամն էր պարակ,
Կաման տեր մեռի,
Ոտքերն էր կեռի։

Տարոն
Տխ

619

Առջին՝ քոռ չարչին,
Միջին՝ չամչի խեչին,
Ետին՝ մանա գնդին։

Տարոն
Տե

620

Ջնջլի՛կ, բա գնջլի՛կ,
Թուր ու թվանք ու մուռլիկ,
Ավա էդ է, ավա ճրա է,
Կուղ մարգարեն խեռ է։

Տարոն
Տե

621

Աստծու բարին,
Կլոխդ քարին,
Թախտա պախալին։

ԱՀՔ 175

622

Քաչալ գացեր է սնձի
Վախնամ կոտ կռնծի.
Քաչալ գացեր է սոխի,
Վախնամ գլոխ սղոխի.
Քաչալ գացեր է տանձի,
Քաչու լեզուն պապանձի.
Քաչալ գացի շլորի,
Քաչու գլուխ սպլորի.
Քաչալ գացի չորթնի,
Քաչու գլուխ օրթնի.
Քաչալ գացեր է բողի,
Քաչու գլուխ պղողի.
Քաչալ գացի երնջկի,
Քաչու գլուխ պղոճկի.
Քաչալ գացեր է խոտի,
Քաչու կլուխն էր հոտի.
Քաչալ գացեր էր կորդեր,
Քաչու գլոխ օրդներ.

Քաչալ գացեր էր մեշեն,
Արջեր թափած թամաշեն.
Քաչալ գացեր է սանդակ,
Գիլան ուտին զջանդակ.
Քաչալ քաղեր է օղին,
Քաչալն իտամ գրողին.
Քաչալ քաղեր է վարոց,
Քաչլու գլոխ հ'ըմեն խոց.
Քաչալ գացեր է ջաղաց,
Քաչլու բերան մանցի բաց.
Քաչլու ձեռքը բանոգի,
Մեր քաչլիկներ անհոգի.
Քաչալ կաներ վըր դարին,
Շաֆղ զարկեր էր վըր սարին։

Բուլանըխ
Ա.ՀՋ 671

623

Մրսի վրադ,
Իմսա վրադ,
Խորոզ պապան
Թսաե վրադ։

Ա.ՀԲ 145

624

Արև՛, արև՛, դուրս էլի,
Քո խեր ու մեր իկերի,
Օսկի դանակ պիրեր ի,
Խավ ծառի տակ թաղեր ի,
Խավուն էկե տեսեր ի,
Տերտերն էկե օխներ ի։

վան
ԱՀԺԲ 102

624 ա

Արև՛, արև՛, դուրս եկիր,
Քո հայրն ու մայրն էկեր ձն,
Ոսկի դանակ բերիր են,
Կոտ քարի տակ հորիր են.
Գոմեշն էկեր գառեր է,
Տերտերն էկեր օրհներ է,
Ժամհարն էկեր հանիր է,
Տարեր տրեր խաչկանց տուն,
Խաչ գամազան վեր գլխուն։

վան
ԳՔՋ 15

624 բ

Արեգա՛կ, արեգա՛կ, դո՛ւրս արի,
Հերն ու մերդ էկել ա,
Օսկե բլիթ բերել ա,
Պատի ծակը դրել ա,
Կատուն եղնեն վազել ա,
Գոմշի ոտը կոտրուել ա,
Աղամանը վիթուել ա։

ՄՀՍ 3

624 գ

Արեգա՛կ, արեգա՛կ, դո՛ւրս արի,
Հերն ու մերդ էկիլ է
Օսկի բլիթ բերիլ է.
Պատի ծակը դրիլ է.
Մուկն էկել է տարել է,
Կատուն նրնին վազիլ է,
Կոմշու վուտը կոտրիլ է,
Աղամանը վիթիլ է։

ԱԴՄ, ԼՉ

625

Արև՛, արև՛, յարի,
Դայա բաբադ էկիրի,
Օսկի թանան պերիրի,
Ծառը տակը դրիրի,
Աքլյորն էկէ կճըճէ,
Կոր քյալն էկէ կոխրճէ,
Տերտերն էկի օխների։
Տիրոխանին էկէ լացերի,
Կնաց խորնը մորը ճյուր տա իկյա,
Սողսողի՛կ, դողդողի՛կ,
Մե տաք արև տու տաքնամ։

Շարուր
ԱՀՔ 84

625 ա

Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ,
Կարմիր արև, ե՛կ, ե՛կ,
Դադաս, բաբաս եկալ ա,
Օսկի չախկուն բերալ ա,
Քարի տակին կեղալ ա,
Աշուչի տղան պար ա եկալ,
Թուրքի տղան փուլ ա եկալ,
Մին ձյաչ տագից ջուր ա եկալ։

Շամախի
ՀԺԲԱՆԱ 69

626

Արև՛, եկուր, շուք՝ դնա,
Տերտեր պապան տուն կուգա.
Լելելու բապուճ տամ,
Խունկ տամ, մեռմ տամ,
Տեստի մը ջուր տամ,
Լոգցե՛ր, լոգցե՛ր, տուն եկուր,
Դրացներուն բարև տուր,
Ինձ ալ արև տուր։

Սեբաստիա
ՀԱ 6

627

Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ,
Ձիզի քարին վեր եկ,
Հորն ընկնեմ, ձորն ընկնեմ,
Կարմրաղիղիկ դուրս ընկնեմ.
Քու խեր, քու մեր եկել ա,
Թուր ու թվանք բերել ա,
Գոմշու ոտին տվել ա,
Դռան տակին հորել ա,
Մուկն եկել ա հանել ա,
Կատուն եռնեն վազել ա։

Դարալագյազ
ԱՀՔ 84

628

Արև՝ էկո՛, շուք՝ դնա՛,
Լե՛, լե՛, լո՛ւ, բապուճ տամ,
Մոմ տամ, խունկ տամ,
Փարչ մը գինի տամ։

ԲՍԳ

629

Արև՛, արև՛, դո՛ւս արի,
Հերն ու մերդ էկել են,
Թուր ու թվանք բերել են,
Գոմշի ոտը կոտրել են,

Խմորը քացախել է,
Թունդիրը խշակել է,
Էրեխեն էլ լացել է։

Ջահարմահալ
ՋՀԲՆ 35

630

Արև՛, արև՛, էլի տուս,
Թուր ու թվանք թալիմ թևս,
Թաֆտա շապիկ վըր թևերուս,
Օսկի աբրչան հանիմ դուս։
Կրո՛-կրո՛ ձեն էրա,
Վարդըվորի ձու էրա,
Քեռըկինդ առա։
Ամեկ ուր տուն[1],
Լապլագ ուր բուն,
Խաչ գավազան իմ քեռու տուն,
Մուկն ու կատուն ժամխրի տուն։

Փժբ

631

Արև՛, արև՛, արի՛ դուրս,
Քեզի բերինք աչքի լուս,
Քու քուրիկդ՝ լուսինկան,
Բերեց չամիչ մեկ աման։
Ամպը էկավ, մութ արավ,
Չամիչն աչքերեն կորավ,
Բաց երեսըդ, արեգակ,
Ավուճ չամիչ քեզ կուտանք,
Օ՛խ, արևին խաբեցինք,
Ամպի տակեն հանեցինք։
Ուխտավոր եմ դեպ Անի,
Ճամբուն կեսը քունըս տանի,
Չարթիմ էլլիմ տեղես չըստ,
Բախտ չունիմ նը՝ մընամ փըստ։

ԱՋՏ 102

632

Արև՛, արև՛, դո՛ւս, դո՛ւս,
Քեզի պերինք աչքի լուս,

Քու քուրիգա լուսինկան,
Պերից չամիչ մեզ աման,
Ամբը էգավ, մուխ արավ,
Չամիչը աչքէս գորավ.
Պաց էրէստ, արեգակ,
Ավուճ չամիչ քեզ գուդանք։
Օ՜խ, արևին խափեցինք,
Ամպին տակեն հանեցինք։

Դոնի-Ռոստով
ՀԺԲԱՍՎ 11

632 ա

Արև՛, արև՛, արի դուրս,
Քեզ բերիր ենք աչքի լուս,
Քու քուրիկդ՝ լուսինկան,
Բերեց չամիչ մեկ աման։
Ամպը էկավ մուխ արավ,
Չամիչն աչքերես կորավ,
Բաց երեսըդ, արեգակ,
Մեկ ավուճ չամիչ քեզ կուտանք։
Արևն էլլավ, կյանք բերեց,
Էրկինք-գետին ուրախ երդեց,
Օ՜խ, արևին խաբեցինք,
Ամպերի տակին հանեցինք։

Ն. Նախիջևան
ՆՆԲՓ

632 բ

Արև, արևուդ ղուրբան,
Օսկե շողերուդ ղուրբան,
Արև տաքցու աննման,
Արև, արևուդ ղուրբան,
Կարմիր շողերուդ ղուրբան։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

633

Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ,
Կարմիր արև, ե՛կ, ե՛կ,
Թորքեն տղան պար կգա,
Հային տղան ծափ կըտա,

Շուռ տու էծը գլխեն,
Շուռ կաա տոնը գլխեն,
Պարած կկյա։

ՀԺԲԱՆԱ 31

634

Արև՛, արև՛ էլլի,
Ջինի թապուզ թելլի,
Արև, արև կարմըրցու,
Ճիտու արուն կաթըցու։

ՀԺԲԱՔ 37

634 ա

Արև՛, արևով ըլնես,
Մեր տան վրայով հ՛ընցնես,
Մեր հավ ու ճիվ տաքացնես,
Խարսն ու աղջիկ կարմրացնես։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

635

Լուսինը նոր թագավոր,
Կանանչ կարմիր գուտկավոր,
Նստած տեղիս՝ բարաքյաթ,
Կանգնած տեղիս՝ ղվաթ։

Ղարաբաղ
ՄՀ 16

636

Ես քեյ մեռնեմ, վանա լուսին,
Ի՛նչ անուշիկ լիսմ կտաս,
Մեյ կճլեսիկ մեր գեղի տակ,
Թիջար էն էլ չկեր լուսին։

Վան
ՎՍՇԱ 28

636 ա

Լուսի՛ն, լուսի՛ն, լուսերես,
Ինձ չանես սևերես,
Դոստ ու դուշմանի առաջ,
Ինձի չանես սևերես։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

637

Լուսընկա՛, լուսընկա՛,
Աշկերդ սև չամիչ, տուն կլորիկ լուսընկա,
Ամենքը կուզեն քի մութն կա,
Ես կուզեմ քի լուսն կա։

ԱՀՔ 174

638

Էրակ-էրակ եա էրե,
Հասնիմ մըր տուն՝
Գետ էրե։

ՀԺԲԱՔ 37

639

Անձրև՛, անձրև՛, ցած արի,
Բուսըցրու ցորեն ու գարի։

ՀԺԲԱՔ 37

640

Աստվա՛ծ, Աստվա՛ծ, թուխպ տու,
Թուխպը տափին թոռ տա,
Տափը կովին խոտ տա,
Խոտը կովին կաթնը տա,
Կովը մին դանա ծընի,
Կաթը կթենք,
Օփըենք խմենք,
Քեֆ անենք։

ՀԺԲԱՆԱ 481

641

Հարզև կուգա, ձոն կուգա,
Տերտեր ամուր դուն կուգա,
Փիլավ կէփեմ եղ չկա,
Քոռ Դրնատին տեղ չկա։

ԲՆՔ 2

642

Արզև կուգա, ծուն կուգա,
Հաճի պապան տուն կուգա,
Փիլավ կէփեմ յաղ չիքա,
Քեզ Մարտիրոսին տուն չիքայ։

ԱՀՔ 174

643

Միլի-պիլի,
Միլի-պիլի՝ իմ փայը,
Միլի-պիլի,
Միլի-պիլի՝ իմ փայը։

Ղարադաղ
ՀԺԲԱՂ

644

Մընեշակ, մընեշակ՝ ախչան փեշակ,
Վարթ, վարթ աղջկան մարթ,
Շոշան, շոշան՝ քաղե մոշան,
Նարգիզ, նարգիզ՝ այնն չունիս հարկիզ,
Ընըկարա՞ր, ընըկարա՞ր՝ մին էլ թե տար ինձ
տանար,
էծը կաթնուկ, կաթնուկ՝ ես հնգալիմ տանձո
կաթուկ։

ՀԺԲԱՆԱ 68

645

Ջյունն էկավ քուլա-քուլա,
Պապն ասեց.—Դանեն ուրա՞։
Գելն ասեց.— Հրես տարա.
Շունն ասեց.— Հրես բերի,
Պոչիկ թուլա,
Մեղրը կերար, պուլիկս ո՞ւր ա։

Դարալագյազ
ԱՀէ 202

646

Մի՛ ես, ծի՛ ես, կու ծլվլամ,
Աղունակ իմ կու գռնտամ,
Հոր մորթած իմ, մոր կերած իմ,
Ազիզ քվեր թռցրած իմ։
կամ՝
Հերս մորթեց, մերս կերավ,
Սիրուն քուրս վրես լաց էլավ։

Թիֆլիս
ԹՄԿԱ 32

646 ա

Միախզմ, ծիլվիլի տիգրմ,
Հոր կևրած իմ,
Մոր կևրած իմ,
Ագիզ քվոր
Խրնկրցրած իմ։

ՀԺԲԱՆԱ. 11 (35)

646 բ

Որնճբզիկն եմ,
Ճրուվրուիկն եմ,
Հարս մորթածն եմ,
Մորս էփածն եմ,
Քրոջս դառնիկ լացածն եմ։

Վան
ԳԹՋ

646 գ

Միծեռ եմ, իշու բևռ եմ,
Ճրուվրուիկ եմ, ծ-ասի ծիր եմ,
Հոր մորթած եմ,
Մոր էփած եմ,
Ագիզ քրոջ թոցրած եմ։

Աշտարակ
ՀԺԲԱԳ

647

Թուխալ խառզան էկել է,
Օճախին դուռը նըստել է,
Պինտապուրը էփել է.
Գնացե՛ք, տըղաք, փատ բերիք,
եկեք պինտապուր կերեք,
Դու՝ փատ բերած չիս,
Դու՝ փատ կոտրած չիս,
Դու՝ ջուր բերած չիս,
Դու՝ կրակ վառած չիս։

ԱԶՏ 101

648

— Լալլագո՛, հաճի՛ բնդո,
Հուսան՞ կ'իգաս։
— Սև սարիրուց։
— Ի՞նչ ես բերիր։
— Թուխթ մը սապոն։
— Ո՞ւր կտանես։
— Սուակա մամուն։
— Որ ի՞նչ անի։
— Լաչիկ լվա,
Թալի գլխուն,
Ելնի գարուն։

Վան
ՀՀՍ 350

648 ա

— Լակլակո՛, հաճի՛ բնդո,
Յո՞ւստեն կ'իգաս։
— Սև սարիրուց։
— Ի՞նչ ես բերի։
— Թուղթ մի սապոն։
— Վի՞ր կտանիս։
— Հաջու մամուն,
Լվա լաչին,
Թալե գլխուն,
Ելնա գարուն։

Տարոն
Տե

649

Ղաջըլա՛, բարով էկար, խազար բարի,
Թե խեր ես՝ քելի, մեյն էլ յարի,
Թե շառ ես, ուզ կտրվի, էլ մի յարի։

Շարուր
ԱՀԹ 92

650

Արտուտիկ,
Նախշուն տոտիկ,
Իջնեն կալեր,

Գոզաիկ-մոզաիկ,
Ընաբևն քարևր,
Ուանն կուաիկ,
Կը ծբլվբլան,
Կբլթի՜կ, կբլթի՜կ։

Վան
ՀՀՍ 349

651

Պբլկա՜ն, պբլկա՜ն,
Դո՜ւս, դո՜ւս,
Մանցու խաթներ,
Սուս-փուս։

Ղարաբաղ
ՀԺԲԱԵ

652

Ծբնգբլը՜մ կաքավ,
Ծբնգբլը՜մ ծբևտ,
Աստուծը գիտա
Հո՞ւ ա սբէտ։

Ղարաբաղ
ՀԺԲԱԵ

653

Զբլղան-բաբա՜,
Ղի՜... ղի՜...
Զբլղան-բաբա՜,
Ղի՜... ղի՜...
Աչքըդ մռխար նի կածըմ։
Վբոննըդ ղազլավ կբկապեմ...
Զլղա՜ն-բաբա՜,
Ղի՜... ղի՜...
Զբղլան-բաբա՜
Ղի՜... ղի՜...

Ղարադաղ
ՀԺԲԱԵ

654

Կաքա՛վ, կաքա՛վ, կտոց արա,
Արտարընի խնդող արա,
Ձիզի քարին տիտիշ արա,
Մոյն թոս գինի կուլտուշ արա,
Թոզայ հարսին խիտիշ արա,
Շախկդի՛ արա, կախկդի՛ արա։

Ագուլիս
ԱԳՍ

655

Բո՛ւն, բո՛ւն, բո՛ւն,
Բո՛ւն, բո՛ւն, բո՛ւն,
Աղվես կոտի
Բիտի բուն...
Բո՛ւն, բո՛ւն, բո՛ւն,
Բո՛ւն, բո՛ւն, բո՛ւն։

Ղարադաղ
ՀԺԲԱԵ

656

Մեռնեմ իմ պուպուշ էծուն,
Ուլմ պիրե քյանձ կատուն,
Տանեմ դնեմ խաչկանց տուն,
Խաչ գյավազան վեր գյլխուն։

Խըշը՛ր, խըշը՛ր, խըշը՛ր պակ,
Դադրի չում իմ կիսուր կյա,
Յոթն անասուն ձի պիրի,
Խեծնի էրթա ճրարպին։

Առվե-առու թռնի,
Կատվու ծագեր պռնի,
Տանի դնի խաչկանց տուն,
Խաչ, գյավազան վեր գյլխուն։

Արև՛, արև՛, տյուս էլի,
Քյո խերնը մերն իկեր ի,

Օսկի տանակ պիրներ ի,
Կոռ ծառի տակ խորներ ի։
Գյոմեշն իկն կոխներ ի,
Տերտերն իկն օխներ ի,
Ժամխարն իկն խաններ ի,
Տարև գրև խաչկանց տուն,
Խաչ գյավազան վեր գլխուն։
Կը տյողամ կդյողդյողամ,
Աստվա՛ծ, արև տու տայնամ։

Վան
ՎՇՍԱ 10

657

Էլե՛ք տեսեք ո՞րն ի կերի մեր Թուփ։
— Ուլն ի կերի մեր Թուփ։
Ուլն էր Թփուն, Թուփն իգուն,
Իգն էր Վարագուն.
Խալա՛լ էր, ճալա՛լ էր,
Ի՞նչ բարի տարեկ իկե վըր մե։
Էլե՛ք տեսեք, ո՞րն ի կերի մեր ուլ.
— Գելն ի կերի մեր ուլ։
Գելն էր ուլուն, ուլն էր Թփուն,
Թուփն էր իգուն, իգն էր Վարագուն.
Խալա՛լ էր, ճալա՛լ էր։
Էլե՛ք տեսեք, ո՞րն ի կերի մեր գել։
— Շունն ի կերի մեր գել։
Շունն էր գելուն, գելն էր ուլուն,
Ուլն էր Թփուն, Թուփն էր իգուն,
Իգն էր Վարագուն.
Խալա՛լ էր, ճալա՛լ էր։
Ի՞նչ բարի տարեկ իկե վեր մե։
Էլե՛ք տեսեք, ո՞րն ի կիրե մեր շուն։

ԱԴՄ, ԽՋ

658

Մե խավըմ կեր վիղն էրկեն էր,
Ճետերն խոնվ տըսնըմեկ էր,
Աղվեսն խովեն կը մեյմըկեր։
Աղվեսն ասաց.

— Իմ տեղ նեղ ի՛,
Խավու ճեամբը փորիս դեղ ի՛։
Աղվեսն նստեր վեր տախտակին,
Պոչնի տնկեն տեխ տանտրկին.
Աղվեսն իրեն տափիկ-մափիկ,
Ջանց մեր կատուն կանափըտիկ,
Խավու ճիտերն արաց խորտիկ։

Վան
ՊՎՍ 110

659

Աղվեսն էկավ լանճի՛կ, լանճի՛կ,
Ոտեր ուներ կարճի՛կ, կարճի՛կ,
Շատ կու սիրեր հավի քարճիկ,
վո՛ւյ, վո՛ւյ։
Աղվեսն պառկեց աղբի տակին,
Աչքը ձդեց չադ հավ ձագին,
Նետով կը տամ աչքի տակին,
Որ մոտ չգա նա մեր բակին։
վո՛ւյ, վո՛ւյ։

Նոր Նախիջևան
ԱՔԳ 26

660

Աղվեսն էկավ տափի՛կ-մափի՛կ,
էկավ մոտավ մեր կանափիկ.
Աղվեսն էկավ կյոմշա դարեն,
Իրե մոտավ մեր զուբարեն,
Փշրուկ կերավ, թափեց վրեն,
Աշխարն էլավ ուր թամաշեն։
Աղվեսն էկավ սարեն լալով,
Սիրտ կրտփեր ջուխդմ քյարով,
Աղվես կասի.— Իմ ծակ նեղ ի՛,
Խավի ճետեր փորիս դեղ ի՛։
Աղվես նստե վեր տախտակին,
Աչքը տփե ճեռչ տանդկին։
Մե խավմ կա՝ վիզնը շեկ ի,
Ճետերն իտև տանմեկ ի,
Աղվեսն ինգե կըմեյմկի,

Աղվես կասի.— Իմ ծակ նեղ ի՜,
Խավու ճետեր փորիս դեղ ի՜։

Վան
ՎՍՇԱ 27

661

Ձիակ, ձիակ, իս խաղցու,
Տար պարոնին դուռն անցու.
Պարոնը փատ կու տաշե,
Խաթունը հավկիթ կու խաշե։
Խաթուն, քինթդ տափակ է,
Աղան քելի հավներ է,
Դուռդ վրադ ախեր է,
Հավը տոտոզ կախեր է.
Ա՛յ, նոշըպա՜, նոշըպա՜,
Իմ մարն հագե խաս կապա,
Խաս կապայի գին չի կա.
Գինը կոշկակարին մոտ է։
Կոշկակար կապեկդ կապե
Տայի ձիակս նալե.
Հեծնեմ էրթամ եղնեքուն։
Եղներ ճաշ են նստեր,
Ճաշու չամուռ են շաղեր։
Ինծ ալ փայիկ են պահեր,
Օսկի սընտուկն ին դրեր։
Օսկի կատուկն է կերեր,
Օսկի չալխով են ծեծեր։
Մա՛ր, մա՛ր, մի՛ ծեծեր,
Հշվե թը ես իմ կերեր.
Բըրդե բամբակ իմ գըզեր,
Էպուշիմեն եմ մաներ,
Քաղաքը ծախ իմ խրկեր։

Ակն
ՀԱՃ 465

661 ա

Ձիա՛կ, ձիա՛կ, իս վաղցուր,
Տար պարոնին դուռն անցուր,
Պարոնը փատ է տաշեր,

Խաթունն հավկիթ է խաշեր,
Ընծ ալ փայիկ է պահեր,
Օսկի անտուկն է դրեր,
Օսկի կատուն է կերեր.
Վա՜յ, աս կատուն ծեծեցե՛ք,
Վա՜յ, աս կատուն մի՛ ծեծեք,
Օսկի թևլով կախեցեք,
Սըրմա թևլով կախեցեք։

Սեբաստիա
ԲՍԳԴ 634

662

— Կատո՛ւ, կատո՛ւ, կանափըտո՛ւ,
Ո՞ւստա կուկաս։
— Արտամետու։
— Ի՞նչ կա քամակդ։
— Ջոր պըկըկու։
— Խարսներ դո՞ր են։
— Վեր օսկի թախթին։
— Ապա կիսերնե՞ր։
— Վեր ցըռտա ցախաւելին։

Վան
Ա.Հժթ 103

662 ա

Կատո՛ւ, կատո՛ւ, կանափտո՛ւ,
Հ՚ո՞ւստա կուկյաս։
— Առտըմըտու։
Ի՞նչ կա խետ քեզ։
— Ջոր պըպըկու։
Մտի տուն ճրագն ընցու,
Կըտեղներ չղչղկացու,
Պստի խարսին խինդխինդացու,
Պառվըներաց վըյվընգեացու։
Փըշի՛, փըշի՛, փըշմտի,
Էպրեմսիմայ սանդուխ ի·
Ծովի փրփուռ իմ ծոցիկ,
Ծովի ծկներ իմ փորիկ։
Միրզա՛, Միրզա՛, իմ ախպեր,

Իմ սիրունիկ չան ախպեր,
Մերդի կնիկ՝ իմ քուրիկ,
Պանցրախաւան իմ քուրիկ,
Բերդի խաթուն իմ մերիկ,
Աղա-փաշեն իմ խերիկ։
Իմ քյոր նստե փենջարեն,
Կիրիշկի դեմ փաշի սարեն,
Ի՞նչ կնիշի մահրամեն,
Վո՞վ ընցավ։
— Կուլոտ խոջեն։

ՎՍՇԱ 11

662 բ

— Կատու, կատու, կանափրտու
Ուստի՞ կուգաս։
— Արտամրտու։
— Մրտի մառան, հրայեն ընցու,
Դառաբեն Բրփիբրփացու,
Պատիլ խարսին հրվճրվացու։

Վան
ՀԺԲԱՇ 5

663

Փիսո՛, փիսո՛, մլավան,
Թավրիզ Բողից, դնաց Վան,
Լեզուն թաթղան, էրկար պոչ,
Ինչ օր ուղեց, ըսին՝ ոչ։
Էլավ ոտքի փախչելու,
Գնաց խավիծ ուտելու,
Շերեփը ղարկին գանգին,
Գդալը ղարկին ճակտին։

ԱՔԱ 5

664

Փիսո՛, փիսո՛, փեշտա կորի,
Փիսոն էկավ փեշտա կորի,
Փիսոն առկան սըրեց էկավ,
Փիսո՛, փախիր, փեշտա կորի։

ՀԺԲԱՆ 66

665

Փշի՛կ, փշի՛կ, փամփուխիկ,
Էպրեսիմա սանդուխիկ,
Ես պարոնի տղան եմ,
Թագավորի փեսան եմ.
Ա՛մպ,
Ջա՛նպ,
Ջըկը՛ռ,
Մըննկը՛ռ,
Փը՛շտ։

Վան
ԱԽՋ

665 ա

Փըշի՛, փըշի՛, փամբուղիկ,
Էպրեսիմա սանտոխիկ,
Ես պարոնի լաճ տղան եմ,
Թակավուրուն փեսա եմ։

Վան
ԱԽՋ

665 բ

Փիսի՛, փիսի՛, փամպուխի,
Էպուշումի սանտուխի,
Ես պարոնին տղան եմ,
Թագավորին փեսան եմ։

ԱՀՔ 169

665 գ

Փըշի՛, փըշի՛, փամփուսիկ,
Եպրեսիմա Սանդուխիկ,
Ես պարոնի տղեն եմ,
Թակավուրու փեսեն եմ։

Վան
ՀԺԲԱՇ 5

666

Բռան կատուն կյնաց տարպնի տուն,
Տարպին կռան ի գարկ վեր գյլխուն,
Ասաց.— Խերիք չի՞ գյաս մեր տուն.

Բոան կատուն սովրավ մեր տուն.
Փախավ մտավ Նազկի տուն.
Նազի՛կ, Նազի՛կ նազ կանի,
Ծամերն իտև սազ կանի։

Վան
ՎՍՇԱ 20

666 ա

Փիսո՛, փիսո՛, մլավկան,
Արի ղլու էս մկան,
Ջիգա մալ մեր մառան,
Մխտռի մեր թան։

Բասարգեչաթ
ՀԺԲԱԴ

667

Մաո՛ւ, մաո՛ւ— տիվ վի՞ր կաուն։
— Ալլահվերդուն։
Ի՞նչ կժողվես։
— Սեր ու մածուն։
Վի՞ր կտանես։
— Իմ ծյագերուն։
Ծյագեր ու՞ր են։
— Քյոշկի կուբեն։

Ջուան, չուան, լաբե չուան,
Ոչխար դո՞ր ի։
— Տանիս։
Ի՞նչ կուտի։
— Սվրուկ խոտ։
Ի՞նչ կպատրի։
— Ոսկի։

— Նաղարո՞վ դյամ, թե՞ ղուռնով.
Դրմփը՛, դրմփը՛, նաղարա՛,
Խարս վեր ձիուն կըխաղա։

Վան
ՎՍՇԱ 18

668

Միո՜ւ, միո՜ւ, մլավան,
Թավրիզ Թողից, էկավ Վան,
Միո՜ւ, միո՜ւ, կանըփ տու,
Սրի էրթանք պապու տուն։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

668 ա

— Միո՜ւ, միո՜ւ։
— Դու վի՞ր կատուն։
— Ալլահվկերդուն։
— Ուրկի՞ կուգաս։
— Արտամբտու։
— Ի՞նչ է կուզես։
— Սեր ու մածուն։
— Ո՞ւմ կտանես։
— Իմ ձագերուն։
— Ձագերդ ո՞ւր են։
— Թոնըրի վրեն։
— Ի՞նչ ես բերեր։
— Լաճ ու աղչիկ։
— Անունն ի՞նչ է։
— Ջանգակ-բամբակ։
— Փը՜շտ, կանափըտիկ կատու։

Վան
ԳԹՋ

668 բ

Միա՜վ, կատու.
— Ո՞ւմ կատուն իս։
— Աղաբեգի։
— Ի՞նչ իս ուզում։
— Մեղր ու կարագ։
— Ո՞ւմ համա։
— Իմ վուրթկերանց համա։

Թիֆլիս
ԹՄԿՄ 24

668 գ

Փշո՜, փշո՜, վի՞ր կատուն ես։
— Աղա-բեկին։
— Ի՞նչ կժողվես։
— Սեր ու մածուն։
— Վի՞ր կտանիս։
— Իմ ձագերուն։
— Ջրգևր տո՞ր են։
— Քոշկի տանիս։
— Ի՞նչ ա փռած տակ։
— Յորղան դոշակ։
— Փշի՜ կորի։

Ալաշկերտ
Ա.Հ.Ե 186

669

Միո՜, միո՜,
Փիշո՜, փիշո՜.
— Ո՞ւմ կատուն ես։
— Ալաբաշի։
— Ի՞նչ կուզես։
— Ջիր ու չամիչ։
— Ո՞ւմ կտանես։
— Իմ ձագերուն։
— Փիշտա՜ կորի։

Ալեքսանդրապոլ
Ա.Հ.Ք 101

669 ա

Փիշո՜, փշո՜.
— Ո՞ւմ կատուն ես։
— Աղաբեգի։
— Ի՞նչ ա կուզես։
— Ջիր ու չամիչ,
գյաթա, հալվա։
— Ո՞ւմ կտանես։
— Իմ ձագերուն։
— Դե՛, փը՜շտ կորի,
Քյո խոտա կորի։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

670

Փշո՜, փշո՜ ճանէ,
Հավլուլի մրճան է,
Ջարազ է, քթան է։
Աղբե՜ր, վարե էն օշոն,
Աղբե՜ր, վարե էն փշոն.
Աղբոր անուն Օրոճա,
Վերեն ու վար կճկճա.
Հավե բննեն թոցուցինք,
Պուտե մրննեն բրցուցինք,
Հարս ու փեսին կերցուցինք,
Խարմամուն խրոովցուցինք,
Պուճախր նստրցուցինք։

ԲՆԱ 30

671

— Միո՜ւ, միո՜ւ.
Կաթն ամ ուզում։
— Ջարուխըդ ո՞ւր ա։
— Սանդի տակին
Մեռել ա։
— Դե գնա կորի՜ր,
Շա՛ն կատու։

Ն. Ջուղա
ՀԺԲԱԱ 2

672

Կատուն էկավ փիսի՜կ-փիսի՜կ,
Հազար նազով, ինչպես հարսիկ,
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը զարնեց ճանկիկներով,
Կատո՜ւ, կատո՜ւ հե՞ր իս տխուր,
Թե մկներն են այսօր զարթուն։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 113

673

Էրանելիկ քե, Կոլոտ,
Ո՛չ ժամ պիտես, ո՛չ պատարագ,
Ո՛չ վարժատուն, ո՛չ դաս,

Ոչ էլ Մուխս աղեն կասի՝ աղոթք արա։
Տան՝ կուտես,
Ջիտան՝ կիրիշկես,
Կեչնիս պյոնի տանիս կքյնես։

վան
ՎՍՇԱ 21—22

673 ա

Քոթո՛թ, մոթո՛թ իմ Գոզոն,
Հ՚երկեն ականջ ու բրդոտ,
Գոզոյ սարից եմ բռնե,
Գոզոյ սարերն եմ պահե,
Գլազ դեյրեն խաբյուցե։

Բասարգեչար
ՀԺԲԱԳ

674

Ճե՜ռ, ճե՜ռ, ճրճենակ,
Ասծու հալալ պըպենակ.
Իմ հ՚նգերը ծուվն ընկավ,
Ծովը ծիրանի դառավ։
Ձերեն էկավ կեռ կտուց,
Հավը թառեն թոցրուց,
Ջուխտ ձուն տակեն պրցրուց,
Տարավ կոտրեց բլցրուց.
Մինը՝ ինձ, մինը՝ իմ ընկորը.
Ով մեր փայը տայ՝ դլարի,
Ով որ տա ոչ՝ սըլարի։
Ճե՜ռ, ճե՜ռ, ճրճենակ,
Ասծու դուռը բանանք,
Դուրսը շարվենք, ժամ ասենք,
Ներսը պատարագ ասենք,
Սև եզը մատաղ անենք,
Պոզերը չարդախ աննենք,
Տակին նստենք՝ քարգյահ անենք։

Ա.Հ.Թ

675

Ձմեռն էկավ ա՜լ անցավ,
Ջարզարդարը մոտեցավ,
Ջատիկն էկավ մոտեցավ,
Քել գլոխները մոտեցավ։

ԳԹԱ 236

676

Ծաղարդարը մոտեցավ,
Բայլին պտուկը կոյլեցավ,
Մախոխին՝ բղուկը հոտեցավ,
Խաշին պտուկը նորեցավ։

Սերաստիա
ԲՍԳ

676 ա

Ձմեռն էկավ, ցուրտն բնկավ,
Բուք ու բորանն էլ անցավ,
Ծառլարդարը մեր դռան,
Ջաղիկն էլ մեր շեման։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

677

Ծառլարդա՜ր, ծառին զարդա՜ր.
Խունդ առե՜ք, խունդ ծխեցե՜ք.
Սև հավևն հավկիթ գուղամ,
Կարմիր կովևն եղ գուղամ,
Վիվ օր տա՝ շեն մնա,
Վիվ օր չտա՝ չորշորնա։

Ջավախք
ԱՀԲ 2

678

Ծար-ծաթա՜ր, ծարն-ծաթա՜ր,
Ձեր տունն էկանք ծար-ծաթա՜ր,
Վար բլլիք, շեն բլլիք,
Սաղ աշխարհին տերն բլլիք։
Ժամ գնացիք, խունկ առիք,
Կապով գեղին մոմ առիք,
Ժամ էրիք, ադոթք էրիք,
Տասվերկու պատարագ էրիք։
Ծարծաթա՜ր, ծարնծաթա՜ր,
Ձեր տունն էկանք ծարծաթա՜ր.
Հատիկ տուիք էս օրուան,
Հավկիթ տուիք զատկվան։

Ծուրղուտ
ԱՔԱ 5

679

Ծի՜վ, ծի՜վ, ծիծեռնա՜կ,
Ոսկի ճալատ պիպեռնակ,
Ըռկերս ընկավ ծովն,
Ծովն էլավ ծիրանի։

Կարին
ՀԺԲԱՆԱ 65

680

Ճր՛կ, ճր՛կ, ճրչնանակ,
Կպեցուն գուրքը բանաք,
Ասու ճրոգը վառիքյ,
Մոտաք մաչը լղանաք,
Էլիքյ ծոռը դրդարիքյ,
Վեր գուք առկը մխըթարիքյ.
Հավին վառը չրանա,
Տանիք դիտը լվանիքյ,
Տանիմ տում չոբանին,
Ջոբանը անձ մոյն գառնը տույ,
Գառնը տանիմ աստու տում,
Աստված անձ մոյն ախպար տույ։
Ախպա՛ր, ախպա՛ր, ջան ախպա՛ր,
Ջանըս քեզ զուրբան, ախպա՛ր.
Կապա ըմ կարալ՝ կարճ այ ակալ,
Կենճակըմ կարալ՝ խոշ այ ակալ.
Կապատ հանա լըվանամ,
Ասկա թակալ թակիմ.
Ճնջխի լեզվավ պըտատիմ,
Թամքած ձիով թուրցանիմ։

Ագուլիս
ԱԲՍ

681

Ճր՛ռ, ճր՛ռ, ճրչռնակ,
Ասծո հալալ պիպեռնակ,
Ընկերս ընկավ ծովը,
Ծովեն էլավ ծիրանա.
Խունկ առեք, մոմ առեք,
Տասնէրկու պատարագ արեք,
Իմ կարմիր հավին հավկիթը դուրս բերեք.
Ով որ բերե՝ շեն մնա,
Ով չբերե՝ հավի փորին դեմ կենա։

Ղարս
ԱՀէ 196

682

Ճըչանա՜կ, անա՜կ, անա՜կ[1],
Կեղևցո դուռը բանանը,
Մննենք մեջը ադոթք անենք,
Դուս կանք չալ եղը մատաղ անենք,
Պողերը չարդախ անենք,
Վրեն պատարագ անենք,
Հաբուն խրաղան անենք.
Չալթուկ թակենք տանը հավերին,
Հավերն ինձ մի ձուձու տան,
Ձուձուն տանենք տանը պառավին,
Պառավն ինձ մի կաթա տա,
Կաթին տանենք տանը խառատին,
Խառատն ինձ մի շիվի տա,
Շիվին տանենք տանը չոբանին,
Չոբանն ինձ մի գառ տա,
Գառը տանենք տանը աստծուն,
Աստված ինձ մի աղբեր տա,
Աղբե՜ր, աղբեր, ջա՜ն աղբեր,
Դու բերդի գլխին աղբեր,
Ես բերդի տակին աղբեր.
Հուռո՜ւմ, Հուռո՜ւմ կանչեցինք,
Հուռումի ձին թամբեցինք.
Հուռում կնաց բանջարի,
Բանջար չիլավ, խոտ իլավ,
Խոտի տակին ծիտ իլավ,
Ծըլվըլալն դուս թռավ,
Հանդիստներին լիս ըրավ.
Բերեք տվեք մեր երկու ձուն,
Աստուած պահի ձեր հարանացուն։

Դարալագյազ
Ա.Հէ 127

683

Անա՜գ, անա՜գ, ճոճանակ
Մննեմ ժամը՝ ժամ անեմ,
Դուս գամ՝ պատարագ անեմ,
Սև եղը մատաղ անեմ։

ՀԺԱՆ

684

Անա՜կ, անա՜կ, հռհռանակ,
Աստծո դուռը բանանք,
Մտնենք ժամ անենք,
Ջալ եղը մորթենք, մատաղ անենք,
Պոզերը չարպախ անենք,
Միչին նստենք քյարպահ անենք,
Մատաղը սիրողը էրկու ձու տա,
Ջատկին խաղանք քնֆ անենք,
Մինն ինձ, մինն իմ ընկերին,
Ով տա՝ վիզի բարձին նստի,
Ով չտա՝ չոր քարին նստի։

Աշտարակ
Ա.Էէ 126

685

Անա՜կ, անա՜կ, հռհռանակ,
Աստծու դուռն բաց անեմ,
Մննեմ մեջը ժամ անեմ,
Դուրս գամ պատարագ անեմ,
Ընկերս ընկավ ծովը,
Ծովը ծիրանի դառավ,
Պատերը հայլի դառավ,
Բոզոն էկավ կեռ կտուց,
Հավը տեղից թռցրուց,
Տակիցը մի ձու պլցրուց։

Աշտարակ
Ա.Էէ 126

686

Կարկաչա՜, կարինկաչա՜,
Սև եղան ատամներս,
Կարմիր եղան օղն ու կոճակ,
Ով որ տա իմ էրկու ձուն,
Աստված պահե իր փեսացուն։

Վեղի
Ա.Էէ 127

226—21

687

Կարկաչա՜, կարի կաչա՜,
Սև եղան սև սամն թևս,
Կարմիր եղան օղն ու կռնակ.
Որ չտա իմ կարկաչին,
Կէրթամ կըսեմ պոլատա իրիցուն,
Չ'իգա ֆատա ձեր ձգում։

Ալաշկերտ
ԷԱԺՋ 70

688

Կարկաչա՜, կարգի կաչա՜,
Սև օձին, սև-սև մոզին.
Խունկ առեք, մոմ առեք,
Տասներկու պատարագ էրեք,
Իմ կարմիր հավկիթիս տուրս բերեք։

ՀԺՔԱՆՍ 65

689

Կարկաչա՜,
Կարինաչա՜,
Որ չիտա
Ջիմ կարկաչին,
Կէրթամ ասեմ
Պոլ իրիցուն՝
Կիդա.....
Ձեր ձձում։

Բալանխ
ԱՀՋ 65

690

Կարկաչա՜, կարնկաչա՜,
Սև օթիզ, սև սան օթիզ,
Խունկ առեք, մոմ առեք,
Տասվերկու պատարագ էրեք.
Լո՜, լո՜, լոլո՜ ձեր ղլխուն,
Դուրպան ըլեմ աստծուն,
Վար ըլլիք, շեն ըլիք,
Իմ կարմիր հավկիթիս դուրս բերեք։

Ախալցխա
ԱՔԱ 5

690 ա

Կարկաչա՜, կարկաչա՜,
Սև օձիկ, սև սան օձիկ,
Խունկ առնք, մոմ առնք,
Տասերկու պատարագ էրնք։
Լո՜, լո՜, լո՜ ձեր գըլխուն,
Ղուրպան ըլլիմ ասըծուն,
Վար ըլլինք, շեն ըլլիք,
Իմ կարմիր հավկիթըս դուրս բերնք։

Շուրջուտ
ԱՔԱ 5

691

Կարկաչա՜, կարինկաչա՜,
Սև եզան սև սամոդա,
Կարմիր գովին եղն ա մոդա,
Ով որ ինձի հավկիթ կտա,
Ասուած իրեն ավելի տա։

Բասեն
ԱՀէ 128

692

Կարկաչա՜, կարին կաչա՜,
Սև օձին սոմաթա,
Խունգ առնք, մոմ առնք,
Տասերկու պատարագ էրնք։
Իմ կարմիր հավկիթս դուս բերնք,
Ձիրմակ հավկիթս նես տարնք։

Ջավախք
ԱՀԲ 269

693

Ձը՜ռ, ձը՜ռ ճճեռնա՜կ,
Ասսու հալալ պիպեռնակ.
Ընկերս ընկավ ծովը,
Մովեն հլավ ձիրանը.
Խունկ առնք, մոմ առնք,
Տասվերկու պատարագ էրնք,
Իմ կարմիր հավկիթս դուրս բերնք։

Ջավախք
ԱՀԲ 269

694

Ձը՛ռ, հա ձը՛ռ, ճռճռակ,
Աստու անուշ պապակ,
Տունկ արևք, մոմ վառևք,
Իմ կարմիր հավկիթ տվևք։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

695

Ընկևրս ընկավ ծովը,
Ծովը դառավ ձիրանի,
Միրանին դառավ հայլի,
Հայլին դառավ պատկեր։

ՀԺԱՆ 7

696

Բողոն էկավ կևռ կտուց՝
Հավը տեզիցը թռցրևց,
Էրկու ձու ևս էլ բլցրևց,
Մինն ինձ, մինն իմ ընկորը։
Ով տա՝ շեն կևնա,
Ով չտա՝ չոր փարչի պռունգը պաչի։

ՀԺԱՆ 1

697

Պռռո՛ւ, պռռո՛ւ, պռռեստան,
Մատս գնեմ մատնևստան,
Էլևս նե՝ մևգիս բզուկը,
Չևլևս նե՝ պևյմևզիս բզուկը.
Իմ չէ, քուկ չէ,
Քոր սատանայինն է։

Սևբաստիա
ԲԱԳԳ

698

Նուրին, նուրին էկել է,
Շալե շապիկ հագել է,
Քոլքն գոտիկ կապել է,
Մևր նուրինի փայը ավևք,
Ուտևնք, խմևնք, քեֆ անևնք,
Անձրև, անձրև, ցած արի,
Բուսրցրու ցորևն ու գարի։

Չահարմահալ
ՉՀԲԲ 32

699

Նուրի՛ն, նուրի՛ն էկել է,
Շալե շապիկ հագել է,
Կեմե գոտիկ կապել է,
Էրկնքեն անձրև կուգե,
Հողից էլ՝ բույս։

ՀԱՄ

699 ա

Նուրի՛ն, նուրին եկել ա,
Գլաղ շապիկ խաքել ա,
Էրծաթ գոտին կապել ա,
Անձրև կուգա, ջուր կուգա,
Ամ հողից էլ՝ խաց կուգա։

Ալաշկերտ
ՀԺԲԱԳ

700

Նուրի՛ն, նուրի՛ն էկերը,
Աջքա գոտին կապերը,
Էրկնքուց անձրև կուզը,
Գետնից ցող կուզը։

ՀԺԲԱԲ 18

701

Խուճկուլուլուն[1] *մանանա,*
Հու մի տվեք Թանանա,
Բարով խերով անձրև գա,
Ջրր խոր արտեր կանչնա։

ԲՆԱ 24

702

Նուրի՛, նուրին էկել ա,
Աբրա հուրին էկել ա,
Շալե շապիկ հագել ա,
Կարմիր գոտի կապել ա։
Մեր Նուրիին փայ տվեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք։

ՀԺԲԱՍ

703

Նուրի՛, նուրի, նազանի.
Հավջահուրի նապանի,
Նուրին էկել ա,
Շիլա շապիք հագել ա,
Կարմիր գոտիք կապել ա,
Ալիր բերանք աչքերն ածննք,
Ըստանն ցող ա ուզում,
Գևանիցը պատուղ ա ուզում։

ՀԺԲԱՍ

704

Թաքյա՛մ, թաքյա՛մ էկել ա,
Ձեր դռանը չոքել ա,
Եղ տվեք պորտը քանննք,
Բրինձ տվեք փլավ անննք,
Ջու տվեք ձվաձեղ անննք,
Ջուր տվեք լողացննննք։

Սպահան
ԱՀՔ 116

705

Ջոլի, վալի, չոլ չկա,
Խավնծ անեմ եղ չկա,
Ճոլեն ընկալա ծավը,
Ծավան տեսանող չկա։

ՀԺԲԱՆԱ 1

706

Տո՛, տա՛, տո չկա,
Հալաքս անեմ եղ չկա,
Ընկերս քինած ծառովը,
Քինաց ընկալ մնծ ծովը։
Ջաթան բերեք, դուրս հանննք,
Քյանդուր բերեք քշկո անննք,
Ջուն բերեք թաթին տննննք,
Եղ բերեք վարսին քսննք,
Հետո քինանք սար ու սեյրան,
Ուտենք, խմենք, բե՛ֆ անննք։

Շամախի
ԱՔԱ 5

707

Բյուրապատի՜կ, բյուրըն պատիկ,
Օսկե հատիկ ցորեն բշիկ,
Տա աստված հազար զատիկ,
Դուք վար բլիք, շեն ըլիք։
Տա ձեր արտին աստված անձրև,
Ձեր ամենին՝ երկան արև,
Տե՛ր, թո՛ն էրև, թո՛ն, թո՛ն էրև,
Գարի հացը պո՛լ-պո՛լ էրե։
Բյուրապատիկն իմ փայ կուզեմ,
Ջուլ եմ հագի՝ փայ կուզեմ,
Կարմիր կովի եղը կուզեմ,
Սև հավի հավկիթը կուզեմ։

Շուրջուա
ԱՔԱ 5

708

Պուպլատըկինն էկեր է,
Շար ու շապիկ հագեր է,
Փեթիկին հետ կայներ է,
Կարմիր կովան եղ կուզե,
Ճերմակ ծովուն ջուր կուզե,
Սև հավուն հավկիթ կուզե,
Փեթիկին միջուն պղլուր կուզե։

ԲՆԲ 28

709

Անձրև՛, անձրև՛, գոլ արա,
Ցորեն հացը բոլ արա,
Անձրև՛, անձրև՛, գոլ արա,
Նրանց մոգին ծոլ արա։

Բորշալու
ԱՀԺ 200

710

Ջվան բերեք տիուս օնինք,
Ջաթու բերեք կցած տանք,
Ջու բերեք թաթին տնենք,
Բլիթ բերեք կուռնու տակավը տնենք,
Եղ բերեք վարսը քսենք.
Ծոիկը տաւիումն ա ժանգոտալ,

Խոփը պատռմն ա ընձառատալ,
Կարմիր բրևեն ընք հըսալ,
Կանաչ տևիևրան ընք հըսալ։

ՀԺԲԱՆԱ. 1

711

Պուպլատիկինն էկեր է,
Շարև շապիկ հագեր է,
Փեթիկին նաև կայներ է.
Կարմիր կովուն՝ նվ կուզե,
Ճերմակ ծովուն՝ ջուր կուզե,
Սև հավու հավկիթ կուզե,
Փեթիկին միջուն պըլղուր կայր։

Քղի
ՀԺԲԱՆԱ. 1

712

Խուշկուրուրիկն էկեր ա,
Շալև շապիկ հագեր ա,
Ջուվև գոտիկ կապեր ա,
Երկնկուց ցող ա ուզում,
Գետնկաց պտուղ ա ուզում,
Եղ բերիք պորտին քանիք,
Ջու բերիք թաթին դնիք։

Նար Բայազետ
ՀՀԺԾ 96

713

Տո՛ս, տո՛ս, կաղանտոս,
Կաղանտոսը էկել է,
Դուռին տակը կայնել է,
Շալև շապիկ հագել է,
Շալի գոտիկ կապել է,
Ոտքը չափոսատ տրիլ է,
Գիտառը ձևաքը բռնել է,
Գոնչի, գոնչի կխաղա.
Շնորհավո՛ր, նոր տարի,
Աղեկություն տուն տարի,
Ամեն տարի բարով հասիր։

ՀԺՀՆ 8

714

Նննննե՛ր, կալընտոս տըվե՛ք,
Համմեն տարի բարով հասնի աս օրերս,
Տարին օրի մըն է....

Սնբաստիա
ԲՍԳԳ

715

Կալանդո՛ս, դո՛ս, դո՛ս,
Կալանդոսը էկել է,
Դուռին էտևը կայնել է,
Եալև շապիկ հագել է,
Եալև դոտի կապել է։

ՆԴ 1

716

Աստօր կախ է, աստուն կաղոնտ է,
Ձեր մեռելտացը հոգուն տվեք,
Տանտիկի՛ն, տանտիկի՛ն,
Ելի գնա մարագն ի վար,
Կարճ բռնե, երկար կտրե կամըցուկ,
Ուր մատդ չկըրնա,
Ով որ չի տա՝ հավերուն տոտոզը չորանա։

Ակն
ԱՔՍ. 1

717

Աստօր կաղ է, վ'աղը՝ կաղընտ,
Ձեր մեռելին հոգուն տվեք ուր գա.
Տանտիկի՛ն, տնատիկի՛ն,
էլի գնա մարագն ի վար,
Կարճ բռնե, երկան կըլլե,
Կամացուկ որ մատիկդ չկըչնա։
Ով ուր տա՝ շեն կենա,
Ով ուր չիտա, հավուն տոտոզը չորնա։

Հաճըն
ՆՏՏՊ

718

Կաղընտե՛ս, տընտե՛ս, տընտե՛ս,
Վոնքն ունի էյկու տընտես,
Իքիչմիչիս էյկու նուկիս...
Հովն ի գուտիս, կաքովն առջիս։

Հաճըն
ՆՏՏՊ

ՀԱՎԵԼՎԱԾ

719

Ծոցիկդ առավոտ նման,
Առտվան շաղիկն է վրան,
Շաղվոր ետ ու ետ գնա,
Ու ցաթիւ արևն ի վրան։

ՀԱՃ 408

720

— Ա՛յ իմ հայվայի կնռաս,
Դիմըցի լեռը կու կենաս։
Ամառը կենաս, կենաս,
Ցուրտ ձմեռը ինա՞ր տի կենաս,
Քանի ես ի քեզ կու գամ,
Դուն ինձմէ հեռուն կու կենաս։

ՀԱՃ 407

721

Է՛ պարտեզ իմ բոլորեր, վարդ իմ բուսուցեր,
Ապառաժ իմ կոտրեր, ջուր իմ վազցուցեր,
Իմ պատվավոր սիրելիս իմ թռուցեր,
Ժուռ կու գամ լեռներ ու սարեր։

ՀԱՃ 412

722

Պաղչա ունիմ, պար չունիմ,
Հայվա ունիմ, նար չունիմ,
Ինկեր իմ ծուխու օրթան,
Ալ ելլելու ճար չունիմ։

Ակն
ՀԱՃ 409

723

Պիլպուլս ի պաղճան իջեր,
Վարդերուն թիւերն է թառեր,

Ինչ վարդ կա՝ դխուն դրեր,
Անուշիկ հոտեն քնացեր։

Ակն
ԴԺՏԱ 244

724

Աղվոր ես ու քեզ մետ կանիմ.
Պիլպուլին տալին վրա.
Հագեր ես տիպա ու դերպա,
Կու վայելէ ուրտա վերա,
Քիներուներա թուղ կու քաշե,
Կեռտանիտ խալին վրա։

Ակն
ՀԱԾ 413

725

Գացինք Քոլի դեղ,
Բերինք տիկ մի եղ,
Էրինք ձվաձեղ,
Կերանք միասեղ։
Տարանք հովըվուն,
Առնենք կաթ մածուն.
Կըթոց գըլորավ,
Հովիվ խռովավ,
Օխշար մոլըրավ,
Բերվոր շիվարավ։

Ալաշկերտ
ԷԱԺՋ 69

726

Բլբուլն ասաց Ումպրեկ խավըրուն՝
Ինչի՞ կուլաս կուց-կուց արուն.
Արի առնեմ քե վեր իմ թևքերուն,
Տանեմ վեր պանցրիկ սարերուն,
Շինեն տնիկ վեր քարերուն,
Դուռ պանանք հարավ քամուն,
Ջինը կուկա դաան ու մադուն։

Վան
ԱՀԺԹ 103

727

Ահ՛յ լուրի՛կ, լուրի՛կ, լուրի՛կ, լուրի՛կ,
Բաղչեմ եմ դրեր հ՛առջև ճրագին,
Թուխ սեհան ելեր՝ հով էրեր վըր քյաֆուր վարդին,
էրթամ ու ակ տամ կանուխն էվարին։
Լուրի՛կ, լուրի՛կ, լուրի՛կ, հա՛յ լուրի՛կ,
Ա՛յ տիլպար, էրեկ քու ապով ընձկում ձիկ ևն ծևծած,
էրթամ Հալապու շաքար պիրևմ, քու պընքաևրն էր քաված,
Լուրի՛կ, լուրի՛կ, լուրի՛կ, հա՛յ լուրի՛կ.
Ա՛յ անուշ խոտ, էսօր իմ աչք առավ քու էրես։
Իմ խալով քյաֆուր վարդն էր վըր քզի շաժաց.
Լուրի՛կ, լուրի՛կ, լուրի՛կ, հա՛յ լուրի՛կ։

Կարճկանա Նանկանց գյուղ
էԱԺՋ 64

728

Առնոսն էր պանցրիկ սար, չկեր քու նման,
Երկու պաղ ախպուրքը տակեն կըգեր,
Մեկն էր Թըխ բառին, մեկն էր Թըխ զոզան,
էն ինչ Թըխ բառին, զարիբ հավքերուն.
էն ինչ Թըխ զոզան սըրսուռ մաքերուն։

Առնոսն էր մըկլեր խոնավ կեր կալու,
Թուխ աշքեր քար կաներ լալու.
Ա՛խ, վըլա տո տնավե՛ր, տու ասա՛, տու ասա՛՝
Ես նռան կինին էր՝ տու կանաչ քասա։

Ա՛խ, վըլա տու տնավեր, դու ասա՛, դու ասա՛,
Տու լից՝ ես խմեմ, դու անուշ ասա.
Ա՛խ, վըլա դու տնավեր, դու ասա՛, դու ասա՛,
Կոտրիչ կոռ կավին, պացվիր Թուփ ասմին։

Ա՛խ, վըլա դու տնավեր, դու ասա՛, դու ասա՛.
Խավ կաներ վըր քաֆուր վարթին։

Ա՛խ, վըլա դու տնավեր, դու ասա՛, դու ասա՛.
Երկինքն էր ամպեր, կըկեր մըրմուռ ծուն,
Կըգեր, կը Թափեր վըր մալուլ մարթուն։

Ա՜խ, վըլա դու տնավեր, դու ասա՛, դու ասա՛.
Քուներ, քըրտներ, շող տըվեր լաչուն,
Քամին ղըրկըծեր շամամ ծծևրուն։

Վան
ՀԺԲԱ№ 3

729

Մարե՛, մարե՛, մի՛ տըփե,
Ասվու ափերն եմ ընկե,
Քյառասուն կաքավ եմ բռնե,
Քյառասունն էլ մեկտեղ կընդե,
Խամբըրով կուտ եմ տվե,
Ջրմենի փորն էլ կշտացե,
Խամբըրով ջուր եմ տըվե,
Խմբներով թաս եմ հանե.
Մարե՛, մարե՛, մի՛ տըփե,
Դուշմնի կնիկն անիծե,
Դուշմնի տըներին ավիրեր,
Որ կաքավներըք չըտաներ։

Վան
ՎՍՇՐ 7—8

730

Սիրաս բլե՝ կուլամ էրուն,
Անխեր թալին իմ ձագերուն,
Անբուն թողին իմ ձագերուն,
Սիրաս բլե՝ կուլամ էրուն։
Ամա՜ն, ամա՜ն, Սաֆար աղա՛,
Աստված քո տան դուռը շարա,
Սըրներ կոտրա, չըներ կտրան
Իմ ձագերը անխեր քնան,
Ամա՜ն, ամա՜ն, Սաֆար աղա՛։
Աստված քո տան դուռը շարա,
Տունդ սև քարով շարա,
Բալեխտ հառեջդ թող Երթիփա.
Ամա՜ն, ամա՜ն, իմ ձագերուն,
Իմա՞լ էնեմ իմ դարդերուն։

Բասարգեչար
ՀԺԲԱ 9

730 ա

Սրներ կոտրան,
Ջրեր կտրան,
Իմ ձագերը
Անխեր քնան,
Անխեր քնան,
Անխաց քնան,
Սրներ կոտրան,
Ջրեր կտրան,
Ամա՜ն, ամա՜ն, Սաֆար աղա՛,
Աստված քո տան դուռը շարա։

Բասարգեչար
ՀԺԲԱԳ

731

Արեն առեր մըչ բաղանին,
Մերիկ մեռներ ուր վարդանին.
Արեն առեր մըչ խաչերաց,
Մերիկ մեռներ թուխ աչերաց։
Դոնխա-գյալին թափիր բամբակ,
Խալըթ կտրեց չորս հատ ջանդակ։
Վարագա սար բացվեր կակաչ,
Խալըթ կտրեց ութ հատ ականջ։
Վարագա սար բացվեր սուսուն,
Խալըթ կտրեց ուտ հատ ականջ։
Սևեր էկան ճրոճրոալեն,
Մերեր էկան մոմրոալեն։
Ամմա՜ն, ամմա՜ն, խալըթ աղա՛,
Օրորոցին խաթր արա։

ՌՄԲ 70

731 ա

Իմ դարդերս քյանց դարդ բեդար,
Չ'եյան խասան չունքի բերանս,
Էլ ճար չունեմ, էլաճ չունեմ,
Դուս հ'ըլնելու ճամբաս չունեմ.
Բերին կապին կարմիր կանանչ,
Տվին խորըդ առանց ճանանչ,
Իմալ էնեմ իմ դարդերին,

Ա՛յ իմ բալա՛, կարմիր լալա՛,
Իմ դարդերին դու հար արա։

Բասարգեչար
ՀԺԲԱԴ

732

Լուսացա՛վ, լուսացա՛վ,
Լուսն է բարին,
Միտն է ծառին,
Հավն է թառին,
Ծուլլ մարդկանց քունն է տարի,
Աշխատավոր վեր կաց բանիդ։

ԱՀՆ 69

732 ա

Լուսացա՛վ, լուսացա՛վ,
Լուսն է բարի,
Միտն է ծառին,
Հավն է թառին,
Բեգովլաթի քունն է տարի,
Դովլաթավոր, վիկա՛ց, բանի։

ԱԵԴ 194

733

Բադի՛կ, բադի՛կ,
Կարմիր թաթիկ,
Բադի՛կ, բադի՛կ,
Կարմիր տոտիկ,
Ո՞ւր ես գնում կամաց-կամաց,
Ջագուկներդ չորս քուլա առած։
— Ես գնում եմ ջուր դռնելու,
Ջագուկներիս լվանալու.
Ջագուկներս մաքուր-մաքուր,
Տղոց էրևս ազա ու մուր։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 63

734

Կրա՜ն-կրա՜ն, կրակա՜ն,
Կռունկները հա Բրռան,
Կռունկների թևի տակ՝
Եկավ ամառ մեր դրռան։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 64

735

Օրո՜ր, օրո՜ր, ի՛մ սիրունիկ,
Օրո՜ր ասեմ դու նանա՜.
Երկար ապրես կարմիր օրեր,
Կարմիր արև ունենաս,
Օրո՜ր, օրո՜ր, ի՛մ անուշիկ,
Օրո՜ր ասեմ, դու նանա՜,
Ալվարդ դառնա քարն ու փուշը,
Որ ճամբով էլ դու գնաս,
Օրո՜ր, օրո՜ր, ի՛մ անուշիկ,
Օրո՜ր ասեմ, դու նանա՜։

ՀԺԵ 11

736

Եկա՜ն քյուրդեր, եկա՜ն պարսիկք,
Կուլան, կողբան հայ գյուղացիք,
Արճեշ, Ախլաթ ավերեցին,
Ալաշկերտեն զարկին բերին.
Մի՛ լայք, որդյակք, մի՛ լայք, ամա՜ն,
Մեզի կուտե անգութ դադան։
Այն ի՞նչ տեղ է Սարդարապատ,
Ո՛չինչ ունիմք և ոչ մի հաց,
Արևու տակ գերի մացինք,
Անօթի, մերկ մեռանք գացինք.
Մի՛ լայք, որդյա՜կք, մի՛ լայք, ամա՜ն,
Ձեզի կուտե գայլ Հասան-խան։

ԱՐ 3

737

Քուն եղիր, բալա՜ս, աչքդ խուփ արա,
Նախշուն աչքերուդ քուն թող գա վրա.
Օրո՜ր, օրո՜ր, բալա՜ս, օրո՜ր ու նանի՜,
Իմ Կարապետիս քունը կտանի։

Օսկի խաչ վզիդ քեզ պահապան,
Նարոտ կապիլ է մաքրեն տեր-պապան.
Օրո՜ր, օրո՜ր, բալա՛ս, օրո՜ր ու նանի՛,
Իմ կարապետիս քունը կտանի։

Մավի հիլուններ կախիլ եմ ես ալ,
Նազար չիս առնուլ, քուն եղիր, մի լալ,
Օրո՜ր, օրո՜ր, բալա՛ս, օրո՜ր ու նանի՛,
Իմ կարապետիս քունը կտանի։

Աս քանի մարդ անքուն աչքովը,
Անցիլ է օրոր օրորոցքիդ քովը,
Օրո՜ր, օրո՜ր, բալա՛ս, օրո՜ր ու նանի՛,
Իմ կարապետիս քունը կտանի։

Օրորոցդ օրրիմ, օրով բոյ քաշես,
Մըղկըտան ձայնով սիրտս չըմաշես,
Օրո՜ր, օրո՜ր, բալա՛ս, օրո՜ր ու նանի՛,
Իմ կարապետիս քունը կտանի։

Դուն ալ քուն եղիր, ինձ ալ քուն տուր,
Սուփ աստվածամայր, կարապետիս քուն տո՛ւր,
Օրո՜ր, օրո՜ր, բալա՛ս, օրո՜ր ու նանի՛,
Իմ կարապետիս անուշ քուն արի։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 58

738

Նանի՛կ, նանի՛կ, օրո՜ր, բալա՛ս,
Շուտ քուն էղիր տեսոք տղաս,
Բեշիկդ նոր, տոշակդ չոր,
Քուն եղիր, բալա՛ս, օրո՜ր, օրո՜ր։

Օրո՜ր, բալա՛ս, նանի՛կ, նանի՛կ,
Տեսքիդ մեռնի քու ծեր տատիկ,
Խաչ, համայիլ վիզեդ կախած,
Ջար նազարը կեշթա, կուգա,
Ջարար տալու չկա սըրտ.
Օրո՜ր, օրո՜ր, նանի՛կ, նանի՛կ,
Օրո՜ր կասի քու ծեր տատիկ։

Գարեռել հրնշաակ պլխուդ վրան,
Թուրը ձեռքը քեզ պահապան,
Աստվածամոր ձեռքը վերադ,
Աղօթ կանեն չոքած մեծադ,
Օրո՜ր, օրո՜ր, նանի՜կ, նանի՜կ,
Օրո՜ր կանեն քու ծեր տատիկ։

Կարմիր կոճակով կանաչ կապադ՝
Օսկի դերձանով կարից մամադ,
Կարմիր կոշիկ, կապուտ գտակ,
Արծաթ գոտի բերից.
Օրո՜ր, բալա՜ս, նանի՜կ, նանի՜կ,
Նախշիդ մեռնի քո ծեր տատիկ։

Թոռ ու ձին կապած առանը,
Արծըթե էկեռը կախած թավանը,
Ջենկուները օսկի ջրած,
Սուրը կարապետի հազիր արած,
Օրո՜ր, բալա՜ս, նանի՜կ, նանի՜կ,
Ուխադ կատար, սիրուն թոռնիկ։

Շուտ մեծացիր ու բոյ քաշե,
Պատկդ օրհնել մեծա կուզե,
Քեզի գտիլ է տեսոք աղջիկ,
Մարը՝ Լուսիկ, ինքը՝ Աստղիկ,
Օրո՜ր, բալա՜ս, նանի՜կ, տղա՜ս,
Քընի դնաց խելոք տղաս։

Նոր Նախիջևան
ՆՆԲՓ 57

739

Տղա էլի քու քնուց,
Պուտ մի խմա քու գինուց,
Քու ձին ա պրծեր,
Սամսան սարեն ա գացեր,
Ծա՜լ, ծա՜լ խոտերն ա կերեր։

ՀԺԲԱՆԴ 84

740

Մշու փաշան քու հերը,
Մշու խանումը քու մերը,
Բոլորը քու հացը կուտեն,
Քեզ համար կաղոթեն։

Մուշ, Տարոն
ԱՔԱ 1

741

Օրո՜ր, օրո՜ր, իմ տղան,
Միրան Թափիր էր վերեն,
Օրորցի մեջ պառկեր ես,
Օրորոցիս ձագուկս։
Աղջիկ եմ, շատ խորատ եմ,
վեր-վեր Թռնեմ, ճուճող բռնեմ,
Բժիկն ուտեմ, օսկոտ կարկահ ընեմ,
Լաճներ խաբեմ, հոգիդ հանեմ։

վան
ԳԹՋ

742

Ասօր մեր տղան քուն ունի,
Բաժա շինած օրոցք ունի,
Օ՜ր, օ՜ր, օ՜ր,
Նեննի՜, օ՜ր, օ՜ր։

Ագա-փաշա հարիկ ունի,
Խանում-խաթուն մարիկ ունի,
Օ՜ր, օ՜ր, օ՜ր,
Նեննի՜, օ՜ր, օ՜ր։

Անծոտ ճուլիկ մամիկ ունի,
Կռճեզուկ պապ մը ունի,
Օ՜ր, օ՜ր, օ՜ր,
Նեննի՜, օ՜ր, օ՜ր։

Օրո՜ր ըսեմ՝ քունը տանի,
Դուռը դըննեմ՝ օշոն չտանի,
Օ՜ր, օ՜ր, օ՜ր, նեննի՜, օ՜ր, օ՜ր։

Օրո՜ր բանամ իմ լույս զավկին,
Ջարիկ մարի, լույս օր տեսնի,
Օ՜ր, օ՜ր, օ՜ր, նեննի՜, օ՜ր, օ՜ր։

Վարդն է բացվեր, պլպուլն էկեր,
Սիրականիս քունիկն էկեր,
Օ՜ր, օ՜ր, օ՜ր, նեննի՜, օ՜ր, օ՜ր։

Արևն է բացվեր իմ սիրականին,
Արևուն մեռնեմ իմ (անուն)... ին,
Օ՜ր, օ՜ր, օ՜ր, նեննի՜, օ՜ր, օ՜ր։

ԱԴՄ ԿԲ

743

Օրո՜ր ըսեմ՝ քնանաս,
Բոյ քաշես ու մեծանաս,
Ես քեզ համար շա՜տ ու շա՜տ,
Մուրատ ունիմ, ի՛մ տղաս։

Օրո՜ր ընեմ՝ քնանաս,
Շա՜տ բանևրու տիրանաս,
Ես քեզ համար շատ դրամ
Շահած ունեմ, ի՛մ տրդաս։

Օրո՜ր ըսեմ՝ քնանաս,
Ուտես, խմես զորանաս,
Գիշեր-ցերեկ անխըռով,
Հանգիստ, մո՜ւշ-մո՜ւշ քնանաս։

Օրո՜ր ընեմ՝ քնանաս,
Ուտես, խմես զերանաս,
Գիրանալդ դեն կենա,
Խելոք, կտրիճ մարդ դառնաս։

Վան
ԳԹՋ

744

Սուրբ աղոթքան բացվեր է,
Արև ալ մալ ծաղկեր է,
Սիրունս աչքեր բացեր է,

Հավքու լեզու առիր է.
Նանա՜, նա՜, տանանե՜ր,
Սիրունիկս շուտ ջոջաներ։

Վարին փնշի պուլբուն,
Բլբուլն իկն հլուդուն,
Բարև կուտա վարդերուն,
Ելի՛, ելի՛, ի՛մ սիրուն.
Նանա՜, նա՜, տանանի՜,
Բլբուլս շուտ ջոջաններ։

Ծառն ու ծաղկունք ծաղկեցին,
Նոր հարսի պես փթթեցին,
Անուշ հոտով օծվեցին,
Իմ սիրունին կո կողբին.
Նանա՜, նա՜, տանանե՜ր,
Սիրունիկս շուտ ջոջաններ։

Ելնեմ, տանեմ իմ սիրուն,
Վեր էն պա՜ղ-պա՜ղ ջրերուն,
Փունջ մանուշակ վեր պլխուն,
Զարնիմ պաղ ջուր թշերուն.
Նանա՜, նա՜, տանանի՜,
Բլբուլս շուտ ջոջաններ։

745

Ա՛յ, պիմ ասուվածատուր, ա՛յ կըտրիճ.
Էղաւղ, օ՜յ,
Ասպա ո՞ր մար, որ պըծղ բերել.
Ընկալ, օ՜յ,
Թէ պինք՝ մարդ—մարըն չէ այ բերել,
Էղաւղ, օ՜յ,
Ոչ կնիկ դայեկ սընուցեր.
Ընկալ, օ՜յ,
Թէ պինք՝ մարդ—մարըն չէ այ բերել.
Էղաւղ, օ՜յ,
Ոչ կնիկ դայեկ սընուցեր,
Ընկալ, օ՜յ,

Թէ եկն ի մօրին այ բերել,
Էղաւղ, օ՜յ,
Խրկագվին կաթով սընուցեր,
Ընկալ, օ՜յ,
Աստղունք իր օրորքն այ սրսել,
Էղաւ, օ՜յ,
Լուսնիկան ի լուսն է հաներ,
Ընկալ, օ՜յ։
Հիսուս ինքնսան այ եղեր
Էղօյ տեգ,
Որդանան գետըն մըկըտել,
Ընկալ, օ՜յ,
Կընքել, իր անուն այ դրել,
Էղօյ տեգ
Այս անուն մեր նոր թագաւոր
Ընկալ, օ՜յ։

ՄԺԽՄ 127

746

Եկավ գարուն, եկան հավքեր,
Տաքցավ արև, գըլգըլան ջրեր,
Եկավ վարուցանելու հըյամ.
Կըռունկ ամոլ լըծնցի,
Ղաղեր հորիկ լըծնցի,
Ճրնճուղ հոտաղ վարձնցի,
Կաքավ հացվոր բըռննցի,
Արտիկս վարնցի, ցաննցի,
— Ցաննցի՜ ու թըմմնցի՜...
Եկավ ջրելու հըյամ.
Աչքիս աղբյուր էրնցի,
Արտըսուքներս քամնցի,
Թևերս թիակ էրնցի,
— Ջրնցի՜ ու թըմմնցի՜...
Եկավ քաղելու հըյամ.
Ձեռքերս մանդղոն էրնցի,
— Քաղնցի՜ ու թըմմնցի՜...
Եկավ փոծխելու հըյամ,
Մատներս փոծխ էրնցի,

Փոծխեցի՜ ու թըմմեցի՜...
Եկավ կապելու հըյամ,
Մտիբս կեմ օլրեցի,
Մեկ ձեռքս բունսքի էրեցի,
— Խոմեցի՜ ու կապեցի՜...
— Բարդեցի՜ ու թըմմեցի՜...
Եկավ կրելու հըյամ.
Պառեկս բաշխիր էրեցի,
Կըրեցի ու կալ լըցի.
— Փըռեցի՜ ու թըմմեցի՜...
Եկավ ծեծելու հըյամ.
Լաղլաղ կորի լըծեցի,
Կիվկիվ վըրեն նըստուցի,
Հելե՜վ, հելե՜վ կանչեցի.
— Ծեծեցի՜ ու թըմմեցի՜...
Եկավ թեղելու հըյամ.
Բևրնովս քամի փչեցի,
— Հ՛երնեցի՜ ու թըմմեցի՜...
Եկավ թառելու հըյամ.
Գացի թառող բևրեցի.
— Շեղջս թառեցի՜ ու թըմմեցի՜...
Եկավ չափելու հըյամ.
Գացի շահնեն կանչեցի,
Ականջըս շընիկ էրեցի.
— Չափեցի՜ ու թըմմեցի՜...
Եկավ վերցնելու հըյամ.
Բուճերս չուալ արեցի,
Երկու բուճ կես-կես լըցի,
Հոտաղ, մշակ հավքերուս
Հախիկը թամամ բաժնեցի,
Մնացածը վերցի,
— Բնադուն ադցի՜...

վան
ՀՀՍ 345

747

Կոտ ու կես կորեկ ունիմ ցանելու համար,
Ճնճուղներ ժողվան էկան ուտելու համար,
Կըզվա քար վերցի զեռնեն՝ զարնելու համար,
Թըռա՜ն գացին բերդի տանիս՝ զանգտելու համար.

Ղասաբներ տևսան, էկան մորթելու համար,
Երեցներ ժողվան էկան օրհնելու համար,
Աղչիկներ ժողվան էկան տեղտըրի համար,
Պառավներ ժողվան էկան մաշկերու համար,
Ռևսներ ժողվան էկան խորվածի համար,
Համբարներ ժողվան էկան գովալու համար,

Ա՜յ ճրնճուղիկ,
Կարմի՜ր տոտիկ,
Սիվտա՜կ փորիկ,
Ուտեն կուտիկ,
Խըմեն ջրիկ,
Առվի եղրիկ,
Պըզտի՜կ, մըզտի՜կ։

ՄՄ 291

748

Այգ վայրի լեռներ ի վայր
Ջուրն ի շինուտ մեջն անցանի, հա՜յ.
Թուխ մանուկ մի ի դուրս ելեր,
Ջեռքն ու գլուխն է լուացեր.
Լուացի՜ր, հա՜յ լուացեր,
Դարձեր ի ջուրն հարցունք ելել, հա՜յ.
— Ջո՛ւր, դու ի յո՞ր լեռնե կուգաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ, հա՜յ։
— Ես ի լայն լեռնեն կուգամ,
Որ հին ու նոր ձյունն է վերա, հա՜յ։
— Ջո՛ւր, դու ի յո՞ր առու կէրթաս,
Իմ պաղիկ ջրիկ ու անուշիկ։
— Ես ալ ի հայն առուն կէրթամ,
Որ փունջն շատ է մանուշկին։
— Ջո՛ւր, դու ի յո՞ր այգի կէրթաս,
Իմ պաղիկ ջրիկ ւ՝ անուշիկ։
— Ես ի յայն այգին կէրթամ,
Որ տերն ի մեջն է յայգեպան։
— Ջո՛ւր, դու յո՞ր տունկ կու ջրես,
Իմ պաղիկ ջրիկ ւ՝ անուշիկ։
— Ես ի հայն տունկն ջրեմ,
Որ տակն խոտ բերե գառին։

Տակն խոտ բերև դառին,
Ծառըն խնձորի, հազարավարդին։
— Ջո՛ւր, դու ի յո՞ր պաղչա կէրթաս,
Իմ պաղիկ ջրիկ ւ՝ անուշիկ։
— Ես ի յայն պաղջան կէրթամ,
Որ պուլպուլի քաղցր եղանակ։
— Ջո՛ւր, դու ի յո՞ր աղբյուր կէրթաս,
Իմ պաղիկ ջրիկ ւ՝ անուշիկ։
— Ես ի հայն աղբյուր կէրթամ,
Որ գա քո յարն ու ջուր խմեմ,
Դեմ գամ ըզդունչն պագնեմ,
Ապա սիրուն հազնեմ։

ՄԵԳ 15—16

749

Մայրը կըսե՝

Անուշ քնակն աչերն առեր,
Անուշ հովերն ալ տարուբեր,
Իմ տատրակիս քունն է եկեր,
Անուշ երգով ըսեմ օրո՛ր։

Ուղին կըսե՝

Ես քուն չունիմ, անգութ մայրիկ,
Հերիք աչքս կապես, հերիք,
Մեկ պահիկեն կըննեմ պաճիկ,
Իս արձակե, մի՛ ըսեր օրո՛ր։

Մայր՝

Մինչև չի լան, մատաղ մանկիկ,
Ծիծ չեն խտար անոր, գառնիկ,
Դուն չի լացած իմ մեկ հատիկ,
Ես ծիծ կուտամ կըսեմ՝ օրո՛ր։

Ուղին՝

Քիչ մը թուլցուր թևերս, ոտքերս,
Ալ քմրեցավ փափուկ մսերս,
Անուշ մռափն առնե աչքերս,
Հապա սըխմեն կարդա օրո՛ր։

Մայր՝

Այդ սուտերովդ չեմ խափվի ես,
Կուզես որ դիս նրստեցնես,
Քիչ քնանաս, ծիծս ուտես,
Դատարկ տեղը ըսեմ օրո՞ր։

Որդին՝

Քիչ մը ճո՞ր-ճո՞ր, քիչ մը ճա՞ր-ճա՞ր,
Քիչ մը տա՞ն-տա՞ն, քիչ մը պա՞ր-պա՞ր,
Քիչ մ'ալ պապան առ հոպպ տար,
Քիչ մ'ալ մեն-մեն, ետքը օրո՞ր։

Մայր՝

Ատ քու լեզուդ կուտեմ հիմա,
Քու կանգունովդ կըտավ չկա,
Տա՞ն-տա՞ն, մեմեալ հաբաբա՞յ,
Աչուկ, պա՞հ-հ-պա՞հ, ըսեմ օրո՞ր։

Որդին՝

Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր,
Կրճվճվամ դուն չես լսեր,
Անուշ ձայնիդ ես զմայլեր,
Ես կուլամ, դուն կըսես օրո՞ր։

Մայր՝

Արցունքներդ մարգարտի պես,
Երեսդ ի վայր ի՞նչ կթափես,
Մի՛ լար, ձագուկ, մի՛ լար, մեղք ես,
Ով կուզես՝ ան ըսե օրո՞ր։

Որդին՝

Գիրկդ ինձի հանգստարան,
Ծիծերդ բերնիս անուշ ծորան,
Իրիկվան դեմ պառկիմ օրան,
Աչքըս կապե, ըսե օրո՞ր։

Մայր՝

Քնացնեմ իմ ազավնիս,
Մեծացընեմ սիրով սըրտիս,
Կարմիր վարդի նման
Շուրջ նըստիմ, ըսիմ օրո՜ր։

Ուղի՝

Սիրտդ քար է, ալ հասկցա,
Լացի, լացի շահ չի գտա,
Ալ քնանամ ձարը չի կա,
Երկա՜ն-երկա՜ն ըսե օրո՜ր։

ՔՀՄ 120—122

749 ա

— Անուշ քնիկն աչերն առներ,
Անուշ հովերն ալ տարուբեր,
Իմ տատրակիս քունն է նկեր,
Անուշ երգով ըսիմ օրո՜ր։
— Ես քուն չունիմ, անգութ մայրիկ,
Հերի՛ք աչերս կապես, հերի՛ք,
Թևք պահիկն կընիմ պաճիկ.
Ջիս արձակե, մըսիր օրո՜ր։
— Մինչև չըլան, մաւրազ մանկիկ,
Շիծ չեն իտար անոնց, գառնիկ,
Դու չագամ, իմ մեկ հատիկ,
Ես ծին կուտամ, կըսեմ օրո՜ր։
— Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր,
Կը ճվճվամ դուն պիս լսիր,
Անուշ ձայնիդ ես զմայլեր։
Ես կուլամ, դուն կըսես օրո՜ր...
— Արցունքներդ մարգարտի պես,
Երեսդ ի վար ի՞նչ կը թափիս,
Մի՛ լար ճագուկ, մի՛ լար, մեղք ես,
Ով կուգես, ան ըսե օրո՜ր։
— Գիրկդ ինծի հանգստարան,
Շիծերդ բերնիս անուշ ծորան,
Իթիկվան դեմ պառկիմ օրրան,
Աչքս գոցե, ըսե օրո՜ր։
— Քնացնիմ, իմ ազավնիս,

Մեծացնեմ սիրով որդիս,
Կարմիր վարդի նման բացվիս,
Շուքդ նստիմ, ըսիմ օրո՜ր...
— Քիչ մը թուլցուր թևերս, ոտքերս,
Ալ թմրեցան փափուկ մսերս,
Անուշ մրափն առնե աչերս,
Ապա սեղմե, կարդա օրո՜ր։
— Այդ սուտերով չեմ խաբվիր ես,
Կուգիս որ դիս նստեցնիս,
Ջը քնանաս, ծիծս ուտես,
Դատարկ տևզը ըսիմ օրո՜ր։
— Քիչ մը ճորճո՜ր, քիչ մը ճարճա՜ր,
Քիչ մը տանտա՜ն, քիչ մը պարպա՜ր,
Քիչ մ'ալ միջեն, հաքը օրո՜ր։
— Այդ քու լիզուդ կուտեմ հիմա,
Քու կանգունովդ կտավ չկայ։
Տանտան, արա, ալ հաբաբա,
Աչուկ պահպահ, ըսիմ օրո՜ր։
— Սիրտդ քար է, ալ հասկցու,
Լացի, լացի, ճար չգտայ,
Ալ քնանամ ճարը չկայ,
Էրկան, էրկան ըսե օրո՜ր։

ԳԱԱ

750

Ա՛յ մամանի, մաստանի,
Բալեն հորը հաց տանի,
Կարագը ճամփին ուտի,
Հորը ցամաք հաց տանի։

ՀԺԲԱՆԴ 41

751

Թափը՜ռ, թըփը՜ռ ձայն կուգա,
Ելեք տեսեք վո՞վ կուգա։
— Բալուա կարվանը կուգա։
— Ի՞նչ է բերեր։
— Բուրդ, բամպակ ու ապրուշում։
— Գինն ի՞նչ է։
— Գինը կոշկարն է տարեր։

ԲՆԱ 31

752

— Լուսունկա քնի, ուսկո՞ւց կուգաս։
— Աբրահամու ծովու վերեն։
— Դուն դեղին, ձիերդ դեղին,
Մարուրդ էկեր գոտեառիին։

ԲՆԱ 31

753

Դո՛ւլ, դո՛ւլ, դո՛ւլ, տնակնե՛ր,
Կահիմի բու պատեր,
Կամար է բու տոներ,
Դո՛ւլ, դո՛ւլ, դո՛ւլ, տնակնե՛ր։

Տնան շինինք մեզ տաշտին,
Դադեն էկավ մեզ հաշտին,
Կիշկա չկանք, ծեն ի տուր մենք էկանք,
Դո՛ւլ, դո՛ւլ, դո՛ւլ, տնակնե՛ր։

Շիննենք մեր տնակներ,
Պերենք պատի հ'աուներ,
Յանենք մեր բոսատաններ,
Դո՛ւլ, դո՛ւլ, դո՛ւլ, տնակնե՛ր։

Շիննենք մեր փադիներ,
Կապենք մեր կոմեշներ,
Ջնջլենք կովաններ, շիննենք սել, կութաններ,
Դո՛ւլ, դո՛ւլ, դո՛ւլ, տնակնե՛ր։

Կութան լծենք, վար անենք,
Սել լծենք՝ որան կրենք,
Կալ անենք, էրան տանք,
Ետր ամբարներ լցենք,
Դո՛ւլ, դո՛ւլ, դո՛ւլ, տնակնե՛ր։

Եկենք շիննենք կարմունջներ,
Մեր պակեր, ճամբխաներ,
Շարենք մեր ամբրոցներ,
Դո՛ւլ, դո՛ւլ, դո՛ւլ, տնակնե՛ր։

Արևք եռիանք պրակներ,
Կարենք, պիբենք կերաններ,
Շինենք մեր տնակներ,
Տնակների Ղ՛ոդաններ,
Դո՜ւլ, դո՜ւլ, դո՜ւլ, տնակնե՛ր։

Եկեք կնանք մեր տաշտեր,
Ժողվենք առուների քարեր,
Վարենք, սեցնենք դաշտեր,
Դո՜ւլ, դո՜ւլ, դո՜ւլ, տնակնե՛ր։

Հա՜մ ասենք, հա՜մ խաղանք,
Յորեն տանենք, աղանք,
Դադեն ալուր մաղա,
Փոխինդ, կաթա շաղղա,
Դո՜ւլ, դո՜ւլ, դո՜ւլ, տնակնե՛ր։

Պեր ջանթիկներ լիք արա,
Աշխատանքից մլոլ մարա,
Ջանթիկներ վերցրինք տարանք,
Դո՜ւլ, դո՜ւլ, դո՜ւլ, տնակնե՛ր։

Աշուն էր ցուտեր էր,
Հալավներ մաշեր էր,
Դադեն խալավ կը կարեր,
Դո՜ւլ, դո՜ւլ, դո՜ւլ, տնակնե՛ր։

Խաղացինք մենք պոծանք,
Խլսուն էլի կիկանք,
Քաթա, փոխինդ կառնենք,
Կառնենք կիկանք,
Դո՜ւլ, դո՜ւլ, դո՜ւլ, տնակնե՛ր։

ՀԺԲԱՂԱ 5

754

Խշշի՜, խշշի՜, փարա՜, փարա՜,
Իս էլիմ բոճր սարայ,
Դու էլիս քոշ կտորայ,
Ա՛յ նանա՜յ, տանից դուս իկիյ,

Դուս ակալ, բաբի՛կ, բաբի՛կ,
Ինքյը տիս, ախչիկյը տիս,
Ըխչկուն ծամարը տիս,
Ծամերին ծամքողը տիս,
Ըդնեբուն բեմբակը տիս,
Ջըմըշկներուն գանդաբը տիս։

Ագուլիս
ԱԲՍ

755

Իշու մուրուս էրկու բյութա,
Խանամի՛ր, խանամի՛ր*,
Մե՛յ կանաֆիլ, մե՛յ կապիֆա,
Խանամի՛ր, խանամի՛ր։

Էշը բյաշեցին վերին էօղեն,
Ծոեր ժողվան ինոր վերեն,
Էշը քյաշեցին տախտի պերան,
Քապցը պաղարճ դրին պերան,
Էշն արիցին խուրդու՝ կերան,
Կողրայքն արին կոզվի մերան,
Ոտքերն արին սուն ու գերան,
Գելոխ դրին, փաչայ կերան,
Խանամի՛ր, խանամի՛ր։

Վան
ՎՍԵԱ 26

756

Ես աս գիշեր դուս ելա,
Ճնճղունին կճվվային,
Կայնեցի մտիկ արի,
Իրարու գանգատ կանեյին։
Մեկն ալ մեկալին կըսեր.
«Ինչ գիժար է մանկան հոգին»։
— Թող ելլե՛ մանկան հոգին,
Թող չհլլե՛ աչերն երեսին։
Ես քաշած ու տեսած եմ,
Չի տեսնե դուշմանիս աչուին։

Ակն
ՀԱՃ 449

* Յուրաքանչյուր մեկ տողից հետո կրկնվում է «խանամի՛ր, խանամի՛ր» տողը (Ծ. Բ.)։

757

Մարի՛կ, քու կարած շապիկդ,
Կըտրտեր՝ մխաս կերևա։
Կարև դուն նորեկ շապկեկ,
Տուր աղբորս ուր առնև ու գա։

Ակն
ՀԱՃ 488

758

Սիրուն երևիս, որբ ես մնացեր,
Քո անբախտ մորը գերի են տարեր,
Նա գնաց կորա՜վ, էլ ետ չի գալու,
Էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու։
Քամին կգա, ժաժ կտա,
Պախարեն կգա, ծիծ կտա,
Ջա՜ն, դուլում, ջա՜ն, ջա՜ն։

Նայեմբերյան
ՀԾԲԱՆԴ

759

Նայիմ, ողբամ ծնող տղայիս.
Վա՜յ և եղո՜ւկ ասեմ իմ անձիս.
Արդ զի՞նչ լինեմ եղուկ եղկելիս,
Տեսի մեռեալ զոսկեհատ զորդիս։

Զանուշահոտ վարդն իմոյ գրկիս
Խլեցին առին, թալկացավ հոգիս.
Զիմ գեղեցիկ ոսկե աղավնիս.
Թըռցուցին չինեն, խոցվեցավ սըրտիկս։

Զքաղցրանվագ սիրուն տատրակիկս,
Մահուբ բազան էզարկ խոցեցավ գիս,
Զիմ քաղցրաձա՜յն արտուտիկ ձագիկս,
Առեալ Թռա՜ն ի վեր, ի երկինս։

Զիմ ծաղկալի կանաչ նըռնենիս
Կարկտահար արին դեմ աչիցս,
Զիմ կարմրացեալ խնծորն ի ծառիս
Զանուշահոտն ի մեջ տերևիս։

Ձիմ գեղեցիկ, ծաղկնալ նըշնիս
Բոթիափեցին անպտուղ արին զիս,
Հարյալ ձըգեցին ի վերա երկրի,
Կոխան արարին հողոյ տապանին։

Ո՜հ, զի՞նչ լինիմ եղուկ եղկելիս,
Շատ տրտմութիյունք պատեցին զիս.
Արդ, ան՛ր, ընկալ զհոգի տղայիս
Եվ հանգո ի լուսեղեն երկինս։

ՔՀՄ 141

760

Կագվուն ձագը տանին, մարը կու ճչի,
Գիշեր-ցորեկ կասկամ կուլի, կու կանչե.
Կանչե՛, հե՛յ մարիկ, կանչի՛,
Ամ խաար կանչելդ ալ ի՞նչ է։

Ակն
ՀԱՃ 449

761

Իմ խելեմքեր որդեկ, խելեմքեր,
Խելեմիդ մատներն է թափեր,
Խելեմիդ մատներն է թափեր,
Տիվիրիդ քովինն է նեխեր։

Ակն
ՀԱՃ 450

762

Եկայք, սիրելիքս ամեն,
Ձեղկելի գերիս ողբացեք.
Վասն այս ողբալոյս պատճառն,
Կաղաչեմ, զիս մի մեղադրեք։

Քույրք ւ՝ եղբայրք, դուք միտ դրեք,
Ձձեզ խնդրեմ՝ ինձի լըսեցեք.
Հետ իմ սիրական որդույս,
Ձեննհար, զիս մի բաժաննեք։
Ա՜յ իմ սիրական եղբարք,
Իմ որդուս դուք զին կըտրեցեք,
Ձեռզիս իմ որդուս փոխհան
Ես կու տամ՝ զորդիս գընեցեք։

Ա՛յ իմ աննըման որդի,
Մեկ խոսե՝ ո՞ր տեղըդ ցաւի,
Շուտով քեզ հեքիմ բերեմ,
Ճար անեմ, որ ցաւդ անցանի։

Ա՛յ իմ գեղեցիկ որդի,
Քո օրերտ արև նըմանի,
Այսօր հանց խաւար պատեց,
Որ բընաւ խակի չիրևի։

Ա՛յ իմ նազելի որդի,
Գեղեցիկ ծաղիկ նըռնենի,
Այսօր տերևաթափ եղար,
Գոյնտ քո դարձաւ մեռելի։

763

Լաճու մեր, լաճու մեր եղնի կին,
Լաճու մոր, լաճու մոր կանդմ կոտրեք,
Աղջկան մոր, աղջկան մոր անխամ վռուշ,
Աղջկան մոր, աղջկան մոր կապուտ մինայ,
Վարդ խոտոտա՝ լա՛ճ ի պերե, լա՛ճ,
Շարբաթ արեք՝ լա՛ճ ի պերե, լա՛ճ,
Անդրե ոֆիկ, քյա՛ծ ի պիրե, քյա՛ծ,
Ծաւրե վռուշ, քյա՛ծ ի պիրե, քյա՛ծ։

ԳԱԻՏ 1

764

Լաճու մոր տարեք օտեն ջամ փենճարեն,
լա՛ճ ի պերի, լա՛ճ,
Աղջկա մոր տարեք փակյախ կու ավիլի,
քա՛ծ ի պիրի, քա՛ծ,
Լաճու մոր տարեք էգին վարդեր քաղի,
Աղջկա մոր՝ սոխ խոտրկի, աչք կըծըվծա,
Լաճու մոր տվեք շարպաթ անուշ խմի,
Աղջկա մոր տվեք պաղ լակ, անխամ վռուշ,
Լաճու մոր պիրեք զարպաֆ, կումենի ոսկի,
Աղջկա մոր՝ կալոշ բոթին, ճըտնոց, քամար,
Աղջկա մոր՝ մազե լաման, անտակ սոլեր,
քա՛ծ ի պիրե, քա՛ծ։

Վան
ԱՀԺՔ 103

Ա՜յ իմ սիրական որդի,
Նորաբոյս քաղցր արմաւենի,
Հանգիլ, չորացեր այսօր,
Որ բընաւ իսկի չերեւի։

Ա՜յ իմ պատուական որդի,
Դու բոլոր կանանչ վարդենի,
Երբ ըզքեզ այդպես տեսայ,
Թող երկու աչքս խաւարի։

Ա՜յ իմ պաուելի որդի,
Փեսութեան էիր արժանի,
Այսօր հարսանեացդ փոխան՝
Կրատաւոյ ըզքեզ պատեցին։

Ա՜յ իմ դեղեցիկ որդի,
Դու էիր ումեդ իմ սըրտիս,
Այսօր ըզքեզ ծոցոյս առին,
Քաղեցին զիմ շունչս ու հոգիս։

Ա՜յ իմ սիրական ձագուկ,
Գեղեցիկ ոսկի աղաւնի,
Այսօր խոցեցան սըրտիկս,
Որ ըզքեզ ձեռացս թըռուցի։

Ա՜յ իմ ճարտարախոս որդի,
Քաղցրաձայն նըմման տատրակի,
Այսօր հանց կապեր լեզւավոր,
Որ բընաւ իսկի չի խոսեր։

Ա՜յ իմ սիրական գառնուկ,
Իմ ճարակ հոգոյս ու հոգի,
Ես այլ կու մեռնիմ հետ քեզ՝
Զեմ մընար յերկրիս կենդանի։

Ոդի՝
Ա՜յ խեղճ, ողորմելի մարիկ,
Քանի՞ լաս ողորմ ու գերի,
Գընայ, համբեր տուր սըրտիտ,
Թե չէ՝ քեզ դիժար կու լինի։

Հայիվ, որ խըղճուկ մեռայ,
Զի հասայ սըրտիս մուրատին,
Շատ հասրեվ կայր իմ սըրտին.
Ամենեն մահրում մընացի։

Բայց ես աղաչեմ ի քեն,
Հարապատ մարիկ ցանկալի,
Բանիկ մի խնդրեմ ի քեն,
Թէ խօսքունըս ի քեզ անցանի։

Զաղքատս և զպանդուխտս երկրի
Կերակրես անձանձրանալի,
Տըրօք և ողորմութեամբ
Զիս յիշել տաս պատարագի։

Յոյս՝ աստուածածին անես,
Բարեխոս է նա միշտ բարի,
Եւ զիւր միածին որդին
Աղաչէ, որ մեզ ողորմի։

Մժեմ 360

766

Արևն իջավ վեր ծովուն,
Ծովիկն կարավ ձոլ արուն,
Աչքեր խփի իմ սիրուն,
Խետ արևուն քաշի քուն։
Նանի՜կ, նա՜, տանանե՜ր,
Սիրունիկս շո՜ւտ ջոջաներ։

Աստղեր ելան պճպճուն,
Լուսնակ շողաց շողշողուն,
Որո՜ր, տար՜-տա՜ր, ի՛մ սիրուն,
Հետ աստղերուն քաղի քուն։
Նանի՜կ, նա՜, տանանե՜ր,
Շո՜ւտ ջոջաներ իմ ծիծեռնիկ։

Վան
ԳՔՋ

ԱԲՍ—Ս. Սարգսյանց, Ազգաբնոց բարբառը (գռկերի լեզուն), Մոսկվա, 1883։
ԱԴԴ— Մ. Դաբրիելյան, Ակնա գավառաբարբառը և արդի հայերեն լեզուն, Վիեննա, 1912։
ԱԴՄ— Վ. Տ. Մինասյան, Անդիր գպրություն և առակք, Կ. Պոլիս, 1893։
ԱՏ— Անահիտ, Հանդէս ամսօրեայ, Փարիզ, 1907։
ԱԵՖ— Դամառ-Քաթիպա, Ազգային երգարան հայոց, Պետերբուրգ, 1856։
ԱԶՏ—Գ. Տիգրանեան, Առածք, ասացուածք և զրոյցք հայոց Նոր-Նախիջևանի, Ռոստով (Դոնի վրա), 1892։
ԱԽՋ—Տ. Չիթունի, Արևելյան խաղաշխարհ, տոհմիկ խաղեր և ժամանցներ, Ա, Բ, Դ, Կ. Պոլիս, 1919։
ԱՀԱ— Ազգագրական հանդես, առաջին տարի, Ա գիրք, Շուշի, 1896։
ԱՀԲ— Ազգագրական հանդես, երկրորդ տարի, Բ գիրք, Թիֆլիս, 1897։
ԱՀԳ, ԱՀԴ— Ազգագրական հանդես, երրորդ տարի, Գ, Դ գիրք, Թիֆլիս, 1898։
ԱՀԵ— Ազգագրական հանդես, չորրորդ տարի, Ե գիրք, Թիֆլիս, 1899։
ԱՀԶ— Ազգագրական հանդես, հինգերորդ տարի, Զ գիրք, Թիֆլիս, 1900։
ԱՀԷ—Ը— Ազգագրական հանդես, վեցերորդ տարի, Է և Ը գիրք, Թիֆլիս, 1901։
ԱՀԹ— Ազգագրական հանդես, յոթերորդ տարի, Թ գիրք, Թիֆլիս, 1902։
ԱՀԺԱ, ԱՀԺԲ— Ազգագրական հանդես, իններորդ տարի, ԺԱ, ԺԲ գիրք, Թիֆլիս, 1904։
ԱՀԺԵ, ԱՀԺԷ, ԱՀԺԸ— Ազգագրական հանդես, տասնմեկերորդ տարի, ԺԵ, ԺԷ, ԺԸ գրքեր, Թիֆլիս, 1908։
ԱՀԺԹ—Ազգագրական հանդես, տասներկուերորդ տարի, ԺԹ գիրք, Թիֆլիս, 1910։
ԱՍՍ—Արաքս, պատկերազարդ հանդես, Թիֆլիս, 1888, № 2։
ԱՍԲ—Արաքս, պատկերազարդ հանդես, 1889, գիրք Բ, 61։
ԱՐ— Արարատ, էջմիածին, 1909, № 7—8։
ԱՔԱ— Արձագանք, գրական քաղաքական շաբաթաթերթ, Թիֆլիս, 1894, № 1։
ԱՔԲ— Արձագանք, գրական քաղաքական շաբաթաթերթ, Թիֆլիս, 1895, № 5։
ԱՔԳ— Արձագանք, գրական քաղաքական շաբաթաթերթ, Թիֆլիս, 1895, № 26։
ԲՆԱ— Բյուրակն, շաբ. Դաթերթ, Կ. Պոլիս, 1898, № 15։
ԲՆԲ— Բյուրակն, շաբ. Ժաթերթ, Կ. Պոլիս, 1899, № 31։
ԲՆԳ— Բյուրակն, շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1900, № 15։
ԲՍԳԳ— Բառագիրք սերասստահայ գավառալեզվի, Կ. Գարիկյան, Երուսաղեմ, 1952։
ԳԱ— Գրիգորիս Աղթամարցի, ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ, Մ. Ավդալբեկյան, Երևան, 1963։
ԳԱԱ— Ռ. Գրիգորյանի անձնական արխիվ։
ԳԱԻՏ—Տեղեկագիր, ՀԽՍՀ գիտ. և արվեստի ինստիտուտի, Երևան, 1926, № 1։
ԳԲՔ— Հ. Աճառյան, Գավառական բառարան, Թիֆլիս, 1913։
ԳԹԱ—ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆ., 177, 236։
ԳԹՋ— Նույնը, Տ. Չիթունու ֆոնդ, 1, գործ 6։

ԴԲՔ— ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Ս. Քամալյանի ֆոնդ, 2-րդ, 3-րդ գործ, № 15։
ԴԺՏԱ— Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940։
ԵԱԽԳ— Երգեր, առակներ, հանելուկներ, ԲՀԱ ընտրյալ, հավաքեց Հ. Մ. Հ. Դավառացի, Տփխիս, 1903։
ԷԱԺԱ—Էմինյան ազգագրական ժողովածու, գ. Ա, Մոսկվա—Ալեքսանդրապոլ, 1901։
ԷԱԺՋ—Նույնը, դիրք Ջ, Մոսկվա—Վաղարշապատ, 1906։
ԹՄԿԱ— Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, մաս 1, Թիֆլիս, 1885։
ԺԵ— Ժողովրդական երգարան, Վաշինգտոն—Բոստոն։
ԺԽԱ— Մ. Աբեղյան, Ժողովրդական խաղիկներ, Երևան, 1940։
ԺԽԲ— Ժողովրդական խաղեր, ձեռագիր ժողովածու Վ. Բդոյանի։
ԼԲ— Լումա, գրական հանդես, Գ տարի, Բ գիրք, Թիֆլիս, 1898։
ՀՆ— Հանդես ամսօրյա, Վիեննա, 1937։
ՀԱԱ— Ս. Հարությունյան, «Ղ. Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղի ժող. երգեր, հավատալիքներ» (անձնական արխիվ)։
ՀԱՃ— Հ. Ճանիկյան, Հնություններ Ակնայ, Թիֆլիս, 1895։
ՀԲԲԱ— Ս. Վ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912։
ՀԳԺԵԱ— Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931։
ՀԲՄ— Ս. Մալխասյանց, Հայկերեն բացատրական բառարան, Երևան, 1945։
ՀԵԱ— Ղ. Ալիշան, Հայոց երգք ռամկականք, Վենետիկ, 1852։
ՀՋՄ— Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955։
ՀԺԱՆ— Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական ավանդություններ, Երևան, 1883։
ՀԺԲԱ— Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվ, Ա. Աբեղյանի ֆոնդ, 1-ին, 2-րդ։
ՀԺԲԱԲ— Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվ, Վ. Բդոյանի ֆոնդ, 6-րդ, № 18։
ՀԺԲԱԳ— Նույնը, Ռ. Գրիգորյանի ֆոնդ, Բասարգեչարի ժողովրդական բանահյուսություն (ձեռ. ժողովածու)։
ՀԺԲԱԴ— Նույնը, Օ. Եգանյանի ֆոնդ, Ղարադաղի ժողովրդական բանահյուսություն (ձեռ. ժողովածու)։
ՀԺԲԱԹ— Նույնը, Գ. Թարվերդյանի ֆոնդ, 5-րդ, № 3, 11։
ՀԺԲԱԻ— Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվ։ Անհայտ բանահավաքներ, Իսրայելյանի ֆոնդ։
ՀԺԲԱԽ— Նույնը, Ս. Խանդադյանի ֆոնդ, 1-ին, № 1։
ՀԺԲԱԼԱ—Նույնը, բանահյուսական խմբարշավ (Աշտարակ), ֆոնդ 2-րդ, № 3։
ՀԺԲԱՂԱ— Նույնը, Ա. Ղանալանյանի ֆոնդ, 3-րդ, № 4։
ՀԺԲԱՄ— Նույնը, Ս. Մովսիսյանի ֆոնդ, 1-ին, № 6։
ՀԺԲԱՆ— Նույնը, Ա. Նազինյանի ֆոնդ (ձեռագիր ժողովածու)։
ՀԺԲԱՆԱ—Նույնը, Տ. Նավասարդյանի ֆոնդ, 1-ին, № 1։
ՀԺԲԱՆԲ—Նույնը, 2-րդ, № 2։
ՀԺԲԱՆԳ— Նույնը, 3-րդ, №№ 3, 8, 33, 41։
ՀԺԲԱՇ— Նույնը, Ս. Շալջյանի ֆոնդ, 1-ին, № 5։
ՀԺԲԱՍ—Նույնը, Մ. Սիմոնյանի ֆոնդ, «Կիրովականի ժողովրդական բանահյուսությունը» (ձեռ. ժողովածու)։
ՀԺԲԱՍՎ— Նույնը, Վ. Սվազլյանի «Իջևան, Դոնի Ռոստովի ժող. բանահյուսությունը» (ձեռ. ժողովածուներ)։

ՀԺԽ— Հայ ժողովրդական երգարան, Նյու-Յորք, 1940։
ՀԺԵՊՄ— Հայ ժողովրդական երգեր, պարեր, Ս. Մելիքյան, Երևան, 1952։
ՀԺՀՆ—Տ. Նավասարդյան, Հայ ժող. հեքիաթներ, դիրք 8-րդ, Թիֆլիս, 1894։
ՀԺԹՆ—Նույնը, դիրք 9-րդ, Թիֆլիս, 1894։
ՀԺՀԺՀ— Նույնը, դիրք 10-րդ, Թիֆլիս, 1903։
ՀԺՊԵՄ—Մ. Մկրտչյան, Հայ ժող. պանդխտության երգեր, Երևան, 1961։
ՀՀԱ— Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895։
ՀՀՍ— Համով հոտով, հրկասիրեց Գ. Վ. Սրվանձտյանց, Կ. Պոլիս, 1884։
ՀՄԿԱ— Ա. Աղաբաբյան, Հավլաբարցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1901։
ՀՊԻ— Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961։
ՀՏՎՊ— Հ. Ե. Վ. Պողոսյան, Համբարձման տոնը և հայ ժողովրդի վիճակախաղը, Վիեննա, 1952։
ՄԵԱ— Ն. Մկրտչյան, անձնական արխիվ, Սիվրի-Հիսարի ժող. բանահյուսություն (ձեռագիր)։
ՄԲԱ— Հ. Աճառյան, Մանկական բարբառ։
ՄԺԵՄ— Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956։
ՄՀ— Մեղու Հայաստանի, լրագիր, 1885, № 62։
ՄՀԱ— Նույնը, 1880, № 3։
ՄՀԲ— Նույնը, 1874, № 3։
ՄՍ— Մանանա, ժողովեաց և ի լույս ետծ Գ. Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, 1876։
ՆԴ— Նոր-դար, քաղաքական և գրական լրագիր, Թիֆլիս, 1890, № 1։
ՆՆԲՓ—Ս. Փորբշյան, Նոր Նախիջևանի հայ ժող. բանահյուսությունը, Երևան, 1965։
ՆՏՏՊ— Հ. Ե. Վ. Պողոսյան, Նոր տարվա տոնը հին և նոր Հայոց բով, Վիեննա, 1952։
ՉՀԲԵ— Ա. Երեմյան, Չահարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, 1923։
ՊԹԱԱ— Պատմության բանկարանի արխիվ, Հ. Սվաշյանի ֆոնդ, 106։
ՊԹԼ— Նույնը, Ե. Լալայանի ֆոնդ, ժողովրդական խաղեր, 65։
ՊՎՍ— Ա. Տեր-Սարգսենց, Պանդուխտ վանցին, Կ. Պոլիս, 1875(6)։
ՌՄԲ—Ա. Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Ալեքսանդրապոլ, 1895։
ՍԿ— Եղ. Կարապետյան, Սասուն, Երևան, 1962։
ՎԱՇԱ— Վանա սազ, ժողովեց Գ. Շերենց, մաս 1, Թիֆլիս, 1885։
ՎԱՇԲ— Նույնը, մաս 2-րդ, Թիֆլիս, 1899։
ՏԽ—Արտ. Տեր-Խաչատրյան, Տարոն, Հավաքածու ժող. երգերու, Բեյրութ, 1950։
ՏԽՄ—Ալ. Մխիթարյանց, Տաղեր ու խաղեր, Ալեքսանդրապոլ, 1900։
ՓԳ—Փորձ, միամսյա հանդես, Տփխիս, 1879, № 3։
ՓԺԲՀ—Գ. Ս. Հովսեփյան, Փշրանքներ ժող. բանահյուսությունից, Թիֆլիս, 1892։
ՔՀՄ— Մ. Մխանսարյանց, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1868։

* * *

Թ. Բ.— Թարգմանություն բանահավաքի։
Թ. Կ.— Թարգմանություն կազմողի։
Ծ. Ա.— Ծանոթություն ասացողի։
Ծ. Բ.— Ծանոթություն բանահավաքի։
Ծ. Կ.— Ծանոթություն կազմողի։
ՀՄՄՏ— Համեմատիր։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանոլագրությունների համարակալման մեջ առաջին թվանշանը երգերի բնագրերի համարն է, իսկ նրանից հետո դրվող փոքր թվանշանը՝ ձանոլագրության համարը։ Մանոլագրված են ոչ բոլոր երգերը։

Մանոլագրություններում ըստ հնարավորին տրվում են բացատրություններ երգերում առկա ազգագրական և այլ կարգի հարցերի մասին։

Երգերի բնագրերի տակ տրված են սկզբնաղբյուրները՝ համառոտագրությամբ, իսկ ձանոլագրությունների մեջ՝ տեղեկանք հրատարակությունների, ասացողի և գրառողի մասին։ Երգերի հետ կապված բոլոր տեղեկությունները, որ ինդել են բանահավաքները, բերվում են անփոփոխ։

«Խաղերգեր» բաժնի ձանոլագրություններում տրվում է խաղերի նկարագիրը։ Որոշ խաղերգերի նկարագրերը պահպանված չեն, այդ մասին ևս հիշվում է ձանոլագրություններում։ Մանոլագրության մեկ համարի տակ հիմնականում հավախմբված են այն երգերը, որոնք կատարվում են միևնույն խաղի ժամանակ։

Երբեմն բանահավաքը խաղի նկարագիրը չի տալիս, այդ դեպքում երգերի խմբավորումը կատարվում է նրանց արտաքին և ներքին ընդհանրության և նմանության հիմքի վրա։

1. Ակնա այս օրորոցային երգը գրի է առել Տ. Վ. Պալյանը։ Այն տպագրվել է նաև Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 243։

2. Տպագրվել է նաև Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 245։

3. Տպագրվել է նաև Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 243։

4. Տպագրվել է Գ. Վ. Սրվանձտյանցի «Համով հոտով» ժողովածուում, անշան փոփոխություններով, 1884 թ. և ապա 1904 թ., սակայն այն մեկ ընդարձակ օրորոցային երգի մի քառյակն է (տե՛ս ՀՀՍ 293 և 322)։ Երգը տպագրվել է նաև Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, էջ 247։

5. Տպագրվել է նաև Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 243, Հ. Ճանիկյանի «Հնութիւնք Ակնայ» ժողովածուում բերվում է նաև օրորոցային երգերի նոտագրված մեղեդին։

5։. Բանահավաք-հրատարակիչ Հ. Ճանիկյանը գրում է.

«Բայերու «եմ»-ին տեղ «իմ» կգործածվի, ինչպես և «չիմ—չեմ», «անիմ—ընեմ», «առնիմ—առնեմ» և այլն, նաև «ուր—որ», «ուչ—ոչ», «տադ» հոդը։ Ակնա օրորների շարքում հանդիպում ենք սառացական ղ հոդի տարբեր գրությունների, առաջնորդվելով Ճանիկյանի նշածով և միօրինակության նպատակով ընդունում ենք «Տ» ձևը։

Ճանիկյանը նշում է նաև, որ Ակնա օրորների շարքը դրի է առել և իրեն ուղարկել հանձնելիս (տե՛ս ՀԱՃ, 413):

6. Տպագրվել է «Բյուրակն» շաբաթաթերթի 1898 թ. № 33 (602), Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 243:

7. Տպագրվել է «Բյուրակն» շաբաթաթերթի 1898 թ. № 33 (602) և Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 244:

8. Տպագրվել է Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 245:

9. Երգի վերջին երեք տողը հայտնի օրորոցային մոտիվն է, որին ավելանալով նախորդող քառյակը, դարձել է ընդարձակ օրորոցային երգ: Տե՛ս Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր», էջ 420: Տե՛ս նաև երգեր 5, 6 և այլն:

10. Տպագրվել է Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 245:

11. Տպագրվել է Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 246:

11_1. Երգը օրհնանք-օրոր է: Այսպիսի երանգավորումը բնորոշ է մանկական օրորոցային երգատեսակներին:

12. Տպագրվել է Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 248:

13. Ակնա օրորների շարքում այս երգը աչքի է ընկնում յուր փոխաբերական երանգով, ուր բլբուլի և ձագերի պատկերով՝ մայրն իրեն և մանկանը նկատի ունի: Համմ. Հ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնա, էջ 410, ուր ևս նույն տրամադրությունն է արտահայտված:

14. Տե՛ս ծանոթ. 11_1:

15. Տպագրվել է Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 246:

16. Երգը տպագրված է նաև Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 246:

16_1. Ըստ բանահավաքի «զինիա» բառը պարսկերեն է և նշանակում է դուցե, գուշանալ, հնարավոր է նաև, որ նա անձնական դերանվան զրաբար հայցական հոլովը՝ «զնա չիմոռմցնեմ» և կամ «զի նա չիմոռմցնեմ» ձևը լինի:

17. Տպագրվել է նաև Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 245:

17_1. Տե՛ս ծանոթ. 11_1:

21. Տպագրվել է «Բյուրակն» շաբաթաթերթում, 1898, № 33 (602), ապա Գ. վ. Սրվանձտյանցի «Համով հոտով» ժողովածուում՝ մեկ ընդարձակ օրորոցային մեջ հիշվում է նաև այս քառյակը. տե՛ս էջ 293 և վերջաբանս Մ. Աբեղյանի «Դուսանական ժողովրդական տաղերում», Երևան, 1940, էջ 247:

21_1. Բանահավաք-հրատարակիչ Հ. Ճանիկյանը գրում է.

«Ակնում՝ օրրաննները 2 տեսակ են եղել. մին ծանոթ կախ օրրանն է, որ երկու մեջտեղը կտավով մի պատած և կարած և սորա մեջ կնա կանգուն լայնութիւնեմբ և մեկ կանգուն երկարութիւնեմբ տախտակ մը դրած է, որով երկու չվանն իրարմե բացվելով մանկանն տնակին հատակն կկազմեն: Տախտակին վրա է հողլաքն և սորա մեջ կտնեն մադած հող, ձմեռն տաքցուցած, զոր շորով կփաթթեն, գլխին կողմը բարձ մը կդնեն, մանուկն կպառկեցնեն և փոքրիկ վերմակն վրան

Ձգելով օրրոց կապովն կիսաբիծեն։ Իսկ մյուս տնսակն դնտի վրա «տախտակ» օրրանց կոչվածն է, որ փոխադրելի է ուր և կամին։ Այս վերջին տնսակը Կ. Պոլսեցոց ծանոթ օրրանին հին ձևն է, իսկ կահավորումն նույն են ընդ առաջնոյնս.

22. Տպագրվել է նաև Մ. Աբեղյանի «Գուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 247։

25. Այս քառատողը աղոթք է՝ շարը «խափանելու» նպատակով ասված, որը, ինչպես կարելի է նկատել երգի հենց առաջին տողից, օրորի միջոցով է ասվում։ Երգի 5, 6, 7 տողերը տե՛ս նաև Մ. Աբեղյանի «Գուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուի № 29-ը երգը։

25$_1$. Այս քառյակը տպագրվել է Գ. Սրվանձտյանցի «Համով հատով» ժողովածուի մեկ ընդարձակ օրորոցայինում (տե՛ս 22 293)։

26. Տպագրվել է Մ. Աբեղյանի «Գուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուում, Երևան, 1940, էջ 247։

28. Տե՛ս ծանոթ. № 11$_1$։

30. Օրորոցային աղոթք է։

31. Ըստ բանահավաքի տվյալների, երգում կատարված են ուղղագրական մանանակի փոփոխություններ։

35. Երգը զարդացել է մի քանի երգերի միակցումից, որոնք են 21, 34 և այլն, սակայն երգերի ներքին տրամաբանական կապը հիմք է տալիս ամբողջական երգ համարելու և այդ տեսքով էլ ժողովածուում դնելու։

38. Երգը տպագրվել է Հ. Ճանիկյանի «Հնութիւնք Ակնայ» ժողովածուում, ինչպես նաև «Բյուրակն» շարաթաթերթի 1895 թ. № 3-ում։

38$_1$. Երգը կազմված է մի շարք օրորների միահյուսումից. ներքին տրամաբանական և կառուցվածքային միատարրության հենքի վրա— 4, 20, 21, 24 և այլն օրորներից և (15—18 տողերը) պանդխտության մեկ տաղից (22 293)։ Երգերը միահյուսող կապը կրկներդն է։ Երգը կենցաղավարել է այս ձևով և ժողովածուում այն արվում է նույնությամբ, մանավանդ հայտնի է, որ ընդարձակ ժողովրդական երգը առաջանում է իր հիմնական տարրերակը կազմող քառատողից, 6-յակի և այլն։

39. Տպագրվում է առաջին անգամ։

«Ասաց Խոսրով Մարտիրոսյան, 65 տ. ծերուկ, անգրագետ, Վանի Ծվըռտան գյուղացի, այժմ Բայբուրդ գյուղում ծխախոտագործ» (Ս. Բ.)։

40. Ըստ բանահավաք-հրատարակիչ Ս. Հայկունու, երգը գրի է առնված «Ինիկ ակներցի Մարիցա Մաքսուտյանից, որը 12 տարի Կ. Պոլիս է ապրած»։

40$_1$. Երգը տաղաչափական և ներքին ընդհանրության հենքի վրա միահյուսված մի շարք օրորներից է առաջացել, նրանց կապող ընդհանուր մոմենտը օրհնանքի տրամադրությունն է։

42. Երգը հայօրորների այն երգերի շարքին է պատկանում, որոնք իրենց էությամբ չեն առնչվում մանկան հուղաշխարհին, այլ միայն արտահայտում են գեղջկուհի մոր սրտին ծանրացած վիշտն ու տրտմությունը։ Այսպիսի օրորները միայն կրկներդներով են ծառայում մանկանը։

42 ա. Ինչպես դժվար չէ նկատել, երգը կազմված է ժողովրդական խաղիկների միահյուսումից և կրկներդերի հավելումով դարձել է օրորոցային։ Երգի համարյա բոլոր քառյակների ղուգահեռներին հանդիպում ենք «Ժողովրդական խա-

դիվներ» ժողովածուում։ Տե՛ս Մ. Աբեղյանի ժխ, էջ 125, 523 և այլն (տե՛ս նաև ծանոթ. 42)։

45. «Ասացող՝ Կ. Բարսեղյան, ալաշկերցի, այժմ Երևան քաղաքի բնակիչ։ 65 ա.» (Ծ. Բ.)։

46. Այս օրորոցայինը տպագրվել է Ա. Մնացականյանի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուում, 1956 թ.։

47. «Ասաց՝ Վ. Վարդանյան, 1936 թ.» (Ծ. Բ.)։

49. Ըստ բանահավաք-հրատարակիչ Ս. Հայկունու՝ «Թիմարա Կյուսննց գյուղի օրոր է, ասացող՝ Խոռո Սարգսյան» (Ծ. Բ.)։

51. Ըստ բանահավաք-հրատարակիչ Ս. Մովսիսյանի տեղեկության, երգը գրի է առնվել Մշո դաշտի Հունան գյուղի բնակիչ Ծիհան Մանուկյանից, Ալեքսանդրապոլում, 1921 թ.։

52. Երգը բնագրում ունի «Օրսանդյուլ» վերնագիրը, հետևելով ժողովածուի կազմման մեր սկզբունքին՝ վերնագրերը չենք դնում, քանի որ վերջիններս երբեմն պայմանական են։ Այս և մյուս բոլոր երգերը դուրս են գրված «Ազգագրական հանդեսի» 1904 թ. քառմեկերորդ գրքից. բանահավաք Ե. Լալայանը թողել է հետևյալ ծանոթությունը. «Եղիշե Մկրտչյան-Երզնկյան, որ ինձ հանձնեց արժ. Եղնիկ քահանա Երզնկյանը։ Եղիշե Երզնկյանը ծնվել է Հաղբատում, 1855 թ., կրթվել Ներսիսյան դպրոցում և մոտ տասն տարի ուսուցչություն արել Բոբշալուի Օձուն, Շնող և Հաղբատ գյուղերում, ապա ցանկացել է վարդապետ ձեռնադրվել և Հաղբատի վանքի միաբան կարգվել, բայց ձեռնադրության հրամանն ստացած օրը մնռել է, թաղվել է նույն վանքի գավթում։ Երջանկահիշատակ հանգուցյալը 10-ամյա ուսուցչական պաշտոնակատարության ընթացքում գրի է առել ժողովրդական բանավոր գրականության վերաբերյալ բազմաթիվ նյութեր... Ես քաղեցի այդ ժողովածուից ինչ որ չունեի, ունեցածներս էլ համեմատեցի նրանց հետ, բուն ժողովրդականը վերականգնելու համար։

Պ. Պ. Սենեքերիմ Տեր-Սահակյան՝ ագարակցի, Եղիշե Զաքարյան՝ սանահինցի, Աշխարհբեկ և Պապա Քալանթարյաններ՝ արդունցի, Արմենակ Մամիկոնյան՝ գանձակցի, Գեղամ Տեր-Խաչատրյան՝ օձնեցի և մի քանի այլ անձեր, յուրաքանչյուրը իր գյուղում հավաքից իմ խնդրով և ինձ համար բանավոր գրականության վերաբերյալ նյութեր» (ԱՀԺՍ 34)։

52 բ. Ժողովածուում երգին կից ներկայացվում է նաև մեղեդին նոտագրված. տե՛ս ՀԺԵՊՍ, 133։

54. Երգը գրի է առնված Թբիլիսիում, 1929 թ. դեկտեմբերի 9-ին (Ծ. Բ.)։

56. Բանահավաք-հրատարակիչ Ս. Հայկունին գրում է.

«Մի գյուղացի հարսի հոր տունը մի ամիս մնալուց հետո, սկեսրայրը գալիս է և վերադարձնում։ Ճանապարհին հարսի երկունքը սկսվում է, նա սկեսրայրին հասկացնում է, թե՝ իբր ծարավ է, ուզում է ջուր խմել, իջնում է ձիուց և մի քարի տակ ծնում երեխային, փաթաթում թողնում այնտեղ, հանապարհը շարունակում, տուն հասնում և վերոհիշյալ երգը անընդհատ կրկնում է։ Մի տարի հետո, երբ նորից վերադառնում է հոր տունը, երեխային ողջ և մեծացած է գտնում, այդ դեպքը, որ լսում է սկեսուրը, համբուրում է հարսի երեսները, որ մայրական սիրտը զոհել է առաքինության համար»։

57. Ըստ ասացողի ավյալների՝ «հայու-թուրքի կռվու վախտ, նի թուրքեր թափան վըր գեղին, մերն ուր մանուկն ուրացավ, թորկինք տուն տեղ ու էրեխա, փախանք»։

Ասացող՝ ալաշկերտցի, այժմ Բասարգեչար գյուղի բնակիչ Կ. Բարսեղյան (Ս. Բ.)։

58. Ըստ բանահավաք Ս. Խանզադյանի տեղեկության, «Երգը գրի է առնված գամառվեցի Սոփի Գրիգորյանից, 45 տ., Ջուլֆա տանող գնացքի մեջ։ Իր ասելով շատ երգեր գիտե, բայց գնացքում չուզեց ասել։ Կիսագրագետ է, նիհար, բիբը հառտ, աչքերը փոս, 5 երեխամայր»։

59. Գիարբեքրիի հայօրոր։ Այս բարբառում «ը» որոշիչ հոդը փոխվում է «է»-ի. այսպես՝ օրանը—օրանէ, բերանը—բերանէ և այլն (Ս. Բ.)։

59$_1$. Ի հայս սովորություն կար և հավատք, իբր թե երեխային քնեցնելիս մթության մեջ չարքերը խփում են, այդ պատճառով էլ մտավախ մայրը մանկանը քնեցնելիս և արթնացնելիս խաչ է հանում ու աստված հիշում (Ս. Կ.)։

60. Այս երգը իր մեջ ունի ժողովրդական խաղիկներից։ Տե՛ս ԺԽԱ 1396—1401։

61. Մոկաց Սևպ գյուղի օրոր-չարխափան աղոթքի տողերով։ Ասացող՝ կույր Մանուշակ Մելքոնյան (Ս. Բ.)։

63. Այս օրորոցայինը ունի օրհնանքի և անեծքի տարրեր։

63$_1$. Ժողովրդական տան գմբեթավոր փայտաշեն ծածկ, գլխատուն, դառնափուռ և այլն։

64. Ժողովրդական խաղիկների զուգակցումից առաջացած մանկան օրորոցային։ Տե՛ս ԺԽԱ 352, 482 և այլն։

68. Համաձայն բանահավաքի տեղեկության, երգը վերցված է գրաշար Հարություն Ավչյանի «Նիստ ու կաց խոչեցոց» անտիպ ուսումնասիրությունից։

Բանահավաքը նշում է նաև, որ երգը խոչեցոց բարբառով Հայթաղ գյուղի երգերնէն է։ Հայտնի է, որ հայթաղցիք գաղթել են Պարսկաստանի Ուրմիո քաղաքի կերտապատ գյուղից, 1825 թ., Պասկևիչի արշավանքի ժամանակ։ Նույն երգը Ավչյանը տպագրել է հետագայում, 1908 թ. «Արարատ» ամսագրի № 7-ում։

74, 76. «Ասացող՝ Կ. Բարսեղյան, ալաշկերտցի, երգում է տխրաթախիծ մելոդիով և թովիչ ձայնով» (Ս. Կ.)։

79. «1963 թ. երգից Ղափանի շրջանի Հեղանուշ գյուղի կթվորուհի Անուշ մայրիկը (Հարությունյան), 59 տարեկան» (Ս. Բ.)։

80. Երգը առաջին անգամ տպագրվել է «Էմինյան ազգագրական ժողովածուում», 1906, Զ. 66, Ս. Հայկունու կողմից, որը վերցրել է, ըստ իր վկայության, Հ. Ավչյանի «Նիստ ու կաց խոչեցոց» ձեռագիր ժողովածուից, ապա նույն երգը 1909 թ. Ավչյանն ինքը տպագրում է «Արարատ» ամսագրի № 7-ում. վերջինիս գրառումն ավելի կուռ և ամբողջական գտնելով, այն ենք դնում ժողովածուի մեջ։

80$_1$. Լյուլիկ— հնում օրորոցում դնում էին հատուկ սարք (խողովակ)՝ երեխայի միզելու համար, որպեսզի ոտաշորերը կամ տակի փռած հողը չթրջվի։ Խողովակը անցնում էր շորից կամ թաղիքից պատրաստած կլոր հարմարանքի միջով, որը «բաղլա» էր կոչվում։

80$_2$. Օրոճիկ— երեխաներին շար աչքից ազատ պահելու համար կախում էին փոքրիկ ապխտակ խոնջ, որն անպատճառ ուղտի վրայից պետք է դողացված լիներ։

81. Երգը գրի է առել Հ. Գ. Մոսկոֆյանը, սևբաստահայ ժողովրդական բանահյուսության նշխարներից։

85. «Ասաց՝ Գևորգյան Կատար Հակոբի (Հաճի Կատար), ծնված Սիվրի Հիսար

քաղաքում 1882 թ., մահացել է 1963 թ., գրի առավ ԴԻ լեզվի ինստիտուտի դիտաշխատակից Ն. Մկրտչյանը 1960 թ.» (Ծ. Բ.)։

86. Այն կարգի օրորոցային երգերից է, ուր մանկան միջոցով բնութագրվում է ողջ գերդաստանը։

«Առհասարակ շատ տեղերում մանուկները խաղացնելիս սույն բառերովն են ձկտում մանկական երգերը» (Ծ. Բ.)։

89_1. Օրը Արմյանսկ քաղաքն է (Ծ. Բ.)։

91. Պոլսահայ ամկական անտիպ գրականությունից հավաքեցին Հրաչյա և Արմենուհի Աճառյանները։ «Օրորիս տողերը խառն կերգվին, հասնողը կարող է նոր փոփոխություններ մացնել, անատեն ալ դժվար կը, այպես իմանալու է նախ երգիս ձայնագրված նվանակը» (Ծ. Բ.)։

92. «Երգը գրի է առնված Աշտարակի շրջանի Ուշան գյուղում, բնակիչ Գյուլիպար Սիմոնյանից, 88 տարեկան, մշեցի» (Ծ. Բ.)։

94. «Երգը գրի է առնված Բասարգեչար գյուղում, Կ. Բարսեղյանից, 1963 թ. օդոստոս ամսին» (Ծ. Բ.)։

96. Այս երգի առաջին երկտողը հանրահայտ ժողովրդական խաղիկն է.

Ա՛ղս էնիմ, արին գուբա,
Սրտիս սև գարուն գուբա...

որը մանկան օրորոցային երգի նրանդ է ստացել հաջորդող տողերով և կրկնակներով։ Պանդխտության և բաժանման ծանր վիշտն է երգում մայրը այստեղ։ «Երգը գրի է առնված 1963 թ., Բասարգեչարում՝ Կարինե Բարսեղյանից, ալաշկերտցի» (Ծ. Բ.)։

98. Տե՛ս ծանոթ. 94։

99. «Դանդան» կրկներգով ասված երգերի որոշ մասը օրորոցային երգեր են, սակայն մեծագույն մասը նույն կրկներգով այնպիսի երգեր են, որոնք իրենց կատարման ձևով (ձեռքի վրա մայրը թոցնում և գովերգում է մանկանը) և, բնականաբար, երգի շնչով և ռիթմով որոշակիորեն տարբերվում են օրորոցային միալար երգերից, դրանք մանկախաղաց երգեր են և տրվում են առանձին բաժնում։

99_1. Հայ բանագիտության մեջ փորձեր են արվել բացատրելու «Դան-դան» կրկներգի էությունը և այն կապել են ցորենի, սերմի, հետևաբար և պտղաբերության հանդամանքի հետ։ Ավելի հավանական է թվում դան-դան կրկներգը քննել, դանդել բայի կրճատ գրության համարելը, որը հարմարեցվել է երգի ընդհանուր շնչին և հանգին։

99_2. Այս տողերը հիշատակություն են այն հնավանդ սովորության, երբ երեխային, ծնվելուց հետո, նախապատրաստում են մկրտության—կնքահայրը բերում է մեկ զույգ մոմ, նարոտ և մի գունավոր թաշկինակ։ Քահանան շարական երգելով առաջնորդում է կնքահորը, որը երեխային գրկած եկեղեցուց բերում է տուն և հանձնում ծնողներին՝ մորը, վերջինս վերցնում է երեխային կնքահորից և համբուրում նրա ձեռքերը (ԱՀՔ)։

101_1. «Դան-դան» կրկներգը Կ. Պոլսում դառնում է «տան-տան», վանում՝ «դան-դան, տանանա-տան, դննին-դին» (ԱԳՐ—256)։

115_1. Ըստ հին սնահավատքի շարակամի աչքը կարող է նախանձից վնաս հասցնել, ահա այս միտքն է ակնարկվում հիշյալ տողում։

117_1. Հայերի մեջ եղել է հնավանդ մի սովորույթ, երբ կինը երեխա չի ունենալ, նրան անց են կացրել «տրընտեղին» կրակի վրայով, և որից հետո նրա երե-

խան ծնվել է, որընտեղի ծնված են համարել։ «Տրընտեղին ծնված երեխան կրակոտ է»,— ասում է ժողովուրդը։ Մուշում և Տարոնում այդպիսի երեխաներին «տատմները» գրկում և կրակի շուրջն է պտտեցնում, խանձարուրի կտորից էլ վառում այդ կրակի վրա (ԱՀԴ, ԱՀԴ)։

120$_1$. Նկեղեցի բառը տեղատեղում հաճախ փոփոխվում է և ստանում զրուիյան տարբեր ձևեր. այսպես՝ նկեղեցի, նղեցի, էղեղեցի, գեղեցի և այլն։

121, 122. Այս երկու երգերն էլ մանկախաղացք երգեր են, տեղայնացված։ Բնարկվում են այն բոլոր բարիքները, որոնք իբրև օժիտ տրվելու են աղջկան։

123$_1$. Գիլան— Պարսկաստանի նահանգ է (Ս. Բ.)։

124$_1$. Հարսանիքի պատրաստության ժամանակ փեսայի՝ տղայի տանից սկուտեղով քաղցրավենիք է ուղարկվում աղջկա հորանց տունը, որը և կոչվում է «մադա»։

127$_1$. Ըստ բանահավաքի տեղեկության, վիրահայոց բարբառում «փոթոլ» նշանակում է տերև և տվյալ տեքստում ճիշտ նույն իմաստն ունի, ինչ որ այլ «Դանդաններում» հետևյալ տողերը.

Մենձատերև ոտաշոր,
Մանրատերև թաթաշոր...

128$_1$. Թիֆլիսը առևտրական հարաբերություններով կապված է եղել Թավրիզի հետ. այդ հարաբերությունները աշխուժացան հատկապես 17-րդ դարի երկրորդ կեսից և մանավանդ 18-րդ դարասկզբին, երբ գլխավորապես Հայաստանի և Իրանի վրայով էր կատարվում այն (ՀՈՒՀՊԱ)։ Ահա պատմական այդ իրավիճակի վերհուշն է արտահայտված այս տողերում։

129. Տպագրվում է առաջին անգամ։

134$_1$. Լոռում և Բորչալուում մամին և կերոնին են այդպես անվանում. պատարագի միջոցին ննջեցյալի սնարի և ոտքերի մոտ կլանպատր— կերոն են դնում։ Այն վառում են նաև երեխային նկեղեցի տանելիս և կնքելիս։

136$_1$. Հայ գյուղացու պատկերացմամբ աղջիկ երեխայի ծննդով «տան պատը ծակվում է, բարաքյաթը գնում». դժբախտություն է համարվել կնոջ համար աղջիկ երեխա ունենալը, իսկ ունենալուց հետո մխիթարել են նրան, ասելով. «Աստված մեծ ա, հալբաթ մի օր էլ դու կուրախանաս» խոսքերով։

139. Երգը տպագրվում է առաջին անգամ, գրառման ձեռագիրը պահվում է Հայ ժողովրդական բանահյուսության արխիվում։

145. Երգերի ձեռագիրը պահվում է բանահյուսական արխիվում, Տ. Նավասարդյանի ֆոնդում. Ալաշկերտի բարբառով գրի է առել ուսուցիչ Պ. Մուրադյանցը։

145$_1$. Հայաստանի համարյա բոլոր գավառներում երեխայի ծննդին հաջորդում է սև հավ մորթելը, մատաղելը, քանի որ, ըստ հին սնահավատի, երեխային կարող են չարքերը տանել, իսկ հավը չարխափան է, ըստ ժողովրդական պատկերացման։ Երգը տպագրվում է առաջին անգամ։

146. Բանահավաք-հրատարակիչ Տ. Նավասարդյանը գրում է. «Սույն բանավոր ավանդությունը հրատարակում ենք արժանապատիվ քահ. Մատինյանցի ժողովածուից»։

146$_1$. Երգի վերջին 2 տողը հետագա հավելում համարելով, երգը թողնում ենք «Դանդաններին» շարքում, քանի որ իր բնույթով ավելի մոտ է վերջիններիս, քան «Օրոր» կրկներգով երգերին։

148. Երգը, ըստ բանահավաքի տեղեկանքի, առնված է Հ. Ավչյանի «Նիստ-

ու կաց, խոյնցաց» անտիպ ժողովածուից։ Բայց քանի որ տվյալ տեքստը ունի զգալի տարբերություններ, ուստի 148 ա համարի տակ բերում ենք այն ևս, որպես նմանակ (Ս. Կ.)։

150$_1$. Շատախում, Վանում, Խոյում և այլուր աղջիկ և տղա զավակներին «տղա» են ասում։

153. Տպագրվում է առաջին անգամ, գրառման ձեռագիրը պահվում է գրականության դասարանում, Ս. Քամալյանի ֆոնդում։

154$_1$. Նարոտ— գունավոր թելեր են, որոնք կապում են հարսի ու փեսայի վզից և մինչև կտրելու արարողությունը չկատարվի, նրանք իրավունք չունեն առաջաս մանելու։ Նարոտ կապում են նաև չքայլող երեխայի վզից, որպես կապանք, և կտրելուց հետո երեխան քայլում է։ Տվյալ դեպքում, երգում ակնարկվում է հարսանիքի նարոտը։

158. Տպագրվում է առաջին անգամ։

Դոնի-Ռոստովի հայ ժողովրդական բանահյուսությունից է։ Աղջիկ երեխայի «դան-դան», ըստ բանահավաք Վ. Գ. Սվազլյանի տեղեկանքի, երգը գրի է առնված Չալթըրցի Խաչատուր Ասոյանից. «Հիշում է իր մանկությունը և լավ երգում, չնայած իր պատկառելի հասակին, ծնված է 1860 թ.»։

159. Երգն առաջին անգամ տպագրվել է Տիգրանյանի «Առածք, ասացվածք և դրույթք» ժողովածուում, 1891 թ.։ Երգի մի այլ նմանակ տեքստային աննշան փոփոխությամբ տպագրված է նաև Խ. Փորքշեյանի «Նոր Նախիջևանի բանահյուսությունը» ժողովածուում, Երևան, 1965։

160. Երգը պահպանված է ԴԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ՀԺԲԱ Ս. Խաչատրյանի ֆոնդում։ Բանահավաքը այն դնում է մանկական խաղերի շարքը, ելնելով երգի արտաքին ձևից (կրկնակից) և հանրահայտ մոտիվի առկայությունից, այն դնում ենք մանկան գովքին նվիրված երգատեսակների շարքում։

162. «Երեխան ոտքի վրա կկանգնեցնեն,— գրում է բանահավաք Հ. Աճառյանը,— թաթիկները ձեռներու մեջ առնելով շարունակաբար դեպի իրեն կքաշեն ու նետ կմղեն»։ Ըստ Հ. Աճառյանի՝ «Ճոր-Ճոր»-ը մանկանը խաղացնելու, զվարճացնելու և պարեցնելու ձև է։

163. «Մայրը իր զավակին զվարճացնելու համար կերգե» (Ս. Բ.)։

175. Տպագրվում է առաջին անգամ. երգի ձեռագիրը պահվում է հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվում, Տ. Նավասարդյանի ֆոնդում. գրի է առնված Սարգիս Անտրեասյանի կողմից (մշեցի) 1891 թ. հունվարի 12-ին, Թիֆլիսում։ Նույն տեղում պահվում է նաև բանահավաքի նամակը՝ ուղղված Տ. Նավասարդյանին, ուր նա բարձր է գնահատում վերջինիս գործունեությունը, որ նա «...հավաքում է և լույս ընծայում հայկական հին երգերն ու ավանդությունները, որոնք ժամանակին մեծ ուղեցույց կարող են լինել ապագա սերնդին և լուրջ գիտնականներին և ազգի հնագետներին՝ դյուրավոր ուսումնասիրության նյութ»։

177. Այս երգի դուգահեռը գտնում ենք ժողովրդական խաղիկների շարքում. այսպես՝

Տանքով անցա, բափ քելեցի,
Լանգով զարկի զերդիկ բացի,
Յարըս տուն չէր՝ նստա լացի։

Ըստ բանահավաքի «լանգ» նշանակում է երկաթե շիշ։ Ավելի համոզիչ է աքացի

տալու բարբառային ձևը՝ լանգով զարկ, լանգ— ոտք։ Ժողովրդական խաղիկների շարքում հանդիպում ենք նաև դնգքերի, երբ լանգը ոտքով է փոխարինվում. այսպես՝

Երեկեն ձեն տվեցի,
Ոտքով զարկի, ծակ բացի։

ԺԽԱ 313

180. Գրի է առնված Թիֆլիսում, Տ. Նավասարդյանի կողմից, 1883 թվականին։

181. Ի նշան անհուն սիրո և գորովանքի, մայրը զարեթով սրբասուրբ գիտակցված և պաշտված առարկաներն ու իրերն է օգտագործում մանկան գովերգման նպատակով։

189. «Հաճենցի կանանց մայրական խոսքերը» (Ծ. Բ.)։

190. Հարսանիքի ծիսական սովորույթունների մեջ քավորը (քապապ) «բաց վերացմանն» ծնող կատարելիս հարսի ու փեսի գլուխներն ի վեր խաչաձև սուր ու պատյան է պահում, ի խորհրդանշումն նորակազմ ընտանիքի ամրակուռ դաշինքի։

191. «Մանչ երեխայի գովք» (Ծ. Բ.)։

196. «Երգում էինք ու երեխուն էլ թոցնում ձեռքերի վրա»,— ասում է ասացող Շողիկ մայրիկը, 70 տարեկան, զարսեցի, այժմ Երևանի բնակիչ (Ծ. Բ.)։

197. «Տատը թոռանը խաղացնելիս ասում էր» (Ծ. Բ.)։

198. Երգը ժողովածուում ունի «Կնքալոր և սանիկ» վերնագիրը։

201. «Տղա խաղացնելու երգ» (Ծ. Բ.)։

208. Երգը ունի «Բոշի կնգա տղա խաղացնելը» վերնագիրը։ «Հայ բոշաների միակ զբաղմունքը մաղ, քթոց, սելն և այլն շինելն է, հնամաշ մաղերն ու քթոցները վերանորոգելը։ Երեխաներին էլ մանկուց, դեռևս օրորոցից նախապատրաստում են այդ արհեստին»։ Ասաց Նախշուն Թորոսյանը, 55 տարեկան (Ծ. Բ.)։

214. Երգի ձեռագիրը պահվում է բանահյուսական արխիվում, Ս. Շալչյանի «Վանա ժողովրդական երգեր» ձեռագիր ժողովածուում, երգը գրի է առնված 1937 թ. հոկտեմբերի 12-ին։ «Օրորոցում պառկած երեխային, երբ ուզում են հանել, դուրգուրանքով ասում են այս երգը» (Ծ. Բ.)։

216. «Մայրն աղջկա թաթիկը թափահարելով ասում է այս երգը» (Ծ. Բ.)։

217. Գլխադնի մասին է ակնարկվում այս տողերում։

231. Երգը գրի է առնվել Բասարգեչարի շրջանի բնակիչ Կարինե Բարսեղյանից, 65 տարեկան, ալաշկերտցի, անուս, հիշում և երգում է բազմաթիվ ժողովրդական երգեր։

235. Տե՛ս ծանոթ. 39։

237. Ասացող՝ Բասարգեչար գյուղի բնակիչ, 70-ամյա հաչատուր Ենգոյան (Ծ. Կ.)։

252. «Մայրը մղում է քայլելու մանկանը այս խոսքերով» (Ծ. Բ.)։

258. Առաջին անգամ տպագրվել է «Արձագանքում», 1895 թ. № 5, և ապա 1900 թ. Ռ. Վարդանյանի «Ժողովրդական անգիր բանաստեղծություն» ժողովածուում։

262. «Երգը ասել է մայրս, գրի եմ առել 1946 թ. հուլիսին, Գորիսում» (Ծ. Բ.)։

265. Երգը գրառված է ալաշկերտցի Արշալույս Ավետիսյանից (Ծ. Բ.)։ Հավանաբար այս երգը առաջացել է ասացողի և կամ բանահավաքի արհեստական կցորդումից, որի առանձին մասերը առանձին մանկական երգեր են. համմտ. երգ 264, 265, 267 և այլն։

265 գ. Առաջին անգամ տպագրվել է Գ. Հովնեփյանի «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» ժողովածուում, 1892 թ., Թիֆլիս. ապա 1895 թ. «Ազգագրական հանդեսի» առաջին տարվա համարում: Նույն երգը գտնում ենք նաև հայ ժող. բանահյուսության արխիվում, վ. Բգոյանի ֆոնդում, գործ № 18,

266 ա. «Երգը գրի է առնված ասացող Ալիուն Աստվածատրյանից, որը բնակած է Ուրճևշ, Բաղեշ, Վաղարշապատ» (Ս. Բ.):

269. «Գրի է առնված Շիրակի Ղամղու գյուղի բնակիչ Հայաստան Վարդապետյանից» (Ս. Բ.):

270. Երգը Թավրիզի բարբառով է (Ս. Բ.):

272. Այս և մի քանի այլ մանկական երգեր ու խաղերգեր առնված են վ. Բգոյանի «Ժողովրդական խաղեր» ձեռագիր ժողովածուից, որը մեզ սիրով տրամադրեց հեղինակը, որի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում:

273. «Երեխաներին ձեռքի վրա խաղացնելով երգում են մայրերը» (Ս. Բ.): Երգը մասնակի փոփոխությամբ տպագրված է «Արձագանք»-ում, 1894 թ.:

279. Նույն երգը որոշ հնչյունային տարբերությամբ տպագրվում է ավելի ուշ՝ 1894 թ. «Արձագանք»-ում:

281. Երբ երեխան ծնվում է, հայ ընտանիքներում նրա վրա աղ են լցնում, փաթաթում շորերի մեջ, 3 անգամ խաչակնքում և ապա դնում մոր կողքին:

282. Երգը առաջացել է արհեստական միակցումից. առաջին քառյակը պատկանում է օրորոցային երգերին յուրահատուկ մոտիվը, իսկ այնուհետև հաջորդում է «դան-դան» կրկնորդով ասվող մանկան գովքի երգ, այդ միահյուսումը կատարված է ասացողի և կամ դրատողի կամքով:

285. Բանահավաքը երգը վերնագրել է «Տուտուզան»:

286. Երգի վերջին 6-յակը հնռավոր նմանություն ունի Մսրա Թալանը պատկերող հայրենների հետ (Համմ. ԴԺՏԱ 158, 159, 160, 161):

290. «Տղա խաղացնելու երգ» (Ս. Բ.):

294. «Այսպես մայրը շնորհավորում է իր որդու զատիկը» (Ս. Բ.):

295. «Մայրը թոցնելով մանկիկին՝ ծափ է տալիս և երգում» (Ս. Բ.):

296. «Մանչ երեխայի գովք» (Ս. Բ.): Անհծքի և օրհնանքի տարրերով մանկան գովերգ է:

300. «Տղա խաղացնելու երգ» (Ս. Բ.):

302. Երգի վերջին քառյակը ժողովրդական խաղիկ է, որը ասացողի կողմից հարմարեցված է մանկան գովքի երգին: (Տե՛ս ժԽՄ. 141, 142, 144 և այլն):

303. Այս երգի վերջին 7 տողը արհեստականորեն, առանց ներքին տրամաբանության և ձևական արտաքին նմանության, կցված են երգին, ուստի և անջատում և դնում ենք «Հալալա...» երգատեսակի բաժնում: Տե՛ս երգ 185: «Ասում են երեխան խաղացնելիս» (Ս. Բ.):

304. Ասացող՝ Բասարգեչար գյուղի բնակչուհի, 65-ամյա Կարինե Բարսեղյան (Ս. Բ.):

306. Այս ընդարձակ երգը առաջացել է մի քանի մանկական երգերի միահյուսումից, որը, ինչպես նշում է բանահավաքը, «երգում էին երեխաները խաղացնելու համար»:

308. «Սալմաստում պապը, տատը, մայրը և այլն երեխային նստեցնում են ծնկների վրա, 2 թևերից բռնելով, ետ ու առաջ տարուբերելով՝ երգում են: Ասել է Ա. Գասպարյանը, 1936 թ., նոյեմբերի 28-ին» (Ս. Բ.):

312. «Երեխաներին ծնողները օրորում են և ասում են այս» (Ս. Բ.):

313. «Այս և հաջորդ երգերը ասվել են երեխային լողացնելիս, ջրից հանելիս օրհնանքի խոսքեր են մրմնջացել երեխայի հասցեին» (Ս. Բ.)։

314. «Ալաշկերտում փոքր երեխային տաշտի մեջ լողացնելիս ասում են այս երգը, որ վիզը երկար լինի, ջուրը՝ թևեն, քունը՝ երկար» (Ս. Բ.)։

315. «Թարալագյազի էրդափին գյուղում երեխային լողացնելիս և քուն դնելիս ասում են» (Ս. Բ.)։

316. «Երեխային լողացնելիս թևերը կշարժեն, աչքերը կշտեն, բիբը կբռնեն, բևրանը կախմռտկեն, քաղաքավարի ըլա, գլուխը բռնած երկանավիզ կանեն» (Ս. Բ.)։

318. «Նորածին երեխան ամեն օր կլողացնեն և 40 օր և յուրաքանչյուր լողանքի ավարտումը շոշափելով մաղթում են» (Ս. Բ.)։

320. «Գանձակի գավառում մկրտությունից հետո լողացնում են երեխային. ասելով այս խոսքերը» (Ս. Բ.)։

322. Բանահավաք-հրատարակիչ Գ. Շերենցը գրում է. «Վանում երեխային պարանոցից կախ բռնած՝ ասում են այս երգը»։

323. Բանահավաք Ռ. Դրիգորյանը գրում է. «Սա և՛ հորդորանք է երեխային քայլելու համար, և՛ միևնույն ժամանակ՝ օրհնանք։ Ասացող՝ ղարսեցի Շողիկ մայրիկ»։

325. Բանահավաք-հրատարակիչ Տ. Զիլոնին գրում է.

«Պապի անունը կրող երեխային սովորաբար ճոչ աղա էին կոչում, որը հաճախ կատակի բնույթ էր կրում, այդպիսի երեխային տեսնելիս մանուկները հանդավոր խոսքով ասում էին այս»։

326. Այս երգը հյուսված է մի քանի մանկական երգերից, տե՛ս երգ 270. 271 և այլն։ ՎՍՇԲ ժողովածուում երգը ունի «Խաղացող մանկիկ» վերնագիրը։

328, 329. Բանահավաք-հրատարակիչ Խ. Փորքշյանը գրում է.

«Այս երգերը սխալմամբ են մտել Ռ. Պատկանյանի երգերի երրորդ հատորում, որպես նրա ստեղծագործությունները։ Վերջինս հավաքել է ժամանակին նոր Նախիջևանի ժողովրդական բանահյուսությունը, նրա արխիվում եղել են, այո՛, առիթ է տվել խմբագիրներին կարծելու, որ այս երգերն էլ նրա հեղինակություն են...»։

Բանահավաքի այս կարծիքը լիովին չի կարելի ընդունել, Ռ. Պատկանյանի մանկական բանաստեղծություններից շատերը բուն ժողովրդական ստեղծագործությունների հեղինակային մշակումներ են։

330. «Ասում են՝ առաջ հանելիս» (Ս. Բ.)։

333. Տպագրվում է առաջին անգամ. Բասարգեչարի մանկական խաղերից է։ Ըստ բանահավաք Ռ. Դրիգորյանի, երգը գրի է առնված «Ասացող՝ Մարգարիտ Համբարձումյանից, 55 տարեկան, ծնված Բասարգեչարում, հիշում է, որ երգում էին «Հատիկ-հատիկ» կոչված խաղի ժամանակ», որի էությունը հետևյալն է. 4—5 տարեկան երեխաները շրջան են կազմում գետնի վրա նստած, ապա երեխաներից մեկը իր ցուցամատը խփում է նրանց՝ մյուսների ձեռքերին, ու երգում է այս երգը, ում ձեռքին որ վերջանում է երգը, նրա տերը դուրս է գալիս խաղից, այսպես արվում է մինչև վերջին երեխան, վերջում, ում ձեռքը որ մնում է, նա կռանում է, իսկ մյուս երեխաները ձեռքերը դնում են նրա մեջքին, եթե կռացածը իր մեջքին դրված երեխաների ձեռքերից ամենավերջինը ճիշտ որոշում է, ազատվում է, եթե ոչ՝ պատժվում է։

333 ա. Երգի մասին բանահավաքը չի թողել ոչ մի ծանուցում, ենթադրվում է, որ այն ևս երգված պիտի լինի «Հատիկ-հատիկ» խաղի ժամանակ (Ս. Կ.)։ Նույն սկզբունքն է կիրառվելու հետագա մյուս երգերի նկատմամբ։

334 դ. Բանահավաք-հրատարակիչ Դր. Աղեքսանդրյանը գրում է. «Խաղի էությունը հետևյալն է. երեխաներից մեկը երկու ձեռքի ցուցամատները և բաթերը միմյանց կպցնում և այդ կերպով մի փոս կամ սունտուկ է ձևացնում ու երգում է այս երգը, խաղին մասնակցող մյուս երեխաները մատները մեջը մտցնելով, աշխատում են զրաղվել, երեն մեկը բռնվում է, նա պատժվում է կամ երգում մի որևէ երգ»: Նախորդ 334, 334 ա, 334 բ երգերի խաղի մասին ոչինչ չի ասվում աղբյուրներում, նրանց արտաքին և ներքին ընդհանրությունն ու նմանությունը ենթադրել են տալիս, որ այդ երգերը ևս երգված պիտի լինեն վերոբերյալ խաղր ժամանակ:

335—335 է. Երկու սեռի մասնակիցները 3 և ավելի հոգով շրջանաձև նստում են, ձեռքերը ափով հատակին են դնում: Սրանցից մեկը իր աջ ցուցամատը դնելով յուրաքանչյուր ձեռքի վրա, այս երգի 2 բառն է ասում: Վերջին բառի վրա ձեռքի տերը ևս է քաշում և այսպես շարունակաբար, մինչև մնում է մի ձեռք. այս անգամ նա մատը դնում է ձեռքի վրա և մեկը հատակին, երեն վերջին տողն ասելիս մատը դրվում է ձեռքին, վերջինս փախչում է, այսինքն ձեռքն ընկերների ծեծելուց ազատում: Խոմրն այդ դեպքում հատակն է ծեծում, իսկ երեն հաշիվը ձեռքն ընկնի, ձեռքին են ծեծում (ժԽՒ 2):

Ի լրումն այս խաղի, բերում ենք նաև Դ. Ք. Նժդեհյանի «Ալաշկերտի բանավոր դրականությունը» ժողովածուից (ԱՀՆ 187). «Այս երգի վերջում մնացողը,— ավելացնում է բանահավաքը,— ցուցամատն ու ճկույթը ևս դարձնելով, ափը վեր պահելով ու տրորելով ափի մեջ, ասում է.

Ջու, ձու, ձվածեղ,
Սըբ կարապետ մաղթա ղնդ...

Ափի մեջ երեխայական ձվածեղը պատրաստ է, հիմա հարցնում է.

— Վի՞ր տունն ես քնե:

վայն այն տղային, որ սխալմամբ բազմանդամ ընտանիքի անուն կտա, այդ ժամանակ հարցնողը նրա ճակատին կտացնելով ասում է.

— Էսա կարապետ,
— Էսա ուր կնիկ,
— Էսա ուր տղեն,
— Էսա ուր աղջիկ,
— Էս ա կով,
— Էս ա կթոց,
— Էսա շուռ տուր փողոց:

Ձեռքի ձվածեղը թափում է նրա երեսին» (Ծ. Բ.):

335$_1$. «Մուշում, Վանում, նոր հայտնված, կամ անանուն սուրբի գերեզման, որուն վրա փոքրիկ դռնակ մը կշինվի իր աշխատատեղի» (ԳԲԱ 377):

335$_2$. «Կուպուլուճա» ձևը հավանաբար «ու կուլուճա» բառի աղավաղումն է, մյուս նմանատիպ երգերում պահպանված է վերջին ձևը (Ծ. Կ.):

336—336 թ. «Աղջիկները խմբվում են և իրենց միջից ընտրելով մի ղեկավար, պապ են կոչում, ապա բոլորն էլ իրենց ձեռքի ցուցամատը դնում են մի տեղ և պապն էլ ցուցամատը կպցնում է յուրաքանչյուրի ձեռքին, արտասանելով այս խոսքերը, վերջին բառը, որի վրա ընկնում է, նրան բռնում են, հրհրում և ծիծաղում, խաղը համարյա ամենուր կոչվում է «Մատխփուկ»: Վանում վեց խաղը սկսելուց առաջ, որպեսզի պարզվեն, թե ումն է խաղը առաջինը սկսելու իրավունքը, այս վիճակախաղիկն են երգում» (Ծ. Բ.):

338. Տպագրվում է առաջին անգամ: Մոքսում այս երգը ասվել է «Հատիկ-հատիկ» կոչված խաղի ժամանակ, որի էությունը փորր-ինչ այլ է, քան Ալաշկերտում կամ Բասարգեչարում. այսպես, «Խաղին մասնակցող երեխաների թիվը հասնում է մինչև 10 հոգու. երգը ասվում է և հերթականությամբ յուրաքանչյուրի ձեռքին խփում է ասողը, որի վրա երգը վերջանում է, նա դուրս է գալիս, երբ մնում է մի ձեռք, խաղերգը կրկնում են մերթ ձեռքին և մերթ էլ հատակին դնելով: Եթե երգը վերջանում է ձեռքի վրա, սա ազատվում էր պատժից, իսկ եթե հատակին՝ ձեռքի տիրոջը պառկեցնում էին փորի վրա, մեջքին խփում և երգում էին այս երգը: Ապա մեջքին դնելով, հարցնում էին՝ ո՛ւմ ձեռքն է. եթե կարողանում էր ճիշտ որոշել, ազատվում էր, եթե ոչ՝ նույնը կրկնում էին» (Ծ. Բ.):

344. «Ասացին Փ. խանչալլեցի Բալասան և Վարդուշ Բդոյանները, 1947 թ. օգոստոսի 5-ին» (Ծ. Բ.):

346—348. «Մատխփուկ» խաղը (տե՛ս ծանոթ. 161) (336—336 Բ.) Բասարգեչար գյուղում: «Ասացող՝ Աստուր Մնացականյան, 75 տարեկան, առողջ ծերության, փայլուն հիշողությամբ: Հիշում և պատմում է իր մանկության շրջանի խաղերգերն ու հեքիաթները...» (Ծ. Բ.):

353. «Մատխփուկ» խաղը (տե՛ս ծանոթ. 161) (336...) Երևանում, Ալեքսանդրապոլում, Հին Նախիջևանում այդպես են երգում» (Ծ. Բ.):

357—360. «Այս երգերը ասվում են «Ալիս-պալիս» խաղի ժամանակ, որի էությունը հետևյալն է. Դարալագյազի էրդափի գյուղում 4 կամ ավելի աղջիկներ մեկ ձեռքում պահում են մեկ իր, բոլորը բռունցքները մեկնում են առաջ այս երգը երգելով, որի վրա, որ վերջանում է երգը՝ իրը նրա մոտ է, եթե իսկապես նրա մոտ է լինում, երգ ասողը վերցնում է իրեն, իսկ եթե չի գտնում, ինքն է տալիս այդպիսի մի իր» (Ծ. Բ.): Նույնատիպ է խաղը նաև Բասարգեչարում:

361. «Այս երգը ասում են,— գրում է բանահավաքը,— իմանալու համար թե ո՛վ պետք է խփե աչքերը «Աչքախուփան» խաղը խաղալիս, ում որ վերջին բառն է ընկնում, նա է խփում աչքերը»:

365. «Այս խոսքերը խաղի մասնակիցների վրա բաժանելով և հաշվելով, որոշում են, թե ո՛վ պետք է մասնակցի տվյալ խաղին» (Ծ. Բ.):

365$_1$. «Երբ մեկը թծծեն, տղաները ով ըլլալը գտնելու համար, ասում են այս կատակերգը, վերջին բառը որու որ վիճակի ան ելնի թծծողը» (Ծ. Բ.):

366—383. Այս երգերը ասվել են մատների վրա խաղացվող մանկական խաղերի ժամանակ:

«Երեխաները ձեռքի մատները ճկույթից սկսած այսպես էին անվանում՝ ուլուլիկ, ուլկև-մերիկ, էրկեն տաճիկ, ճաշ լկստող, ոջիլ կտվող: Ապա ուլուլիկիդ բռնած բոլոր մատները բռնելով ասում էին այս երգերը, որոնք հետապնդում էին դաստիարակչական նպատակներ. այսպես, երեխաների մոտ ստեղծվում էր այն համոզմունքը, թե «Ուտելու ցանկություն հայտնած ճկույթին ցուրտ ցողեց, կասկածամտության համար մատնե-մատին չերկարացրեց, հանդուգն ցուցամատին կարճացրեց, իսկ անազնիվ բութ մատին բռունցքի հարվածով հետացրեց մյուս մատներից և կարճ ցողեց» (Ծ. Բ.):

383. «Ասացող՝ Արշալույս Ավետիսյան» (Ծ. Բ.):

391 բ. Մանկական ձեռնախաղերից: «6—8—10 տարեկան երեխաները իրենց բթամատով և ցուցամատով բռնում են մյուսի ձեռքի երեսի կաշին և ճոճելով երգում այս երգը, երգի վերջում բոլորը ձեռքերը վեր են բարձրացնում իբրև թե ճնճղուկ բռնելու, ամենափոքրի ծոցն են տանում ձեռքերը և ծիծաղում» (Ծ. Բ.):

392. Երգը տպագրվել է նաև Խ. Փորքշեյանի «Նոր Նախիջևանի հայ ժող. բանահյուսություններ» ժողովածուում։

393. «Մի խումբ աղջիկներ 3 հոգի են ընտրում իրենցից, մեկը հրեշտակ, սատանա և 3-րդը՝ անուն դնող։ Վերջինս աղջիկներին մեկ-մեկ գույն է նշանակում (կարմիր, կանաչ)։ Նախ հրեշտակն է գալիս որևէ մի գույն ասում, եթե այդ գույնի աղջիկ կա, գնում է հրեշտակի հետ, իսկ եթե ոչ՝ հրեշտակը մենակ է դառնում։ Գալիս է սատանան, նույնը սա է կրկնում։ Երբ խաղի վերջում աղջիկները բոլորը գնում են կամ հրեշտակի և կամ սատանայի հետ և այս երկու խմբերը սկսում են նշանակված սահմանագծից ձգել իրար, որ խումբը խախտի այդ գիծը և անցնի, հաղթանակը նրանն է» (Ծ. Բ.)։

394. «Զևանախաղ է. երկու ձևորները իրար կցելով սանդուղի տեսք են տալիս, մյուս երեխան բարձրանալով այդ աստիճաններով (իշարկն ձևորների), այս երգն է ասում և վերջում մտնում է ցուցամատի և բութ մատի միակցումից գոյացած փոսը, իսկ մյուս երեխան շան հաչոցի ձայներ է հանում և բռնում է նրա թաթիկը» (Ծ. Բ.)։

395—403 ա. Այս երգերը հաշվերգերն են, որոնք ասվել են խաղը սկսելուց առաջ՝ խմբի ավագ կարգելու, կամ առաջինը խաղը սկսելու իրավունքը ստանալու նպատակով։ Դարիկյանի «Սևբաստահայ գավառաբևզվիճ» գրքում այս կապակցությամբ կարդում ենք. «Հայ երեխաները վարժարանից տուն դառնալիս, շար տղաները շրջապատում են նրանց և սոխպում են գրքերը հանել և կարդալ, մանուկները իբրև ընթերցում այս երգն են ասում, որի իմաստը՝ «Սատկես, հիվանդանաս, գետինն անցնես է»։

396 ե. Երգը գրի է առնվել Ս. Շալչյանի կողմից, Երևանում, նոյեմբերի 12-ին, 1937 թ.։ «Փորքահասակները, որպես ժամանց ասում են այս երգը» (Ծ. Բ.)։

396 զ. Երգի վերջին 2 տողը, ավելացված է հետագայում, արհեստական է հնչում և չի կապվում երգի հետ (Ծ. Կ.)։

397—397 ա. Երգերի նպատակը համարելով հաշիվը պարզելն է. երեխաներից մեկը ասում է, մյուսները հաշվելով բառերը ստանում են այն թիվը, որը տալիս է երգի առաջին տողում, այն է՝ տասնվեց։

402. «Մենացյալ տառերը չունին Սվազու մանկական բարբառին մեջ» (Ծ. Բ.)։

404. «Պզտիկ մանուկները» մանչ և աղջիկ կսիրեն «Խնամուկանը» խաղալ, այսինքն չափահասներու խնամիական մեծարանքները իրար ընել, կաշխատեն նաև մեծերու պես զրաղված ձևանալ։ Մանուկ մը իր ընկերին այս հարցը ընելով, ընկերը պարտավոր է 3 պատասխան տալ, քանի որ հարսանիքը 3 օր է տևում» (Ծ. Բ.)։

405. Նմանողական խաղ է. երեխաները ընդօրինակելով մեծերից, կիրառում են «Տիկնիկ» խաղալիս։ Այս և հետագա 406—419 երգերը **«Խնամոցիկ» խաղի** երգեր են։

Ալաշկերտում, օրինակ, երեխաները՝ աղջիկները հիմնականում, իրենց միջից ընտրում են մեկին իբրև հարս, երեսը քողով ծածկում, ապա մեկը քողը բարձրացնում է, նայում են մյուսները և սկսում երգել «Քա խնամի ջան» երգը (Աշխ 437), երբեմն նաև աղջիկները այդ նույն խաղը խաղում են տիկնիկներին պատկելիս։ Մեծ մասամբ այն երգերն են ժառանգում երեխաները մեծերից, որոնք իրենց կատարման բնույթով, թեթևությամբ և հնչեղությամբ հոգեհարազատ են մանկան մտքին ու սրտին։

410. «5—8 տարեկան աղջիկ երեխայի հարս են անում, քողով կծածկեն երեսը։ Մեկը կբանա, մյուսը կգոցի ու այդպես կերգեն այս երգը» (Ծ. Բ.)։

413. Բանահավաք Ռ. Գրիգորյանը գրում է. «Ասացող՝ զարեռնցի Շուշիկ Հարությունյանը պատմում է. «Տիկնիկ խաղալիս խրծիկ կշինինք, կզարդարինք ու կկարինք վզից ուլինգներ ու խշխշան բաներ կկախինք ու կերգինք «Զնգլիկ, հա՛յ զնգլիկ», մարդու կտինք կէվեր... Հի՛ մամանակներ»:

414. «Ասում են տիկնանուկի խաղալիս» (Ս. Բ.):

415. Տպագրվում է առաջին անգամ, երգի ձեռագիրը պահվում է հայ ժողովրդական բանահյուսության արխիվում, Տ. Նավասարդյանի ֆոնդ, գործ առաջին, № 1: «Ամեննափոքր տղաներ ու աղջիկներ ժողովելով միասին, սկսում են խաղալ զանազան խաղեր, ապա նոցանից մեկը,— գրում է բանահավաքը,— քահանա է դառնում ու մին-մին տղաներին ու աղջիկներին կանչում է իր մոտ: Տղին անվանում են փեսա, իսկ աղջկան՝ հարսնացու, ու ձեռքը դնելով նոցա գլխին, ասում այս երգը, իբր թե պսակում է: Պսակողը վերջացնում է «Տարն ը՞ս» խոսքով. փեսան պատասխանում է՝ «Տարն ըս» և սրանով վերջանում է խաղը»:

416. Երգը ունի «Հարս ու փեսայի համար» վերնագիրը:

417. Տպագրվում է առաջին անգամ, ձեռագիրը պահվում է հայ ժողովրդական բանահյուսության արխիվում, Ա. Ղանալանյանի ֆոնդ, գործ երկրորդ, № 4. Խնամոցիկ խաղի ժամանակ ասված մանկական խաղերը: Բնագրում բանահավաքը յուրաքանչյուր քառյակը իր կրկներգով համարակալել է: Միօրինակության նպատակով հանվում է համարակալումը: «Ասացող՝ Վարդան Վարդանյան, գրի է առնված 1936 թ.» (Ս. Բ.):

418. Տպագրվում է առաջին անգամ, ձեռագիրը պահվում է գրականության թանգարանում, Ս. Քամալյանի ֆոնդ, № 18: «Աղջիկներ և հարսներ որևէ հարթ տեղ 2 մասի բաժանված կանգնում են և խմբերի գլխավորը ձայն է տալիս, մյուսները արձագանքում են»: Բնագրում երգը ունի «Ագագամի խաղ» վերնագիրը:

419. Երգն ունի «Խմաճիկին» վերնագիրը: «Ասացող՝ Սրբուհի Մելքոնյան» (Ս. Բ.):

420—420 ա. Այս երգերը տպագրվում են առաջին անգամ. առաջինի ձեռագիրը պահվում է ՀԺԲ արխիվի Տ. Նավասարդյանի ֆոնդում, № 3, երկրորդինը՝ գրականության թանգարանի Ս. Քամալյանի ֆոնդ, № 18:

Այս և ապա հաջորդ 422 երգերը երգվել են «Աչքակապուկի» մանկական խաղի ժամանակ, որի էությունը հետևյալն է. «Մի երեխայի աչքերը ընկերները կապում են թաշկինակով և սկսում են այս ու այն կողմ հրել և հարվածել, հարվածելու ժամանակ աչքերը կապած մանուկը պետք է աշխատի մեկին բռնել, եթե բռնում է, նրա աչքերն են կապում, եթե ոչ՝ նորից շարունակում են խաղալ: Աչքերը կապած ժամանակ հարցնում են. «Ի՞նչ ես կորցրել». այս հարցի ժամանակ էլ բոլորը փախչում են դես ու դեն, նա պետք է աշխատի բռնել նրանցից որևէ մեկին (ՀԲԲԱ 52):

421$_1$. Վանում Սամիթ կոչված հոտավետ խավարտը, կանաչի (տե՛ս՝ ՀԲԲԱ 625):

422—423—424. Այս երգերից առաջին երկուսը տպագրվում են առաջին անգամ, ձեռագրերը պահվում են ՀԺԲ արխիվում, Գ. Թարխանդյանի ֆոնդ, գործ 5, № 11: Խաղի էությունը հետևյալն է. «Ութ-տաս տարեկան տղա, աղջիկ մի մի մայր են ընտրում: Մայրերից մեկը վերցնում է բոլորին և շարքով կանգնեցնում, պոչ-պոչի բռնած: Ազատ մնացած մայրը համարվում է գայլ, իսկ խմբի զեկավարողը՝ հովիվ: Գայլը պտտվում է այս ու այն կողմ, ասելով այս երգը, իսկ

հովիվը պատվում է, ամբողջ խումբն էլ իր հետ ու բևերը բացած աշխատում է խանգարել գայլին, եթե հովիվը ոտքով խփի նրան, ուրեմն գայլը չի տանի ոչխար։ Իսկ եթե չի հասցնում խփել, այնքան է տանում, որ ինքը հովիվ է դառնում, իսկ հովիվը՝ գայլ» (Ծ. Բ.)։

425. Այս երգերը ասվել են «Պուտ» (կակաչ) խաղի ժամանակ, որի էությունը հետևյալն է. «արուրի Ոպիա Նորաշեն գյուղում 2 աղջիկ մեջք-մեջքի տված բրտնում են միմյանց ձեռ և երրորդ աղջիկը կանգնելով նրանց ձեռքերի վրա, ծափ է տալիս և երգում, երգողին ձեռքերի վրա պտտեցնում են, եթե սխալվեց, ապա իջնում է և քարե վիճակով որոշված, աղջիկներից մեկի ձեռը բռնում և ապա շարունակում նույն ձևով։

Քարե վիճակը հետևյալն է՝ քարի մի երեսը թրջում են, գցում վերև. եթե ընտրած կողմը (չոր կամ թաց) վերի կողմը լինի, ուրեմն ընտրությունը կրըռնի» (Ծ. Բ.)։

426. Խաղի նկարագիրը չկա, ըստ բանագետ Ս. Հարությունյանի վկայության 2 հոգի մեջք-մեջքի պտտվում են և տակնուվրա պտտվելով ասում են այս խոսքերը։

427—431. Երգվել, ասվել են ճլորթի խաղի ժամանակ. առաստաղից, ծառից կամ այլ հարմար տեղից թոկ կախելով՝ մեջը նստում են և ճոճվում։

Ղազախում և Երևանում խաղը կոչվում է ճլորթի, Բասենում՝ ճոճք, Դարալագյազի նոր հայերի մեջ՝ շամչուլ կամ թըշկո, իսկ հին հայերի մեջ՝ թավանջի։ Ճլորթի ընկնելու համար աղջիկները և տղաները խառը խմբվում են։ Երբեմն ճոճակալի ոտներին զարկելով, պահանջում են, որ նա իր ընտրածի, խաղը սկսողի անունն ասի։

432. Երեխաներից մեկը ձեռքի մեջ մատով խառնում է՝ իբր թե ճաշ է եփում և զայրացնում մյուսներին (Ծ. Բ.)։

433. Տպագրվում է առաջին անգամ, ձեռագիրը պահվում է ՀԱ ՀԺԲ արխիվում (տե՛ս Թարվերդյանի ֆոնդ, գործ 5, № 11). «Երգը ասվել է «Կոտոշ կոտոշ» խաղի ժամանակ. 5—10 տղաներ հավաքվում են, նստում, մեկին ընտրում են մայր, որը և ասում է այս երգը, երկու ձեռքի ցուցամատները ցցելով գլխին կոտոշի նման։ Իսկ երբ մայրը տալիս է անկոտոշ կենդանու անուն, ցուցամատները պետք է անմիջապես հեռացնեն կամ բռունցք անեն, շփոթվողը համարվում է «դմբ» և խաղը տանուլ տալիս» (Ծ. Բ.)։

434. Տե՛ս ծանոթ. 197 (432), «Ասել է Ա. Գասպարյանը 1936 թվի հոկտեմբերի 28-ին» (Ծ. Բ.)։ Խաղի նկարագիրը չի պահպանված։

435. «Թիզմաթիզ» կամ «Արթուրմա» խաղի ժամանակ է երգվում այս երգը։ Խաղը Դարալագյազի նոր հայերի մոտ ունի հետևյալ բնույթը. «Աղջիկները բաժանվում են երկու-երկու և ապա 2 ընկեր իրար դեմ նստած, լայնացնում են մատները և չորս ձեռքը իրար վրա դնում։ Ապա մյուս աղջիկները բռնում են այդ ձեռքերը վրայից այնպես ղգույշ, որ չդիպչի ոչ ոտքերը, ոչ էլ շորի ծայրը, եթե դիպչի, դիպչողն իր ընկերով փոխարինում է նստողներին։ Առաջին երգողն ասում է հետևյալ երգից մեկական քառյակ և մյուսները երգելու ժամանակ կըրկնում են առաջինի ասածը» (Ծ. Բ.)։ № 436 երգի 13—15 տողերը հանելուկ են և քանի որ երգը նվիրված է այծին, ուրեմն, ուստի և այդ կցորդումը համահունչ է երգի ընդհանուր ոգուն։

438. Խաղերգ երկխոսությամբ. մանուկները շրջան են կազմում, ծայրերին կանդնածները նշանակվում են մայրեր, որոնց մեջ տեղի է ունենում այս խոսակ-

ցությունը՝ Տեր-Օվանեսը, ապա մայրերից մեկը և նրա մոտի ընկերները բարձրացնում են, իսկ մյուս մայրը «Դափ-դափ» ասելով, իր ընկերներով գնում անցնում են նրանց ձեռքի տակով, որի ընթացքում մոր մոտ կանգնածը ձեռքերը խաչաձևում է և ապա մայրերն սկսում են խոսել՝ «Հաշկըտլուսը» և նորից շարունակվում է խաղը մինչև բոլոր մանուկները մեջք-մեջքի կանգնում են, հետո մայրերը ասում են՝ «արի էրթանք». վերջին խոսքի վրա 2 կողմը սկսում է քաշել մինչև մեջտեղից պոկվում է ձեռքը, ում ձեռքը պոկվում է, աչքերը կապում են, ծեծում, մինչև որ մեկին բռնում է և ինքն ազատվում։

438$_1$. «Դյուզի ծերունիների ասելով,— գրում է Ա. Երեմյանը,— Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մոտ ապրել է չահարմահալցի քահանա Տեր-Օվանեսը։ Նրան, իր ունեցած ազդեցության և հեղինակության շնորհիվ, ժողովուրդը անվանել է պատրուք ու կես— այսինքն կես պատրիարք»։

439. Երգվում է «Ջըխկըը» խաղի ժամանակ, Ալեքսանդրապոլում։ Խաղացող երեխաները 2 խմբի են բաժանվում և յուրաքանչյուր խմբի ղեկավարը հարց ու պատասխան է տալիս, երբ որևէ մեկի անունն է տալիս, խումբը բաժանվում է, ծիծկոտում և ծափահարում ու մի քանի անգամ կրկնում. «Ջըխկը՛ր-ջըխկը՛ր, Սահիման» և այլն (Ս. Բ.)։

442. «Դարալագյազի Ղոյլաղ գյուղում մի քանի երեխա հավաքված հարց են տալիս միմյանց և արագ մտածում պատասխանը, հարմարեցնելով պատասխան խոսքի վերջին վանկի հանգը հարցի հետ։ Հաղթում է խաղում նա, ով հաջող ու շուտ է պատասխանում» (Ս. Բ.)։

445. Տե՛ս ծանոթ. 175 (395)։

«Երեխաներից մեկը ձեռքերի մատները միացնում է իրար, յուրաքանչյուրը մի պատիճանի նման։ Ամեն աստիճանին մեկ հարց տալով և պատասխան ստանալով, բարձրանում է, կաթը դնում թունիրը և քնում, վերջին խոսքերը լսելով, արթնանում է, երեխաներից մեկը իբրև դամփռ, հարձակվում է նրա վրա» (Ս. Բ.)։

446. Երեխաներից մեկը հագնվում է իբրև պառավ, մյուսները հարց են տալիս նրան և երգում այս երգը (Ս. Բ.)։

447. Այս խաղը խաղալիս երգի մինչև վերջին խոսքը ասելը ականջը ձգում են (Ս. Բ.)։

448. Ս[illegible]ղա, պառավ ձևանալով, դեմնի վրա փնտրում է ինչ-որ բան և իր ու ընկերների միջև տեղի է ունենում այս խոսակցությունը, որից հետո բոլորն իրր թե բարկած են գնում, ճանապարհին երեխաները «պը՛ռ, պը՛ռ» բևրանով ձայներ էն հանում և զայրացնում պառավին (Ս. Բ.)։

449. «Աշուղ» իր դեմքին հարց ընելով և պատասխան առնելով, պղտիկներու ծիծաղը կշարժե» (Ս. Բ.)։

450—452. Խաղերգեր հարց ու պատասխանի միջոցով։ Խաղերի նկարագիրը չի պահպանված։

453. «Մի խումբ մանուկներ, ձեռք ձեռքի բռնած լայն շրջանակ մը կկազմեն,— գրում է բանահավաքը,— կենտրոնում և շրջանակից դուրս մի հոգի է կանգնում, դուրսը կանգնածը ներսինի հետ խոսում է, երբ կենտրոնի տղան ասում է՝ բռնի, դրսինը ներս է վազում և մյուսն էլ աշխատում է բռնել նրան» (ԱՀՔ 170)։

454. «Ալաշկերտում մայրը փոքր երեխայի ձեռքի վրա խաղացնելիս իր ճակատը զգուշորեն հպում է մանկիկի ճակատին և ասում այս երգը» (Ս. Բ.)։

456. Երեխաները այս խաղը խաղում են հարց ու պատասխան տալով մի-

մյանց։ Նրանցից յուրաքանչյուրը կատարում է մի դեր։ Հարց ու պատասխանի ձևով տրվող այս խաղը բացահայտում է մանկան պարզունակ աշխարհընկալումը, շրջապատի նկատմամբ նրա ունեցած մանկական պատկերացումը։ Երգը բնագրում ունի «Այծի երգը» վերնագիրը։

457. Տե՛ս 456 երգի ծանոթությունը։ Տ. Նավասարդյանը սա համարում է Երիմի բարբառով ասված հեքիաթ, մենք դնում ենք այս բաժնում իբրև խաղերգ։

459. Երեխաները հավաքվում են, նստում՝ ոտքերը մեկնում առաջ, նրանցից մեկը սկսում է այս երգը ասել, այնպես որ ամեն մի խոսքը մեկնած ոտքերից մեկի վրա դա, որը և երգը ասելիս ցույց է տալիս մատով։ Ում ոտի վրա որ բնկնում է խաղի վերջին խոսքը, նա թաշում է իր ոտքը։ Ասողը շարունակում է՝ կրկնելով նույն խոսքերը կանգնած տեղից, այսինքն՝ ետ քաշած ոտքից հետո հետևյալ ոտքից։ Երգը կրկնվում է այնքան, մինչև որ մնում է մեջտեղում տարածված մեկ ոտք։ Խաղը դրանով վերջացնում են և կամ ում ոտքը որ մնում է, նա պատժվում է՝ երկու կողմից ոտքով ճմռելով։ Պատժվողը պետք է աշխատի դուրս գալ այդ վիճակից։

(460). Մանկական խաղերգ է. «Տանը մանուկները նստած ձեռքերը ծնկերին դրած։ Խումբի ղեկավարը այս երգը կասն և ցուցամատով յուրաքանչյուրի ձեռքին կխփե։ Վերջին խոսքը, որի ձեռքին ասվի, նա ձեռքը վերցնում է, վերջում միայն իր ձեռքն է մնում և իր ձեռքին ու ճակատին խփելով է ասում այս երգը, իր ձեռքն էլ դուրս գնալուց հետո մանուկները ասում են քանի՞ հավկիթ կուզեն, յուրաքանչյուրի ուզած թվով կտտացնում է ճակատին» (ԲՄԴ)։

460$_1$. Տե՛ս ծանոթ. 335$_1$։

461, 462. «Շարուրի Ուլիա Նորաշեն գյուղում աղջիկները մի ոտքի վրա պինդ պտտվելով ու փնշերը քամուն տալով հանկարծ նստում են գետնին և ասում այս երգերը» (Ծ. Բ.)։

463. «Փոքրիկ տղաները շրջանաձև նստոտում են և ձգում իրենց ոտները դեպի առաջ, մեջտեղը նոցանից մեկը, որ մյուսներից լավ է իմանում, ասում է այս խաղերգը, փոփոխակի դնելով ձեռքը նստածներից յուրաքանչյուրի ոտքի վրա, որի և որ ոտի վրա վերջանում է երգը, ոտատերը ոտը քաշում է դեպի իրեն, ապա հետևաբար և մյուսները, մինչև որ մնում է մեկ ոտք։ Ոտատերը կանգնում է շրջանից ներս, նստածները աջացի են խփում նրան, նա որի վրա ընկնի, հերթը նրանն է» (ՀԺԲԱՆԱ 1)։

464. «Երեխաները շրջան կազմած կանգնում են՝ ձեռքերը հետևում բռնած, մայրը, որը ևս երեխա է, նրանց հետևից պտտելով, քար է դնում մեկի ձեռքում այդ երգը ասելով» (Ծ. Բ.)։

465. «Երկու հոգիի մեջ տեղի կունենա այս խոսակցությունը, նպատակը «հովով»՝ քամով բառին վրա բառախաղ մըն է։ Խոսակիցը շան հաչյունի տեղ առնելով պնա կը պատասխանե՝ «Օ՛շտ, օ՛շտ, օ՛շտ»։ Խաղը գիտցողները «Հովով» բառին տեղ հոմանիշ տարբեր ձև մը պիտի դնեն» (Ծ. Բ.)։

466. «Զորս տղա սենյակի չորս անկյունները կբռնեն, մեկն ալ մեջտեղ կմնա։ Վերջինս յուրաքանչյուրին երթալով կհարցնե. «Մաճուն ծախիմ, ո՞վ կուզե»։ Նա ալ կպատասխանե «Ես չեմ ուզեր, ան կուզե», ցույց կուտա հաջորդը։ Այսպես շարունակելով, վերջինը կսե. «Գնա՛ կեղտոտ շորեր վլա»։ Ասոր վրա տղան կերթա զարձյալ մեջտեղը և լաթ լվալու ձևեր կընե, մինչ այս, մյուսները իրենց տեղերը կփոխանակեն միմյանց հետ, մեջտեղինը կչանա անոնցմե մեկուն անկյունը պարապ գտնել և գրավել»։

«Նախնականը մածուն էր, բայց որովհետև այս բառը այժմ գոյություն չունի Պոլսո մեջ, ուստի փոխարինված է տահկերեն մերձահնչյուն մածուն բառով» ԱՀԲ 171 (Ծ. Բ.)։

467. «Երկու երեխաներից մեկը ատանձնում է բուի դերը և պատասխանում արված հարցերին»։ Խաղի իմաստն է,— գրում է բանահավաքը,— թե պուպուն շաց է թխել, պուտուկն է դրել, խփով է ծածկել, թուշունը գտել է, շունը կերել է և փախել է տուն»։ Այս կերպով ժողովրդական այն իմաստնությունն է այստեղ ասված, թե՝ «Պուպուն ածել ա, կուկուն տարել ա»։

468. «Մի քանի տղաներ,— գրում է բանահավաքը,— ձեռքերում սանդ ու սանդիտոռն ձևացնելով սկսում են սխտոր ծեծել, այս երգը երգելով, հետո համտեսնելով աղը քիչ են գտնում և ավելացնում են ու երգում։ Վերջապես խաշը պատրաստվում է, ուտում են, մի քիչ էլ «տետեին» պահում և պատկում։ Նրանցից մեկը կատու է ձևանում և կես դիշերին պահած խաշը ուտում է, մյուսները լսելով, արթնանում են և հալածում կատվին»։

469. «Այտերը շնչով ուռցնելով երեխաները «Oo-o պըճինդո» ասելով և բունցքի մի թեթև հարված հասցնելով, պայթյունի ձևով բերանը փքաթափ էին անում և խաղին ուղեկցում այս երգը», ԱԽՋ 57։

470. «Մոր մատնոցը կամ տնեցիներից մեկի գլխարկը և կամ զուլպան դնելով փայտիկի ծայրին երեխաները այդ վեր էին բարձրացնում ասելով այս երգը» (Ծ. Բ.)։

471. «Երգում են «Բարխուճինա» խաղալիս» (Ծ. Բ.)։

472. «Երգում են «Զիլիկ» խաղալիս» (Ծ. Բ.)։

473. «Երեխաները բոլորակի ձևով նստած, ոտերը ձգում են իրիլո-բիրիլո բաշտ խաղում, մեկը այս երգի մի-մի բառն ասելով կարդով։ Ում ոտքի վրա ասվում է վերջին բառը, սա ազատվում է, իսկ մնացած ոտքի տերը պատժվում» (Ծ. Բ.)։

474. «Շամախիում երեխաները այս երգը ասում են՝ նմանեցնելով ձեռքերի շարժումները հախարակի» (Ծ. Բ.)։

476. «Ալեքսանդրապոլում աղջիկները բուշկոտելով երգում են այս երգը» (Ծ. Բ.)։

477—483. Այս քառյակները, երկտող, հատուղները ասվել են խաղը ավարտելիս և խումբը ցրվելիս։ Այդպես են վարվել Ալեքսանդրապոլում, Տարոնում, Դարաբաղում, Բիֆլիսում, Վանում և այլուր։

484 բ. Շատախոսին լռեցնելու համար է ասվում (Ծ. Բ.)։

485. Այս քառյակը ասվում է, երբ երեխայի ոտքերը թմրում են (ԱԺՀԱ 42)։

486. Ասում են կտրած եղունգը պահելիս (Ծ. Բ.)։

487. Ասում են, երբ ականջը ձեն է տալիս (Ծ. Բ.)։

488. Ասում են ատամը գցելիս (Ծ. Բ.)։

489. Ասում են, երբ աչքը մի բան է ընկնում (Ծ. Բ.)։

490. Ասում են խոսունջ տեսնելիս (Ծ. Բ.)։

491. Ասում են թուշելիս (Ծ. Բ.)։

492. Ասում են, երբ մեկը մյուսի ունեցածից ուզում է (Ծ. Բ.)։

493. 494. Ասում են թիթեռ բռնելիս (Ծ. Բ.)։

497. Ասում են ճլորթի խաղալիս (Ծ. Բ.)։

498. Ասում են, երբ մեկն ուշանում է (Ծ. Բ.)։

499. Ասում են չլսողին (Ծ. Բ.)։

500—501. Ասում են զկեռ ուտելիս (նույն տեղ). զկուտալ > զկոի տալ։

502. Ասում են, երբ ուզում են մեկին տալ իրենց հիվանդությունը, ազատվել նրանից (Ծ. Բ.)։

503. Ասում են՝ առավոտները երես չլվացող երեխային հանդիմանելու, կամ վրան ծիծաղելու համար (Ծ. Բ., ՀԺԲԱՇ 5)։ «Գրի է առնված 1937 թ. նոյեմբերին, Երևանում, Ս. Շալչյանի կողմից» (Ծ. Բ.)։

504. Ասում են երեխաները ուզտեր տեսնելիս (Ծ. Բ.)։

505. Ասում է փոքրիկ տավարածը՝ դաշտում անասուններն հաշվելիս (Ծ. Բ.)։

506, 507, 508. Ասում են երեխաները, երբ կորցրած մի բան են փնտրում, իբր թե խաբում են սատանային, որ չպահի (Ծ. Բ.)։

509. Ասում են, երբ մեկը մյուսի դիմացը կանգնելով՝ զրկում է նրան արևից (Ծ. Բ.)։

510. Ասում են ուշ արթնացողին կամ հագնվողին (Ծ. Բ.)։

511. Ասում են՝ երեխաները գերանի վրա ման գալիս (Ծ. Բ.)։

512, 513. Ասում են, երբ մեկին բանի են ուղարկում (Ծ. Բ.)։

514. Ասում են, երբ բաղնեն գալիս է, որպեսզի իրենց թաղից ճուտ չտանի (Ծ. Բ.)։

515, 516. Ասում են՝ ուրուրի ձայնը լսելիս (Ծ. Բ.)։

532. Ղարսի Քյոփրիքյոյ գյուղի երգերից է։ Քյոփրիքյոյը հայտնի էր Ղարսի նահանգում իբրև առևտրական հանապարհների հանգույց, հանապարհներ, որոնք ձգվում էին մինչև Հնդկաստան։ Այդ գյուղում եղել է մի կամուրջ, որի վրայով էլ անցել է այդ ճանապարհը։ Այդ մասին էլ հիշվում է երգում։

532 ա. Կրկներգի առաջին տողը հաճախ է փոփոխվում ըստ տեղավայրերի, մեծ մասամբ լինում է «Հնթիաթ, հնթիաթ», երբեմն՝ «Զոնգուր, չոնգուր», «Զրըն, զըրընգ», «Բադյա, բադյա», «էգուց կամ էսօր կիրակի է». հիմնական տեքստը անփոփոխ և կամ աննշան փոփոխության է ենթարկվում (Ծ. Բ.)։

541. «Շամախեցի մանուկների երգն է» (Ծ. Բ.)։

542. «Գավալու գյուղում երեխաները գարնանը դաշտ գնալիս, զրոսանքի ժամանակ երգում են այս երգը» (Ծ. Բ.)։

543. Տպագրվում է առաջին անգամ։ «Ասացող՝ Ֆլորա Հարությունի Բերբերյան, 75 տարեկան, Յողգաթի վիլայեթի Բողազլյան քաղաքից, գրի առավ Դ.Ա. լեզվի ինստիտուտի գիտաշխատակից՝ Ներսես Մկրտչյանը» (Ծ. Բ.)։

546—550. Այս երգերը «Հնթիաթ-հնթիաթ» կրկներգ ունեցող երգերի շարքին են պատկանում, ավելի շուտ այդ երգերի բնկորներն են։

552. «Երգը գրի է առնվել Շուշիկ Հարությունյանից. երգի վերջին 3 տողը մանկական ձեռնախաղի երգ է, որը կցված է երգին, կցորդումը կատարված է ընդհանուր համաձայնության մեջ երգի բովանդակության հետ»։

553. «Հայ օրիորդները գնում են դաշտը բանջար քաղելու, միասին երգում են» (Ծ. Բ.)։

556. Առաջին անգամ երգը տպագրվում է 1875 թ. Տեր-Սարգսենցի «Պանդուխտ վանցին» ժողովածուում։ Շուրջ տասը տարի անց նույն երգը որոշակի փոփոխությամբ լույս է տեսնում Գ. Շերենցի «Վանա սազ» ժողովածուի առաջին հատորում։ Երգը մի քանի խաղերգերի միակցման արդյունք է։ Տե՛ս 440, 441, 556 և այլն, սակայն իր կառուցվածքով և էությամբ նա դասվում է այս երգերի շարքին։

557—582. Մանկական կատակերգեր են՝ ասված զանազան առիթներով և հիմնական՝ անունները ծաղր ու ծանակի ենթարկելու նպատակով։

564. Քաջբերունին նշում է, որ «Ալեքսանդրապոլում կարապետ անունով մարդու երեխաները ծաղրում էին երգելով այս երգը»:

573. «Շարուրի Ուլիա Նորաշենն գյուղում խմված երեխաները կարճահասակ մարդուն ծաղրում են այսպես» (Ս. Բ.):

589. «Աղջիկները Ալեքսանդրապոլում թոչկոտելով երգում են այս երգը» (Ս. Բ.):

591$_1$. «Սարիփինայի ուղղահայաց ձողեր, որոնց վրա կբարձրանա որթատունկը»: Ժողովածուում երգն ունի «Քռակին» վերնագիրը:

597. Երգը տպագրվում է առաջին անգամ, գրի է առել Գ. Աղազադյանը և պահվում է Տ. Նավասարդյանի ֆոնդում:

598. Մանկական խնամոցիկ խաղի կատակերգ է: Բնագրում երգն ունի «Խելքով հարս և փեսա» վերնագիրը. այնքան, որքան երգը ծաղրական բնույթ ունի, այդ պատճառով էլ դնում ենք այս բաժնում և ոչ թե մանկական «խնամոցիկ» խաղերգերի բաժնում:

600. Երգը տպագրվում է առաջին անգամ: «Թեև մի մանուկ ասում է սոված եմ, ընկերները երգում են այս երգը» (Ս. Բ.): Երգը գրի է առնված 1937 թ. նոյեմբերի 12-ին:

601, 602. Երգերը տպագրվում են առաջին անգամ:

603. Այս երգի առաջին 6 տողը մանկական երգերում հանդիպող հանրահայտ մոտիվն է, իսկ վերջին 6 տողը կցված է նրան և ավելի շուտ սիրային բնույթի երգ է: Ընդհանուր առմամբ երգն ունի ծաղրական բնույթ, որի հետևանքով և դրվում է այս բաժնում (Ս. Կ.):

604. Երգը տպագրվում է առաջին անգամ:

«Աբաղադի ձայնը կեղծելով, երեխաները երգում են» (Ս. Բ.): Երգը գրի է առնված 1937 թ. նոյեմբերի 12-ին, Երևանում:

605. Բնագրում երգն ունի «Աբաղադին» վերնագիրը:

606. Երգը տպագրվում է առաջին անգամ:

Ոսկի ջրա— վանում, Բուլանուխում և այլուր փեսայի հարզարանքի մեծ մտնում է նաև թադ դնելը, որպես թագավոր, թագի վրա ամրացնում են աբաղադի երկու փետուր, որը և ջրա է կոչվում: «Երգը գրի է առել Գ. Աղազադյանը, 1891 թ. հունվարի 20-ին» (Ս. Բ.):

607. Երգը տպագրվում է առաջին անգամ: «Երգը գրի է առնված Գ. Աղազադյանի կողմից, 1891 թ. հունվարի 20-ին» (Ս. Բ.):

609. «Ղազախի Ուզունթալա գյուղում երեկոյան ժամասացությունից հետո, որպեսզի իմացնեն ժողովրդին, թե «վաղը կիրակի է», երեխաները երգում են այս երգը» (ԱՀՔ 175):

613. «Ասում են վերակացուներին ծաղրելու համար» (Ս. Բ.):

615. Երգը տպագրվում է առաջին անգամ:

622. Ասում են թաչալներին ծաղրելու համար (Ս. Բ.):

624—634. Երկնային լուսատուներին՝ լուսնին և արևին նվիրված երգեր են:

627 դ. Երկրորդ անգամ տպագրվել է Տ. Աղեքսանդրյանցի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» ժողովածուում:

628. «Ասվում է արևին ամպերի տակից կանչելու համար, սա ևս թվում է, թե պատառիկ է այն նվիրաբերություններից, որոնց մեր նախնիները արել են արևի պաշտամունքի ժամանակ» (ԲՍԳ 10):

629. «Աղջիկները արևածագին երգում են այս երգը» (Ս. Բ.):

630. «Ամառները, երբ մանուկները լողանում են և ամպամած է լինում, իրե՛ն ազերս այս տողերն են ասում արեգակին» (Ս. Բ.)։

630$_1$. «Շուտ լողացողները դուրս են գալիս, երկու քար իրար են խփում, ձգում չրի մեջ՝ ընկերներին բարկացնելու համար և երգում են այս տողերը» (Ս. Բ.)։

632 ա. Երգը բնագրում ունի «Արևի երգը» վերնագիրը։

633. Տպագրվում է առաջին անգամ, բնագրում ունի «Մանկական երգ» վերնագիրը։

636. Երգը բնագրում ունի «Վանա լուսին» վերնագիրը։ «Շատախցի մանուկը հիանալով 15 օրվա լուսնի վրա, ասում է այս երգը» (Ս. Բ.)։

638—640. Երգերը տպագրվում են առաջին անգամ։ Երգում են անձրև կամ ձյուն գալու ժամանակ (ԱՀՒ 174)։ «Անձրևի մանկական երգեր» (Ս. Բ.)։

644. «Ղարաբաղի ամենափոքր աղջիկները երգում են այս երգը ծաղիկներ փնջելով» (Ս. Բ.)։

646. Նույն երգը տե՛ս Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ», մասն 1-ին, «Չուտոզի մայն ուտոզին հալալ է» հեքիաթում։

647. Նույն երգը տե՛ս Հայ ժող. բանահյուսության արխիվի Վ. Սվազլյանի ֆոնդում և Խ. Փորքշեյանի «Ն. Նախիջևանի հայ ժող. բանահյուսությունը» ժողովածուում, էջ 62։ Ռուսական «Сорока воровка» երգի նմանությամբ է ստեղծվել այս երգը։

648. «Արագիլներին տաք երկրներն վերադառնալու ժամանակ են երգում երեխաները» (ՀԶՍ 350)։ Նույն երգը տե՛ս ՀԶՀ 3։

649. «Շարուրի Ուլիա Նորաշեն գյուղում կեչեխանները կաշազակի կարկաչներին արձագանքում են այս երգով» (Ս. Բ.)։

650. Բնագրում վերնագիրը «Արտուտիկ» է։

653. Բնագրում վերնագիրը «Ճնճղուղիկ» է։

654. Բնագրում վերնագիրը «Ջոկ ըխարաց երգ» է։

656. Բնագրում վերնագիրը «Պիպիլ էծ» է, և գրված է ժողովածուի «Մանկական երգեր» բաժնում։ Ըստ էության այն մի քանի երգերի միակցումից առաջացած երգ է։ Այս միահյուսումը կատարված է համոզիչ, ուստի և չենք մասնատում այն։

657. Նման է միջնադարյան ժողովրդական «Ելեք տեսէք զի՞նչ կայր ծովին» (տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 324) և ժողովրդական՝ «Գացեք տեսեք ո՞րն ի կերև ուլ» երգին։

658. Բնագրում երգը ունի «Աղվոս խորտիկ» վերնագիրը։

659. Երգը կրում է գրական մշակման կնիք։

662 ա. Այս երգը կառուցվածքային տեսակետից որոշ յուրօրինակություն ունի. այն 2 և ավելի մանկական երգերի կցորդումից է առաջացել։ Առաջին 9 տողը մեկ առանձին երգ է, հաջորդ քսանյակը ևս, իսկ վերջին 11 տողը այլ երգ է։ Հաշվի առնելով ներքին միասնությունը (տողերը բոլորը 8 վանկ ունեն) և այն, որ տպագիր աղբյուրներում երգը բերվում է միասնորեն, ընդունում ենք նույն վիճակում։ Բնագրում երգն ունի «Կատուի բեռ» վերնագիրը։

662 բ. «Երեխաներից մեկը կատու է ներկայանում, մյուսը նրան հարցեր է տալիս» (Ս. Բ.)։

665—672. Կատվին նվիրված մանկական խաղերգեր են, որոնք ասվում են երկասացությամբ։

«6—8 տարեկան երեխաները ձեռքերը մոտ-մոտ դրած երգում են, վերջում երեխաներից մեկը իր ձեռքը տանում է ամենափոքրիկի ծոցը և ծիծաղեցնում» (Ծ. Բ.) և կամ՝ «վերջին բառերը ասելիս, կամացուկ խփում են երեխայի ձեռքին, որը ինքնապաշտպանության նպատակով փախցնում է և ծիծաղեցնում բոլորին» (Ծ. Բ.)։

666. Բնագրում երգն ունի «Բռան կատու» վերնագիրը։

668 դ. Բնագրում երգն ունի «Փշո-փշո. մանկական երգ» վերնագիրը։

669. «Թը՞ռ, ճնճղուկ» խաղի նման խաղերգ է, միայն այստեղ ճնճղուկի փոխարեն կատու է (Ծ. Բ.)։

671. Նույն խաղը՝ նոր Ջուղայում։

674—697. «Ճճեռնակ-պպեռնակը— սրանք նույն կարկաչայի տարբեր անվանումներն են— փայտե փոքրիկ ատամնավոր գլանակ է, երկար կոթով։ Գլանի 2 ծայրին անց են կացրած տախտակներ, միացած ուրիշ 2 տախտակի։ Մեկ ուրիշ բարակ տախտակով էլ մի ծայրով. անցնելով 2-րդ գոտով՝ միանում է առաջին գոտուն։ Երեխաները պտտեցնելով՝ կարկաչանները աղմկում են և երգում։ Այս երգը երեխաները երգում են կարկաչան պտտեցնելիս և տները շրջելիս ծաղկաղարդի կիրակին և մեծերից ստանում են հավկիթ կամ հատիկ» (Ծ. Բ.)։

Ինչպես հայտնի է, շատ նախնական ծիսական նշանակություն ունեցող իրեր և գործիքներ, որոնք հատուկ են եղել նախնադարյան մարդուն, պահպանվել են երեխաների մոտ։ Այդպիսի մի խաղալիք է նաև կարկաչան, որի ծագումը գալիս է հնադույն ժամանակներից։

676$_1$. «Մախոխ՝ բիխմորով և բնափով պատրաստած թթու ջուր, որով մեծ պահքին ապուր են եփում։ Ավագ ուրբաթին ամեն տուն այդ ապուրը եփում է Քրիստոսին խաչի վրա մնունգով քացախ տրվելուն» (Ծ. Ա.)։

677. «Ջավախքում Ծաղկազարդին Ծառազարդար են ասում։ Այդ օրը նկնղեցում օրհնում են ուռենու ճյուղեր, որ զլխավորապես բերում են նորապսակները և բաժանում բոլոր ժամավորներին» (Ծ. Բ.)։

680, 682. Այս երգերի առաջին երկու տողին, որը Ծառազարդարի երգերի Դարբալագյազի և Ագուլիսի նմանակներն են, ավելացել է մանկական հանրահայտ «Ախպար, ախպար» երգը, որը ընդհանուր կապակցության մեջ գտնվելով երգի առաջին մասի հետ, ներկայացնում է մեկ ամբողջական պատկեր, ուստի և նրանք չենք մասնատում։

682$_1$. «Դարբալագյազի խաչիկ գյուղում պատարագից հետո Ձրո-Ճրճանակ ածելով շրջում են տները և ձու ժողովում, երգելով այս երգը» (Ծ. Բ.)։

683. Երգը տպագրվում է առաջին անգամ, բնագրում այն ունի «Ծառազարդարի մանկական երգ» վերնագիրը։

686. «Վեդի բասարի Դավալու գյուղում, որոնք գաղթված են Մակուից, երեխաները խմբերով ձեռներին ուռի ճյուղեր ծայրերը օղակ շինած պտտվում են տներում և ձու ժողովելով երգում» (Ծ. Բ.)։

688. Երգը տպագրվում է առաջին անգամ, բնագրում այն ունի «Ծառազարդարի երգ» վերնագիրը։

689. «Երբ արեգակը բաժ մը երկու կըարձրանա, փոքրիկ տղաները խմբերով տնե տուն կպտտին՝ հավկիթ հավաքելու և գրեթե սպառնական ձևով երգում են կարկաչա ոտանավորը» (Ծ. Բ.)։

691. «Բասենում երեխաները ուռի ճյուղով տներում ընկած ձու են հավաքում և երգում» (Ծ. Բ.)։

695, 696. Երգերը տպագրվում են առաջին անգամ, բնագրում ունեն «Մառադարդի երգ» վերնագիրը:

697[1]. «Պոռու-փոզ, որ մանուկները Մառգարդարի ժամանակ ուռիի ճյուղերի կեղևից են պատրաստում: Ուռիի գալար ճյուղը շրջանաձև սարքում են և երգելով գնելիի կոթով մեկ երկու անգամ խփում են և մատներով ոլորած կեղևը սկզբի կելլեն: Հետո կեղևի վերամաշկը կհանեն և կփչեն և խժալուց ձայնը կրոնն փոդոդը» (Ծ. Բ.):

698—712. Ջրապաշտական շրջանի ծիսական երգեր են, որոնք զրկվել են իրենց յուրջ էությունից և դարձել մանկական խաղերգ: Հայաստանի որոշ շրջաններում երեխաները խաղում են առանց նշանակության տալու նրա էությանը և ավելի շատ ապատելով մեծերից տրվելիք նվերներին: Հայաստանի տարբեր շրջաններում կարճ փայտի վրա կամ ցախավելի վրա հին շորեր հագցրած մարդակերպ խրձիկ կամ տիկնիկ են պատրաստում, որը երաշտ եղած ժամանակ դուրս են հանում, գլխին ջուր լափում, որպեսզի անձրև գա: Երեխաները նուրբնը տնեսուն մաղ ածելով՝ հավաքում են յուղ, ձու, բրինձ, տանում միասին վայելում: Ջուր են ածում նուրբնի գլխին և ապա տալիս այդ բոլորը» (Ծ. Բ.):

699. Տպագրվում է առաջին անգամ: «Ըստ բանասաց Նվարդ Ավետիսյանի, այս երգը ասվում է այն ժամանակ, երբ երաշտ է լինում, անձրև չի գալիս, երգը ասելով շրջում էինք տնից տուն, որտեղ ջուր էին ցանում մեզ վրա» (Ծ. Բ.):

701[1]. «Խուճկուլուլան Պրիպուան է՝ պարտիզներու և այգիներու պահապանը: Անոր կնվիրեն երբեմն կաթ, մեղր, գինի, պուտուներ տնեցնելու համար» (Ծ. Բ.):

702, 703. Երգերը տպագրվում են առաջին անգամ: Բնագրում ունեն «Անձրևի երգեր» վերնագիրը:

705. «Երբ անձրև է գալիս շատ ու արեգակ չի անում, երգում են այս երգը» (Ծ. Բ.): Տպագրվում է առաջին անգամ:

707. Բնագրում երգն ունի «Բյուրապատիկին անձրևու երգը» վերնագիրը:

708. «Յուրաքանչյուր տնեցի պատրաստվում էր նրա վրա ջուր լցնել և հավկիթ, յուղ տալ երեխաներին, հակառակ պարագայում երաշտ կլիներ, կովը կցամաքեր, հավը ձու չի ածի և փիլիսկն էլ կտատարկվի» (Ծ. Բ.):

710. «Մանուկները մի չուխա են հագցնում մի փայտի և գլխին մի գդակ դնում, մարդ շինում ու պատելով տնեսուն, երգում են ու ստանում յուրաքանչյուր տնից մի-մի ձու» (Ծ. Բ.):

713—718. Ակնում, Սեբաստիայում, Վանում, Կիլիկիայում, Ղրիմում— կապանդի գիշերը մանուկները շրջում են տնեսուն, երգում են այս երգերը, երբեմն ճճևռնակ են պատեցնում, երբեմն ոչ և «ստանալով նվերներ, վայելում են միասին»:

719—724. Այս երգերը ԳԺՏ և ՀԱՃ ժողովածուներում դրված են օրորոցի երգերի բաժնում, սույն ժողովածուում հարմար համարվեց դնել Հավելված բաժնում, քանի որ նրանք բնույթով սիրային երգեր են:

725. Մշեցիների, բուլանխցիների հանրահայտ «Էրթամ Ստամբոլ, դատեմ փարա բոլ» երգն է: «Ալաշկերտում չեն երգում այդպես, որովհետև պանդխտություն չեն սիրում» (Ծ. Բ.): Հավանորեն երգի տխրաթախիծ մեղեդին է հիմք հանդիսացել, որպեսզի երգվի օրորոցի նպատակով:

724. ԱՀԺԲ-ում բանահավաք Սոլաբյանը մանկական երգեր բաժնում դրել է նաև «Բլբուլին» երգը, որը սիրո հայրեններից է:

727. «Օրորոցի հատուկ երգեր շատ քիչ են, մայրը երևակայելով զավակի

ապագան, ինքնաբերաբար, ըստ իր ցանկության, նախապատրաստություններ կհորինեն և կերգեն այլ և այլ հղանակներով, ավելի երկար նախադասություններով կերգեն օրորոցի մեջ, ավելի կարճ, երբ ձեռաց մեջ վեր կբռնեն» (Ծ. Բ.)։

728. Տպագրվում է առաջին անգամ, բնագրում ունի «Օրոր» վերնագիրը, սակայն, ինչպես երևում է երգի բովանդակությունից, հեռու է այդպիսին համարվելուց, այդ իսկ պատճառով էլ բերվում է հավելվածում։

729. Ժողովածուում ունի «Օրորոցային» վերնագիրը։

730. Երգը գրի է առնված ալաշկերտցի Կարինե Բարսեղյանից, ներկայումս Երևանի բնակիչ. «Էսա երգ կերգեինք, մեր սրտի դառնություն կդատարկեինք, մեր ձագերուն էլ կբնցուցինք։ Էտա Սաֆար աղեն մեր գեղի շատ ջահելների արունը խմեց, զուլո՞մ տարիներ ին...» (Ծ. Ա.)։

731. Պատմական հիշողություններ են պահպանված Վանում խալըբի աղայի կատարած վայրագությունների մասին (Ծ. Կ.)։ Ժողովածուում երգն ունի «Վանեցոց երգ օրոր» վերնագիրը։

732. Երգը բնագրում ունի «Երգ երեխայիս» վերնագիրը։ Երգի առաջին 6 տողը մանկական երգ է, հաջորդ 10 տողը, որը բերվում է ստորև՝ աղոթք է։ Այս բնույթի երգերի համարյա բոլոր տարբերակների և նմանակների վերջին 10 տողերը այս պատկերն ունեն.

Երկընքի դրռներն բաց էր,
Ոսկե աթոռ դրած էր,
Քըրիստոս վըրեն նստած էր,
Լուսավորիչըն կանգնած էր,
Ոսկե գրիչն բռնած էր,
Մեծ ու պըստիկ գրում էր,
Մեղավորներն լալում էին,
Արդարներն խաղում էին։

Ժողովրդական այս աղոթքը երեխային մատչելի և գլուրըմբռնելի դարձնելու նպատակով, հավանաբար, կցել են մանկական երգի այդ բնկորը։ Բազմաթիվ են «լուսացավ, լուսացավ» երգ-աղոթքները, որոնք առանց որևէ կցորդման են բերվում զանազան ժողովածուներում։ Տե՛ս ԱՀՔ 33, 34, ՆՆՓ 141, ԱԵԳ 194 և այլն։

733, 734. «Հայտնի է, որ Ռ. Պատկանյանը ժամանակին հավաքել է Նոր Նախիջևանի ժողովրդական բանահյուսությունը, նրա արխիվում գտնվել են և այս երգերը։ Այդ առիթ է տվել խմբագիրներին կարծելու, որ այս երգերն էլ նրա հղինակությունն են։ Ռ. Պատկանյանի երկերի 3-րդ հատորը լույս է տեսել 1904 թ., իսկ այս երգերը շատ ընդունված էին Նախիջևանի և գյուղերի բոլոր ընտանիքներում դրանից շատ առաջ» (ՆՆՓ 64)։ Բանահավաքի այս կարծիքը փոքր-ինչ վիճելի է թվում, այնքանով, որքանով որ Ռ. Պատկանյանը հավաքելով ժողովրդական երգերը, հեղինակային մշակման է ենթարկել դրանք։

734. Երգը ժողովածուում ունի «Կռունկներ» վերնագիրը։

735. Երգը բերված է «Ժողովրդական երգարանում». ասացողը և բանահավաքն անհայտ են։

736. Երգը վերնագրված է «Մանկան օրոր», ասացողը և բանահավաքն անհայտ են։

737. «Այս երգը, որպես Ռ. Պատկանյանի հեղինակություն, Գրիգոր Խալաթյանը մացրել է Ռ. Պատկանյանի «Ընտիր երկասիրություններին» մեջ։ Սա բուն ժողովրդական երգ է» (Ծ. Բ.)։ Բանահավաքի այս կարծիքի հետ դժվար է համաձայնվել այն պատճառով, որ երգը կրում է դրական մշակման կնիքը և հայտնի

է, որ Պատկանյանն առհասարակ ժողովրդական երգերը անց է կացրել իր գրչի տակով։

Այս երգը տպագրվել է նաև Տ. Մինասյանի «Անգիր դպրութիւն...» և 1858 թ. Պետերբուրգում հրատարակված «Ազգային երգարան» ժողովածուներում։

739. Տպագրվում է առաջին անգամ։

740. Երգը «Արձագանք»-ում ունի «Գովք բրդերին» վերնագիրը։ Տեքստը և՛ բրդերին է, և՛ հայերին։ Բրդերները բերում ենք ստորև.

Մշու փաշեն պավետա,
Մշու խանըմ տիատա,
Համի տխոն նանետա,
Տուկատըզըն պոնատա։

745. Այս երգը բնագրում ունի «Գովք կտրիճ մանկան» վերնագիրը։ Երգի առաջնդր ժողովրդական է։ Հավելումները ավելի ուշ շրջանի գործ են։ Միջնադարյան օրորոցային կամ գովք երգի օրինակ, որը հավանաբար ասվել է նաև մանկանը կնքելիս։

746. Երկրագործական ծանր աշխատանքի մասին երեխայի ունեցած պարզունակ պատկերացումների արտացոլումն է այս երգում։

747. Բնագրում երգի վերնագիրն է՝ «Ճենճուղիկ», նույն երգի նմանակին հանդիպում ենք Գ. Շերենցի «Վանա սազ»-ի I մասում։

748. Բնագրում երգն ունի «Մանուկն ու ջուրը» վերնագիրը, մանկական երգի միջնադարյան օրինակ է։ Այն տպագրված է նաև «Քնար հայկական»-ում, էջ 151, «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում, էջ 19, «Դուսանական ժողովրդական տաղեր», էջ 232 և այլուր։

749 ա. «Ասացող՝ Արմենուհի Ոսկանյան, 1915 թ. Բուրքական յաթաղանից փախած, Սերբիայում ապաստանած, և ապա հայրենիք ներգաղթած 65-ամյա կինը» (Ծ. Բ.)։

750—756. Մանկական պարերգեր են։

750. Երգը տպագրվում է առաջին անգամ, բնագրում ունի՝ «Մանկական պարերգ» վերնագիրը։

751, 752. Բնագրում երգերն ունեն «Մանկան պարերգ» վերնագիրը։

753. Տպագրվում է առաջին անգամ, ձեռագրում երգն ունի «Մանկական խաղ պար» վերնագիրը։

754. «Զոկ աղջիկները պարի ժամանակ դափը ձեռքերին, ղույդ-ղույդ կանգնած, ծափ տալով, պտույտ գալով աջ ու ձախ, ֆռչկոտելով պարում են այս պարը» (Ծ. Բ., ԱԲՍ 28)։

755. Երգը բնագրում ունի «Խանամիր և էշ» վերնագիրը, բանահավաքը նշում է, որ այն մանկական պար է։

756. «Անտունի դժբախտ մանկան, որ մանուկ հասակի մեջ ծաղիկ հիվանդության հետևանքով կորցրել է տեսողությունը» (Ծ. Բ.)։

757. «Որբ մնացած զավկին ու մայրն ողբացյալ» (Ծ. Բ., ՀԱՃ 488)։

758. Երգը բնագրում ունի «Սիրուն երեխա» վերնագիրը։

759. Բնագրում երգն ունի «Ողբ մոր ի վաղամեռիկ որդին» վերնագիրը։

760. Բնագրում երգն ունի «Մորեմեն ի մահ մանկանը» վերնագիրը։

761. Բնագրում երգն ունի «Մայրն ի մահ ուսեալ որդվոյն» վերնագիրը։

762. Բնագրում երգն ունի «Ողբ ի վերայ մանկանց տղայոց դեռաբուսից և սընտեսայց» վերնագիրը։

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ КОЛЫБЕЛЬНЫЕ И ДЕТСКИЕ ПЕСНИ

Резюме

В настоящем сборнике дается полный свод армянских народных колыбельных и детских песен. В нем, параллельно с основными песнями, приводятся диалектные варианты песен, а также песни, особенно интересные по форме и содержанию, распространенные в пределах исторической и Советской Армении. Материал, входящий в настоящий сборник, имеет более чем одновековую давность, он составлен из разных фольклорно-этнографических сборников, диалектологических и литературных собраний, а также многочисленных периодических изданий, опубликованных в Армении и за ее пределами. В сборнике нашли свое достойное место и материалы фондов фольклорно-этнографических архивов. Большинство народно-колыбельных и детских песен, вошедших в настоящий сборник, собраны автором и другими фольклористами за последние годы, во время их экспедиций.

Итак, сборник охватывает свыше 1000 народных колыбельных и детских песен. Сюда не вошли песни, не имеющие автора, но носящие на себе отпечаток явно выраженного литературного произведения, а также ашугские песни. Они помещены в разделе «Приложение», куда вошли и те песни, которые бытовали как колыбельные, детские плачи, танцевальные песни и т. д. Поскольку большинство песен, входящих в настоящий сборник, не имеет заглавия, автором выбрана беззаглавная форма. В разделе «Комментарии» дается заглавие, приводятся подробные сведения об их сказителях, собирателях, а также комментируется историко-этнографический материал, относящийся к песне.

Так как сборник представляет собой совокупность разностильных по форме и разновидных по содержанию народных песен, то они классифицированы по форме и содержанию.

Так, в основу классификации песен первого раздела входят припевы, которые свойственны колыбельным песням. Во второй раздел входят игровые песни, классифицированные по различным типам игр. В третий—детские лирические и эпические песни, классифицированные по своим жанровым признакам, и в четвертый—песни, авторы которых сами дети (считалочки, скороговорки), классифицированные по форме.

Итак, сборник имеет следующие разделы:

1. Колыбельные песни.
2. Детские хвалебные песни.
3. Традиционные песни, посвященные детской ходьбе и купанию.
4. Детские игровые песни:
   а) Считалочки.
   б) Детские игровые свадебные песни.
   в) Разные игровые песни.
   г) Песни, сказанные в конце игры.
5. Детские песни:
   а) Детские эпические песни.
   б) Прологи разных сказок.
   в) Детские сатирические песни.
   г) Детские песни, посвященные природе.
6. Детские ритуальные песни.

Приложение

Комментарии

Словари:

а) диалектологический словарь,

б) словарь детского говора.

